

ԵՐԵՎԱՆԻ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ СЕВЕРНЫЙ УНИВЕРСИТЕТ

«ԲՈՒՀ-ԲԱՆԱԿ» ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ
«ԱԶԳ-ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

(միջազգային գիտաժողովի նյութեր)
14-15 նոյեմբերի, 2017



ПРИОРИТЕТ СОТРУДНИЧЕСТВА «ВУЗ-АРМИЯ»
В КОНТЕКСТЕ КОНЦЕПТА «НАЦИЯ- АРМИЯ»

МЕЖДУНАРОДНАЯ НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ
14-15 ноября, 2017

ԵՐԵՎԱՆ - 2017
ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ЕРЕВАН - 2017
ИЗДАТЕЛЬСТВО СЕВЕРНОГО УНИВЕРСИТЕТА

ՀՏԴ 378 : 355 : 06
ԳՄԴ 74. 58+ 68
Ա 230

Հրատարակվում է Հյուսիսային համալսարանի
գիտական խորհրդի որոշմամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ-ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մակիչյան Բորիս (խորհրդի նախագահ, մանկ. գիտ. թեկ., Երևան),
Ասատրյան Գրիգոր (խորհրդի նախագահի տեղակալ, փիլ. գիտ. դոկ., Երևան),
Բրանսկի Վլադիմիր (փիլ. գիտ. դոկ., Սանկտ Պետերբուրգ), **Երիցյան Սերգո**
(բան. գիտ. դոկ., Երևան), **Հակոբյան Գայանե** (բան. գիտ. թեկ., Երևան),
Ճուղուրյան Արմեն (տնտ. գիտ. դոկ., Երևան), **Մկրտչյան Արման** (ՀՀ ՊՆ,
գնդապետ, Երևան), **Մկրտչյան Հովհաննես** (տեխ. գիտ. թեկ., Լենս. գիտ. դոկ.,
Երևան), **Սահակյան Արմեն** (տնտ. գիտ. դոկ., Սանկտ Պետերբուրգ), **Մարգարյան**
Սուրեն (պատմ. գիտ. դոկ., Երևան), **Վիլենսկի Իգոր** (տնտ. գիտ. թեկ.,
Երուսաղեմ), **Օհանյան Քաջիկ** (փիլ. գիտ. դոկ., Սանկտ Պետերբուրգ)

РЕДАКЦИОННО - ИЗДАТЕЛЬСКИЙ СОВЕТ

Макичян Борис (председатель совета, канд.пед.наук, г.Ереван),
Асатрян Григорий (зам. председателя совета, док. филос.наук, г.Ереван), **Акопян**
Гаяне (канд.филол.наук, г.Ереван), **Бранский Владимир** (док. филос.наук, г.Санкт-
Петербург), **Виленский Игорь** (канд.эконом.наук, г.Иерусалим), **Джугтурян Армен**
(док.эконом.наук, г.Ереван), **Ерицян Серго** (док.филол.наук, г.Ереван), **Мкртчян**
Арман (МО РА, полковник, г.Ереван), **Мкртчян Ованес** (канд.тех.наук, док. биол.
наук, г.Ереван), **Оганян Каджик** (док. филос.наук, г.Санкт-Петербург), **Саакян**
Армен (док. соц.наук, г.Санкт-Петербург), **Саргсян Сурен** (док.истор.наук, г.Ереван)

Ա 230 «Բուհ-բանակ» համագործակցության գերակայությունը «Ազգ-բա-
նակ» հայեցակարգի համատեքստում: /Միջազգային գիտաժողովի
նյութեր, 14-15 նոյեմբերի, 2017/: -Եր.: Հյուսիսային համալսարանի
հրատարակչություն, 2017, 384 էջ:

Ժողովածուն ամփոփում է «Բուհ-բանակ» համագործակցության գե-
րակայությունը «Ազգ-բանակ» հայեցակարգի համատեքստում» միջազգային
գիտաժողովի նյութերը: 2017 թվականի նոյեմբերի 14-15-ը անցկացված գի-
տաժողովին մասնակցող՝ արտերկրի և հայաստանյան բուհերի տասնյակ
գիտնականների զեկույցները վերաբերում են հայկական բանակի հիմնախն-
դիրներին, «Ազգ-բանակ» հայեցակարգին, զարգացման միտումներին, տ-
ցիալ-տնտեսական արժատներին և համագային բանակի միջազգային
փորձին:

Ժողովածուն նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 378 : 355 : 06

ԳՄԴ 74. 58+ 68

ISBN 978-9939-873-05-3 © Հյուսիսային համալսարան, 2017

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«ՄԵՆՔ ԲՈՒՈՐՄ ՊՏՆՎՈՒՄ ԵՆՔ ՃԱԿԱՏՈՒՄ»

«Ուսանողությունը «Ազգ-բանակ» հայեցակարգում այն մտավոր սերուցքն է, որից ազգը պետք է հզորանա, անպարտելի դառնա՝ դիմակայելով ներկա ու գալիք փորձություններին»։ Ի սկզբանե այս համոզմունքով էր առաջնորդվել «Բուհ-բանակ» համագործակցության գերակայությունը» խորագրով միջազգային գիտաժողովի նախաձեռնող Հյուսիսային համալսարանը՝ համախմբելով գիտնականների արտասահմանյան հեղինակավոր բուհերից, ինչպես նաև Հայաստանի գիտակրթական տարբեր հաստատություններից։ Երկօրյա գիտաժողովի առաջին լիազումար նիստը մեկնարկեց նոյեմբերի 14-ին բուհի մեծ դահլիճում։ Բացման խոսքում բուհի ռեկտոր Բորիս Մակիչյանը, ողջունելով հարգարժան հյուրերին ու գիտաժողովի մյուս մասնակիցներին, նշեց, որ գիտաժողովի անցկացման անհրաժեշտությունը պայմանավորված է մեր երկրի՝ տասնամյակներ ձգվող կիսապատերազմական վիճակով, ինչպես նաև վերջին շրջանում «Ազգ-բանակ» հայեցակարգի հիմնադրույթները լայն զանգվածներին, իսկ ուսանողությանն առաջին հերթին ներկայացնելու ցանկությամբ։

«Մեր երկիրը գտնվում է վերահզորացման փուլում,- իր խոսքում նշեց ռեկտոր Բորիս Մակիչյանը,- և մեզանից յուրաքանչյուրը պարտավոր է իր ուժերի ներածին չափով նպաստել հայկական բանակի հզորացմանը, «Ազգ-բանակ» հայեցակարգը կյանքի կոչելուն։ Նման նախաձեռնությունները միաժամանակ նպաստակ ունեն յուրաքանչյուր երիտասարդի մեջ սեփական երկրի տերն ու պաշտպանը լինելու զգացողությունը ներարկել։ Հուսով եմ, որ զեկույցներում հնչած առաջարկները նպաստելու են բուհ-բանակ համագործակցության հետագա զարգացմանը։

Գիտաժողովի ընթացքում ելույթ ունեցան ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական, գեներալ-մայոր Վար-

դան Ավետիսյանը, ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Վահրամ Մկրտչյանը, Լեզվի տեսչության պետ Սերգո Երիցյանը և այլք:

Գեներալ-մայոր Վարդան Ավետիսյանն իր ելույթում կարևորեց երիտասարդության, մասնավորապես ուսանողության դերակատարումը բնօրրանի պահպանման գործում: *«Տիգրան Մեծի ստեղծած հզոր պետությունից մեզ բաժին է հասել բռաչափ մի հայրենիք, որի գոյությունը վտանգված է: Արդյո՞ք ազգային համերաշխության և միասնականության պակասը չէր պատճառը, որ մաս առ մաս զիջեցինք մեզ պատկանող հողը: Այսօր չենք կարող թույլ տալ նման ազգակործան քայլ, քանի որ կարող ենք կորցնել նաև եղածը: Ուստի, սիրելի ուսանողներ, նաև ձեզանից, ձեր հայրենասիրությունից է կախված մեր ազգի հզորացումն ու անառիկությունը»:* Ամփոփելով իր խոսքը՝ գեներալ-մայոր Վարդան Ավետիսյանը նշեց, որ պաշտպանության նախարարությունը պատրաստ է աջակցել Հյուսիսային համալսարանի յուրաքանչյուր նախաձեռնության, որն ուղղված է բուհ-բանակ կապերի ամրապնդմանն ու երիտասարդների շրջանում ռազմահայրենասիրական ոգի ներարկելուն:

ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Վահրամ Մկրտչյանն իր խոսքում կարևորեց յուրաքանչյուր հայ երիտասարդի՝ հայկական բանակում ծառայելը, քանի որ մեր երկիրը գտնվում է կիսապատերազմական վիճակում և զենքին տիրապետելը կենսական անհրաժեշտություն է: *«Մեր տարածքն այնքան փոքր է, որ չկա ճակատ և չկա թիկունք: Մենք բոլորս գտնվում ենք ճակատում».* այսպես է մտածում Իսրայելի յուրաքանչյուր քաղաքացի: *Այս գաղափարը պետք է առաջնորդի նաև մեզ բոլորիս»*, - ելույթն ամփոփեց փոխնախարարը:

Պաշտպանության նախարարության Ռազմական կրթության զարգացման կենտրոնի գնդապետ Արման Մկրտչյանը լիազումար նիստում հնչեցրած «Ազգ - բանակ» հայեցակարգը, զարգացման միտումները՝ զեկույցում անդ-

րադարձավ հայեցակարգից բխող «Պատիվ ունեն», «Ես եմ» և «Դիտակետ» ծրագրերին առնչվող որոշ մանրամասների, խոսեց մեր ժողովրդի համար բանակի և բանակ-հասարակություն կապի կարևորության մասին: *«Այս գիտաժողովը համարում եմ ևս մեկ միջոց մեր հասարակության՝ հատկապես երիտասարդության կապը զինված ուժերի հետ էլ ավելի ամրապնդելու համար»*, - ամփոփեց խոսքը Արման Մկրտչյանը:

Գիտաժողովը շարունակվեց նոյեմբերի 15-ին երկրորդ լիագումար նիստով, որին հաջորդեցին զեկուցումները մասնագիտական բաժանմունքներում:

Ժողովածուն ամփոփում է երկօրյա գիտաժողովի զեկուցումները:

ԲԱՅՄԱՆ ԽՈՍՔ

Հարգելի հյուրեր, հարգարժան նախարարներ, ԱԺ պատգամավորներ և պետական այրեր, սիրելի դասախոսներ և շատ սիրելի ուսանողներ

Այսօրվա միջազգային գիտաժողովը մեր անկախ պետականության ևս մեկ ուշագրավ էջ է բացում: Գիտաժողովին հրավիրված են և անձամբ կամ առցանց մասնակցում են հյուրեր Մոսկվայից, Սանկտ Պետերբուրգից, Իրանից և Իսրայելից, հյուրեր պաշտպանության, կրթության և գիտության նախարարություններից, ՀՀ Ազգային ժողովից, այլ բուհերից ու կազմակերպություններից: Խնդրում եմ ծափերով ողջունել մեր հարգարժան հյուրերին:

Ուրախ եմ, որ գիտաժողովը ընթանալու է անկախ պետականության կայացման պայմաններում, սակայն նման խորագրով միջազգային գիտաժողով կազմակերպելը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ այսօր մեր երկիրը գտնվում է պատերազմական իրադրության պայմաններում, ուստի այս նախաձեռնության գլխավոր նպատակներից մեկն է նպաստել մեր բանակի հզորացմանը, բանակին անհրաժեշտ գիտական հիմունքների ապահովմանն ու երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության բարելավմանը և, առաջին հերթին, բոլորովին վերջերս սկիզբ առած «Ազգ-բանակ» հայեցակարգի ներդրմանն ու զարգացման ապահովմանը:

Մենք համոզված ենք, որ միայն սեփական ուժերը համախմբելով կարելի է զորեղանալ և հասնել բաղձալի հաղթանակի: Իհարկե, երբեք չպետք է թերագնահատել հավատարիմ դաշնակիցների դերակատարումը, սակայն, ինչպես ցույց է տալիս պատմությունը, դաշնակիցները ևս սիրում են ուժեղներին և ավելի պատրաստակամ են հենց նրանց օգնության ձեռք մեկնելիս: Այնպես որ, մեզ այլ ելք չի մնում՝ ուժեղ լինելուց բացի, իսկ այս գիտաժողովում հնչեցված տեսակետները, բանակաշինությանն ուղղված հստակ քայլեր

առաջարկելը մեր համեստ ներդրումը կլինի հայոց բանակի հզորացման գործում:

Բարեբախտաբար, գիտաժողովը կայանում է մի ժամանակահատվածում, երբ մեր երկրի ղեկավարությունը հուսադրող քաղաքականություն է իրականացնում. մեր բանակը համալրվում է 300 միլիոն արժողությամբ ռուսական ժամանակակից հզոր զինտեխնիկայով, բոլորովին վերջերս ձևավորվել է հայ-ռուսական համատեղ զորախումբ, ՀԱՊԿ-ի գործունեությունը ավելի է կենտրոնանում մեր հանրապետությունում, Հայաստանը, լինելով ԵԱՀԿ լիիրավ անդամ, առաջիկայում Եվրոպական արևելյան գործընկերության համատեքստում պայմանագիր է կնքելու նաև Եվրամիության հետ և մեծ դերակատարում է ունենալու Եվրամիության և ԵԱՀԿ անդամ մյուս պետությունների փոխհարաբերություններում: Առավել հուսադրող է նաև այն, որ էապես բարելավվել է մեր պաշտպանության համակարգի կառավարումը, այն դարձել է առավել գիտելիքահենք և նոր ուղղվածություն է ձևավորվում «Բուհ-բանակ» համագործակցության համատեքստում: Բուհերում մեծ հետաքրքրություն է առաջացել հատկապես «Պատիվ ունեն» ծրագրի նկատմամբ:

Ավելորդ չհամարենք հիշատակել նաև այն փաստը, որ մեր գիտաժողովը տեղի է ունենում մի բուհում, որը մշտապես հետևում է հայ հասարակական, քաղաքական կյանքում տեղի ունեցող կարևորագույն իրադարձություններին, դառնում է ոչ միայն դրանց մասնակիցներից մեկը, այլև, ավելի հաճախ, ակտիվ կազմակերպիչն ու նախաձեռնողը: Առանձնացնենք դրանցից մի քանիսը.

1. 2015 թվականի ապրիլին Հյուսիսային համալսարանում կայացավ «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները» խորագրով միջազգային գիտաժողովը, որի առանձնահատկություններից էր այն, որ տեղի ունեցավ Հայոց ցեղասպանությունը ճանաչած բոլոր երկրների դրոշներով պատված մեր համալսարանում, գիտաժողովի մասնակից Ցեղասպանությունը ճանաչած բոլոր

երկրների ներկայացուցիչները արժանացան առանձնահատուկ ընդունելության, իսկ այդ երկրների համառոտ պատմությունը դասավանդվում է մեր բուհում: Դրոշների ցուցադրությամբ մեկ անգամ ևս փաստեցինք մեր հարգանքը այդ պետությունների նկատմամբ, ինչը, ի դեպ, եզակի երևույթ էր:

2. 2016 թվականի նոյեմբերին՝ որպես մեր պատմության ուշագրավ էջերի արժևորում, Հյուսիսային համալսարանում կայացավ Սանահինի համալսարանի 1050-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով, իսկ Ալավերդի քաղաքում արագորեն զարգանում է Հյուսիսային համալսարանի Ալավերդու «Թումանյան» բաժանմունքը՝ որպես Սանահինի համալսարանի արժանի հետնորդ: Սանահինի համալսարանը, հիմնադրված լինելով 966 թվականին, իր գործունեությամբ նպաստել է տարածաշրջանի բնակչության աշխարհաճանաչողությանը, զինել է օգտակար գիտելիքներով՝ բարձրացնելու նրանց բարեկեցության մակարդակը: Այս ամենի մասին հանգամանորեն խոսվեց վերոնշյալ գիտաժողովի ժամանակ:

Իսկ այսօր ««Բուհ-բանակ» համագործակցության գերակայությունը «Ազգ-բանակ» հայեցակարգի համատեքստում» խորագրով միջազգային գիտաժողովը համախմբել է բանակաշինության և արտաքին անվտանգության հարցերին հետամուտ մեր ազգի լավագույն ներկայացուցիչներին: Համոզված եմ, որ գիտաժողովը անցնելու է կազմակերպված ու կառուցողական առաջարկների մթնոլորտում:

Թույլ տվեք գիտաժողովը հայտարարել բացված և մաղթել արդյունավետ ու բեղուն գործունեության երկօրյակ:

ԲՈՐԻՍ ՄՍԿԻՉՅԱՆ

«ԱԶԳ-ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ, ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

ԱՐՄԱՆ ՄԿՐՏՁՅԱՆ

Հարավային Կովկասում և դրան հարակից տարածաշրջաններում իրադարձությունների զարգացման արդի միտումներն ավելի ակտուալ են դարձնում Հայաստանում «Ազգ-բանակ» հայեցակարգի և դրա շուրջ մեր ջանքերը համադրելու ու համախմբելու տեսլականի իրականացումը, առհասարակ մեր ժողովրդի համար բանակի և բանակ-հասարակություն կապի կարևորությունը:

Դարեր շարունակ մենք երազել ենք մեր ազգային պետության մասին: Մենք անկախություն ենք փնտրել մեր պատմության գրեթե բոլոր դրվագներում և այսօր մենք հասել ենք այդ բաղձալի երազանքին: Եվ դա մենք ձեռք ենք բերել մեր բանակի և բանակին սատար կանգնած, անձնվիրաբար իրենց ծառայությունը հայրենիքին մատուցած քաջարի հայորդիների շնորհիվ:

Հայոց բանակը մեր անկախության և անվտանգության առանցքն է: Մենք պետք է գիտակցենք, որ առանց Արցախի անվտանգության ապահովման չի կարող լինել անվտանգ Հայաստան, որ բանակում տեղի ունեցող ցանկացած իրավական, սոցիալական կամ այլ բնույթի երևույթ վերաբերում է ամբողջ հասարակությանը, որ մեր հասարակությունը չի կարող անմասն մնալ զինված ուժերին առնչվող գործընթացներից: Մենք պետք է հետևողական քայլերով շարունակենք ամրապնդել մեր հասարակության սերն ու համակրանքը բանակի նկատմամբ:

Հայաստանի յուրաքանչյուր 40-րդ քաղաքացին զինված ուժերի ծառայող է: Մենք առշունչ աշխարհի ամենամեծ թվով զինծառայող ունեցող երկրներից ենք: Մենք առաջիններից ենք աշխարհում պահեստագործում ընդգրկված մեր քաղաքացիների տոկոսային հարաբերակցությամբ: Այս իրողությո-

յունների հաշվառմամբ մենք կարող ենք իրավամբ կոչվել «Ազգ-բանակ», որի հիմնական գաղափարախոսությունը բանակի հանդեպ աշխարհասփյուռ հայության խորը հարգանքի, զինծառայողի կողքին ազգովի կանգնելու, օրհասական պահերին միմյանց անխտիր սատարելն է: Սակայն, հասարակության անվերապահ աջակցությամբ բանակաշինության գործընթացը շարունակելու և բանակն ամբողջությամբ ազգային երանգներով հագեցնելու գործում դեռևս ունենք շատ անելիքներ: Հայ ազգի ինքնագիտակցության մեջ պետք է խորացվի «զինվորական համազգեստով քաղաքացու» և «քաղաքացիական հագուստով զինվորականի» գաղափարները, որտեղ երաշխավորվում է զինծառայողների պատկանելությունը հասարակությանը՝ որպես նրա մասի, և քաղաքացիական ազգաբնակչության հարմարեցումը «Ազգ-բանակի» ստեղծման անհրաժեշտությունից բխող նոր հասարակական կարգին: Նման ձևով հնարավոր կլինի «Ազգ-բանակի» համակարգի շնորհիվ օրհասական պահերին իրականացնել մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարում:

Ավելին, «Ազգ-բանակը» ենթադրում է ոչ միայն զինված ուժերի հետագա ժողովրդավարացում և քաղաքացիական վերահսկողության ամրապնդում, այլև բանակի լիարժեք ինտեգրում երկրի տնտեսության, մշակույթի, կրթության և գիտության, սպորտի և այլ ոլորտներ: Աշխարհագրի ձևավորման այս արդիականացված հայեցակարգը միտված է ժամանակի ընթացքում ՀՀ-ում ձևավորելու այնպիսի ակտիվ և պահեստային զորք, որը անհրաժեշտության դեպքում ունակ կլինի արհեստավարժ կերպով կատարել մարտական խնդիրներ:

Այսպիսով, պատիվ ունենք ներկայացնելու «Ազգ-բանակ» հայեցակարգի հինգ հիմնական ուղղությունները.

1. զինվորական մասնագիտության արժևորում,
2. մարտական պատրաստության և պատրաստակա-
նության աստիճանի բարձրացում, այդ թվում՝ սպառազին-
ման և առաջնագծի կահավորման հարցերով,

3.ռազմարդյունաբերական համալիրի զարգացում,
4.ռազմաքաղաքական դիվանագիտության ուժեղացում,
5.արդարության և հանրային վստահության ամրապնդում¹:

Զինվորական մասնագիտության արժևորման առումով այսօր ՀՀ ՌՈՒՀ-երում առաջարկվում է որակյալ անվճար կրթություն, ապահով աշխատատեղ, մասնագիտական առաջընթացի հստակ հնարավորություններ: Մեր դպրոցներում այսօր այլ մակարդակի են բարձրացվում ռազմական և հայրենասիրական դաստիարակության խնդիրները: Վերանայվում են նախնական զինվորական պատրաստության դասագրքերի որակը և բովանդակությունը, աշխատանք է տարվում համահայկական դպրոցական ռազմամարզական խաղերի կազմակերպման ուղղությամբ:

Զինված ուժերում շարքային կազմի զինվորները ծառայության ընթացքում ունեն լրացուցիչ կրթության հնարավորություն: Դիվիզան և Ստեփանակերտ քաղաքներում «Թումո» կենտրոնի աջակցությամբ մեր զինծառայողներն անցնում են համակարգչային ուսուցում SS ոլորտում: Նախատեսվում է 1000-ից ավել ժամկետային զինծառայող ունեցող զորամասերում բացել «Թումո»-բանակ կրթական կենտրոններ, որպեսզի բոլոր զինծառայողները կարողանան համակարգչային գիտելիքներ ստանալ: Դա և զորամասում համապատասխան միջավայրի ձևավորման, և կրթական նոր հնարավորությունների ստեղծման լավագույն օրինակ է:

Մեծ ուշադրություն է դարձվում նաև բանակի միջոցով հասարակության համար լրացուցիչ ծառայությունների կամ հնարավորությունների ստեղծման վրա, որով զինված ուժերի

¹ Տե՛ս ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը Հայաստան-Միյուռք համահայկական 6-րդ համաժողովի շրջանակում սեպտեմբերի 18-ին կայացած «Ազգ-բանակ. հավաքական ներուժի զարգացման մոդել» խորագրով անցկացված նիստի ընթացքում, <http://www.mil.am/hy/news/4953>

մատակարարներն ուղղորդվում են դեպի սահմանամերձ համայնքներում իրենց արտադրությունների կազմակերպմանը, որտեղ կան էական տնտեսական արտոնություններ:

Փորձ է արվում զինվորական հոսպիտալների հնարավորությունները ծառայեցնել քաղաքացիական բնակչության կարիքները բավարարելուն, հաշվի առնելով, որ շատ տեղերում հոսպիտալները մարդկային ռեսուրսներով և համապատասխան տեխնիկայով շատ ավելի հագեցած են, քան տեղական, մարզային հիվանդանոցները:

Զինված ուժերի ղեկավարության անմիջական վերահսկողությամբ շարունակվում է սպառազինման, մարտական պատրաստության և առաջնագծի կահավորման բավական ինտենսիվ ծրագիրը: Այսօր արդեն փաստ է, որ առաջնագիծը կահավորված է առաջադեմ ինժեներական սարքավորումներով և տեսադիտարկման սարքերով:

Արդյունավետ կերպով աշխատանքներ են տարվում ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման ուղղությամբ: Այս բնագավառում կան մի շարք հնարավորություններ, այդ թվում ռազմական գիտության զարգացման և հայրենական արտադրանքը արտերկրա շուկաներ արտահանելու հեռանկարի հետ կապված:

Շարունակվում են աշխատանքները մեր դաշնակից և գործընկեր պետությունների ու միջազգային կազմակերպությունների հետ ռազմադիվանագիտական կապերի ընդլայնման և ռազմատեխնիկական փոխգործակցության ուղղությամբ: Միջազգային խաղաղապահ առաքելություններին մասնակցելու բնագավառում վաղուց արդեն սերտ համագործակցություն է ձևավորվել ՆԱՏՕ-ի և ՄԱԿ-ի հետ: Այսօր մեր խաղաղապահները առաքելություն են իրականացնում Աֆղանստանում և Կոսովոյում: ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերի հետ, իտալական հրամանատարության ներքո, մեր զորախումբը տեղակայված է Լիբանանի հարավում:

Զինված ուժերում մեծածավալ ջանք է ներդրվում կոռուպցիայի դեմ պայքարի, զինված ուժերի արդյունավետությո-

յան բարձրացման և ընդհանուր բարեվարքության ամրապնդման ուղղությամբ, ինչը նպաստում է զինված ուժերում արդարության ամրապնդման և ԶՈՒ նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը:

Անդրադառնալով «Ազգ-բանակ» հայեցակարգից բխող պաշտպանության նախարարի կողմից առաջ քաշված առանձին ծրագրերին պետք է նշենք, որ դրանք դիտարկվում են որպես նորարարական մոտեցումներ՝ ՀՀ քաղաքացիների կողմից զինված ուժերում իրենց սահմանադրական պարտքը կատարելու այլընտրանքային տարբերակներ առաջարկելու տեսանկյունից:

Առաջին ծրագիրը պայմանական կոչվում է «Պատիվ ունեմ», որն ուղղված է սպայական մասնագիտության հանդեպ նոր հետաքրքրություն խթանելուն: Գաղափարախոսությունն է բուհական տարկետումը կապել սպագա սպայական ծառայության հետ: Պետական հավատարմագրում ունեցող բուհում սովորող յուրաքանչյուր երիտասարդ իրավունք ունի դիմել այդ ծրագրին: Այն ենթադրում է բուհական տարկետում ստանալու հնարավորություն վերապահել այն քաղաքացիներն, ովքեր որոշել են երեք տարվա վճարվող սպայական նշանակում ստանալ:

Այս ծրագիրը քաղաքացիական բուհում սովորող երիտասարդներին հնարավորություն է տալիս Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում այցելել զինվորական պատրաստության դասընթացի: Քաղաքացիական բուհի դիպլոմ ստանալու դեպքում քաղաքացին բակալավրի աստիճան ստանալուն զուգընթաց կստանա նաև լեյտենանտի սպայական կոչում և երեք տարի ժամկետով ծառայության կանցնի զինված ուժերում:

Ծառայությունը կազմակերպվում է քաղաքացիական մասնագիտությունը հաշվի առնելով, բայց բոլոր դեպքերում՝ առաջնագծի զորամասերում: Այս ծրագրով ծառայող քաղաքացիները նաև ստանալու են ամսական սպայական աշխատավարձ, իսկ ծառայությունը բարեհաջող ավարտելու դեպ-

քում՝ նաև լրացուցիչ ֆինանսական բռնուս՝ իր ուսումնառության տարիների ուսման վարձի չափով:

Ծրագրում ընդգրկված անձիք պարտավորվում են.

- ուսումնառության ընթացքում 5 կիսամյակ (2-րդ կուրսի 1-ին կիսամյակից սկսած մինչև 4-րդ կուրսի 1-ին կիսամյակը ներառյալ) յուրաքանչյուր շաբաթ օր (բացառությամբ ուսումնական արձակուրդների ժամանակահատվածը) մասնակցել ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում կազմակերպվող ռազմական պատրաստության դասընթացներին,

- ուսումնառության ավարտից հետո ՀՀ զինված ուժերում անցնել սպայական ծառայություն՝ 3 տարի ժամկետով, որպես դասակի հրամանատար՝ մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պարտավորվում է ուսումնառության ավարտից հետո անձին ՀՀ զինված ուժերում նշանակել սպայական պաշտոնի՝ ստացած ռազմական մասնագիտացմանը համապատասխան:

Այս ծրագիրը քաղաքացիական և զինվորական ապագա մասնագետների ինտեգրման և երկխոսության շատ ակտիվ գործընթաց կսկզբնավորի:

Բուհում ուսումնառությունից սահմանված կարգով հեռացված, ինչպես նաև ծրագրի մասնակցությունից հրաժարված (ինչպես ուսումնառության ընթացքում, այնպես էլ՝ բուհն ավարտելուց հետո) անձիք դուրս կմնան ծրագրից՝ զրկվելով տարկետման իրավունքից և փոխհատուցելով մինչ այդ ուսանողի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև կնքված պայմանագրի հիման վրա ուսումնառության համար վճարված գումարը:

Երկրորդ ծրագիրը կոչվում է «Ես եմ». այն կոչված է խրախուսելու նրանց, ովքեր իրենք են կայացրել առաջնագծում ծառայություն անցնելու որոշումը: Այն նորակոչիկները, ովքեր ցանկություն կհայտնեն ծառայություն իրականացրել մարտական հերթապահություն իրականացնող զորամա-

սում, իրավունք կստանան անցնելու ծառայության նոր տեսակի՝ ժամկետային պայմանագրային ծառայության, որը կտևի երեք տարի:

Համաձայն այս ծրագրի՝ ժամկետային-պայմանագրային զինծառայությունն ընտրած նորակոչիկների հաշվին ծառայության ավարտին՝ 3 տարի անց, կփոխանցվի 5 մլն դրամ, որը նրանք կկարողանան օգտագործել բնակարան ձեռք բերելու, փոքր ֆերմա ստեղծելու կամ ուսման վարձը վճարելու համար:

Համաձայնվելով մասնակցել այս ծրագրին՝ զինծառայողները պետք է հինգ ամիս սովորեն, ապա ծառայության անցնեն սահմանամերձ շրջաններում: «Յուրաքանչյուր ամսվա յոթ օր նրանք տանը կանցկացնեն, մնացած 24-ը՝ զորամասերում և մարտական դիրքերում:

«Դիտակետ» ծրագիրը նոր նախագիծ է, որի շրջանակում ուսումնասիրվելու են զինվորական ծառայության հետ կապված ամենատարբեր խնդիրներ՝ զորացրված զինծառայողների կարծիքի ուսումնասիրման միջոցով: Հետազոտությունն իրականացվելու է ժամկետային զինծառայողների զորացրումից հետո՝ ամբողջ հանրապետության տարածքում:

Ծրագիրն իրականացնող կազմակերպության մասնագետների կողմից մշակվել է ծրագրային ապահովման հատուկ համակարգ:

«Դիտակետը» հնարավորություն է ընձեռում վերհանելու ծառայության ընթացքում զինծառայողի կողմից արձանագրված հիմնական բացթողումները, գնահատելու զորամասերի գույքային պայմանները, սանիտարահիգիենիկ վիճակը, սննդի և բուժօգնության որակը, բացահայտելու քաղաքացիականից զինվորական կյանքի անցնելու փուլի խնդիրները և դրանց հնարավոր նոր լուծումները:

Ուսումնասիրության շնորհիվ հնարավոր կդառնա նպատակային ու հստակ մեխանիզմներ մշակել՝ արձանագրված խնդիրները վերացնելու ուղղությամբ: Հետազոտությունն իրականացվելու է տարեկան 2 անգամ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Արդի աշխարհաքաղաքական իրավիճակում և առկա մարտահրավերների գոյության պարագայում պատերազմական գործողություններում հաջողության հասնելու համար առանձնահատուկ նշանակություն ունի զինված ուժերի հետ քաղաքացիական բնակչության սերտ կապվածությունը, փոխգործակցությունը, համագային գաղափարի շուրջ համախմբումն ու հասուն քաղաքացիական հասարակության ձևավորումը, պահեստագործի պատրաստության աստիճանն ու զորահավաքի ճկունությունը, ինչն արտացոլված է պաշտպանության նախարարի կողմից առաջ քաշված «Ազգ-բանակ» հայեցակարգի դրույթներում:

Հայեցակարգի ոգուն համահունչ բանակը ավելի կազմակերպված և շարժունակ ստորաբաժանումների, արդիական սպառազինության միջոցներով և թվայնացված կառավարմամբ հանդերձ մեր հաղթանակների և ռազմական գերազանցության հիմնական գրավականն է:

Բանալի բառեր՝ «Ազգ-բանակ» հայեցակարգ, բանակ-հասարակություն կապ, պահեստագործի պատրաստություն, ազգային պետություն, ռազմարդյունաբերական համալիր, հայկական զինված ուժեր

РЕЗЮМЕ

■ АРМАН МКРТЧЯН

КОНЦЕПЦИЯ НАЦИЯ – АРМИЯ, ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ

В современной геополитической обстановке и при наличии существующих вызовов, с целью достижения успеха в ходе военных действий особое значение имеет тесная взаимосвязь и взаимодействие вооруженных сил с гражданским населением страны, сплоченность вокруг общенациональной идеологии и формирование зрелого гражданского общества, степень подготовленности военного резерва и гибкость мобилизации, что отражено в основах Концепции Нация-Армия, выдвинутой министром обороны РА.

Основным залогом наших побед и военного превосходства является Армия, которая созвучна с духом Концепции, имеющая

более организованные и мобильные подразделения, средства современного вооружения и оцифрованное управление.

Ключевые слова: Концепция «Нация–Армия», связь Армия–общество, подготовка резерва, национальное государство, военно–промышленный комплекс, вооруженные силы Армении

SUMMARY

■ ARMAN MKRTCHYAN

THE ARMY-NATION CONCEPT: TRENDS OF DEVELOPMENT

In current geopolitical situation and in the case of existing challenges the close relationship and cooperation between the armed forces and the wider society; the formulation of mature civilian society and the consolidation around panarmenian ideology; the level of preparedness of army reserve forces and the flexibility of nationwide mobilization are of paramount importance in order to succeed in combat operations. These ideas are reflected in the fundamentals of the Nation-Army Concept brought forward by the Minister of Defense of Armenia.

An Army which is in accordance with the spirit of the Concept, with better organized and agile units, contemporary armaments and digitalized governance is the main assurance of our victories and military excellence.

Key words: *Nation-Army concept, Army-Society relationships, Army reserve force training, Nation State, Military Industrial complex, Armenian Armed Forces*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԱԿԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ

ՄԵՐԳՈՒ ԵՐԻՑՅԱՆ

Ցանկացած երկրի համար կրթություն և բանակ փոխհարաբերությունները միշտ էլ հրատապ են, քանի որ կրթության ասպարեզում, որպես կանոն, սովորում են երիտասարդները, որոնք նաև պետք է կատարեն իրենց զինվորական պարտքը հայրենիքի նկատմամբ: Պատմության ընթացքում այս իրողությունը տարբեր դրսևորումներ է ունեցել: Հեռու չգնանք, հիշենք խորհրդային տարիները, երբ մենք, ուսանելով բուհում, նաև զուգահեռաբար ռազմական պատրաստություն էինք անցնում, և այդ բոլորի հանրագումարում սպայի կոչում էինք ստանում, այդ կերպ կատարած համարում զինվորի մեր պարտքը:

Հետխորհրդային տարիներին վերացվեցին ռազմական ամբիոնները, չնայած պահպանվեց տարկետման իրավունքն ինստիտուտում, որը թույլ էր տալիս ուսման և գիտության ուղին ընտրած երիտասարդներին սովորել կրթական տարբեր աստիճաններում՝ ընդհուպ պաշտպանել գիտական աստիճան՝ ազատվելով զինվորական ծառայությունից և զբաղվել գիտությամբ:

Ժողովրդագրական փոփոխությունները, որոնց մասին քիչ է խոսվում, արել են իրենցը և գնալով պակասում են այն տղաների՝ ապագա զինվորների թիվը, ովքեր կարող են ծառայել հայոց բանակում:

Ահա այստեղ է, որ առաջ են գալիս դժվարությունները բանակին անհրաժեշտ թվաքանակով ու որակով զինվորներ ապահովելու համար: Փակագծերում նկատենք, որ որակի խնդիրը առաջնային է, քանի որ ժամանակակից սպառազի-

նություն ունեցող բանակին գիտելիքների որոշակի մակարդակ ունեցող զինվորներ և սպաներ են պետք¹:

Վերջերս ՀՀ պաշտպանության նախարարության կողմից շրջանառվել և ընդունվել են օրենսդրական նախագծեր, որոնք վերացնում են տարկետումը, իհարկե, չբացառելով երիտասարդների անընդհատ կրթությունը կրթական տարբեր աստիճաններում, երբ այս կամ այն երիտասարդը՝ կրթության հավակնորդը, հնարավորություն ստանա իր կրթությունը շարունակելու²: Այլ խոսքով, նախանշելով ինչ-ինչ ռազմավարական ուղղություններ, ավելի քան վստահ ենք, որ ենթաօրենսդրական ակտերի միջոցով կառաջարկվեն որոշակի լուծումներ՝ առանձին ծրագրերի միջոցով՝ հաշվի առնելով գիտական ուղղության առաջնայնությունը և ուսանողի կամ դոկտորանտի կրթական մակարդակը:

Այս ամենով հանդերձ՝ խնդրի լուծումների ուղղությունները պետք է տարբեր լինեն և պաշտպանեն նաև կրթության շարունակականության առավելությունները: Այլ խոսքով՝ անհրաժեշտ լուրջ ծրագրային մոտեցումներ ցուցաբերել մագիստրատուրայի և դոկտորանտուրայի նկատմամբ, որոնցում պետք է դրսևորել ճկուն մոտեցումներ, որովհետև նոր համակարգի ներդրումը հնարավորություն կտա նոր մոտեցումներ ունենալ գիտության զարգացման գործում:

Գաղտնիք չէ, որ այսօր մագիստրատուրան և դոկտորանտուրան պետք է մոտեցնել կյանքին՝ մեզ համար հրատապություն և լուծումներ պարունակող ոլորտներին, այդ թվում և ռազմական ասպարեզին:

Այս առումով արմատական բարեփոխումների կարիք ունի մասնավորապես մագիստրատուրան: Եթե մենք առայժմ պատրաստ չենք փոխելու բակալավրիատի 4 տարին՝ այն զուգակցելով մագիստրատուրայի 3+2 տարիներով, ապա

¹ ՀՀ ՊՆ-ի պատասխանները «Պատիվ ունեմ», «Ես եմ» ծրագրերի գծով, <http://www.yerkir.am/news/view/140370.html>

² «Պատիվ ունեմ», «Ես եմ» ծրագրեր, <https://razm.info/116764>

մեզ համար այսօր հրամայական է լուծումներ գտնել 4+1 տարբերակի համար, մանավանդ այդ հնարավորությունը մեզ տալիս են գործող օրենքը և այն քարացած մոտեցումները, որոնք այսօր կան մեր մագիստրատուրայում, երբ շատ մասնագիտությունների գծով բուհերը ձգտում են «հրաշքներ» գործել և մի կերպ տարբեր առարկաներով լցնել այդ երկու տարին:

Իսկ դրան հակառակ արտասահմանում ձգտում են մագիստրոսական կրթության, տնտղությունն ավելի արդյունավետ դարձնել և ուսումն ավարտել մեկ ակադեմիական տարվա ընթացքում: Ինչ խոսք, որ այս կերպ շահում են բոլորը:

Տարիներ առաջ ՀՀ ԿԳ նախարարի կարգավիճակում առիթ ունեցա այցելելու Ռուսիոյի մայրաքաղաք Բուխարեստում գտնվող գիտաուսումնական կենտրոն, ուր կրթություն էին ստանում մագիստրոսական ծրագրերով, իսկ այդ ծրագրերն առնչություն ունեին բանակին և ռազմական գործին: Ուսումնառության ժամանակաշրջանը մեկ տարի էր և այդ շրջանը համարվում էր բանակում ծառայության անբաժանելի մասը, իսկ կրթության արդյունքը բացառապես առնչվում էր բանակին և բանակաշինությանը: Այն նաև հարթակ էր ծառայում կրթությունը դոկտորանտուրայում շարունակելու համար, եթե ուսումնասիրվող թեման տարողունակ էր և հետաքրքրություն էր ներկայացնում բանակի համար: Սա մոդելներից մեկն է: Գուցե մե՞նք էլ կարող ենք գտնել կրթության և ծառայության զուգահեռ կազմակերպման մեր՝ ավելի նպատակային և արդյունավետ տարբերակները:

Իհարկե կարող ենք: Պարզապես պետք է գնալ անընդհատ որոնումների ճանապարհով:

Հիմա առնչվելով խնդրահարույց մեր ժամանակին՝ կարելի է Հայաստանի բանակում սպային հնարավորություն տալ նախ ժամանակ շահել մեկ տարվա տեսքով, նրա ուսումնառությունը սահմանել մեկ տարվա կտրվածքով և երկրորդ՝ ցանկության դեպքում սովորել ծառայությանը զուգահեռ՝ հեռահար և հեռավար ծրագրերով:

Իսկ այդ ծրագրերը պետք է լինեն բացառապես բանակի խնդիրներին արձագանքող, բանակի դժվարությունները հաղթահարող:

Եվ այս ամենից հաղթանակով դուրս կգան բոլորը՝ և՛ կրթությունը, քանի որ նոր մոտեցումների շնորհիվ կունենանք կյանքին համահունչ ժամանակակից կրթական ծրագրեր, և՛ բուհը, որը «դատարկ փամփուշտներով» կրակոցներ չի ունենա, և՛ մեր բանակը, որին մենք օգնած կլինենք ոչ թե խոսքով ու հայտարարություններով, զգացումներով ու զգացմունքներով, այլ կոնկրետ գործով ու արդյունքով, գիտելիքահենք ներդրումներով:

Մենք այսօր ինչո՞ւ չունենանք գեներալներ, ովքեր հրաշալի ճարտարագետներ են ու ճարտարապետներ, ռազմագետներ և համակարգչային տեխնիկայի և տեխնոլոգիայի տիրապետողներ ու ստեղծողներ կլինեն: Իսկ այս ճանապարհը կարող են անցնել միայն ու միայն կրթյալ, ուսյալ, նվիրյալ երիտասարդները, ովքեր հավանաբար զինվորական ծառայությունն ավարտելով կամ շարունակելով մտածեն դոկտորանտուրայում ուսանելու մասին՝ տարբեր եղանակներով՝ և՛ առկա, և՛ հեռակա, և՛ հեռավար և իսկական գիտնական դառնան, և ոչ թե կյանքից, իրականությունից հեռու և կտրված թեմաներով պարզապես մտքի տարբեր վարժություններ անելու, այլև կանգնելու հայոց բանակի, պետականության, դրանով իսկ գիտության կողքին՝ կոնկրետ երկրին օգուտ բերող և ոչ թե անհասցե, անատամ, անհետաքրքիր ծրագրերով:

Գաղտնիք չէ, որ այսօր մեր բանակն իր կրթական մակարդակով խնդիրներ ունի, որովհետև միշտ չէ, որ այսօրվա ծառայությունն անցնողները փայլում են իրենց գրագիտությամբ:

Իսկապես, և ոչ մի կրթական ծրագրում սովորելը չպետք է դառնա պատրվակ բանակում ծառայելուց խուսափելու, այլ ցանկացած կրթական ծրագրին հայ երիտասարդի մասնակցությունը պետք է աջակցություն լինի հայոց բանակին: Ի-

հարկե, երբեք չմոռանալով, որ երկրի և բանակի հզորությունը նաև ցանկացած հայաստանցի երիտասարդի կրթվածության մեջ: Եվ բուհ-բանակ համագործակցությունը չպետք է տեսնել ու սահմանափակվել միայն դասավանդման գործընթացով:

Այսօր բարձրագույն կրթության երրորդ աստիճանում կատարվող հետազոտությունների և պաշտպանվող ատենախոսությունների շատ չնչին մասն է վերաբերում ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման խնդիրներին: Մեր կարծիքով, հենց սկզբից ռազմաարդյունաբերական հատվածին պետք է առնչվի հաստատվող թեմաների մի որոշ մասը, օրինակ, 10-15 տոկոսի չափով: Բնականաբար, այստեղ պետք է գործի սերտ համագործակցության ՀՀ ԿԳՆ և պաշտպանության նախարարությունների միջև: Այս կերպ շատ թեմաներ օգտակար կլինեն բանակաշինությանը՝ կոնկրետ խնդիրներ կլուծեն, իսկ ապագա գիտնականը մոտ կանգնած կլինի հայոց բանակին, եթե ուրիշ բան չլինի՝ իր բարձր կրթությամբ և դաստիարակությամբ: Այսօր, ցավոք, հայրենասիրական դաստիարակության մասին հիշում են, երբ դրա կարիքը կա: Իսկ չէ՞ որ հայրենասիրական դաստիարակությունը մեզ ուղեկից պետք է լինի ամենուր՝ ուսումնական հաստատություններում, ընտանիքում, աշխատանքում: Հայրենասիրական դաստիարակության թեման չպետք է կրի ձևական և ժամանակավոր բնույթ:

Յուրաքանչյուր ուսումնական հաստատություն պետք է մշտական կապ ունենա զորամասերի հետ և պարբերաբար ապագա զինվորները, և ոչ միայն նրանք, պետք է հնարավորություն ունենան այցելել այնտեղ, տեսնել այն կյանքը, որով ապրում են զինվորները: Միաժամանակ անընդհատ քայլեր պետք է անել նպաստելու, որ ինչ-որ կերպ թեթևանա բանակում զինվորական և սպայական ծառայությունը:

Այս գործընթացները այնպես պետք է կազմակերպվեն, որ ապագա զինվորները ծանոթանան զորամասերին և կարողանան նախապատրաստվել ծառայությանը:

Բուհերը պետք է կարողանան ոչ միայն նպաստել զինվորների գիտելիքային հենքին, այլև օգնություն և աջակցություն ցուցաբերել նոր տեխնիկայի և տեխնոլոգիաների արատավորման գործում: Բուհերը կարող են զորամասերին օգտակար լինել գրադարանների հարստացման և համալրման գործում: Ուսանողական նստարանին պետք է առաջին պլանում դրվի ռազմահայրենասիրական դաստիարակությունը, ինչպես տարբեր հումանիտար առարկաների դասավանդման, այնպես էլ ամենատարբեր միջոցառումների կազմակերպման միջոցով: Ամեն ինչ թիրախավորված պետք է լինի ուսանողի ռազմահայրենասիրական ոգու բարձրացմանը: Այստեղ ոչինչ ավելորդ չի կարող լինել՝ մեր պատմական անցյալի ներկայացումից մինչև մեր զինվորների նորօրյա հերոսությունները: Ամեն անգամ խոսակցությունը պետք է լինի բաց ու անմիջական:

Այս պարագայում պակաս կարևոր չէ նաև ծառայության մեկնած ուսանողի ուսումնական հաստատության հետ կապի պահպանումը, որը կարող է նաև հնարավորություն տալ ուսումնառության շարունակումը՝ նոր, ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով, մանավանդ, որ նախկին ուսանողները և արդեն բանակի սպաները մեկ շաբաթ տան հանգիստը վայելելու հնարավորություն ունեն, և դա կարող են օգտագործել ուսման գործը շարունակելու նպատակով:

Ուսումնական հաստատություն-բանակ փոխհարաբերությունները կարող են բազմաշերտ լինել: Այստեղ ոչինչ երկրորդական լինել չի կարող:

Միայն համապատասխան ենթաօրենսդրական փաթեթների ընդունումից հետո հնարավոր կլինի այդ ամենը բերել կարգավորման ավելի կուռ ու ամբողջական դաշտ և ավելացնել այն, ինչ մասնավորապես կարող է անել բուհական հանրությունը: Մանավանդ, որ երկրի պատմությունը վկայում է՝ մեր կյանքի բոլոր ոլորտները միշտ սերտ կապ են ունեցել հայոց բանակի հետ: Ուստի օրվա և ժամանակի հրա-

մայականն է անընդհատ պահել, փայփայել և հզորացնել այդ ուժը:

Բացառություն չի կարող լինել և կրթությունը, որը ևս պետք է լինի երկրի պաշտպանական խնդիրների կողքին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում դիտարկվում են այն փոխհարաբերությունները, որ կան և կարող են լինել կրթական համակարգի և բանակի միջև՝ կապված այն բարեփոխումների հետ, որոնք իրագործվում են երկու համակարգերում: Մասնավորապես, առկա բարեփոխումները ենթադրում են նոր մոտեցումներ ցուցաբերել մագիստրոսական և ասպիրանտական (դոկտորական) աստիճաններում, կրթությունն ավելի ու ավելի մոտեցնել բանակաշինության խնդիրներին՝ միաժամանակ ապահովելով շարունակական կրթության կիրառումը՝ առավել շնորհալի, գիտելիքներ ունեցող երիտասարդների համար:

Նման իրավիճակում առավել կարևորվում է ռազմահայրենասիրական դաստիարակության թիրախային և նպատակային կիրառումը կրթական ասպարեզում:

***Բանալի բառեր՝** կրթություն, կրթական ծրագրեր, հայոց բանակ, բանակաշինություն, բակլավրիատ, մագիստրատուրա, դոկտորանտուրա, հեռակա, հեռավար ծրագրեր, ռազմահայրենասիրական դաստիարակություն*

РЕЗЮМЕ

■ СЕРГО ЕРИЦЯН

ПРОБЛЕМЫ СИСТЕМЫ ОБРАЗОВАНИЯ АРМЕНИИ И СТАНОВЛЕНИЕ АРМИИ

В статье рассматриваются взаимоотношения между системой образования и армией, в констелте реформирования в этих двух системах. В частности, существующие реформы подразумевают новые подходы на уровне магистра и аспирантуры, приближая образование к вопросам армейского строительства. В этой связи становится важным обеспечение дальнейшего использования

образования для самых одаренных, знающих молодых людей. В такой ситуации целевое и целенаправленное использование военно-патриотического воспитания также становится приоритетным в области образования.

Ключевые слова: образовательные программы, армянская армия, развитие армии, бакалавр, магистратура, докторантура, дистанционное обучение, военно-патриотическое воспитание

SUMMARY

■ SERGO YERICHYAN

THE ISSUES OF ARMENIAN EDUCATION AND ARMY FORMATION

In the article are considered the interrelationships between the system formation and the army, in the reform of the constitution of the two systems. In the very notion that the reforming fields will complement the new approaches to the undergraduate and graduate studies, applying the understanding of the Armed Forces. In this connection, great care is used for the learning of the most well-known people known to everybody. In this case, the military-patriotic education will also be prioritized in the formation of the region.

Key words: *education programs, Armenian Army, development armed forces, bachelor, masters, doctoral studies, distance learning, military-patriotic education*

**ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ՝
ՀԱՅՐԵՆԱՀՁՈՐԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ**

ԲՈՐԻՍ ՄԱԿԻՉՅԱՆ

Վերջին երկու հարյուր տարիների պատմությունն ապացուցում է, որ հայ և ռուս ժողովուրդները բարեկամներ ու դաշնակիցներ են: Դրա վկայությունը Ռուսաստանում բնակություն հաստատած հայկական ծագում ունեցող շուրջ 4 միլիոն քաղաքացիների առկայությունն է, համատեղ ամուսնությունները, 20-րդ դարում Ռուսաստանի աջակցությամբ կառուցված հայկական գեղեցիկ քաղաքները և արդյունաբերական հսկաները: Հիշատակենք նաև Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ճակատամարտում հայերի կողմից ռուսներին ցուցաբերած նշանակալի աջակցությունը, ինչի շնորհիվ նաև թուրքերը պարտություն կրեցին: Հիշատակելի է նաև այն փաստը, որ Ռուսաստանի Դաշնությունն առաջիններից մեկը ճանաչեց ու դատապարտեց Օսմանյան կայսրության կողմից 1915 թվականի ապրիլին իրականացրած Հայոց ցեղասպանությունը: Իսկ հետխորհրդային տարիներին կնքված ԱՊՀ, ՀԱՊԿ, ԵԱՏՄ, հայ-ռուսական բարեկամության, Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքված համատեղ զորամիավորում ստեղծելու պայմանագրերը էլ ավելի ամրապնդեցին երկու ժողովուրդների բարեկամությունը՝ հաստատելով այն փաստը, որ հայ և ռուս ժողովուրդները դաշնակիցներ են, միմյանց բարգավաճմանը նպաստող անփոխարինելի գործընկերներ: Մեր խորին համոզմամբ՝ այսօր Ռուսաստանի և մեր դարավոր թշնամի Թուրքիայի միջև ձևավորվող դաշնակցային փոխհարաբերությունները ժամանակի պարտադրանք են, դրանք չեն կարող խաթարել հայ-ռուսական բարեկամությունը: Կարծում ենք, որ Ռուսաստա-

նը հարմար պահի Թուրքիայից կպահանջի Հայոց ցեղասպանության ճանաչում և վնասի փոխհատուցում:

Նկատենք, որ մեր երկու ժողովուրդների համագործակցությունը վերջին շրջանում առանձնահատուկ հաջողություններ է արձանագրել հատկապես գիտության և բարձրագույն կրթության ոլորտում: Թեպետ ռուսական բուհերը մասնաճյուղեր չունեին Հայաստանում, սակայն ԽՍՀՄ տարիներին մեզանում գործող 14 հայկական պետական բուհերի մեծ մասում առկա էին ռուսական բաժանմունքներ, և Հայաստանում բնակվող ռուսները, ինչպես նաև ռուսաց լեզվով կրթություն ստանալ ցանկացողները սովորում էին այդ բաժանմունքներում, ստանում էին Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան որակյալ բարձրագույն կրթություն՝ ուսումնասիրելով ԽՍՀՄ, Ռուսաստանի և Հայաստանի պատմությունները և գիտության ժամանակակից նվաճումները: Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության դիպլոմը ճանաչվում էր այն երկրներում, որոնց հետ ԽՍՀՄ-ը դիվանագիտական հարաբերություններ ուներ: Արդյունքում շահում էին և՛ կրթություն ստացողները, և՛ Հայաստան երկիրը: Հայաստանում բարձրագույն կրթություն ստացած բոլոր քաղաքացիները՝ անկախ կրթության լեզվից, կարող էին ընդունվել մոսկովյան և արտասահմանյան երկրների բուհերի ասպիրանտուրաներ, ստանալ գիտական աստիճաններ և դասախոսական աշխատանքի անցնել ՀՀ բուհերում:

Ցարական Ռուսաստանը, ժամանակին ուսումնասիրելով պրոսական առաջավոր բարձրագույն կրթական համակարգը, այն զարգացրել էր և աշխարհում առաջատար դերակատարում ուներ, Խորհրդային Միությունն էլ իր հերթին պահպանել և զարգացրել էր ցարական բարձրագույն դպրոցի լավագույն ավանդույթները: Նախորդ դարում հայկական բարձրագույն դպրոցը, լինելով խորհրդային բարձրագույն դպրոցի լավագույն մասերից մեկը, պահպանում էր լավա-

գույնի իր կարգավիճակը՝ որոշ բուհերում ունենալով նաև ոչ հայալեզու բաժանմունքներ, ինչպես նշեցինք վերը:

Ցավոք, մեզ չհաջողվեց պահպանել մեր լավագույն ավանդույթները, և այսօր Հայաստանի բուհական համակարգը դարձել է արտագաղթի միջոց, ինչն աղետալի է մի երկրի համար, որի բնակչությունը տարեցտարի նվազում է:

Բոլոնիայի գործընթացի համատեքստում լուծարվել են նախկին բուհերի ոչ հայալեզու բաժանմունքները, և Հայաստանում բնակվող այլ պետությունների ազգային համայնքների բարձրագույն կրթության կազմակերպման նպատակով երաշխավորվել է այդ պետությունների բուհերի կամ բուհերի մասնաճյուղերի հիմնադրումը Հայաստանում, մյուս կողմից՝ ժողովրդավարության ռազմավարության համատեքստում, Հայաստանում հիմնադրվել են նաև ոչ պետական հայկական բուհեր:

Այսօր Հայաստանում գործում են 15-ից ավելի արտասահմանյան բուհեր, որոնցից 10-ը ռուսական են, մյուսները՝ ամերիկյան, ֆրանսիական, բելառուսական, ուկրաինական, եվրոպական և այլն:

Մեր կարծիքով, դաշնակից Ռուսաստանի հետ մեր կրթամշակութային հարաբերությունները առավել արդյունավետ կլինեն, եթե կառուցվեն ավելի արդարացի սկզբունքների վրա: Ցավոք այդպես չէ. այսօր Ռուսաստանում բնակվում են շուրջ 4 միլիոն հայեր, մինչդեռ Հայաստանում բնակվող ռուսալեզու բնակչությունը կազմում է շուրջ 200.000, այսինքն՝ 20 անգամ պակաս: Հայաստանում առկա ռուսական համայնքը զգալիորեն փոքր է Ռուսաստանում բնակվող հայկական համայնքից, սակայն Հայաստանի ռուսական համայնքի կրթության նպատակով հիմնադրված բարձրագույն ուսումնական հաստատությունների թիվը չափազանց մեծ է, այն դեպքում, երբ Ռուսաստանի հայկական համայնքի կրթությունը կազմակերպող որևէ բուհ չկա:

Վերն արդեն արտահայտեցինք մեր մտահոգությունն այն մասին, որ Հայաստանում գործող արտասահմանյան

բուհերը այսօր դարձել են արտագաղթի միջոց: Հիմնավորենք մեր տեսակետը: Հայաստանի երիտասարդ քաղաքացիները, ստանալով արտասահմանյան որևէ երկրի, ասենք Ռուսաստանի բարձրագույն դպրոցի դիպլոմ, մեծ հնարավորություն են ունենում ապրելու և աշխատելու այդ երկրում և շատ հաճախ ընտրում են արտագաղթի ճանապարհը: Այդ իսկ պատճառով առաջիկայում անհրաժեշտ է լուրջ միջոցներ ձեռնարկել Հայաստանում գործող արտասահմանյան բուհերի թվի կրճատման ուղղությամբ: Իհարկե, մենք չպետք է մոռանանք Ռուսաստանի, Ամերիկայի և Ֆրանսիայի հայաստանյան համայնքների մեծացման և ամրապնդման անհրաժեշտությունը, նկատի ունենալով այդ երկրների դերակատարումը դարափառյան հարցի լուծման գործում և, ինչու չէ, հաշվի առնելով, որ անցանկալի պատերազմի դեպքում այդ խոշոր երկրներն իրենց համայնքների անվտանգության նկատառումներից ելնելով առավել ակտիվ կլինեն նաև Հայաստանի անվտանգության ապահովման գործում:

Բոլոր դեպքերում մի կողմից արտագաղթի նվազեցման, իսկ մյուս կողմից՝ Հայաստանի քաղաքացիների հայեցի դաստիարակության և նրանց բարձրագույն կրթությունը Հայաստանում կազմակերպելու և նրանց հայ պահելու նպատակով անհրաժեշտ է Հայաստանում գործող արտասահմանյան բուհերի թիվը հասցնել նվազագույնի:

Իհարկե, մենք չենք կարող բռնությամբ կամ ներքին օրենսդրությամբ կրճատել այդ բուհերի թիվը՝ նկատի ունենալով նաև հայ-ռուսական կրթամշակութային հարաբերությունների արժևորումը: Առաջին հերթին՝ մենք պետք է մեր երիտասարդության համար հայկական բուհերը առավել գրավիչ դարձնենք: Մենք պետք է հետևենք նաև Եվրամիության անդամ պետություններին և հիշենք մեր անցյալի լավագույն ավանդույթները՝ բոլոր ուսումնական հաստատություններում կրթությունը անվճար կազմակերպելու ուղղությամբ: Անհրաժեշտ է այսօր ազգային բուհերում կրթությունը դարձնել անվճար երկրի քաղաքացիների համար, նկատի ունենա-

լով, որ Եվրամիության անդամ պետությունները պետական բուհերում իրենց և Եվրամիության անդամ մյուս պետությունների քաղաքացիների բարձրագույն կրթությունը կազմակերպում են անվճար, ինչը մենք ունեցել ենք 20-րդ դարում:

Մեր կարծիքով՝ առաջիկա տարիներին պետք է վերականգնենք մեր անցյալի լավագույն ավանդույթը՝ անվճար ուսուցում, կրթաթոշակների շնորհում, գերազանցիկներին՝ անվանական կրթաթոշակներ, կարիքավորներին՝ հանրակացարան, շրջանավարտներին՝ աշխատանքի նշանակում և այլն:

Իհարկե, այդ ամենին միանգամից հասնելը հնարավոր չէ, ուստի առաջարկում եմ հետևյալը.

1. Ոչ առևտրային իրավակազմակերպական ձև ունեցող հայկական բոլոր բուհերում՝ պետական և ոչ պետական, սահմանել պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունք՝ բակալավրի կրթական ծրագրի շրջանակներում, իսկ մագիստրատուրայում այն պահպանել բակալավրիատը գերազանցության դիպլոմով ավարտողների համար:

Երկրի պաշտպանության շատ կարևոր խնդրի ապահովման նպատակով 2018-2019 ուստարվանից վերոհիշյալ բոլոր բուհերում դասավանդել ռազմագիտություն առարկան: Նման որոշում կայացվել է 2017 թվականի մարտի 10-ին՝ Հյուսիսային համալսարանում կայացած պետության կողմից հավատարմագրված հայկական համալսարանների ներկայացուցիչների ժողովում, որը գումարվել էր «Ազգ-բանակ» գաղափարի համատեքստում «Բուհ-բանակ» համագործակցության բարելավման նպատակով:

Ռազմագիտության պարապմունքները աղջիկների համար նախատեսել կամավորության սկզբունքով:

2. Պետական և ոչ առևտրային ոչ պետական հայկական բուհերում 2018-2019 ուստարուց սկսած՝ ՀՀ քաղաքացիներին տրամադրել պետպատվերով անվճար ուսուցման իրավունք բակալավրի կրթական ծրագրով լիցենզիայով սահմանված

տեղերի 50%-ի չափով, մագիստրատուրայում այն շարունակել բակալավրիատը գերազանցությամբ ավարտողների համար: Հաջորդ յուրաքանչյուր տարում անվճար ուսուցման տեղերը ավելացնել 10%-ով:

3. Հարկային արտոնություններ ընձեռել այն ոչ առևտրային իրավակազմակերպական ձև ունեցող ոչ պետական բուհերին, որոնք իրենց միջոցների հաշվին կկազմակերպեն ՀՀ քաղաքացիների անվճար ուսուցում՝ լիցենզիայով սահմանված տեղերի 10%-ից ավելի չափով:

4. Խրախուսել ոչ առևտրային կարգավիճակ ունեցող պետական և ոչ պետական հայկական բուհերին, որոնք կհիմնադրեն ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով բաժանմունքներ և այդ բաժանմունքներում կկազմակերպեն արտասահմանյան քաղաքացիների կրթությունը:

Արտասահմանյան քաղաքացիների բարձրագույն կրթությունը ՀՀ բուհերում որակով և արդյունավետ կազմակերպելու միջոցով մենք կբարձրացնենք մեր երկրի հեղինակությունը, կնպաստենք Հայաստանի՝ որպես գիտելիք արտահանող երկրի վարկանիշի ձևավորմանը:

Հայաստանի բարձրագույն դպրոցներում բարձրագույն կրթություն և համապատասխան գիտելիքներ ձեռք բերած արտասահմանցիները ուսումնառության ընթացքում կսովորեն նաև հայոց լեզուն թեկուզ կենցաղային հարաբերությունների մակարդակով՝ դրանով իսկ մենք գիտելիքի հետ կարտահանենք նաև հայոց լեզուն, ինչը կնպաստի համապատասխան երկրներում առկա հայկական համայնքների ամրապնդմանը: Հզոր Հայաստան մենք ունենալու ենք տարբեր երկրներից հայերի ներգաղթի և սփյուռքի հայկական համայնքների ամրապնդման միջոցով:

5. Անհրաժեշտ է առաջարկել Ռուսաստանի Դաշնության կրթության և գիտության նախարարությանը՝ աջակցելու ոչ առևտրային կարգավիճակ ունեցող այն հայկական բուհերին, որոնք Ռուսաստանի Դաշնության հայաշատ վայրերում մասնաճյուղեր կհիմնադրեն:

Միաժամանակ Ռուսաստանի Դաշնության կրթության և գիտության նախարարությանը առաջարկել հայ-ռուսական կրթամշակութային հարաբերությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Ռուսաստանի հայաշատ վայրերում գործող ռուսական բուհերի կազմում հայկական բաժանմունքների հիմնադրմանը աջակցելու և խրախուսելու համար:

6. Առաջարկել Ռուսաստանի հայերի միության նախագահ պրն Աբրահամյանին՝ աջակցել Ռուսաստանի հայաշատ վայրերի բուհերում հայկական բաժանմունքներ և այդ վայրերում հայկական բուհերի մասնաճյուղեր հիմնադրելու գործին:

7. Հարց բարձրացնել ԱԺ կրթության, գիտության և մշակույթի մշտական հանձնաժողովի առջև՝ աջակցելու Ռուսաստանի հայախիտ վայրերի ռուսական բուհերում հայկական բաժանմունքներ և հայկական բուհերին այդ վայրերում մասնաճյուղեր հիմնադրելու գործին, ինչպես նաև աջակցել հիմնադրամի մասին օրենքում փոփոխություններ կատարելու հարցում՝ այն հաշվով, որ առևտրային իրավակազմակերպական ձև ունեցող բուհերը նույնպես վերակազմակերպվեն հիմնադրամի:

8. ՀՀ ԿԳ նախարարության աջակցությամբ առաջարկել ՀՀ Կառավարությանը՝ Հայաստանում հիմնադրելու «Բարձրագույն կրթության աջակցության» կառավարական հիմնադրամ, որտեղ ներդրումներ կկատարեն Հայաստանի քաղաքացիները, ինչպես նաև բազմաթիվ հայրենասեր սփյուռքահայեր: Կառավարությունը այդ միջոցները կտրամադրի հայկական բուհերում պետպատվերով անվճար ուսուցման գործին, որով կթեթևացնի պետության հոգսերը:

9. Պետականորեն խրախուսել այն հայկական բուհերին, որոնք արտասահմանյան երկրներում մասնաճյուղեր կհիմնադրեն: Բազում տարիներ հայկական բոլոր բուհերում դասավանդվել է ռուսաց լեզուն՝ որպես պարտադիր ուսումնական առարկա: Եթե խորհրդային տարիներին ՀՀ բուհերում

ռուսաց լեզվի դասավանդումը հիմնավորվել է որպես միասնական պետական լեզու, ապա 1991 թվականից այն համարվել է Հայաստանի հավատարիմ բարեկամ և դաշնակից ժողովրդի լեզու, գիտության բազմաթիվ ոլորտների ուսումնասիրության արդյունավետ միջոց, հայ և ռուս ժողովուրդների բարեկամության հարատևության գրավական:

Ուշադրության է արժանի այն, որ ՀՀ Կառավարության կողմից 2014 թվականի հոկտեմբերի 23-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերը հաստատելու մասին» № 1191 որոշման մեջ «Ռուսաց լեզուն» որպես մասնագիտական կրթական ծրագիր ներառված է.

1. Մասնագիտական մանկավարժություն,
2. Լեզվաբանություն,
3. Օտար լեզու և գրականություն մասնագիտությունների ցանկերում:

Կարծում եմ՝ նույն վերաբերմունքը պետք է մեր նկատմամբ դրսևորի նաև Ռուսաստանի Դաշնությունը: Սակայն այսօր հայոց լեզուն չի դասավանդվում նույնիսկ ռուսական հայախիտ վայրերի բուհերում՝ որպես ռուս ժողովրդի հուսալի բարեկամ և դաշնակից ժողովրդի լեզու:

Մյուս կողմից՝ հայոց լեզուն աշխարհի ամենամարդասիրական կրոնը՝ քրիստոնեությունը պետականորեն առաջինը ճանաչած պետության լեզուն է: Հայոց լեզուն այն ժողովրդի լեզուն է, որ 1050 տարի առաջ համալսարան է հիմնադրել (Սանահինի համալսարանը) և ժողովուրդների բարեկամությունը ապահովելու ակնկալիքով Եվրասիական տարածաշրջանում առաջինը նպաստել համալսարանական կրթության միջոցով աշխարհաճանաչողության իրականացմանը:

Ժամանակն է, որ մեր հավատարիմ բարեկամ Ռուսաստանը գոնե իր 4 միլիոն հայ քաղաքացիների և երկու ժողովուրդների բարեկամության հարատևության շահերից ելնելով Ռուսաստանի հայախիտ վայրերի բուհերում, թեկուզև ֆակուլտատիվ հիմունքներով, դասավանդի հայոց լեզուն,

որն էլ իր հերթին կնպաստի հայկական բուհերում ռուսական բաժանմունքի հիմնադրմանը և մեր երկու ժողովուրդների առավել մերձեցմանն ու հզորացմանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայ և ռուս ժողովուրդները բարեկամներ ու դաշնակիցներ են, որոնց համագործակցությունը վերջին շրջանում առանձնահատուկ հաջողություններ է արձանագրել հատկապես գիտության և բարձրագույն կրթության ոլորտում: Այսօր Հայաստանում գործում են 15-ից ավելի արտասահմանյան բուհեր, որոնցից շուրջ 10-ը ռուսական են: Արտասահմանյան բուհերի դիպլոմները նպաստում են արտագաղթին, ուստի Հայաստանի քաղաքացիների բարձրագույն կրթությունը Հայաստանում կազմակերպելու և նրանց հայ պահելու նպատակով անհրաժեշտ է Հայաստանում գործող արտասահմանյան բուհերի թիվը հասցնել նվազագույնի, իսկ մեր բարեկամ Ռուսաստանի Դաշնության համապատասխան մարմիններին առաջարկել՝ Ռուսաստանի հայախիտ վայրերի բուհերում դասավանդել հայոց լեզուն, որն էլ իր հերթին կնպաստի հայկական բուհերում ռուսական բաժանմունքի հիմնադրմանը և մեր երկու ժողովուրդների առավել մերձեցմանն ու հզորացմանը:

***Բանալի բառեր՝** որակյալ բարձրագույն կրթություն, հայ-ռուսական բարեկամություն, անվճար կրթություն, հայրենահոգրացում, հայոց լեզվի դասավանդում, պետպատվեր, հայկական բուհերի մասնաճյուղեր*

РЕЗЮМЕ

■ БОРИС МАКИЧЯН

УКРЕПЛЕНИЕ АРМЯНО-РОССИЙСКИХ ОБРАЗОВАТЕЛЬНО-КУЛЬТУРНЫХ ВЗАИМООТНОШЕНИЙ – ГАРАНТ МОГУЩЕСТВА АРМЕНИИ - Армяне и русские являются друзьями и союзниками, сотрудничество которых в последнее время добилось значительных успехов в области науки и высшего образования. Сегодня в Армении насчитывается более 15 зарубежных университетов, около 10 из которых являются русскими. Дипломы зарубежных вузов способствуют эмиграции, поэтому в целях организации бесплатного образования в Армении и сохранения армянского, необходимо

минимизировать число иностранных вузов действующих в Армении, а соответствующим органам нашей дружеской Российской Федерации предложить основать филиалы армянских вузов в армянонаселенных местах России, а в российских вузах включить армянский язык, что будет способствовать сближению и укреплению наших двух народов.

Ключевые слова: *качественное высшее образование, армяно-российская дружба, бесплатное образование, сближение и укрепление, преподавание армянского языка, филиалы армянских вузов*

SUMMARY

■ BORIS MAKICHYAN

STRENGTHENING OF THE ARMENIAN-RUSSIAN EDUCATIONAL AND CULTURAL RELATIONS AS A PLEDGE FOR HOMELAND ENHANCEMENT

The Armenian and Russian peoples are friends and allies whose cooperation has recently made a remarkable progress in the field of science and a higher education. Today there function more than 15 foreign universities in Armenia about 10 of which are Russian ones. Foreign University diplomas contribute to emigration; thus, to implement the free education of the Armenian citizens in Armenia and to preserve their Armenian identity, it is necessary to minimize the number of foreign universities in Armenia; it is recommended that our friendly Russian Federation should establish branches of Armenian Universities in Russian areas densely populated with Armenians, as well as include the Armenian language in Russian Universities which will contribute to the rapprochement and strengthening of our two nations.

Key words: *High-quality education, Armenian-Russian friendship, free education, rapprochement and empowerment, teaching of the Armenian language, branches of the Armenian Universities*

ТЕОРЕТИЧЕСКОЕ И ЭМПИРИЧЕСКОЕ ОБОСНОВАНИЕ ОСМЫСЛЕННОСТИ ЖИЗНИ С ПОМОЩЬЮ ПОНЯТИЯ «СУПЕРАТТРАКТОР»

*КАДЖИК ОГАНЯН, ВЛАДИМИР БРАНСКИЙ
КАРИНА ОГАНЯН*

Эмпирическое обоснование осмысленности жизни с помощью понятия «суператтрактор»¹.

Научный ответ на этот вопрос зависит от того имеется ли тенденция во Вселенной перерастания обычного отбора в суперотбор (отбор самих факторов отбора): ведь суперотбор, как следует из синергетической философии истории (СФИ), должен резко повышать вероятность редких событий, которые ведут к образованию более сложных космических структур. Другими словами, для перерастания обычного отбора в суперотбор требуется появление обратной связи² между результатами отбора и его факторами, а для формирования такой связи могут оказаться достаточными гигантские пространственно-временные масштабы Вселенной. Таким образом, подобные масштабы отнюдь не являются чем-то чисто внешним и несущественным для структуры Вселенной, а сами по себе, по-видимому, оказываются важным фактором,

¹ Статья является продолжением размышления авторов: См.: **Оганян К.М., Бранский В.П., Оганян К.К.** Перспективы межэтнического взаимодействия и общеприемлемый проект будущего// Проблемы преодоления последствий геноцида армян. Материалы международной научной конференции, 21-22 апреля 2015г. – Ереван: Изд-во Северного университета, 2016. -532с. С.13-20; См. там же: **Оганян К.М.** Глобализация и синергетическая философия истории. С.135-141.

² Это связано с тем, что качество любого отбора с точки зрения СФИ зависит от характера таких его факторов как тезаурус, детектор и селектор: См. Синергетическая философия истории: Коллективная монография (Бранский В.П., Пожарский С.Д., Оганян К.М. и др.) . –СПб.: Северный колледж, 2009. С. 18–23.

определяющим алгоритм формирования как крупно-, так и мелкомасштабной структуры Вселенной. Именно потому, что Вселенная имеет гигантские пространственно-временные масштабы и представляет собой спиралевидный пространственно-временной фрактал¹, в ней существует множество инкубаторов жизни (не нуждающихся в участии в этом процессе каких-то внеприродных сил). А это обстоятельство делает понятным одновременное стремление Вселенной к хаосу и порядку (решение парадокса Пригожина) и иллюзорность кажущегося человеческого одиночества (решение парадокса Паскаля).

Из сказанного получается следующий ответ на вопрос о смысле индивидуальной человеческой жизни («Кто мы? Откуда мы? Куда мы идем?»): в рамках СФИ смысл жизни (как индивидуальной, так и коллективной) состоит в движении к суператтрактору (глобальному аттрактору, к которому стремятся, в конечном счете, все локальные аттракторы). Это значит, что суператтрактор – такое состояние космической материи, при котором она оказывается устойчивой относительно абсолютного хаоса: любое хаотическое отклонение от первоначального порядка (любая флуктуация этой материи) компенсируется (нейтрализуется) контрфлуктуацией (возвращающей самоорганизующуюся систему в прежнее состояние)². Несмотря на кажущееся чисто умозрительное происхождение понятия «суператтрактор», это понятие имеет прочные эмпирические основания.

Попробуем вкратце резюмировать эти основания следующим образом. Хотя многие философы в своих философ-

¹ См. **Бранский В.П.** Философия физики XX века. – СПб.: Политехника, 2002. – 253с., рис. 8.

² Причиной такой флуктуации (как и контрфлуктуации) может быть, как взаимодействие самоорганизующейся системы с другими системами, так и с собой (самодействие).

ских системах в той или иной степени приближались к этому понятию (Платон, Г. В. Ф. Гегель, А. Бергсон, В. Соловьев, П. Тейяр де Шарден и др.), тем не менее, этого никто никогда не делал в рамках последовательного научного мировоззрения (соблюдение принципов детерминизма и рациональности). Между тем, «стальная» логика СФИ делает невозможным какое бы то ни было отступление в сторону мистификации космологической модели.

Хотя крушение относительных интерсубъективных идеалов обычно повергает в ужас их последователей, тем не менее, конструктивная сборка «осколков» этих идеалов часто играет положительную роль, создавая фундамент для формирования нового интерсубъективного идеала. Как известно, Гегель¹ описал этот процесс (в формировании нового интерсубъективного идеала) в знаменитой романтической аллегории: «сова Минервы начинает свой полет только с наступлением сумерек (В.Б., К.О.)». Здесь под сумерками подразумевается угасание былого триумфа и громкой популярности социального идеала («Сова Минервы» как атрибут богини Мудрости при этом символизирует духовную мощь новой идеологии, открывающей новые перспективы в судьбе того или иного поколения; образ сумерек символизирует именно крушение отпраздновавшего свой триумф идеала).

Третий аспект эмпирического обоснования существования суператтрактора – не менее существенный, чем уже упоминавшиеся два (перерастание космического отбора в суперотбор и крушение старых идеалов). Это так называемое

¹ Гегель Г.В.Ф. *Философия права* /Пер. с нем. - М.: Мир книги Литература, 2009, с. 56. Об идеале нельзя судить только по эпохе его расцвета (например, коммунистический идеал в 1920 и 1950 гг. XX века и нацистский в период с 1939 по 1942). Очень выразительной иллюстрацией этого образа может служить судьба таких глобальных идеалов в XX в. как коммунистический (в СССР) и национал-социалистический (в Германии).

«золотое сечение»¹ как указатель пути, ведущего к так называемой «золотой середине» между порядком и хаосом².

С историко-философской точки зрения очень любопытно такое обстоятельство: многие соглашались, что в результате взаимодействия относительных истин (как в науке, так и в философии) имеется тенденция к формированию абсолютной истины. Но дальше этого обобщения не шли, т.е. не осме-

¹ В общем случае «золотое сечение» как философское понятие может иметь различную геометрическую конфигурацию: образ нулевой размерности («точка» в собственном смысле традиционное употребление термина); одномерный образ («золотая линия», например, предельный цикл Пуанкаре); двумерный («золотая поверхность») и n-мерный («золотая гиперповерхность»).

² Из сказанного следует, что суператтрактор в СФИ – такая космическая структура, которая находит адекватный ответ на любые хаотические воздействия окружающей среды. Это значит, что каждой хаотической флуктуации в состоянии системы соответствует хаотическая контрфлуктуация, нейтрализуя действие первой. В результате система становится устойчивой относительно абсолютного хаоса и благодаря этому преодолевает саму противоположность между хаосом и порядком как таковыми (осуществляется своеобразный синтез хаоса и порядка). Поэтому суператтрактор можно рассматривать и как конечный предел в самоорганизации (предел как усложнения, так и упрощения) космической материи. Однако этот предел не может быть достигнут в конечный исторический срок, ибо каждый раз, когда преодолеваются одни материальные противоречия, возникают новые. Суператтрактор в СФИ не следует смешивать с точкой Омега в космологической модели Тейяра де Шардена (Феномен человека. – М.: Наука, 1987. -188с.) и его последователей (труды Davida Garcia, Paolo Soleri, Franka Tipler и др). Хотя оба понятия отражают состояние сингулярности («особенности») в космической эволюции, но в эти понятия вкладывается разный смысл. Если суператтрактор мыслится как материальное воплощение общечеловеческого идеала, что не противоречит принципам научного мировоззрения и свободно от мистификации, то точка Омега порывает с этими принципами. Выражаясь фигурально можно сказать, что точка Омега есть своеобразная «черная дыра» в научном мировоззрении (разрыв, прежде всего, с принципами детерминизма и рациональности).

ливались провести параллель между формированием (в результате взаимодействия множества относительных истин) абсолютной истины и аналогичным формированием (в результате взаимодействия множества «относительных» частночеловеческих идеалов) «абсолютного» (общечеловеческого) идеала.

Но там, где наблюдается взаимодействие относительных истин, формирующее абсолютную истину, естественно ожидать сходного процесса: взаимодействия относительных intersубъективных идеалов, формирующих абсолютный intersубъективный идеал (закон самоорганизации intersубъективных идеалов в результате их дифференциации и интеграции, анализа и синтеза)¹. Более того, хотя, как абсолютный идеал, так и абсолютная истина, недостижимы полностью в конечный исторический срок, получается любопытная ситуация. К абсолютному идеалу (как при его конструировании, так и реализации) можно подойти сколь угодно близко и, тем самым, приблизиться к полной гармонизации человека, человечества и культуры [решая, таким образом, парадокс Пригожина, т.е. преодолевая противоречие между одновременным движением к порядку (ответственности) и хаосу (свободе)]. Но решение парадокса Пригожина ведет к возникновению нового не менее фундаментального парадокса, который целесообразно назвать эсхатологическим и который можно сформулировать следующим образом: если бы человек стал бессмертным, его жизнь потеряла бы смысл².

¹ В применении к религиозным идеалам это проявляется в чередовании еретических и экуменических движений. Процесс формирования нового intersубъективного идеала нередко называют эпохой «осевого времени» (Ясперс).

² Этот тезис перекликается и с известным тезисом К. Маркса: «Счастье – в

Научный подход к проблемам смысла жизни и бессмертия, как видно из сказанного – обоюдоострое оружие. С одной стороны, без помощи смерти (без смены поколений) как это ни парадоксально звучит, бессмертие недостижимо, но, с другой стороны, это бессмертие, как кажется с первого взгляда, покупается слишком дорогой ценой. Однако корректировка подобного негатива в биологической жизни («звериная» борьба за существование) осуществляется в переходе биологической жизни в социальную фазу, где обратимые и необратимые процессы приобретают, благодаря идеалам, ценностный характер вследствие чего рождается такое явление как гуманизм (различие понятий добра и зла). Таким образом, как смысл жизни, так и смысл бессмертия не может быть постигнут без тщательного изучения всех пируэтов идеологической борьбы, гармонично сочетающей идеологическое соперничество (духовную враждебность) с идеологическим сотрудничеством (с духовной толерантностью). Это происходит потому, что развитие психического взаимодействия между живыми существами рано или поздно неизбежно приобретает идеологический характер¹. Здесь вновь вспоминаются слова А. Эйнштейна: «отбор жесток, но

борьбе» (интервью дочерям, 1865). Именно потому, что жизнь невысказана без взаимодействия обратимых и необратимых процессов, жизнь невозможна без борьбы. Отсюда, между прочим, следует известный афоризм: «Лучше страдание со смыслом, чем счастье без смысла». См. **Лосев А.Ф.** Жизнь. Повести. Рассказы. Письма. – СПб, 1993, с.35.

¹ В полемике между наукой и идеологией нельзя останавливаться на разуме: за разумом всегда скрывается идеал. Противоположность между наукой и идеологией отнюдь не сводится к противоположности между разумом и верой: разум и вера присутствуют и в науке, и в идеологии. Самой фундаментальной противоположностью является противоположность между истиной, которой занимается наука, и идеалом, которым занимается идеология (интерпретируемая как идеология).

не злонамерен». Ответ на вопрос для чего нужна идеология дает именно движение человека, человечества и культуры к суператтрактору. Указанное понятие настолько емкое, что оно исчерпывает проблему, так сказать, «одним ударом» (исчерпывает потому, что оно само, в определенном смысле неисчерпаемо)¹. В то же время, поскольку понятие «суператтрактор» предполагает действие закона самоорганизации социальных идеалов, оно оказывается самодостаточным и поэтому не требует дополнительного обоснования.

Таким образом, то решение проблемы смысла жизни и бессмертия, которое дает СФИ, обладает очень стройной и красивой логикой (ее можно было бы назвать «железной» или, лучше, «стальной»). Причем эта логика охватывает не только рациональную, но и эмоциональную компоненту любой философской методологии. Как показывает СФИ, одно из наиболее глубоких философских заблуждений состоит в попытках решить проблему смысла жизни и бессмертия путем отказа от принципов детерминизма и рациональности (т.е. за пределами научного мировоззрения)². Ведь в этом случае мы не только не приближаемся к пониманию этой логики (и ее красоты), но ставим на своем пути непреодолимую преграду для такого понимания. Заменяя принцип детерминизма принципом индетерминизма, а принцип рациональности

¹ Очень важно обратить внимание на двойственный характер бессмертия: надо различать бессмертие как жизнь в памяти потомков (субъективный аспект, например, воспоминания об умершем человеке) и как жизнь в предметной деятельности потомков (объективный аспект, например, сооружение памятника человеку) – деятельность потомков по преобразованию материального наследства в соответствии с идеалами предков.

² Наивная надежда решить эту проблему в рамках религиозного мировоззрения неизбежно ведет к проблеме теодицеи со всеми трудностями на ее пути. Модификацию принципов детерминизма и рациональности с целью их усовершенствования не следует смешивать с отказом от них.

принципом иррациональности мы неизбежно превращаем научный анализ проблемы в т.н. «дискурс» по поводу проблемы, т.е. поверхностный обзор разных мнений, не выходящий за рамки негативных эмоций и уподобляющий научную дискуссию обычной светской тусовке.

Теоретическое обоснование осмысленности жизни с помощью понятия «суператтрактор»

Рассмотрим в связи с этим альтернативные СФИ концепции бессмысленности жизни и невозможности любых форм бессмертия человека, человечества и культуры. Как известно из истории мировой философии, концепции бессмысленности жизни развивались на основе разных философских систем, но наиболее популярными (и наиболее скандальными) были две: 1) отождествление смысла жизни со «служением абсурду» (культ абсурда)¹ и 2) отрицание у жизни какого бы то ни было смысла вообще (культ самоубийства).

Поскольку для обоснования понятия «суператтрактор» требуется анализ не только эмпирических, но и теоретических оснований этого понятия, постольку критический анализ концепций осмысленности жизни требует такого же анализа концепций бессмысленности жизни. Наиболее известными концепциями такого типа были: античное учение о целесообразности самоубийства (греческий философ александрийской школы Гегезий, III в. до н.э.) и концепция абсурдности человеческой деятельности (французский писатель и философ А. Камю, 1913–1960). Как известно, в цикле своих философско-публицистических работ А. Камю

¹ Если как мы уже видели из предыдущего, сила понятия «суператтрактор» состоит, прежде всего, в том, что исключает полную брэнность («суетность») бытия во всех сферах человеческой деятельности, воздвигая прочный фундамент для принципа соответствия не только в науке, но и в философии.

пытался обосновать идею, что смысл человеческой деятельности, в конечном счете, сводится к служению абсурду¹, подобному деятельности античного мифического героя Сизифа. Такое нигилистическое отношение к проблеме «смысла жизни» всегда становилось популярным в годы тяжелых социальных испытаний (сопровожаемых острым кризисом философского знания). Неудивительно, что пессимистическая концепция Камю получила столь широкую известность и популярность именно после окончания Второй мировой войны. Как известно, в 1957 году ей была присуждена даже Нобелевская премия по литературе. Надо сразу же отметить, что это событие с точки зрения духовного развития человечества гораздо значительнее, чем может показаться при поверхностном подходе к вопросу. С точки зрения СФИ его можно сравнить по социальной значимости с испытанием в 1945 году в США первой атомной бомбы. Подобно тому, как это испытание поставило под угрозу физическое существование человечества, тщательно продуманная концепция бессмысленности жизни создала не меньшую угрозу для психического состояния человечества. Причем главную опасность представляла не столько сама концепция, сколько присуждение за нее высшей научной премии. Как ясно из СФИ, присуждение Нобелевским Комитетом в 1957 году научной премии такого масштаба за подобную концепцию означало полную утрату какой бы то ни было трезвости и ответственности в философских оценках².

¹ При этом А. Камю в типичной для философской публицистики (деятельности пограничной между философией и художественной литературой) манере исходил не из четко определенного понятия абсурда, а из так называемого «чувства абсурда» (см., например, «Миф о Сизифе»).

² Хотя Нобелевская премия 1957 году была присуждена Альберу Камю

В свете СФИ спустя много лет после Второй Мировой войны ситуация с оценкой концепции бессмысленности жизни проясняется. Роковое заблуждение Камю заключалось не в связывании проблемы смысла жизни с понятием абсурда и с мифом о Сизифе. Как показывает мировая история, важной компонентой смысла жизни является не служение абсурду, а непримиримая борьба с ним. Вера в то, что смысл жизни заключается в служении абсурду, это, так сказать, абсурд в квадрате и сознание этого факта есть лучший способ прощания с абсурдом. А это значит, что, если описывать проблему смысла жизни на языке метафор (чем и занимались создатели разных мифов), проблема смысла жизни у Камю решается в мифе о Сизифе.

Итак, позитивное решение проблемы «смысла жизни» заключается не в пропаганде абсурда (отказ от рациональности), а в борьбе с ним. Но тогда, как показывает социальная история, возникает новая проблема: угроза борьбы с абсурдом с помощью абсурдных средств борьбы. Как показывают тоталитарные режимы, таковыми являются глобальное насилие и глобальная ложь (поскольку в борьбе с локальным насилием и локальной ложью, как правило, невозможно избежать противодействующих им локального контрнасилия и локальной контр лжи). Но при этом возникает угроза перерастания локального насилия в глобальное, а локальной лжи в глобальную. Такой оборот событий сводит на-нет борьбу с абсурдом вообще. Следовательно, в борьбе с

не по философии, а по художественной литературе, тем не менее, очевидно, что ее социальное значение заключалось как раз в той глобальной философской концепции, которая составляла ее подтекст. Нетрудно заметить, что концепция бессмысленности человеческой деятельности (миф о Сизифе) содержит в себе зародыш собственного отрицания, ибо если абсурдна любая человеческая деятельность, то таковой должно быть и служение абсурду.

абсурдом безусловно недопустимы абсурдные средства. Такое перерастание локальных средств борьбы с абсурдом в глобальные наблюдается во многих социальных конфликтах (войнах и революциях). Поэтому искусные политики не должны отвечать «двойным ударом на удар поджигателей войны» (И. Сталин). Такой двойной удар, в свою очередь, неизбежно подвергается удвоению, что провоцирует цепной процесс безграничного роста насилия и лжи¹.

Итак, любой анализ проблемы «смысла жизни» в рамках научного мировоззрения должен сочетаться с обстоятельной критикой концепции бессмысленности жизни. Научная же оценка этой последней концепции в настоящее время с наибольшей вероятностью может быть дана лишь с позиции синергетической философии истории (СФИ), опирающейся на фрактально-релятивистскую модель Вселенной (ФРМ) или, что, то же, масштабно-симметричную модель (МСМ)².

С точки зрения СФИ существует четыре вида абсурдной философской деятельности в глобальном смысле (солипсизм, агностицизм, мистицизм и пессимизм) и три разновидности такой деятельности в специальном смысле (психофизиологическая проблема): либо речь идет о приписывании человеческих душ неживым объектам (анимизм), либо нечеловеческим живым существам (концепция переселения душ), либо человеческим останкам (концепция воскрешения

¹ С точки зрения СФИ морально оправдан не «двойной» а соразмерный контрудар.

² См. **Бранский В.П.** Проблема происхождения жизни и психики (от генетического к идеологическому коду). Часть 1 //Вестник СПбГУ. Серия 17, выпуск 3, 2015; Часть 2, выпуск 4, 2015; его же: Синергетика и космология (Философские основания космологической модели Вселенной) // Вестник СПбГУ. Серия 17, выпуск 4, 2014.

из мертвых). Если справедливо то решение проблемы смысла жизни, которое дает СФИ, то теоретически возможны три сценария движения к суператтрактору:

а) траектория застоя (бесконечное повторение одних и тех же состояний космической материи, человека как естественно-исторического продукта ее самоорганизации, человечества и культуры как самоорганизующейся системы ценностей (модель «белки в колесе»);

б) траектория абсурда (движение в бездну), образно говоря, это напоминает движение не по кругу, а по расширяющейся спирали. Оба сценария (как (а), так и (б) – дорога в никуда¹, а может даже «погружение в бездну»²);

в) траектория триумфа («победы») – здесь мы имеем дело уже с сужающейся спиралью, которая ведет не в «никуда», а в особое состояние, в математике называемое сингулярностью³. Благодаря этому говорят, что такой сценарий предполагает появление того самого аттрактора, которого не было в двух предыдущих случаях (недаром сужающуюся спираль называли «золотой») и который с точки зрения традиционной философии означает «обретение смысла жизни».

¹ Более того, в некоторых частных случаях это может быть дорогой к катастрофе (ведущей в бездну). Описанный сценарий допускает безответственное разрушение всех предыдущих ценностей и отказ от всякой преемственности в развитии мировой культуры. С этим сценарием связана высшая форма аморализма: глумление над прахом предков (нарушение вечного покоя покойников).

² Такой сценарий предполагает полную утрату чувства меры в новациях и является теоретическим базисом философского анархизма (в том числе, современного деконструктивизма), так называемого «клипового» мышления.

³ СФИ осуществляет синергетическую корректировку философии Ф. Ницше (вместо «воли к власти» – основным понятием философии провозглашается «воля к победе» или воля к спасению от поражения в экстремальных условиях).

Сравнительный анализ сценариев (а) и (б), с одной стороны, и (в) с другой, приводит к следующему очень интересному результату. Подобно тому, как сценарии (а) и (б) получают свое метафорическое (мифологическое) выражение в мифе о Сизифе, сценарий (в) имеет еще более глубокомысленное выражение в современной синергетической интерпретации мифа о Гильгамеше. Рассмотрение этой интерпретации (от древней мифологии к современной науке) требует отдельного исследования.

РЕЗЮМЕ

В статье рассматривается вопрос о смысле индивидуальной человеческой жизни в контексте синергетической философии истории: движении человека, человечества и культуры к суператтрактору - глобальному аттрактору, к которому стремятся все локальные аттракторы. Дается эмпирическое и теоретическое обоснование осмысленности жизни с помощью понятия «суператтрактор» в рамках научной философии в процессе формирования нового интересубъективного идеала.

Ключевые слова: Синергетическая философия истории, суперотбор, суператтрактор, смысл жизни, интересубъективный идеал, осмысленность жизни, бессмысленность жизни

ՄԱՓՈՓՈՒՄ

■ ՔԱՋԻԿ ՕՀԱՆՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ԲԴԱՆՍԿԻ, ԿԱՐԻՆԱ ՕՀԱՆՅԱՆ

ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԱՎՈՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՈՒ ԷՄՊԻՐԻԿ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ «ՍՈՒՊԵՐԱՏՏՐԱԿՏՈՐ» ՀԱՄԿԱՅՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

Հոդվածում քննության է առնվում մարդկային անհատական կյանքի իմաստի հարցը՝ պատմության սիներգետիկ փիլիսոփայության համատեքստում. մարդու, մարդկության ու մշակույթի շարժումը դեպի սուպերատրակտոր՝ գլոբալ ատտրակտոր, որին ձգտում են բոլոր լոկալ ատտրակտորները: Տրվում է կյանքի իմաս-

տավորվածության էմպիրիկ ու տեսական հիմնավորումը «Սու-
պեր-ատտրակտոր» հասկացության օգնությամբ՝ գիտական փիլի-
սոփայության շրջանակներում նոր ինտերսուբյեկտիվ իդեալի ձևա-
վորման պրոցեսում:

*Բանալի բառեր՝ պատմության սիներգետիկ փիլիսոփայությո-
ւուն, գերընտրանք, սուպերատտրակտոր, կյանքի իմաստ, ինտեր-
սուբյեկտիվ իդեալ, կյանքի իմաստավորվածություն, կյանքի անի-
մաստություն*

SUMMARY

■ **KADZHIK OGANYAN, VLADIMIR BRANSKIJ, KARINA OGANYAN**
THE THEORETICAL AND EMPIRICAL SUBSTANTIATION OF LIVE'S
INSANITY WITH THE CONCEPT "SUPERTRACTOR"

The question of the meaning life's individual human in the con-
text of the synergetic history's philosophy: the man's movement, human-
ity and culture to the supra-attractor - the global attractor, to which all
local attractors aspire - considered in the article. An empirical and theo-
retical substantiation of the life's meaning is given with the help of the
"super attractor" concept in the framework of scientific philosophy in
the process of a new intersubjective ideal forming.

***Key words:** Synergetic history's philosophy, superselection, supe-
rtractor, life's meaning, intersubjective ideal, life's meaningfulness,
life's meaninglessness*

«ԱԶԳ-ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱՐՄԱՏՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՓՈՐՁԸ

ՄԱՍՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ

«Ազգ-բանակը այն հասարակությունն է, որը գործում է որպես մեկ միասնություն: Դա չի նշանակում հասարակության կամ պետության ռազմականացում: Ճիշտ հակառակը, նշանակում է բանակի ժողովրդավարացում, լիարժեք ինտեգրում հասարակության, տնտեսության, մշակույթի, կրթության և գիտության, բնապահպանության, սպորտի բնագավառներ: Դա նշանակում է բանակի ստեղծածն ու ձևավորածը ծառայեցնել ողջ հասարակությանն ու պետությանը, իսկ քաղաքացիական կյանքի բոլոր ձեռքբերումներով ամրապնդել երկրի Զինված ուժերը:

Ազգ-բանակը այն բանակն է, որի հետ անքակտելի կապը ոչ սկսվում և ոչ էլ ավարտվում է ժամկետային զինծառայությամբ: Դա այն բանակն է, որն ունի կրթող, դաստիարակող, ուսուցանող ներուժ, որ փոխանցում է իր ժողովրդին»:

Վ. Սարգսյան

ՀՀ պաշտպանության նախարար¹

Շվեյցարիան աշխարհի ամենաապահով երկիրն է, բայց ունի մարտունակ բանակ և զարգացած ռազմաարդյունաբերական համալիր: Իսրայելը համեմատաբար երիտասարդ, բայց մի քանի պատերազմ տեսած երկիր է, դրա համար էլ ունի մարտունակ բանակ և զարգացած ռազմաարդյունաբերա-

¹ Հայկական բանակ, 4 (90) 2016, էջ 8:

կան համալիր: Հայաստանը երիտասարդ ու պատերազմի վտանգ ունեցող երկիր է, դրա համար պետք է ունենա մարտունակ բանակ ու զարգացած ռազմաարդյունաբերական համալիր:

Այս երեք երկրների վկայակոչումը նպատակ ունի ցույց տալ, որ անկախ արտաքին սպառնալիքների բնույթից ու տնտեսական հզորությունից, ազգային անվտանգության կարևոր սյուներից մեկը բանակի մարտունակությունն ու ռազմաարդյունաբերական համալիրի (ՌԱՀ) զարգացումն է: Ներկայումս տարբեր երկրների ռազմական հզորության գնահատումն իրականացնում են Global Firepower Index (Ռազմական հզորության գլոբալ համաթիվ) պորտալի փորձագետները:

Գնահատման համար հիմք են ընդունվում մի շարք քանակական և որակական ցուցանիշներ՝ երկրի բնակչությունը, տնտեսության վիճակը, զորակոչային տարիքի բնակչությունը, տարբեր զինատեսակներով բանակի տեխնիկական հագեցվածությունը, ենթակառուցվածքների վիճակը, բնական ռեսուրսների պաշարները և այլն:

Ռազմական հզորության գլոբալ համաթիվով 2017թ. առաջին հնգյակում են ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Չինաստանի, Հնդկաստանի և Ֆրանսիայի բանակները: Հայաստանը 133 երկրների ցանկում 93-րդ տեղում է, Ադրբեջանը՝ 58-րդ, իսկ Վրաստանը՝ 82-րդ տեղում¹: Փորձենք առավել ամբողջական ծանոթանալ Հայաստանի և անմիջական հարևան երկրների բանակի մարտունակությունը բնութագրող ցուցանիշներին (աղյուսակ 1):

¹ <https://www.globalfirepower.com/countries-listing.asp>

Աղյուսակ 1

Հայաստանի և տարածաշրջանի երկրների ռազմական ներուժը 2016թ.*

Երկիր Ցուցանիշ	Հայաստան	Վրաստան	Ադրբեջան	Թուրքիա	Իրան	Ռուսաստան
Ընդհանուր բնակչությունը	3.05մլն	4.9մլն	9.87մլն	80 մլն	82.8մլն	142 մլն
Ընդհանուր զինվորական անձնակազմ, որից՝	215.700	35.825	374.500	743.415	934.000	3.371.027
ակտիվ անձնակազմ	44.800	30.325	67.000	382.850	534.000	798.527
պահեստային անձնակազմ	170.900	5.500	307.500	360.565	400.000	2.572.500
Ընդամենը ինքնաթիռներ	64	68	135	1.018	477	3.794
Մարտական տանկեր	229	220	520	2.445	1.616	20.216
գրահապատ մարտական մեքենաներ	636	1.946	1.590	7.550	1.315	31.298
ինքնագնաց հրետանի	38	118	119	1.013	320	5.972
գնդացիք	150	230	240	697	2.078	4.625
ռազմածովային ընդհանուր ակտիվներ	0	9	31	194	398	352
Պաշտպանության բյուջե, հազ. դոլար	225.000	380.000	3.185.000	8.208.000	6.300.000	44.600.000
Տարածքը, քառ. կմ	29.743	69.700	86.600	783.562	1.648.195	17.098.242
Տեղը՝ զեկույցում	93	82	58	8	21	2

* Աղյուսակը կազմել է հեղինակը ըստ Global Firepower Index 2017-ի տվյալների:

Ինչպես նկատում ենք, գնահատման այս համակարգում չի դիտարկվում բանակի մարտական ոգին ու ռազմական մշակույթը, որը էական նշանակություն ունի բանակի մարտունակության համար: Ռազմական պատմագրությունը վկայում է, որ ամենաառաջադիմական սպառազինությունից բացի, բանակի մարտունակության համար կարևոր նշանակություն ունի մարդկային գործոնը, հատկապես վերոհիշյալ երկու հատկանիշները: «Հոգեբանությունը և զինվորը» գրքում «մարտական ոգի» հասկացությունը շատ դիպուկ է բնութագրել Նորման Կոուպլենդը: Նա գրում է. «Ռա մարդուն հայտնի ամենահզոր գենքն է. ավելի հզոր, քան ամենաձանր տանկը, քան ամենաուժեղ հրանոթը, քան ամենակործանիչ ռումբը: Բանակի բարձր բարոյական վիճակը այն միջոցն է, որն ի գործ է պարտությունը վերածել հաղթանակի: Բանակը ջախջախված չէ, քանի տիրապետող չէ պարտության գիտակցումը, քանի որ պարտությունը մտահանգում է, ոչ թե ֆիզիկական վիճակ»¹: Ինչ վերաբերում է ռազմական մշակույթին, ապա անժխտելի է, որ անձնակազմի, զինվորից մինչև գեներալ, ռազմահայրենասիրական դաստիարակությունը և կատարողական կարգապահությունը անմիջականորեն պայմանավորված է մշակութային մակարդակով: Արցախյան հերոսամարտի սկզբնական փուլում հայկական բանակը կադրային զինվորականների մեծ պակաս ուներ, բայց ինքնակամ զինվորագրված ազատամարտիկների մարտական ոգին ու ազգային արմատներով փոխանցված ռազմական մշակույթը հաղթանակող ուժ դարձավ: Նրանք ներշնչված էին Ավարայրից մինչև Սարդարապատ, Մուսա լեռից մինչև Բեռլին՝ պատմության հերոսական էջերով, Վարդանանց, Սասնա ծռերի, Անդրանիկի, Արարոյի ու խորհրդային շրջանի հայ զորավարների սխրանքներով: Նրանք դա ընդունել էին մայրական կաթի հետ, մանկապարտեզից, դպրոցից ու շրջապատից

¹ **Норман Коупленд**, Психология и солдат; Перевод с английского А.Т. Сапронова и В.М. Катеринича. - 2-е изд. - М.: Воениздат, 1991. - 96 с.

ստացած զրույցներով ու դասերով: Այս զրույցն ու դասը շարունակական է, ուստի բանականների աստիճանակարգման համար էական նշանակություն ունի նաև ազգային նկարագիրն ու հոգեկերտվածքը:

Այդուհանդերձ, փոխվում են իրավիճակները և մեզ անհրաժեշտ է ունենալ մոտ ապագայի համար երկրի անվտանգության ապահովման հստակ տեսլական: Մեր կարծիքով՝ այն պահանջում է առաջնորդվել հետևյալ ուղղություններով.

-Իրականացնել տարածաշրջանում արժանապատիվ խաղաղություն և երկարաժամկետ կայունություն հաստատելու քաղաքականություն,

-Ստեղծել հզորացող տնտեսություն, կայուն և հեռանկարային գործընկերային հարաբերություններ,

-Ունենալ համազգային աջակցություն ու վստահություն վայելող մարտունակ բանակ, որի հիմքը «Ազգ-բանակ» հայեցակարգի սկզբունքներն են:

Անվիճելի է, որ ժամանակակից բանակի մարտունակության կարևորագույն հատկանիշն անհրաժեշտ քանակի և բարձր որակի սպառազինությունն է: Վերջինս ապահովելու համար, բացի արտաքին աղբյուրներից, կարևոր է հայրենական ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը: Խորհրդային Միության կազմում Հայաստանի արդյունաբերությունը սերտորեն ինտեգրված էր միութենական ռազմարդյունաբերական համալիրին և բավականին դերակատարություն ուներ հատկապես ռադիոէլեկտրոնիկայի և այլ գիտատար ոլորտներում: Սակայն 1990-ական թվականների վերակազմավորումների և քաղաքական գործընթացների հետևանքով Ռուսաստանում ՌԱՀ-ի զարգացումը կտրուկ կասեցվեց, որի հետևանքով գրեթե կազմալուծվեցին ռազմական պատվեր կատարող հայաստանյան ձեռնարկություններն ու գիտական կազմակերպությունները: Միայն 1991-1997թթ. ՌԴ պաշտպանական արտադրության ծավալը պա-

կասեց 4,4, իսկ ռազմական արտադրությանը՝ 5,4 անգամ¹: Իհարկե, հայ-ադրբեջանական հակամարտությունը, որն ըստ էության վերածվել էր պատերազմի, հարկադրեց ձեռնարկել որոշ զենքերի տեղական արտադրություն: Չանտեսելով դրանց կարևորությունը, պետք է նշել, որ այն հեռու էր բարձր տեխնոլոգիական, սերիական արտադրությունից: Այդուհանդերձ, սկսած 2000-ական թվականներից, որոշակի քայլեր ձեռնարկվեցին ՀՀ ՌԱՀ-ի զարգացման ուղղությամբ: Հատկապես վերջին երկու տարիներին Հայաստանի ՌԱՀ-ի զարգացումը դիտվում է որպես տնտեսության գերակա ոլորտ և բավականին լուրջ ուշադրություն է դարձվում ինստիտուցիոնալ կառույցների ձևավորմանը, ներդրումային միջավայրի բարելավմանը և պետական գնումների համակարգի զարգացմանը:

Ինչպես նշվեց, բանակի մարտունակության կարևոր գործոններից է համազգային աջակցությունն ու վստահությունը, այսինքն՝ բանակի և հասարակության միջև անմիջական ու փոխշահավետ հարաբերությունների զարգացումը: Այս առումով հատկապես ուսանելի փորձ ունեն Իսրայելը, Շվեյցարիան և այլ երկրներ:

Իսրայելում բանակի և հասարակության միջև ձևավորված հարաբերությունների առանձնահատկությունը դրսևորվում է քաղաքական, տնտեսական, հասարակական և մշակութային ոլորտներում: Այս երկրում պարտադիր զինվորական ծառայությունը կապված է տարբեր «շահադրդումների» հետ, քանի որ բարձրացնում է ծառայած երիտասարդների հասարակական կարգավիճակը՝ նրանց համար դառնալով ինքնատիպ «մուտքի տոմս» առանձին հեղինակավոր պաշտոնների և պետական ու մասնավոր հատվածում գաղտնիության հետ կապված աշխատանքների համար: Ավելին, Իսրայելում շատերը բանակում ծառայությունը ընկալում են

¹ Лавринов, Г. А. Рыночный механизм размещения заказов на разработку наукоемкой продукции военного назначения. Вооружения. Политика. Конверсия. – 2005. – № 4 (64). – С. 10-23

որպես անձի քաղաքացիական կարգավիճակի ձևավորման անհրաժեշտ փուլ, որը չանցնելով՝ հնարավոր չէ դառնալ «իսկական իսրայելցի»:

Իսրայելի բանակը ներառում է համեմատաբար փոքր թվով կադրային զինծառայողներ և բաղկացած է առավելապես ժամկետային ծառայության և պահեստագործի զինծառայողներից (կադրային զինծառայողների քանակը հարաբերականորեն մեծ է ՌՕՈՒ-ում և ՌԾՈՒ-ում): Այդ իսկ պատճառով Իսրայելի զինված ուժերը, ի տարբերություն շատ այլ բանակների, չի ձևավորում փակ մասնագիտական կորպորացիա, այլ համազգային բանակ է բառիս բուն իմաստով¹:

Պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված յուրաքանչյուր զինվոր ամրակցվում է որոշակի պահեստային գումարտակի և մինչև 51 տարին լրանալը տարեկան ծառայում է ոչ ավել, քան 39 օր: Աղջիկների զինապարտությունը Իսրայելի բանակի առանձնահատկություններից մեկն է: Այն հնարավորություն է ընձեռում ավելի շատ տղամարդկանց ներգրավելու շարային ծառայության մեջ և ավելացնելու բանակի թվաքանակը: Աղջիկները հիմնականում զբաղված են կապի, էլեկտրոնիկայի սպասարկման, հրահանգչական, գրասենյակային և վարչական ոլորտներում: Նրանք ծառայում են գրեթե բոլոր զորատեսակներում, իսկ մեծ թվով ժամկետանց ծառայողներ կրում են սպայական կոչում և զբաղեցնում պատասխանատու պաշտոն:

Պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում հրեա և դրուզ ազգության քաղաքացիները: Իսլամ և քրիստոնեություն դավանողները կարող են բանակ զորակոչվել կամավոր հիմունքներով: Հատկապես խրախուսվում է բեդուին կամավորների ներկայությունը բանակում: Վերջիններիս փորձը և գիտելիքները օգտակար են սահմանների և ռազմական օբյեկտների պահպանության, ինչպես նաև հետախուզության համար:

¹ <http://rudocs.exdat.com/docs/index-181374.html?page=2>

Ակտիվ և հետևողական ռազմական քաղաքականության արդյունքում Իսրայելում ձևավորվել է հզոր ռազմաարդյունաբերական համալիր (ՌԱՀ), որը տնօրինում է սպառազինության և ռազմական տեխնիկայի թողարկման ժամանակակից գիտահետազոտական և բարձրտեխնոլոգիական արտադրական բազայի և զգալի ազդեցություն ունի երկրի տնտեսության զարգացման վրա: Ռազմական արտադրանքը, որն արտահանվում է աշխարհի գրեթե 70 երկիր, տարբեր տվյալներով կազմում է Իսրայելի արտահանման 5-15 %-ը (ՀՆԱ-ի 1-3 %-ը):

Համազգային բանակի կայացման հետաքրքիր փորձ ունի Շվեյցարիան: Ավելի քան 110 տարի առաջ այդ երկրում ուսանող Ավետիս Ահարոնյանը գրել է. «Առաջին տարին շվեյցարիացի երիտասարդը ծառայության մեջ մտնում է 60-90 օր, նայելով, թե որ գնդում է: Նրան հազցնում են և կերակրում ձրիապես, տալիս են հրացան և փամփուշտներ, որ դառնում է նրա կատարյալ սեփականությունը: Այնուհետև մինչև 32 տարեկան դառնալը նա յուրաքանչյուր երկու տարին մի անգամ կատարում է զինվորական ծառայություն միայն 18 օր ամեն անգամին: Այդ ժամանակաշրջանում (20-32 տարեկան) նա համարվում է ընտիր գնդի անդամ: Ապա 32-ից մինչև 48 տարին նա միայն երեք տարին մի անգամ է գնում կատարելու զինվորական վարժություններ և ամեն անգամ 18 օր. այդ ժամանակաշրջանում նա համարվում է պահեստի զորքի մեջ»¹: Հետաքրքիր է, որ այդ երկրում այսօր էլ պահպանվում է մշտապես զինվորական ծառայության մեջ գտնվելու ավանդույթը: Բավական է նշել, որ Շվեյցարիան աշխարհում բանակային բնակչության ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող երկիրն է: Այստեղ 20-50 տարեկան գրեթե բոլոր տղամարդիկ զինծառայող են և անգամ տանը քնում են սեփական ինքնաձիգով: Այս երկիրը, շնորհիվ համազգային բանակի

¹ **Ավետիս Ահարոնյան**, Շվեյցարական գյուղը, Երևան, 2014թ.: Վերա-հրատարակվել է 1913թ. բնագրից, էջ 301-302:

որդեգրած գաղափարի ու բարձր կարգապահության, ի գործու է 2-4 ժամում 22 հազարանոց կայուն բանակը հասցնել 650 հազարի, իսկ 2 օրում՝ 1,7 միլիոնի¹: Մոտ 7,5 մլն բնակչություն ունեցող երկրի ռազմական բյուջեն մոտ 5 մլրդ դոլար է: Այն ժամանակահատվածում, որ շվեյցարացին գտնվում է զինվորական հավաքում, 80%-ով պահպանվում է աշխատավարձը: Բացի դրանից, բանակում զինվորին օրական վճարում են 6 դոլար, իսկ սպայական կազմին՝ 8,5 դոլար: Ինչպես նշվեց, պահեստայինների մոտ է մնում իրենց ամրացված զենքը: Այդ պատճառով ներկայումս մասնավոր անձանց ձեռքում է գտնվում 2,3-ից մինչև 4,5 մլն հրազեն: Թերևս դա է պատճառը, որ Շվեյցարիայում շատ տարածված է հետևյալ կարգախոսը՝ «Շվեյցարիան բանակ չունի, Շվեյցարիան ինքը բանակ է»:

Բանակաշինության հետաքրքիր առանձնահատկություններ ունեցող այս երկու երկրների փորձի համառոտ անդրադարձն արդեն իսկ ցույց է տալիս, որ Հայաստանում համազգային բանակի կայացումը հնարավոր է և անհրաժեշտ: Այս գաղափարը պետք է որդեգրի յուրաքանչյուր քաղաքացի, այն պետք է կյանքի կոչի յուրաքանչյուր պետական ու մասնավոր կառույց, առավել ևս՝ յուրաքանչյուր դպրոց ու բարձրագույն ուսումնական հաստատություն:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում անդրադարձ է կատարվել Global Firepower Index-ի փորձագետների կողմից երկրների մարտունակության գնահատմանը, Հայաստանի և հարևան երկրների մարտունակության հիմնական ցուցանիշներին:

«Ազգ-բանակ» հայեցակարգի շրջանակներում կարևորվել են բանակաշինության ազգային առանձնահատկությունները, շեշտադրելով՝ մարտական ոգին, ռազմական կարգապահությունը և ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը: Ուսումնասիրվել է Իսրայելի և Շվեյցարիայի փորձը:

¹ https://zbroya.info/ru/blog/38024_armiia-shveitsarii-strana-tsveta-khaki/

Բանալի բառեր՝ բանակ, համագգային, ռազմաարդյունաբերական համալիր, սպառազինություն, բնակչություն, մարտունակություն:

РЕЗЮМЕ

■ SAMVEL AVETISYAN

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ КОРНИ КОНЦЕПЦИИ «НАЦИЯ-АРМИЯ» И МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ ОБЩЕНАЦИОНАЛЬНОЙ АРМИИ

В настоящей статье на основе Global Firepower Index излагается экспертная оценка боеспособности стран, а также, основные показатели боеспособности Армении и соседних стран.

В рамках концепции «Нация-армия» особое значение придается национальным особенностям создания армии, делая акцент на боевой дух, военную дисциплину, а также на развитие военно-промышленного комплекса.

Был изучен опыт Израиля и Швейцарии.

Ключевые слова: *армия, общенациональный, военно-промышленный комплекс, вооружение, население, боеспособность*

SUMMARY

■ SAMVEL AVETISYAN

SOCIAL AND ECONOMIC ROOTS OF THE CONCEPT «NATION-ARMY» AND INTERNATIONAL EXPERIENCE OF THE NATIONAL ARMY

The present article introduces the assessment of Global Firepower Index experts on fighting efficiency of the countries, in particular on the basic indicators of the fighting efficiency of Armenia and neighbour countries.

Within the framework of the concept "nation-army" special importance is given to the national peculiarities of the army, emphasizing the military spirit, military discipline, and the development of the military-industrial complex.

The experience of Israel and Switzerland was studied.

Key words: *army, national, military-industrial complex, armament, population, fighting efficiency*

ԲՈՒՀ - ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ՀԻՄՆԱԽԴԻՐՆԵՐԸ

ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒՐՅԱՆ

Անկախության ձեռքբերումից ի վեր թերևս Հայաստանի Հանրապետության համար ամենամեծ նվաճումը պետք է համարել մարտունակ բանակաշինության հաջողությունները: Այսօր հայոց բանակը ունի անհրաժեշտ սպառազինություն և, որ ամենակարևորն է՝ զինվորի անկոտրում ոգի: Թերևս դրանով է պայմանավորված «ոչ պատերազմ-ոչ խաղաղություն» ձևավորված ներկայիս իրադրությունում մեր բանակի դիմակայումը հակառակորդի ոտնձգություններին:

Սակայն պետք է նաև արձանագրել, որ Ապրիլյան պատերազմը որոշակիորեն բացահատեց հայոց բանակում առկա հիմնախնդիրները, որոնց շարքին պետք է դասել «բուհ-բանակ» թույլ համագործակցությունը: Այսօր ՀՀ բուհերը ընդամենը «զինակոչի մատակարարներ» են բանակի համար, երբ 18 տարին լրացած ուսանողները համալսարաններից մեկնում են զինծառայության: Թեպետ բուհերից ժամկետային ծառայության մեկնած ուսանողների թիվը չի հրապարակվում, սակայն ՀՀ համալսարաններում սովորող ուսանողների և դիմորդների թվաքանակից հնարավոր է մոտավոր գաղափար կազմել ծառայության մեկնած ուսանողների թվի վերաբերյալ (տե՛ս աղյուսակ 1):

Այսօր արդեն ՀՀ ՊՆ-ն միջոցներ է ձեռնարկում ակտիվացնելու բուհ-ազգային բանակ համագործակցությունը՝ համալսարաններն արդեն դիտելով որպես որակյալ սպայական կազմի ձևավորման դարբնոց: Այս առումով հանրային քննարկումների են արժանացել «Պատիվ ունեմ» և «Ես եմ» ծրագրերը¹:

¹ <http://www.mil.am/hy/news/4754>

Աղյուսակ 1

ՀՀ բուհերի և դրանցում սովորող ուսանողների թվաքանակի դինամիկան¹

Ցուցանիշներ	2011	2012	2013	2014	2015
Բարձրագույն ուսմանական հաստատությունների քանակը	68	65	63	62	60
Բուհերում սովորողների քանակը (հազ. մարդ)	95.3	90.1	85.9	79.6	84.6
Բուհեր ընդունված ուսանողներ (հազ. մարդ)	7.6	21.3	19.0	17.5	18.1

ՀՀ ՊՆ-ի ներկայացրած «Պատիվ ունեմ» ծրագրով Հաստատանի քաղաքացիական բուհերի ուսանողներին հնարավորություն է տրվում ուսմանը զուգահեռ սպայական դասեր անցնելու և այնուհետև համալրելու ՀՀ ԶՈւ շարքերը՝ 3 տարի ծառայության ժամկետով: Դրանով ոչ միայն ուսանողներին հնարավորություն է տրվում մասնագիտական գիտելիքները կիրառելու բանակում, այլև ստեղծվում է 3 տարի ծառայության փորձ ունեցող կրտսեր սպայական կազմի մեծ ռեզերվ: Այդ օղակում ծառայող հրամանատարները, ըստ ծրագրի, իրենց հետ զինված ուժեր են բերելու նոր գիտելիքներ և հմտություններ, որոնք օգնելու են ավելի արդյունավետ դարձնել ժամկետային զինծառայողների բանակային տարիները:

Փորձը ցույց է տալիս, որ ՀՀ-ում արդյունավետ չի օգտագործվում բուհերի այն շրջանավարտների ներուժը, ովքեր

¹ ՀՀ ԱԿԾ տարեգիրք, 2016 թ., էջ 117:

բակալավրիատից հետո զորակոչվում են ՀՀ զինված ուժեր: Նրանք հիմնականում համալրում են շարքային-սերժանտական կազմը, լավագույն դեպքում՝ անցնելով ուսումնական զորամասերով, իսկ երբեմն՝ անմիջապես նախանշվելով մարտական հերթապահություն իրականացնող զորամաս:

Փաստորեն, «Պատիվ ունեմ» պետական ծրագրի գաղափարախոսությունն է՝ բուհական տարկետումը կապել ապագա սպայական ծառայության հետ: Պետական հավատարմագրում ունեցող (պետական կամ մասնավոր) բուհ ընդունված յուրաքանչյուր երիտասարդ իրավունք ունի դիմելու այդ ծրագրում ընդգրկվելու համար: Մի շարք պայմանների համապատասխանելու դեպքում (առողջական վիճակ, հրամանատարական ջիղը որոշելուն միտված հոգեբանական թեստավորում, ուսման ընթացքում գնահատականի նվազագույն շեմի պահպանում) նա կարող է ընդգրկվել նշված ծրագրում՝ դառնալով սպայի կոչման հավակնող թեկնածու:

Սովորելով քաղաքացիական բուհում՝ այդ երիտասարդները 2-րդ կուրսի սկզբից մինչև 4-րդ կուրսի առաջին կիսամյակը ներառյալ՝ յուրաքանչյուր շաբաթ օր, Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում այցելում են զինվորական պատրաստության դասընթաց: Այդ ուսուցումը հաջող անցնելու և քաղաքացիական բուհի դիպլոմ ստանալու դեպքում քաղաքացին, բակալավրի աստիճան ստանալուն զուգընթաց, ստանում է լեյտենանտի սպայական կոչում և երեք տարի ժամկետով անցնում ծառայություն զինված ուժերում:

Ծառայությունը կազմակերպվում է քաղաքացիական մասնագիտությունը հաշվի առնելով, բայց բոլոր դեպքերում՝ 1-ին կարգի զորամասերում (առաջնագիծ): Այդպիսով, բարձրագույն կրթություն ստացած քաղաքացին կարողանում է ավելի բարձր մակարդակում իր ծառայությունը բերել զինված ուժերին, միաժամանակ անցնելով այն սպայական կարգա-

վիճակում (ծառայության համապատասխան կենցաղային պայմաններով), մրցունակ աշխատավարձով (ամսական առնվազն 260.000 դրամ): Ծառայությունը բարեհաջող ավարտելու դեպքում նա նաև ստանում է լրացուցիչ ֆինանսական բոնուս՝ իր ուսումնառության տարիների ուսման վարձի չափով: Ծառայությունն ավարտելուց հետո մագիստրատուրա ընդունվելու դեպքում փոխհատուցվում է նաև նրա մագիստրոսական կրթությունը:

«Ես եմ» ծրագրով պարտադիր զորակոչի ենթակա երիտասարդները կարողանալու են կամավոր մեկնել «Ժամկետային-պայմանագրային» ծառայության: Ծառայության ընդհանուր ժամկետը կտևի 3 տարի, որից առաջին 6 ամիսը կլինի ուսումնական զորամասում: Դրանից հետո՝ հաջորդ 2,5 տարվա ընթացքում զինծառայողը հաջորդաբար կանցկացնի մարտական դիրքերում (2 շաբաթ), զորամասում (1 շաբաթ) և արձակման մեջ (1 շաբաթ): Ծառայության այս տարբերակը թույլ է տալու ծառայել նույնքան, որքան մյուս ժամկետային ծառայողները, սակայն յուրաքանչյուր անգամ արձակուրդ գնալիս զինծառայողին կվճարվի նաև որոշակի գումար՝ արձակուրդային ծախսերը հոգալու համար:

Ծառայության ավարտին նրա անձնական հաշվին կփոխանցվի նաև շուրջ 5 մլն ՀՀ դրամ, որը զորացրված զինծառայողը կկարողանա օգտագործել նպատակային երեք ծրագրերից մեկում.

1. մատչելի բնակարան (սուբսիդավորված հիփոթեքային ծրագիր),

2. մինի-ֆերմա (գյուղաբնակ զինծառայողների համար փոքր ջերմոց կամ ֆերմա ստեղծելու կամ փոքր գյուղտեխնիկա ձեռք բերելու ծրագիր),

3. ուսման վարձի փոխհատուցում:


Ըստ ՀՀ ՊՆ-ի, այս ծրագրերը միտված են նաև ծառայած երիտասարդին Հայաստանում իր ապագան կառուցելու հնարավորություն տալուն, երկարատև ծրագրերի միջոցով երկրի

հետ իր անբաժան կապը խորացնելու խնդրին: Նախատեսված է, որ նշված ծրագրերը կլինեն այլընտրանքային, և քաղաքացին, չընդգրկվելով դրանում, կարող է ընտրել ներկայումս գործող գորակոչի տարբերակը՝ անցնելով ժամկետային զինծառայության: Այդուհանդերձ, հաջող ընթացքի պարագայում երեք տարվա ընթացքում առաջարկվող ծառայության ձևը կարող է դառնալ գերակշռողն առաջնագծում:

Սակայն կարծում ենք, որ բուհ-ազգային բանակ համագործակցության այս շրջանակը դեռևս բավարար չէ և զարգացման նոր ուղղություններ է պահանջում: Այսպես, «Պատիվ ունեն» և «Ես եմ» ծրագրերը հիմնականում թիրախավորված են առաջնագիծը որակյալ սպայական կազմով համալրելուն: Անշուշտ, դա չափազանց կարևոր է, սակայն ոչ բավարար: Այսօր բուհերը մեծ դերակատարում են ունենալու բանակի հզորացման գործում, իրականացնելով բարեփոխումներ մի շարք ուղղություններով (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1

Բուհ-ազգային բանակ համագործակցության շրջանակը¹



¹ Կազմվել է հեղինակի կողմից:

Անգամ, եթե ուսանողը կամավորության սկզբունքով չընդգրկվի «Պատիվ ունեմ» կամ «Ես եմ» ծրագրերում, միևնույնն է, բուհում սովորելու տարիներին պետք է համալսարանի ռեսուրսներով անցնի ռազմական գործ, որպեսզի բանակ մեկնելիս որոշակիորեն տիրապետի ծառայության հմտություններին և դրանով իսկ տարբերվի «ոչ-բուհական» զորակոչիկից: Այս առումով, բուհական կրթական ծրագրերում առաջարկում ենք ներառել «Ռազմագիտության հիմունքներ» առարկան, որը դասավանդվելու է հենց առաջին կուրսից՝ երկու կիսամյակով: Ի դեպ, այդ առարկան դասավանդվելու է նաև իզական սեռի համար, որոնց նույնպես հնարավորություն պետք է ընձեռնվի բանակում ծառայելու: Իսրայելի փորձը ցույց է տալիս, որ աղջիկ զորակոչիկները կարող են ծառայել անգամ առաջնագծում՝ տղաներին չզիջելով և կատարելով զանազան զինվորական առաջադրանքներ:

Կարևոր ենք համարում նաև բուհական առարկայական ծրագրերում ընդգրկելու թեմաներ, որոնք հստակ թիրախավորված են ուսանողի ռազմահայրենասիրական ոգու բարձրացմանը: Մասնավորապես, հումանիտար առարկաներ դասավանդելիս հստակ շեշտադրումներ պետք է կատարվեն հայ ժողովորդի ռազմական կարողությունների մեկնաբանումներին, հայազգի զորավարների թողած հետազոծին, ազգային ազատագրական պայքարի պատմության դրվագներին, մեր օրերում բանակաշինության առանցքային հիմնախնդիրներին:

Բուհ-ազգային բանակ համագործակցությունը չպետք է սահմանափակել միայն դասավանդման գործընթացով: Այսօր բարձրագույն մասնագիտական կրթության երրորդ աստիճանում կատարվող գիտական հետազոտությունների և պաշտպանվող ատենախոսությունների շատ փոքր մասն է վերաբերում ռազմաաարդյունաբերական համալիրի զարգացման հիմնախնդիրներին: Մեր կարծիքով, ՀՀ գիտության

և կրթության նախարարության պահանջով ասպիրանտական հաստատվող թեմաների առնվազն 10%-ը պետք է առնչվի ռազմաարդյունաբերական համալիրի զարգացմանը և համաձայնեցվի ՀՀ պաշտպանության նախարարության հետ: Այս ճանապարհով բուհերում գործող գիտական և հետազոտական ստորաբաժանումները իրենց ուրույն ավանդը կներդնեն բանակաշինության գործին: ArmBGC Innovation ընկերությունը ՀՀ պաշտպանության նախարարության համար փորձարկում է մահապարտ (կամիկադե) անօդաչու թռչող սարք: Հոկտեմբերի 13-ին Երևանում անցկացվող ArmHiTec-2016 ցուցահանդեսի ժամանակ, սարքը փակ ցուցադրմամբ ներկայացվել է հատուկ հյուրերին¹:

Արդեն 2017 թ. սեպտեմբերի 13-ին՝ ՀՀ ԱԺ-ում խորհրդարանական հարցուպատասխանի ժամանակ, ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը հայտարարել է, որ Հայաստանը ունի հայկական արտադրության անօդաչու թռչող սարքեր, որոնք ոչ միայն հավաքվում են Հայաստանում, այլև արտադրվում:

«Մենք էլ ունենք անօդաչու թռչող սարքեր, իրականում հենց մեր արտադրության, ոչ թե մեզ մոտ отверочная сборка անվանվող, այլ ընկերությունների թռչող սարքերը հավաքելու երևույթը: Եվ կարծում եմ, որ այդ անօդաչու թռչող սարքերը ինչպես կատարել, այնպես էլ շարունակելու են կատարել, ընդ որում՝ կատարելագործված ձևով, իրենց առջև դրված խնդիրները», - նշել է Վիգեն Սարգսյանը:

Եվ վերջապես, բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է ուղղակի փոխհարաբերվեն իրենց ամրագրված կոնկրետ զորամասերի հետ, պարբերաբար ուսանողական և դասախոսական այցելություններ կատարելով, իրականացնելով մշակութային զանազան ծրագրեր, կազմակերպելով հանրամատչելի դասախոսություններ: Այս գործընթացում բուհերը պետք է շահագրգիռ լինեն նաև այն ա-

¹ <http://razm.info/90038>

ռումով, որ զորամասի զինվորներին դիտեն իբրև իրենց ապագա դիմորդ ուսանողների: Բացի բարոյական և հոգեբանական աջակցությունից, բուհերը իրենց ամրագրված զորամասերին կարող են ցույց տալ նաև ֆինանսական աջակցություն՝ նվիրաբերելով համակարգիչներ, գրքեր և կրթական այլ ակտիվներ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Պետք է արձանագրել, որ ներկայումս ՀՀ-ում դեռևս թույլ է դրսևորվում բուհ-ազգային բանակ համագործակցությունը: Այս առումով հոդվածում առաջարկներ են ներկայացվում այդ համագործակցության շրջանակի ընդլայնման ուղղությամբ, իրականացնելով այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են բուհերում ռազմական գործի դասավանդումը, ասպիրանտական ծրագրերում ռազմաարդյունաբերական համալիրի զարգացմանը առնչվող թեմաների կատարումը, համալսարանների կողմից զորամասերին բարոյական և ֆինանսական օժանդակության ցուցաբերումը:

Բանալի բառեր՝ ռազմաարդյունաբերական համալիր, ռազմահայրենասիրական սկզբունքներով դասավանդում, առարկայական ծրագրերի բարեփոխում

РЕЗЮМЕ

■ АРМЕН ДЖУТУРЯН

НАЦИОНАЛЬНАЯ АРМИЯ – ВУЗ: ПУТИ РАЗВИТИЯ СОТРУДНИЧЕСТВА В РА

В статье анализируется нынешнее состояние сотрудничества армянских вузов с национальной армией и на этой основе предлагаются пути расширения взаимосвязи учебного процесса и военной подготовки на новый качественный уровень. В частности, предлагается включить новые предметы в учебную программу, предложить актуальные исследовательские линии в аспирантуре, направленные на развитие военно-промышленного комплекса страны.

Ключевые слова: *военно-промышленный комплекс, преподавание по военно-патриотическим принципам, реформирование образовательных программ*

SUMMARY

▪ **ARMEN JUGHURYAN**

NATIONAL ARMY HIGH SCHOOL: WAYS OF DEVELOPMENT OF COOPERATION IN RA

The article analyzes the current state of cooperation of Armenian universities with the national army and on this basis suggests ways of expanding the interrelationships of the educational process and military training to a new qualitative level. In particular, it is proposed to include new subjects in the curriculum, offer relevant research lines in postgraduate study, aimed to developing the country's military industrial complex.

Key words: *military-industrial complex, teaching on military-patriotic principles, reforming of educational programs*

МИГРАЦИОННАЯ ПОЛИТИКА В КОНТЕКСТЕ ОБЕСПЕЧЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

АРМЕН СААКЯН, ЛИЛИТ АВДАЛЯН

Миграция является глобальной проблемой, которая привлекает к себе все больше внимания мировой общест-венности. Глобализационные процессы привели к тому, что миграционные процессы заметно активизировались. Управ-ление миграционными процессами – важный инструмент социально–экономической политики государства, требующий особого внимания и понимания интересов всех субъектов данного взаимодействия.

Современное общество отличается высокой мобиль-ностью. Когда мобильность населения приобретает все более сложный характер, а переезды мигрантов становится все более рискованными, возникает необходимость в разработке нацио-нальной политики, предусматривающий решение проблем миграции на основе прав человека. В связи с экономическими и политическими процессами интеграции привели к тому, что межгосударственные миграции стали нормой жизни. Ситуа-ция радикально меняется, что приводит к расширению и динамичному развитию международных внешнеэкономичес-ких и политических связей.

Совершенствование миграционной политики является одним из факторов обеспечения общественной безопасности РФ.

В связи с этим вопросы изучения миграционной по-литики в контексте национальной безопасности миграцион-ных процессов представляются все более актуальными.

Во введении обосновывается актуальность выбранной темы, определяется степень научной разработанности проб-лемы. А также введении характеризуется теоретико-методоло-

гическая основы исследования, сформулированы научно-теоретическая и научно-практическая значимости.

Обеспечения национальной безопасности государства, поддержание оптимального баланса трудовых ресурсов, а также сохранения устойчивого экономического роста невозможно без проведения эффективной миграционной политики. Рассмотрим категорию «Миграционная политика» в оценках ведущих исследователей в сфере миграционных процессов. Так, Л.Л. Рыбаковский уточняет, что под миграционной политикой следует понимать систему мер в сфере миграции населения, с помощью которых государство, а также его общественные институты, соблюдая определенные принципы соответствующие конкретно историческим условиям страны, предполагают достижение целей развития общества¹.

По мнению Б.С. Хорева, «миграционная политика» – система условий, способов и мер управления миграционной подвижностью населения, комплекс разработок и мероприятий, направленных на формирование необходимых потоков и требуемой интенсивности миграции населения. Трактовку миграционной политики с демографической позиций предлагает коллектив авторов под редакцией О.В. Воробьевой: «Миграционная политика» – это политика, направленная на то, чтобы изменить и поддержать численность и состав населения всего государства и отдельных его частей путем воздействия на направление движения и состав мигрантов. Таким образом, понятие «миграционная политика» является дискуссионным в российских научных кругах. По мнению большинства авторов, миграционная политика – это система общепринятых на уровне властных структур идей и концептуально объединенных средств, с

¹ Воробьева О.Д., Рыбаковский Л.Л. Основные проблемы современной миграционной политики России // Народонаселение. - 2016. - № 4. - С. 10.

помощью которых государство управляет миграционными процессами.

При рассмотрении миграционных процессов необходимо проанализировать их влияние на национальную безопасность. В последние годы в России и других странах массовые перемещения населения стали рассматриваться в определенных случаях как угроза национальной безопасности.

Национальную безопасность принято рассматривать как достаточно сложное явление, имеющее множество аспектов. Многоаспектность понятия «национальная безопасность» требует соответственно и особого подхода при ее изучении и выработке мер по ее обеспечению. Первоочередной целью системы национальной безопасности является формирование и поддержание внутренних и внешних условий, благоприятных для реализации важнейших направлений обеспечения национальной безопасности, по которым осуществляется устойчивое социально-экономическое развитие. К числу угроз национальной безопасности относят динамичное развитие миграционных процессов, вызывающих в том числе усиление межнациональной напряженности. Миграционные процессы являются существенным фактором социально-экономического, социокультурного и демографического развития, которое, в свою очередь, во многом определяет состояние национальной безопасности на всех уровнях - безопасность гражданина страны, безопасность общества и безопасность государства в целом.

Миграционные процессы в России часто оказывают дестабилизирующее влияние, превращаясь в кризисные ситуации, мешающие нормальному функционированию государства, социальных групп и отдельных личностей.

В Концепции государственной миграционной политики Российской Федерации до 2025 года в качестве первой цели указывается: «обеспечение национальной безопасности Рос-

сийской Федерации, максимальная защищенность, комфортность и благополучие населения Российской Федерации».

Угрозу национальной безопасности в первую очередь представляет незаконная миграция.

Незаконная миграция – въезд, выезд, пребывание (проживание) или транзитный проезд через территорию государства в целях оседания на постоянное жительство либо временного пребывания на территории той или иной страны, связанные с нарушением законодательства.

В Концепции государственной миграционной политики справедливо говорится о том, что «незаконная миграция, питающая рабочей силой теневой сектор экономики, является одной из главных причин усиления негативного отношения к мигрантам со стороны части населения Российской Федерации». Неконтролируемая и незаконная миграция несет угрозу стабильному социально-экономическому развитию России, что, в свою очередь, оказывает влияние и на систему национальной безопасности России.

Незаконные мигранты нередко объединяются в преступные группы или вливаются в уже существующие в целях обеспечения своего существования. Поэтому незаконная миграция становится источником формирования и дальнейшего существования транснациональных преступных формирований. На долю иностранцев в последнее десятилетие приходится около 2% от общего числа регистрируемых в России преступлений (не более 50 тыс. в год). Высокий уровень преступности иностранцев наблюдается в Центральном, Приволжском, Северо-Западном и Уральском федеральных округах РФ.

Миграционный прирост этнических диаспор крайне негативно сказывается на уровне преступности, на межконфессиональной и межэтнической конфликтогенности регионов. В результате под угрозу попадает этнокультурная,

религиозная безопасность и территориальная целостность Российской Федерации. Миграционные потоки приводят к переносу из страны в страну различных социальных, этнических, конфессиональных конфликтов.

В экономической сфере незаконная миграция способствует процветанию теневой экономики; изъятию из финансового оборота огромных денежных средств путем вывоза их за пределы России. По данным правоохранительных органов, прибыльность бизнеса в этой сфере на третьем месте после контрабанды наркотиков и оружия. Потери бюджета от налоговых нарушений составляют 250 млрд рублей в год. Объем вывоза денежных средств – 260 млрд в год.

Многочисленные риски национальной безопасности, связанные с миграционными потоками, позволили ученым выделить в качестве проблемной область «миграционной безопасности», под которой понимается состояние защищенности личности, общества, государства от негативных последствий миграции, потенциальных или реальных угроз, исходящих от ее отрицательных свойств и характеристик.

Трудность в обеспечении миграционной безопасности посредством миграционной политики государства заключается в следующем: миграционные потоки плохо моделируются; процессы миграции с трудом регулируются, так как чаще всего носят стихийный характер; миграционные процессы носят надгосударственный, цивилизационный, иногда глобальный характер.

В то же время стихийность миграционных потоков не означает хаотичности, так как государство может устанавливать правовые рамки их протекания. Миграционные процессы развиваются по определенным закономерностям. Миграционные потоки существенно влияют на состояние криминогенности регионов и городов. Статистические данные ГИЦ МВД России свидетельствуют о том, что на

протяжении последних 10 лет наблюдается устойчивый рост числа преступлений, совершаемых иностранцами и лицами без гражданства. Большая часть преступлений, совершаемых иностранцами, приходится на граждан государств СНГ – 81%. При этом именно граждане ближнего зарубежья чаще всего становятся и жертвами преступных посягательств.

В сущности можно сказать, что по этой теме идёт настоящая информационная война, так как окончательное решение по приёму миллионов мигрантов может добить историческую Россию, будущему Русской цивилизации, Русской государственности.

Подводя итог о миграционной политике в контексте национальной безопасности миграционных процессов в РФ, можно сделать вывод, что в современной России существует несколько наиболее важных проблем, которые требуют государственного регулирования в сфере миграции:

- *потребность в компенсации естественной убыли населения посредством привлечения и закрепления на постоянное место жительства в первую очередь народов России из стран ближнего зарубежья;*

- *необходимость создания условий для обеспечения территориальной мобильности трудовых ресурсов в соответствии с изменяющимися потребностями рынка и развития регионов;*

- *защита национального рынка труда от избытка трудовых ресурсов, структурной безработицы в условиях глобализации и давления избыточных трудовых ресурсов из-за рубежа;*

К благоприятным условиям для усиления угроз миграционной безопасности можно отнести:

- *отсутствие визовых ограничений со странами Центральной Азии;*

- *рыночный подход к миграции, абсолютизация экономических выгод от трудовой миграции;*

- *несовершенство системы миграционного учета и контроля за въездом, выездом и пребыванием иностранных граждан и лиц без гражданства на территории Российской Федерации;*
- *юридические и технические проблемы обустройства значительных участков Государственной границы Российской Федерации с государствами СНГ;*
- *коррупциогенность органов исполнительной власти в миграционных отношениях;*
- *упрощенный порядок въезда на территорию Российской Федерации граждан некоторых иностранных государств;*
- *развитие преступной деятельности, криминального бизнеса, незаконной торговли и т.д.*

В заключении хочу отметить, что меняющиеся условия социально-политической, социально-экономической, социокультурной реальности выдвигают новые требования к исследованию миграционных процессов. Поэтому, необходимо модифицировать научный подход к пониманию роли миграции и формированию направлений исследований миграционных процессов, в том числе необходимо определить социально-экономические параметры взаимодействия миграционных процессов с системой национальной безопасности России. В результате комплексного подхода к пониманию процесса взаимодействия миграционных процессов и системы национальной безопасности могут быть определены условия для стабильного социально-экономического развития страны.

ЛИТЕРАТУРА

1. Воробьева О.Д. Миграционная политика и ее реализации // Народонаселение. – 2000. – № 4.

2. Воробьева О.Д., Рыбаковский Л.Л. / Основные проблемы современной миграционной политики России, // Народонаселение. - 2016. - № 4.

3. Данилова И.А. территориальная дифференция воспроизводственных и миграционных процессов в России/ В. В.Елизарова и Н.Г Джанаевой // Региональная демографическая политика М, 2012. - 295 с.

4. Зайончковская Ж.А., Ноздрина Н.Н. Миграционный опыт населения региональных центров России // Проблемы прогнозирования. - 2008. - № 4. - С. 98-112.

5. Мозговой А.В. Миграционные процессы на территории Российской Федерации: есть ли угроза безопасности. Университетские чтения - 2009. Материалы научно-методических чтений ПГЛУ. - Часть XI. - Пятигорск: ПГЛУ, 2009. С.35-40. - 0,3 п. л. Диссертации по гуманитарным наукам - <http://cheloveknauka.com/migratsionnye-protsessy-v-kontekste-obespecheniya-obshchestvennoy-bezopasnosti-v-skfo-rf#ixzz50151mH8B>

6. Концепция государственной миграционной политики Российской Федерации на период до 2025 года (утв. Президентом РФ от 13 июня 2012 г.): <http://www.garant.ru/products/ipo/prime/doc/70088244/#ixzz4nr9wzmpb>

7. Мамитова Н.В. Миграционная политика Российской Федерации: проблемы теории и практики // Социодинамика. Режим доступа: http://e-notabene.ru/pr/contents_2013_6.html

8. Маринюк А.А. Миграционная политика Российской Федерации: разработка, реализация, общественное восприятие (1991-2008 гг.) Режим доступа: <http://www.dissercat.com/content/migratsionnaya-politika-rossiiskoi-federatsii-razrabotka-realizatsiya-obshchestvennoe-vospri#ixzz4nM5a0Q89>

9. Миграциология / М.Б. Денисенко, В.А. Ионцев, Б.С. Хорев. - М., 1989.

10. Воробьева О.Д. Миграционная политика и права человека / // Народонаселение.- 2004. -№ 3.

11. Пата Д., Мохапатра С., Сивал А. Миграция и денежные переводы: цифры и факты - 2011. - The World Bank, 2011.

12.Рыбаковский Л.Л. Миграция населения: прогнозы, факторы, политика.- М.,1997.- С. 21.

13.Рыбаковский Л.Л. Миграция населения: прогнозы, факторы, политика.- М.,1997.- С. 24.

14.Федеральный закон от 24 мая 1999 г. N 99-ФЗ "О государственной политике Российской Федерации в отношении соотечественников за рубежом" (с изменениями и дополнениями) Режим доступа:<http://base.garant.ru/12115694/#ixzz4nRF7lBbi>

15.Федеральный Закон от 25.07.2002 "О правовом положении иностранных граждан в российской федерации" (принят ГД ФС РФ 21.06.2002) Режим доступа: <https://giod.consultant.ru/documents/727313?items=1&page=13>

РЕЗЮМЕ

В научной статье авторы представляют актуальную проблему, связанную с национальной безопасностью. Научный интерес определяется тем, что авторы связывают национальную безопасность с миграционными процессами. Данный научный труд может быть использован как вспомогательный материал, при решении острых вопросов, связанных с безопасностью региона и страны. Авторы статьи профессор Саакян А. и магистрант Авдалян Л. уделяют особое внимание и на миграционный прирост этнических диаспор, который по мнению авторов негативно сказывается на уровень преступности.

Ключевые слова: Миграция, национальная безопасность, преступность, страна, регион, процессы, политика

ՄԱՓՈՓՈՒՄ

■ ԱՐՄԵՆ ՄԱՀԱԿՅԱՆ, ԼԻԼԻԹ ԱՎԴԱԼՅԱՆ

ՄԻԳՐԱՅԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆ-ԳՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հոդվածում հեղինակները արծարծում են ազգային անվտանգությանը վերաբերող արդիական այնպիսի հարց, ինչպիսին միգրացիոն քաղաքականության ազդեցությունն է ազգային անվտան-

գությունը ձևավորող գործոնների վրա: Առանձնակի ուշադրության է արժանանում տարբեր երկրներում ազգային համայնքների աճի խնդիրը, ինչը, հեղինակների կարծիքով ազդում է հանցավորության աճի վրա:

Հոդվածի նյութը կարող է օգտակար լինել երկրի ու տարածաշրջանի անվտանգությանն առնչվող սուր հարցեր քննարկելիս և լուծում որոնելիս:

***Բանալի բառեր՝** միգրացիա, ազգային անվտանգություն, հանցավորություն, երկիր, տարածաշրջան, գործընթացներ, քաղաքականություն*

SUMMARY

■ **ARMEN SAAKYAN, LILIT AVDALYAN**

MIGRATION POLICY IN THE CONTEXT OF ENSURING NATIONAL SECURITY SUMMARY

In the scientific article the authors present an actual problem related to the national security. Scientific interest is determined by the fact that the authors link national security with migration processes. This scientific work can be used as an auxiliary material in dealing with acute issues connected with the security of the region and the country. The authors of the article, professor A. Saakyan and master student L. Avdalyan, pay special attention to the migration growth of ethnic diasporas, which, according to the authors, has a negative impact on the level of crimes. **KEY WORDS:** migration, national security, crime, country, region, processes, politics.

***Key words:** Migration, national security, criminality, country, region, processes, politics*

ԲԱՆԱԿ ԵՐԵՎՈՒՑԹԸ ՀԱՅՈՑ ՄԵՁ

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Իր ֆիզիկաաշխարհագրական պայմանների շնորհիվ **Հայաստանը միշտ եղել է մի բնական հսկա միջնաբերդ**, որն իշխել է շրջապատի վրա, ինչի պատճառով էլ դարեր շարունակ աշխարհի **հզորները ձգտել են տիրել նրան**: Ուստի հայ ժողովուրդը **մշտապես զինուժ ունենալու անհրաժեշտություն է զգացել**: Բայց միշտ չէ, որ նա ունեցել է իր զինուժը՝ երբեմն զրկված լինելով սեփական բանակ ունենալու հնարավորությունից: Հայ ազգը միշտ երազել է դրա մասին՝ ի դեմս բանակի տեսնելով հզոր հենարան սեփական ինքնության դրսևորման համար և հուսալի պատվար թշնամական ոտնձգությունների դեմ: Նա միշտ պատրաստ է եղել զորավիգ լինելու և սատարելու իր զորականին: Միայն, ցավոք, հայ զորականը հաճախ ստիպված է եղել օտար ափերում ծառայել:

Ե՛վ օտար և՛ թե հայրենի բանակում **հայ զորականը միշտ էլ առանձնացել է իր քաջությամբ¹ և հավատարիմ է եղել զինվորական երդմանը**: Այնպես որ, առանց վարանելու կարելի է արձանագրել, որ թեև օտար նվաճողներն արել են ամեն ինչ հայ ազգն ու բանակը միմյանցից զատելու և օտարացնելու համար, սակայն ապարդյուն: Նրանք միշտ էլ նույնականացել են, մեկ ամբողջություն կազմել, փոխլրացրել միմյանց և հաղթանակներ կոել:

Հայոց ռազմական և մասնավորապես բանակի պատմությունը լավ ուսումնասիրված չէ, և դա այն դեպքում, երբ

¹ Արմենների խիզախության և ռազմունակության ցուցանիշ է, օրինակ, հայտնի Բիհիսթունյան արձանագրության մեջ հիշատակված այն փաստը, որ նրանց ապստամբությունը Դարեհ I-ի զորավարները կարողացել են ճնշել միայն հինգ ճակատամարտից հետո, որոնք տեղի են ունեցել 521—520 թվականներին, տե՛ս **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, Ե., 1945:

«աշխարհի բանականները քայլում են մեր պատմության դասագրքերի էջերով... Հունական ու հռոմեական ռազմարվեստի մասին շատ բան գիտենք, մինչդեռ անցյալի հայկական բանականների պատմությունը ցայսօր մնում է չպատմված»¹: Տարբեր դարաշրջանների հայոց զորքերի թվաքանակը, կառուցվածքը, զենքի ու զինամթերքի տեսակները, պաշտպանական ամրաշինությունների համակարգը և ընդհանրապես ռազմարվեստը կարոտ են խոր և բազմակողմանի ուսումնասիրության:

Ռազմարվեստի բնագավառում որոշ աշխուժություն նկատվեց ԽՍՀՄ-ի կողմից հիտլերյան խմբավորման ջախջախմանը հաջորդած տարիներին²: Սակայն, քանի որ ԽՍՀՄ-ում այդ բնագավառին վերաբերող հարցերը բացորոշ քննարկելն արգելված էր, հիմնախնդրին անդրադառնալու փորձերը լոկ փորձեր էլ մնացին: Միայն այդ տարիներին ԽՍՀՄ որոշ բարձրաստիճան ռազմական գործիչների գրառած հուշերում (Բաղրամյան, Շտեմենկո, Գրեչկո և այլն) հրնթացս խոսվեց նաև հայկական դիվիզիաների և հայ մարտիկների սխրանքների մասին: Գրվեցին նաև ճակատային օրագրություններ, հուշեր, ինչպես նաև ռազմաճակատային կյանքին ու առօրյային նվիրված մի շարք գեղարվեստա-վավերագրական ստեղծագործություններ, որոնց հեղինակները պատերազմի մասնակից լրագրող-վավերագրողներ էին (Հր. Քոչար³, Հմ. Սիրաս⁴ և այլն), որոնք փորձում էին արժևորել այնքան մեծ զոհողությունների գնով նվաճված հաղթանակը:

Ուսումնասիրություններ գրվեցին նաև Երկրորդ աշխարհամարտի ընթացքում հերոսական ճանապարհ անցած հայկական դիվիզիաների ու հայ մարտիկների անօրինակ

¹ Տե՛ս **Հայրապետյան Կ., Այայան Է.**, Այրուձիի մեծ գաղտնիքը, «Երևան» ամսագիր, թիվ 4, 2007:

² Տե՛ս **Հ. Հարությունյան**, Վարդանանց պատերազմը, Ե., 1946:

³ **Քոչար Հ.**, Երկերի ժողովածու, հատ. 1–6, Ե., 1964–1968, 1971:

⁴ **Սիրաս Հմ.**, Երկեր, հատ. 1–5, Ե., 1976–1980:

սխրանքների մասին, սակայն դրանք հիմնականում ոչ խորքային վերլուծություններ պարունակող ուսումնասիրություններ էին¹:

Հայ ռազմարվեստի պատմությանը նվիրված աշխատություններ գրվեցին 1960-80-ական թվականներին²: Մասնավորապես շնորհակալ գործ կատարեց պահեստի գնդապետ, պրոֆ. Աշ. Հարությունյանը, ով մեծ ջանքեր էր գործադրում հայկական ռազմարվեստի ուսումնասիրություններով զբաղվող գիտական ստորաբաժանում հիմնելու ուղղությամբ: Հիմնախնդրին ավելի հաճախ սկսեցին անդրադառնալ ԽՍՀՄ-ի փլուզմանը նախորդող և հատկապես անկախության տարիներին³: Դրանցում կարևորվեցին հայ ժողովրդի պատմության հերոսական դրվագները և այդ հաղթանակ-

¹ Տե՛ս **Հակոբյան Ա.**, Թամանյան դիվիզիայի մարտական ուղին, ՊԲՀ, թիվ 1 (13), 1965, էջ 13-24, **Սիմոնյան Ա.**, Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի հաղթանակի միջազգային նշանակությունը, ԼՀԳ, թիվ 5(11), 1985, էջ 3-10, **Հարությունյան Գ.**, Հայկական դիվիզիաները Հայրենական մեծ պատերազմի տարիներին, ԼՀԳ, թիվ 5(11), 1985, էջ 11-21 և այլն:

² Տե՛ս օրինակ՝ **Մարգարյան Ս.**, Հայ ռազմարվեստի պատմություն, Ե., 1969:

³ Տե՛ս **Հարությունյան Ա.**, Պատերազմի և խաղաղության մի քանի պրոբլեմների մասին, Ե., 1967, **նույնի՝** Առաջին համաշխարհային պատերազմի ռազմադիվանագիտական պատմությունից, Ե., 1983, **նույնի՝** Թուրքական արշավանքը Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական մարտերը, Ե., 1984, **Մանասեթյան Ռ.**, Տիգրան Մեծ, Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ, Ե., 1987: **Այվազյան Ա.**, Հայ զինվորականության պատվո վարքականոնը (4-5-րդ դարեր), Ե., 2000, **Մովսիսյան Ա.**, Տիգրան Մեծ. թագավորներից մեծագույնը, Ե., 2010, **նույնի՝** Բարենպաշտ արքաների աշխարհակալությունը: Հայրյուրամյա կայսրություն Տիգրան Մեծից առաջ, Ե., 1997, **Մովսիսյան Ա.**, **Մարտիկյան Ս.**, Մեր հաղթանակները, հատ. Ա, Ե., 2008, **Հարությունյանի Գ.**, Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941 - 1945 թթ.), Ե., 2002, **նույնի՝** Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., Ե., 2002, **Կարապետյան Ս.**, Հայաստանի Հանրապետության բանակը (1918-1920), Ե., 1996:

ներում հայկական զինուժի խաղացած կարևորագույն դերակատարությունը: Հայ զինուժի պատմությունը ներկայացնելը միաժամանակ նպատակ ուներ անցյալի վառ օրինակներով դաստիարակելու մատաղ սերնդին և շարունակվող պատերազմական վիճակում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին ոգևորելու:

Զգալի թվով նոր ուսումնասիրություններ հրատարակվեցին վերջին երկու տասնամյակում: Դրանց հիմնական թեման անկախության արշալույսին Արցախյան հերոսամարտին զուգընթաց հայոց բանակի ստեղծման բարդ ու դժվարին և միևնույն ժամանակ խելացի կազմակերպված գործընթացն էր¹:

Հիմնախնդրին նվիրված վերջին տարիներին գրված աշխատությունների մեջ առանձնանում է ռազմարվեստի պատմաբան Սուրեն Մարտիկյանի գլխավորած հեղինակային խմբի նախաձեռնությամբ, Է. Դանիելյանի խմբագրությամբ և գնդապետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Հարությունյանի հիշատակին նվիրված՝ 2008-2012 թթ. լույս տեսած «Մեր հաղթանակները» քառահատորյակը²: **Առաջին հատորն** ընդգրկում է հայոց պատմության հնագույն շրջանից մինչև Ք.հ. III դ. վերջը պատերազմների ընթացքում հայոց զինուժի տարած ռազմավարական և մարտավարական հաղթանակների համառոտ նկարագրությունը: **Երկրորդում՝** IV-Xդդ. պարսկական և արաբական գերտերություններ-

¹ Տե՛ս **Հարությունյան Ս.**, Գոյամարտ, Ստեփանակերտ, 1998, **Սարգսյան Վ.**, Ոգու փորձություն, 2000, **Հարությունյան Մ.**, Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, Ե., 2002, **Մկրտչյան Շ.**, Արցախում ես ուրիշ պատերազմ տեսա, Ե., 1996, **Պետրոսյան Ռ.**, Արցախ, պատերազմ, զինադադար, Ե., 2001, **Арутюнян В. Б.**, События в Нагорном Карабахе, Е., 1994, **Աբրահամյան Հ.**, Կամավորական ջոկատներից մինչև պաշտպանության բանակի ստեղծումը, ԼՀԳ, թիվ 2(312), էջ 117-129 և այլն:

² Տե՛ս Մեր հաղթանակները, հ. Ա, Ե., 2008, հ. Բ, Ե., 2009, հ. Գ, Ե., 2011, հ. Դ, Ե., 2012:

րի դեմ, **Երրորդում՝** XI-XIII դդ. Բագրատունիների և Կիլիկյան թագավորությունների օտար նվաճողների դեմ մղած պայքարի, **չորրորդում՝** XVIII-XX դդ. ժամանակաշրջանը՝ սկսվում է 1720-ական թթ. Արցախի և Սյունիքի ազատագրական պայքարի նկարագրությամբ և ավարտվում Արցախյան պատերազմում արձանագրված համոզիչ հաղթանակներով: Հատուկ տեղ է հատկացվում ֆիդայական շարժմանը և հայ ժողովրդի մասնակցությանը թուրքական և պարսկական տիրապետության դեմ ծավալված պատերազմներին ու երկու աշխարհամարտերին:

Այդ ուղղությամբ շարունակվող աշխատանքները հույս են ներշնչում, որ ապագայում ևս հայ ռազմարվեստի մասին հիմնարար աշխատություններ կունենանք:

Ռազմական արվեստը Հայաստանում բավականին հին պատմություն ունի: Հնագույն աղբյուրներից տեղեկանում ենք, որ մեր նախնիները հազարամյակներ առաջ ռազմի գործում հմուտ են եղել: Այդ մասին են վկայում ինչպես հին, այնպես էլ ուշ շրջանի օտար շատ աղբյուրներ¹: **Հայ մատենագրությունը** ևս հարուստ նյութ է պահպանել հայ զինվորականության և հայոց բանակի պատմությունը լուսաբանելու համար²: Հայոց զինուժի փառավոր անցյալի մասին են նշում

¹ Տե՛ս **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից (Հին հունական մեջբերված աղբյուրների ամբողջական կամ հատվածաբար թարգմանությունները ըստ Ս. Կրկյաշարյանի), Ե., 1986 (Տե՛ս նաև **Геродот**, История, перевод с греческого Мищенко, М, 1838, кн. 7, сс. 72-73). **Քսենոփոն**, «Անաբասիս», (թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի), Ե., 1970, **Պլուտարքոս**, «Թագավորների և գորավարների ասույթներում», http://www.tarntercum.ru/2015/10/blog-post_12.html, **Крипс Г. С.**, Фрагменты истории, ВДИ, 1950, N 1, **Амфиатов А. В.**, Армения и Рим, У., 2015,

² Տե՛ս **Սովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Ե., 1961: **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, Ե., 1947: **Փաւստոս Բուզանդացի**, Պատմութիւն Հայոց ի չորս դպրութիւնս (չորրորդ տպագրութիւն), Վենետիկ, 1933, Դպրութիւն Ե, Գլուխ ԽԴ: **Ղազար Փարպեցի**, Հայոց

նան հայոց բանակի և ռազմարվեստի պատմությունն ուսումնասիրող պատմաբանների մեծ մասը, ինչպես օրինակ՝ ուշագրավ աշխատությունների հեղինակ Ռ. Մանասերյանը, Ա. Այվազյանը, Ս. Սարգսյանը, Ա. Մովսիսյանը, Ս. Մարտիկյանը¹, որոնց աշխատությունները շատ օգտակար են եղել այս հոդվածը գրելու համար:

Ի տարբերություն շատ այլ գորաբանակների, որոնց հաջողությունը պայմանավորված էր լինում ավարառությամբ, հայկական զորքերի ուսուցման և դաստիարակության հիմքում ընկած էր գաղափարաբարոյական և ֆիզիկական դաստիարակությունը, քանի որ դրսից անընդհատ սպառնացող ներխուժման վտանգը պահանջում էր համախմբվածություն և ամուր պաշտպանություն²: Ինչպես վկայում են մեզ հասած

պատմությունը և Վահան Մամիկոնյանի գրած թուղթը: Թարգմ. Մինաս քին. Տեր-Պետրոսյանց, Ալեքսանդրապոլ, 1895, էջ 133:

¹ Տե՛ս **Մանասերյան Ռ.**, Տիգրան Մեծ, Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ, Ե., 1987: **Այվազյան Ա.**, Հայ զինվորականության պատմո վարքականոնը (4-5-րդ դարեր), Ե., 2000, **Մովսիսյան Ա.**, Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը: Հարյուրամյա կայսրություն Տիգրան Մեծից առաջ, Ե., 1997, Տիգրան Մեծ. թագավորներից մեծագույնը, Ե., 2010, **Մովսիսյան Ա., Մարտիկյան Ս.**, Մեր հաղթանակները, հատ. Ա, Ե., 2008:

² Հայկական զորքերը համեմատաբար լավ են պատրաստվել պաշտպանողական մարտերին, դրա համար կառուցվել են բերդեր, ստեղծվել ամրություններ, հարմարեցվել է լեռնային տեղանքը:

Թշնամու հարձակման ժամանակ, կամ իրենց զորքերի պարտության դեպքում վահանակիրները շարվել են շրջանակով և, իրենց առաջ դնելով սեփական վահանները, ստեղծել են պաշպանական պարիսպ, որի հետևից պաշտպանվել ու հետ են մղել թշնամու գրոհները: Համառ ու երկարատև պաշտպանողական մարտ վարելու նպատակով հայերը բերդերն ու ամրոցները նախօրոք ապահովել են սննդամթերքով, խմելու ջրով ու զենքով: Փոքրաթիվ լինելու դեպքում հայկական զորքերը վարպետորեն հարմարվել են տեղանքին և, հմտորեն օգտագործելով մարտական զենքը, ոչ միայն պաշտպանողական մարտ են վարել, այլև անցել են հակահարձակման:

պատմական տվյալները, հին դարերից հայկական ազգային և պետական դրվածքում **ուրույն դեր ու նշանակություն է ունեցել զինվորական դաստիարակությունը, որի հիմքում ֆիզիկականի հետ խիստ կարևորվել է բարոյական, տիրասիրության և հայրենասիրության դաստիարակությունը:**

Դա վերաբերում էր հատկապես սպայական կազմին¹: Կարևորվում էր նաև հրամանատարի հոգատարությունը զինվորի նկատմամբ: Այդ իսկ պատճառով, հին Հայաստանում գործող կարգի համաձայն, ազնվականների տղա երեխաները ուսանում էին իրենցից մեկ աստիճանով ցածր ազնվականի մոտ և ուսուցման ողջ ընթացքում ապրում էին նրա տանը: Մա արվում էր այն նպատակով, որ ապագա հրամանատարը հնարավորինս լավ ճանաչեր իր ենթականերին, մոտիկից ծանոթանար նրանց կարիքներին ու հոգսերին: Միևնույն ժամանակ ապագա ռազմիկների մեջ սերմանվում էր հայրենիքին ու իրենցից բարձր աստիճանի վրա գտնվողների նկատմամբ նվիրվածություն և աներկբայորեն ենթարկվելու հատկություններ: Ի դեպ՝ նմանատիպ մոտեցում կար միջնադարյան եվրոպական ասպետների դաստիարակության գործընթացում: Միայն այն տարբերությամբ, որ Եվրոպայում ազնվականի զավակը կրթվում էր ավագ ասպետի մոտ:

Միևնույն ժամանակ հայ պատանուն նաև քաղաքական դաստիարակություն էին տալիս: Նրա մեջ մեծ հարգանք էր ներշնչվում ազնվականական տան գլխավորի՝ հոր նկատմամբ: Այնուհետև հայ պատանու մեջ ամրագրվում էր ընտանեկության զգացումը: Այս երկուսը անհրաժեշտ էին տոհմիկ հոգևոր ժառանգությունը սերունդներին փոխանցելու և գերդաստանական պատիվը բարձր պահելու համար:

Ինչպես արդեն նշեցինք, հայկական զինուժը հազարամյակների պատմություն ունի և հայոց պատմության կարևո-

¹ Տե՛ս **Այվազյան Ա.**, Հայ զինվորականության պատվո վարքականոնը (4-5-րդ դարեր), Ե., 2000, էջ 9:

րագույն ժամանակահատվածներին համապատասխան ունեցել է իր **գարգացման փուլերը**, որոնց ընթացքում այն շարունակաբար փոփոխվել, գարգացել և կատարելագործվել է:

Քերթողահայր Մովսես Խորենացին մեր պետականության **սկիզբ է համարում Հայկ Նահապետի՝** Բաբելոնի տիրակալ Բելի դեմ Հայոց ձորի ճակատամարտում տարած հաղթանակը: Նկարագրելով ճակատամարտը՝ Խորենացին ընդգծում է այն կարևոր հանգամանքը, որ Հայկը և Բելը ճակատամարտի վայր են գալիս հետևյալ գորքերով, այսինքն՝ հեծելագործեր դեռևս գոյություն չունեին: Գրքում ճակատամարտի ժամանակ Հայկի գորքը դասավորվում է եռանկյունաձև, իսկ Բելի գորքը գալիս է անկանոն ամբոխի նման: Այսինքն՝ հայերի մոտ կար հստակ մշակված մարտավարություն: Հայկն իր գորքը բաժանում է թևերի, ինքը ղեկավարում է կենտրոնական թևը, աջ զորաթևին հրամանատար է կարգում իր որդի Արամանյակին, ձախ զորաթևին՝ իր թոռ Կադմուսին: Յուրաքանչյուր զորաթևի հրամանատարին կարգում է տեղակալներ, որպեսզի հրամանատարի գոհվելու դեպքում անմիջապես փոխարինողներ լինեն: **Այս սկզբունքը** այսօր արդեն բոլոր երկրների բանակների մարտական կանոնագրքերում պարտադիր է: Գրքում ճակատամարտում հայերի կողմից կիրառված զենքերից Խորենացին նշում է սուրն ու լայնալիճ աղեղը, ինչը վկայում է դեռևս հնագույն շրջանում հայերի բանակում դիպուկահարների առկայության մասին:

Խթական աղբյուրներից էլ տեղեկանում ենք, թե ինչպես **Հայասայի Աննիաս (1345-1316 թթ.) թագավորը** խելացի մարտավարության (գիշերային մարտերի) շնորհիվ կարողացել է տևական ժամանակ հաջող պայքարել խեթական գերակշռող ուժերի դեմ և դուրս վռնել նրանց երկրից:

Տարբեր աղբյուրներ էլ վկայում են, որ հայկական բանակն ավելի հզորացավ և կատարելագործեց **Վանի (Արարատյան) թագավորության (Ք.ա. 9-6-րդ դդ.)** շրջանում, երբ ռազմարվեստում լավագույնս օգտագործվում էր տեղանքի

նպաստավոր դիրքը, նախապես ստեղծված հենակետերը, զորատեսակների հարձակման հերթականությունը և այլն: Արգիշտի Ա (786-764), Սարգուր Բ (764-735) և Ռուսա Ա (735-714) թագավորների բանակները մեծաթիվ էին: Դրանք հավաքվում էին աշխարհագրից, սակայն միջուկը մշտական, 30-40 տարվա փորձառություն ունեցող պրոֆեսիոնալներ էին:

Երվանդունիների շրջանում հայկական բանակն ավելի է կատարելագործվում: Խորենացու վկայությամբ՝ հետևակ կռվողները ձիավոր դարձան, պարսերովները՝ հաջող աղեղնավորներ, լախտերովները զինվեցին սրերով ու տեգավոր նիզակներով, մերկերը պատվեցին վահաններով ու երկաթե զգեստներով, այսինքն՝ խոսքը լավ զինված և հմուտ բանակի մասին է: Դրա խոստուն վկայությունն էր այն, թե ինչպես 331 թ. Գավգամելայի ճակատամարտին մասնակցող Հայոց Այրուծին կարողացավ ճեղքել մակեդոնական հեծելազորի մարտակարգը և դուրս գալ շրջափակումից:

Հայտնի է, որ գրեթե բոլոր հայոց արքաները մեծ ուշադրություն են դարձրել բանակին: Այդ առումով առանձնանում է հատկապես **Արտաշես Ա-ն (189-160թթ.)**: Նա իրականացրեց **ռազմական խոշոր բարեփոխումներ**՝ սահմանամերձ 4 նահանգներին ավելի բարձր կարգավիճակ շնորհեց՝ դարձնելով բղեշխություններ, որոնք ունեին մշտական զորք պահելու իրավունք, ինչը ապահովում էր սահմանների անվտանգությունը: Ինչպես նաև զորահավաքի կազմակերպումը հեշտացնելու համար երկիրը բաժանեց 120 վարչական միավորների՝ գավառների: Պատերազմների ժամանակ գավառապետերը պարտավորվում էին առաջին իսկ կոչով իրենց ջոկատներով ներկայանալ թագավորներին:

Տիգրան Բ Մեծի (Ք.ա. 95-55 թթ.) օրոք Հայաստանը հասնում է իր հզորության գագաթնակետին: Իրականացվում են հերթական ռազմական բարեփոխումները: Հետևակի ծանրա-

զեն և թեթևագեն գնդերի մեջ առանձնացվում են միատեսակ զինված ու նույն պաշտպանական հանդերձանքով երեքից վեց հարյուրակներից բաղկացած միջանկյալ ստորաբաժանումներ, որոնք հիշեցնում են այսօրվա գումարտակները: Հիշատակվում են նաև սակրավորների ջոկատներ: Տիգրանի բանակի գլխավոր հարվածային ուժը ծանրագեն հեծելազորն էր՝ զինված երկար նիզակներով, աղեղներով, սրերով և պաշտպանված զրահով ու երկարացված սաղավարտով: Պատերազմներն արդեն մանրակրկիտ կերպով նախապատրաստվում էին, մշակվում էր մարտավարություն: Մարտը սկսում էր թեթևագեն հետևակը, այնուհետև գործի էր անցնում ծանրագեն հետևակը, որն անդրադարձնում էր հակառակորդի գլխավոր ուժերի գրոհը: Ծանրագեն հետևակի հետ միաժամանակ մարտի էր նետվում նաև հեծելազորը: Հեծյալները նախ նետահարում էին հակառակորդին, ապա անցնում մենամարտի: Վերջին գրոհին ներգրավվում էին արդեն բոլոր ուժերը:

Նկատենք նաև, որ **բացարձակ միապետության շրջանում** հայոց բանակի գերագույն գլխավոր հրամանատարը համարվում էր թագավորը, իսկ գործնականում՝ **թուրանը**, որը հելլենիզմի դարաշրջանի կեսերից սկսեց կոչվել **սպարապետ**: Հայոց բանակն այդ շրջանում ունեցել է կառուցվածքի համակարգված և ֆունկցիոնալ բաժանում՝ գունդ, գումարտակ, վաշտ, երբեմն նաև հարյուրյակ¹, բանակային կարգուկանոն, զինվորների՝ իրենց հրամանատարներին նվիրվածություն²: Գոյություն է ունեցել զինվորական դաստիարակության նպատակաուղղված և բարձր դրվածք: Հայկական ազգային բանակի ձևավորումը, դրանում սպաների դերը,

¹ Տե՛ս **Մարգարյան Ա.**, Հայ զինվորի դաստիարակության համակարգը հին և միջին դարերում, Ե., 2000, էջ 30:

² Տե՛ս **Բուզանդ Փ.** Պատմություն հայոց, Ե., 1968, էջ 244-245:

նրանց պատրաստության խնդիրները և զինվորական գործունեությունը պատմական յուրաքանչյուր ժամանակահատվածում պայմանավորված են եղել մի շարք գործոններով՝ պատմաքաղաքական, ազգային, մշակութային, որոնց հոլովություն էլ ձևավորվել ու կազմավորվել է մեր բանակը:

Հայկական բանակն իր մարտունակությամբ հռչակված էր Հին աշխարհում: Ուշագրավ է այն փաստը, որ հետագա դարերում՝ **անկախության և պետականության կորստից հետո անգամ, այն պահպանեց իր դերը և համարումը** սկզբում՝ Սասանյան Պարսկաստանի, այնուհետև՝ Արաբական Խալիֆաթի շրջանում: Հայ զորական ուժը զարգացում ապրեց նաև հաջորդ դարերում և մեծապես օժանդակեց Հայոց պետականության վերականգնմանը 9-րդ դարում՝ Բագրատունիների գլխավորությամբ, 18-րդ դարում Դավիթ Բեկի ղեկավարությամբ Սյունյաց ազատագրական պայքարի ժամանակ, ֆիդայական պայքարի տարիներին, Հայաստանի Առաջին հանրապետության շրջանում և վերջապես նաև մեր օրերում:

Պետականության չգոյության պայմաններում հայոց զորական փառքը պահպանել ու ավելի է բարձրացրել հատկապես **հայոց այրուձին**, որի մասին մեծ թվով հիշատակություններ են պահպանվել հայրենի և օտար պատմիչների երկերում, ինչպես նաև ժամանակակից ուսումնասիրողների աշխատություններում¹:

Հայոց այրուձին մշտապես թագավորի հոգածության ներքո էր: Տանելով մեկը մյուսից փայլուն հաղթանակներ, որոնցից էր, օրինակ, մ.թ.ա. **331 թ. Գավգամելայի ճակատամարտը**, որի ընթացքում հայոց այրուձին փախուստի մատնեց Ալեքսանդր Մակեդոնացու ձախ թևը՝ Պարեմենիոնի զորքը, և հայտնվեց Մակեդոնացու թիկունքում: «Ալեքսանդր Մեծի պատմությունը կարող էր հենց այդ օրն էլ ավարտվել,

¹ Տե՛ս **Հայրապետյան Կ., Այանյան Է.**, Այրուձիի մեծ գաղտնիքը, «Երևան» ամսագիր, թիվ 4, 2007:

եթե հակառակ թնում պարսիկները չսասանվեին ու խուճապի չմատնվեին»¹:

Մ.թ.ա. 68 թ. Արածանիի ճակատամարտում Տիգրան Մեծը միայն հեծելազորով ջախջախեց Լուկուլլոսի բանակին: Ըստ հռոմեացի պատմիչներ Կրասոսի ու Անտոնինոսի՝ արևելյան արշավների ձախողման պատճառը հենց այդ հզոր նեցուկի բացակայությունն էր: Պահպանվել են մեծ թվով վկայություններ նաև այն մասին, որ 5-րդ դարում՝ Արշակունիների թագավորության անկումից հետո, Պարսկաստանն ու Բյուզանդիան շարունակում էին օգտվել հայոց այրուձիից՝ շռայլորեն վարձատրելով զինվորական ծառայության համար: Այրուձիի հզորության վկայություն է նաև այն հայտնի փաստը, որ պարսիկները, վախենալով այրուձիի մարտական ուժից, հանուն սեփական անվտանգության կրճատեցին հայկական հեծելազորի թիվը՝ դարձնելով այն 30 000, հետո՝ արաբական իշխանության տարիներին՝ 15 000:

Ինչ վերաբերում է մարտիկների թվաքանակին, ապա մեզ հասած տեղեկությունների համաձայն, **Պապի թագավորության ժամանակ** հայկական **այրուձիում կար մոտ 90 000 հեծյալ**: Հայտնի է նաև, որ Բյուզանդիայի հիմնման սկզբից կայսեր թիկնազորն ու արքունական գունդը կազմված էին բացառապես հայերից: Այս միտումն ավելի ամրապնդվեց, երբ գահ բարձրացան հայկական տոհմերի ներկայացուցիչները: Որպես կանոն՝ Բյուզանդիայում ծառայող հայկական ջոկատները՝ մանավանդ այրուձին, արժանանում էին ջերմ ու հարգալից վերաբերմունքի, հրամանատարներին տալիս էին բարձր կոչումներ ու պաշտոններ, զինվորներին խրախուսում պարգևներով:

Հայտնի է նաև, որ **1071-ին Մանազկերտի** ճակատամարտում կրած պարտությունից հետո բյուզանդական բանակում

¹ Տե՛ս նույն տեղում:

կոված հայկական հեծելազորը գնաց արևելք: Թուրքական ներխուժման դեմ պայքարող Եգիպտոսի ֆաթիմյան խալիֆները կոչ արեցին հայկական զորքերին միասին հաստատել կարգ ու կանոն երկրում: Հայերը գրավեցին Կահիրեն ու Ալեքսանդրիան, Վերին Եգիպտոսում ճնշեցին բեդվինների ապստամբությունը: Ավելին՝ նրանց հրամանատարը, ապավինելով այդ ահեղ ուժին, դարձավ խալիֆաթի վեզիրը և երկար տարիներ հաջողությամբ ղեկավարեց երկիրը:

Սակայն չկա մի ուժ, որ կարողանա երկար գոյություն ունենալ առանց հայրենիքի, առանց սեփական պետության... **Հայկական այրուձին վերջին անգամ մարտի ելավ Կիլիկյան թագավորության ժամանակ**, որի անկումից հետո անհետացավ պատմության թատերաբեմից, չնայած ստեպ-ստեպ հանդես էր գալիս զանազան պետությունների բանակներում: Մասնավորապես, տեղեկություններ կան, որ մասնակցել է 1410 թ. տեղի ունեցած Գրյունվալդի հայտնի ճակատամարտին:

Ավելացնենք, որ **Հին Հայաստանում բանակի թիվն ու դասակարգումը որոշվում էր Ձորանամակով**, որը **քառասուրուն էր՝ ըստ Մեծ Հայքի չորս բդեշխությունների՝** հյուսիսային, հարավային, արևելյան ու արևմտյան դարպասների: Յուրաքանչյուր **բդեշխություն բաղկացած էր 21 կամ 22 նախարարությունից**¹: Ձորանամակում նշվում էր դրանց զորքի թիվը: Համաձայն ցայսօր պահպանված միակ Ձորանամակի՝ վաղ միջնադարում՝ Արշակունիների օրոք, հայկական բանակը բաղկացած էր 124 000 մարտիկից, որոնցից 84 000-ը նախարարական զորքերն էին, 40 000-ը արքայական զնդերը՝ ոստանիկներն ու մարդպետական զորքը: Արտաքին սպառնալիքի ժամանակ նախարարները հավաքում էին իրենց բանակներն ու կցում Ձորանամակում նշված զորամիավորում-

¹ Նախարարն սկզբում պաշտոն էր, իսկ հետագայում, երբ այդ պաշտոնները դարձան ժառանգական, նախարարն էլ վերձևվեց ու դարձավ ազնվականական տիտղոս:

ներին, անհրաժեշտության դեպքում էլ թագավորի հրամանով օգնում էին հայոց բանակի այլ խմբավորումներին:

Հայկական զինուժը նոր մակարդակի բարձրացավ **Կիլիկիայի հայկական պետության ժամանակաշրջանում**: Պետություն, որը գոյության ողջ ընթացքում պատերազմների մեջ էր, ուստի կանոնավոր և ուժեղ բանակ ունենալն անհրաժեշտություն էր: Մշտական բանակի կազմակերպումն սկսվեց դեռևս Ռուբինյան առաջին իշխանների օրոք: Խաղաղ ժամանակ երկիրը կարողանում էր պահել 30 հազարանոց բանակ: Պատերազմի ժամանակ բանակի թվակազմը հասնում էր 60 հազարի¹:

Բանակը բաղկացած էր արքունի և իշխանական գնդերից: Պատերազմների ժամանակ գյուղացիներից և քաղաքացիներից կազմվում էր աշխարհագոր: Կանոնավոր բանակի միջուկը ձիավորներից (ասպետներից) կազմված հեծելազորն էր: Կիլիկիայում ևս սահմանվել էր ձիավորի (ասպետ) աստիճան: Այն ստանալու համար հարկավոր էր քննություն հանձնել զինվորականի համար անհրաժեշտ գիտելիքներից: Ձիավորի աստիճանի շնորհումը տեղի էր ունենում հանդիսավոր պայմաններում: Այն ստացել են 14, 18, 20-ամյա տարիքում: Բանակում նշանակալից թիվ էր կազմում հետևակը:

Կիլիկիայի պետության զինուժի առանձնահատկությունն այն էր, որ նրա զինված ուժերում մեծ տեղ ունեին նաև ռազմական նավատորմը, առանց որի անհնար էր պաշտպանել պետության ծովային սահմանները: Նավատորմն անհրաժեշտ էր նաև ծովային առևտրի անվտանգությունն ապահովելու համար: Ռազմական նավատորմի հենակետերն էին Այսար և Կոռիկոսը:

Հետագա դարերի ընթացքում, մասնավորապես **Կիլիկիայի հայկական թագավորության կործանումից հետո**,

¹ Տե՛ս Հայոց պատմություն, հատոր II, գիրք 2-րդ, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Ե., 2014, էջ 326:

տնական ժամանակ հայոց պետականության չգոյության պայմաններում **հայոց զինուժի** մասին պահպանված տեղեկությունները խոսում են հիմնականում **հարևան երկրների զինված ուժերի շարքերում ծառայող** քաջարի զորահրամանատարների ու նրանց կատարած քաջագործությունների մասին: Իսկ հաջորդ դարերի ընթացքում արդեն հայոց զինուժի մասին տեղեկանում ենք **1720-ական թթ. Սյունիքում Դավիթ Բեկի** գլխավորությամբ ազգային-ազատագրական պայքարի ընթացքում նրա տարած փայլուն հաղթանակների մասին հիշատակություններից: Իսկ ավելի ուշ, թեև ոչ կանոնավոր բանակի տեսքով, սակայն իր հզոր թափով և հերոսականությամբ առանձնացող ֆիդայական պայքարի ժամանակ, հայոց ռազմարվեստի և հերոսականության մասին հայրենի և օտար հեղինակների մեծաթիվ վկայություններից:

Դարավոր ընդմիջումից հետո, երբ վերականգնվեց պետականությունը, դրա վերակերտման ու օտար հրոսակների հարձակումներից պաշտպանության պատվավոր առաքելությունը ստանձնեց ու իրականացրեց հայոց նորաստեղծ բանակը: Իսկ մեր պատմության ամենակարևոր անկյունաքարներից մեկում՝ մեզ պարտադրված Արցախյան ազատագրական պատերազմում, ճակատամարտերի բոցերում ծնված հայոց բանակը ոչ միայն փայլուն ու անթերի իրականացրեց հայ ժողովրդի դարավոր երազանքը և առաջին անգամ զիջելու փոխարեն թշնամուց հետ վերցրեց պատմական հայկական տարածքների մի մասը, այլև հաստատ ու աներեր կանգնած է դիրքերում և անթերի կատարում է իր սրբազան առաքելությունը՝ օտար ոտնձգություններից պաշտպանում է հայրենի հողը, պատիվն ու ապագան¹:

¹ Սյդ պատերազմում իրենց փայլուն դրսևորեցին ինչպես կամավորական ջոկատները (հրամանատարներ՝ Լեոնիդ Ազգալոյան, Թաթուլ Կրպեյան, Աշոտ Դուլյան և շատ-շատ ուրիշներ), այնպես էլ Երրորդ հանրապետության և ԼՂՀ կանոնավոր զինուժը՝ կադրային զինվորականների ղեկա-

Ամփոփելով նշենք, որ չնայած **մենք՝ հայերս, խաղաղասեր ժողովուրդ ենք**, սակայն պատմության բոլոր կետմաններում ունեցել ենք բանակ, որը ազգի հետ գտնվել է անխզելի մեկ միասնության մեջ: Եվ այդ դարավոր երթի ընթացքում **հայոց զինուժին որպես երևույթ**, որպես պետականությունը վերածնող և սեփական ուժերին ապավինելու և մեր ապագան ինքնուրույն կառուցելու կարևոր գործոնի բնորոշ են եղել **հետևյալ կարևորագույն հատկանիշները**.

1. Անթերի **կարգապահություն, ռազմական ճիշտ դաստիարակություն**, ռազմարվեստի նրբություններին փայլուն տիրապետում, տիրասիրություն, **տրված երդմանը անվերապահ հավատարմություն**, **ասպետական վեհանձնություն** և այլն:

2. Թե՛ հայրենի, թե՛ օտար տերություններին ծառայելու ընթացքում դրսևորել է զինականին վայել պահվածք, **արել է ամեն ինչ մարտերում հաղթելու համար**:

3. Չնչին բացառություններով հայոց զինուժը հիմնականում կովել է հայրենի երկիրն ու ժողովրդին օտար նվաճողներից պաշտպանելու համար: Սակայն դա բոլորովին էլ **չի նշանակում, թե մեր պատմությունը պարտությունների շարան է, իսկ եղած հաղթանակներն էլ ավելի շուտ «բարոյական» են եղել** (գաղտնիք չէ, որ հայ հանրության մի մասն ունի այդ մտայնությունը):

4. Մերօրյա հայոց բանակը թեև երիտասարդ է, սակայն նրա արմատները սնվում են Ավարայրի, Սարդարապատի և Մեծ Հայրենականի պատմական փորձից: Հայ մարշալների ու հերոսների օրինակով դաստիարակված, Վարդանանց, Անդ-

վարությամբ (գեներալներ Դալիբալթայան, Տեր-Գրիգորյանց, Իվանյան և շատ ուրիշներ): Այս առիթով նկատենք, որ Արցախյան պատերազմին նվիրված բաժնի ավելի քան համառոտ ձևաչափը պայմանավորված է նրանով, որ առայսօր չկան Ազատամարտին և ընդհանրապես այդ տարիների ազգային-քաղաքական շարժմանը նվիրված համալիր և հիմնարար հետազոտություններ:

րանիկի, Նժդեհի ու փառապանծ ֆիդայիների գեներ կրող մեր բանակն ու ժողովուրդը աննախադեպ վճռականությամբ **փայլուն հաղթանակներ կռցին՝ ապացուցելով ազգ-բանակ միակամության անուրանալի առավելությունները:**

5. Ազգ-բանակ միասնության փայլուն դրսևորում էր նաև այն կարևոր իրողությունը, որ մեր բանակի ծննդյան երկունքի ամենադժվար պահին՝ Վազգեն Սարգսյանի «Արծիվ» մահապարտների գումարտակ կազմավորելու ճակատագրական և բեկումնային ժամանակներից ԽՍՀՄ ամենատարբեր անկյուններում ծառայող հայազգի սպաներ, բազմաթիվ սփյուռքահայեր միացան բանակաշինության գործին:

6. Պատմական հայրենիքի, ոչ թե տարածքի, ազգային գոյի, ոչ թե զավթողականության, ինքնության և ոչ թե կեղծված պատմության ու մոգոնած աշխարհագրության համար է եղել Հայոց բանակի կռիվը: Նրա հաղթանակների արդյունքը ոչ միայն ազատագրված հայրենի գյուղերն ու քաղաքներն են, այլև մեր անվտանգությունը, ազգ-բանակ երևույթի հաղթական կայացումը:

7. Ունենալով բազմադարյա ռազմական պատմություն (սկսած Բելի դեմ Հայկ Նահապետի պատերազմից մինչև Շուշիի ազատագրումը)՝ **առայսօր բացակայում են հայկական ռազմարվեստին նվիրված համապարփակ աշխատություններ՝ անցյալի պատերազմական գործողությունների վերլուծությունը և դրանցից դասեր քաղելը, որոնք ցանկացած երկրի ռազմական մշակույթի զարգացման նախապայմաններ են և ազգ-բանակ երևույթի կարևորագույն բաղադրիչները:**

Կարծում ենք՝ միանգամայն արդարացի կլինի Պ. Մևակի **«Ծնվեց, որ ծնվենք, եղավ, որ լինենք»** Մ. Մաշտոցին ուղղված խոսքերը նույնությամբ կիրառել Հայոց բանակի դեպքում, որոնց օրգանական շարունակությունը կարծես լինի երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի խոսքը. «Նույնանալ ժողովուրդին հետ՝ որպես կենսաբանական էակ, նույնանալ ազգին պատմության և մշակույթին հետ՝ որպես բարոյական-

հոգևոր էակ, նույնանալ հայրենիքի հողին ու ջուրին հետ՝ որպես աշխատող-ստեղծագործող էակ, վերջապես նույնանալ Հայ պետությունը ամրացնող ու անոր ապագան պսակող իդեալներուն հետ՝ որպես կամեցող և կառուցանող քաղաքական էակ»։ Ահա նաև ազգ-բանակ երևույթի հիմքն ու կայացման ճշմարիտ բանալին։ Երևույթ, որին այլընտրանք չունենք, քանզի ողջ Հայոց պատմությունը փաստում է, որ մենք որպես ազգ և պետություն սկսել ենք թուլանալ և զիջել մեր դիրքերը տարածաշրջանում այն ժամանակ, երբ դադարել ենք լինել ազգ-բանակ և փայլուն հաղթանակներ տարել, երբ ապահովել ենք ազգ-բանակ միասնությունը որպես մեկ ամբողջական մարմին։

ԱՄՓՈՓՈՒՄ

Մենք՝ հայերս, խաղաղասեր ժողովուրդ ենք և մեր գոյության բոլոր ժամանակներում ազգն ու զինուժը եղել են մեկ միասնական մարմին, սատարել ու փոխլրացրել են միմյանց։ Հայոց պետականության բացակայության պայմաններում անգամ հայոց զորականներն առանձնացել են իրենց քաջությամբ և վեհանձնությամբ։

Հայոց ռազմական պատմությունը լավ ուսումնասիրված չէ, և դա այն դեպքում, երբ աշխարհի բանակները քայլում են մեր պատմության դասագրքերի էջերով։ Օտար և հայրենի աղբյուրները մեծ քանակությամբ նյութ են պարունակում և վերջին տարիներին գրված ուսումնասիրությունները գալիս են լրացնելու այդ բացը։

Հայոց պատմության ժամանակահատվածներին համապատասխան հայկական զինուժն ունեցել է իր զարգացման փուլերը, որոնց ընթացքում նրան բնորոշ են եղել բարձր կարգապահությունը, ռազմարվեստին փայլուն տիրապետելը, երդմանը հավատարիմ լինելը, հաղթելու մեծ ձգտումը, վեհանձնությունը և ազգ-բանակ միասնությունը։

Բանալի բառեր՝ բանակ, զինված ուժեր, ռազմական գործ, այրուձի, զարգացման փուլեր, բարեփոխումներ, զերազույն հրամանատար, հաղթանակ

РЕЗЮМЕ

■ СУРЕН САРГСЯН

ФЕНОМЕН АРМИИ ДЛЯ АРМЯН

Мы, армяне - миролюбивый народ и во все времена нашего существования народ и армия были единым целым, поддерживающим и дополняющим друг друга. Даже в условиях отсутствия армянского государства, армянские военные отличались мужеством и энтузиазмом.

Военная история Армении недостаточно изучена, и это в том случае, когда армии мира маршируют по страницам учебников нашей истории. Благодаря тому, что иностранные и отечественные источники содержат богатый материал, исследования последних лет начали заполнить этот пробел.

Соответственно с периодами истории Армении, армянские военные силы имели свои этапы развития, в ходе которых они отличались высокой дисциплиной, блестящими навыками военного искусства, верностью присяге, стремлением к победе, благородством и единением с народом.

***Ключевые слова:** Армия, вооруженные силы, военное искусство, конница, этапы развития, реформы, главнокомандующий, победа*

SUMMARY

■ SUREN SARGSYAN

THE PHENOMENON OF THE ARMY FOR THE ARMENIANS

We, Armenians, are peaceful people and at all times of our existence the nation and Army were a single body supporting and comple-

menting each other. Even in the absence of the Armenian state, the Armenian military were distinguished by courage and enthusiasm.

The military history of Armenia has not sufficiently studied, while the world's Armies marches through the pages of the textbooks of our history. Thanks to the foreign and domestic sources that contain rich material, the recent researches have started to fill this gap.

Accordingly with the periods of the history of Armenia, the Armenian military forces had their stages of development, during which they were distinguished by high discipline, brilliant skills of military art, loyalty to the oath, striving for victory, nobility and unity with the nation.

Key words: *Army, armed forces, military art, cavalry, stages of development, reforms, commander-in-chief, victory*

են, որ եթե պատերազմական գործողություններն Իրաքում շարունակվեն, ապա դրանց վնասներն առաջիկա տարիներին կարող են գերազանցել Երկրորդ համաշխարհային պատերազմի ընդհանուր կորուստները, որոնք արդի գներով կազմել են 5 տրիլիոն դոլար: Նշենք նաև, որ հենց այստեղ՝ «իրաքյան սինդրոմի» մեջ պետք է փնտրել նաև ԱՄՆ-ի տնտեսական ու սոցիալական ոլորտում վերջին ժամանակներս դրսևորվող և սպառնալի ձևեր ընդունող ճգնաժամային մյուս երևույթների հիմնական պատճառները: Եվ իրոք, պատերազմն Իրաքում ԱՄՆ-ից խլեց ահռելի գումարներ:

Այսպես, 2011 թվականի վերջի տվյալներով¹ Իրաքում ԱՄՆ-ի ռազմական կամպանիայի ծախսերը կազմեցին 4 տրիլիոն դոլար կամ ԱՄՆ-ի բյուջեի դեֆիցիտի կեսից ավելին և հավասարվեցին ԱՄՆ-ի կառավարության այն ընդհանուր տարեկան ծախսերին, որ նա կատարում է երկրի արդարադատության համակարգի, ներքին անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության կարիքների համար: Իրաքյան պատերազմից առաջ, ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության կողմից կատարված հաշվարկների համաձայն, ապագա պատերազմի պոտենցիալ ծախսերը գնահատվում էին 50-80 միլիարդ դոլարի սահմաններում²: Եվ երբ այդ կապակցությամբ Սպիտակ տան տնտեսական խորհրդական Լոուրենս Լինդսին կարծիք հայտնեց, որ իրաքյան պատերազմի ծախսերը կարող են հասնել մինչև 200 միլիարդ դոլարի, ապա 2002 թվականին նա ազատվեց աշխատանքից:

Մինչդեռ պատերազմի իրական ընթացքը դեն նետեց նմանատիպ բոլոր կանխագուշակությունները: Ինչպես գտնում է American Progress հետազոտական ընկերության ավագ գիտական աշխատող, ԱՄՆ-ի ռազմական նախարարի

¹ Ինչպես հայտնի է, 2011 թվականի դեկտեմբերի 15-ին ԱՄՆ-ի ռազմական իշխանությունները հայտարարեցին Իրաքում ԱՄՆ-ի ռազմական կամպանիայի վերջնական ավարտի մասին:

² <http://world.lb.ua/news/2011/12/12/128650>

նախկին տեղակալ Լուսինա Կորբը. «Իրաքում պատերազմի ուղղակի ծախսերը կազմեցին շուրջ 800 միլիարդ դոլար, սակայն անուղղակի ծախսերի վճարումները, որոնք աչքի չեն զարնում, շատ երկար ժամանակ կպահանջեն»¹:

Իրաքյան պատերազմի անուղղակի ծախսերի մեջ են մտնում, մասնավորապես, պատերազմի ֆինանսավորման համար ներգրավված վարկերի տոկոսների վճարումները, Քուվեյթում, Կատարում և Բահրեյնում այն ռազմական բազաների պահպանման ծախսերը, որոնք անհրաժեշտ էին Իրաքում կոնֆլիկտի դեպքում այդ երկիրը պաշտպանելու համար, ինչպես նաև Իրաքում ԱՄՆ-ի սեփականությունը պահպանող մասնավոր կապալառուների ծառայությունների համար վճարումները և Իրաքի զինվորականների ուսուցման ծախսերը:

«Միայն իրաքյան պատերազմի վետերանների բժշկական սպասարկումը, որոնց թիվը գերազանցում է 2 միլիոնը, կարող է կազմել ավելի քան 1 տրիլիոն դոլար»², - գտնում է Իրաքի և Աֆղանստանի պատերազմների վետերանների կազմակերպության գործադիր տնօրեն Պոլ Ռիկհոֆը:

Համեմատության համար նկատենք, որ զարգացող պետությունների հետ համագործակցության ոլորտին ԱՄՆ-ի կողմից տարեկան հատկացվող գումարները չեն գերազանցում նույնիսկ 50 միլիարդ դոլարը:

Ֆանտաստիկ չափերի հասնող վերոհիշյալ միջոցները խաղաղ, ստեղծարար նպատակներով օգտագործելու դեպքում հնարավոր կլիներ կյանքի կոչել բազմաթիվ մեծածավալ ծրագրեր, լուծել պատմական զարգացման ներկա փուլում մարդկության առջև ծառացած մի շարք հիմնախնդիրներ:

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

ՄՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է հակահումանիզմի առավել վտանգավոր ու կործանարար դրսևորումներից մեկի՝ պատերազմների էության քննությանը, սոցիալական այդ բարդ ֆենոմենի պատմական դինամիկայի քննական վերլուծությանը, մեր օրերում պետությունների ռազմական ծախսերի աննախադեպ ու անզուսպ աճի, սպառազինությունների մրցավազքի, համաշխարհային տնտեսության ու տիեզերքի միլիտարիզացիայի միտումների բացահայտմանը:

***Բանալի բառեր՝** հումանիզմի հակոտնյաներ, պատերազմներ, պատերազմների պատմություն, ռազմական ծախսեր, առաջին համաշխարհային պատերազմ, երկրորդ համաշխարհային պատերազմ, տնտեսության միլիտարիզացիա, տիեզերքի միլիտարիզացիա, լոկալ պատերազմներ*

РЕЗЮМЕ

■ ГРИГОРИЙ АСАТРЯН

АНТИПОДЫ ГУМАНИЗМА: ЛОКАЛЬНЫЕ И ГЛОБАЛЬНЫЕ ВОЙНЫ

Статья посвящена рассмотрению сущности войн – одного из наиболее опасных и разрушительных проявлений антигуманизма, осмыслению исторической динамики этого сложного социального феномена, вскрытию закономерностей беспрецедентного и неудержимого роста в наши дни военных расходов государств, гонки вооружений, милитаризации мировой экономики и космоса.

***Ключевые слова** – антиподы гуманизма, войны, история войн, военные расходы, первая мировая война, вторая мировая война, милитаризация космоса, локальные войны*

SUMMARY

■ **GRIGORI ASATRYAN**

ANTIPODES OF HUMANISM: LOCAL AND GLOBAL WARS

The article is devoted to the consideration of the essence of wars - one of the most dangerous and destructive manifestations of anti-humanism, the comprehension of the historical dynamics of this complex social phenomenon, the discovery of the laws of unprecedented and uncontrollable growth in our days of the military expenditures of states, the arms race, the militarization of the world economy and the cosmos.

Key words: *antipodes of humanism, wars, the history of wars, military spending, the First World War, the Second World War, the militarization of outer space, local wars*

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅ
ԺՈՂՈՎՐԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՀՈՒՍԱԼԻ
ԵՐԱՇԽԱՎՈՐ
(պատմության փորձը և դասերը)

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

*«Մեփական ուժերով ինքնապաշտպանվելու անընդու-
նակ ժողովուրդները պատժվում են մահվամբ»:
Գ. Նժդեհ¹*

ԽՍՀՄ փլուզման, Հայաստանի անկախության հռչակման ու Արցախի ազատագրական պայքարի պայմաններում տարածաշրջանում առաջացավ ռազմաքաղաքական բարդ իրավիճակ: Այդ ընթացքում առաջին պլան մղվեց սեփական ազգային բանակի ստեղծման և հարևան երկրների թշնամական գործողություններին դիմակայելու հրամայականը: Հաշվի առնելով հայոց պատմական անցյալի դառը փորձն ու դասերը, երբ մեր նախնիները ավելի հաճախ հովանավոր են փնտրել, Հայաստանի ազատագրության հույսը կապել դրսի երկրների, օտար ուժերի օգնության հետ և, որպես կանոն, հուսախաբ են եղել, ապա նոր, ԽՍՀՄ կազմալուծման փուլում հայ քաղաքական այրերը՝ ամբողջ խորհրդային տարածքում առաջիններից մեկը, կարողացան հայ ինքնապաշտպանական խմբերից ու խորհրդային նախկին զինվորականներից գործնականում ձևավորել կանոնավոր ազգային բանակ և իսկույն արձանագրել հաղթանակներ Արցախյան ազատամարտում ու հայրենի երկրի սահմանների պաշտպանության գործում: Այսօր կարելի է վստահաբար հավաստել, որ Հայաստանի Հանրապետության անցած քառորդ դարի ընթացքում, մեր կարծիքով, թերևս ամենակայացած պետական կառույցը համարվում է ՀՀ, այդ թվում ԼՂՀ ազգային բանակը: Եվ

¹ Նժդեհ Գ., Երկեր, հ. 1, Ե., 2002, էջ 130

պատահական չէ, որ այն բնորոշվում է որպես տարածաշրջանի ամենամարտունակ, արհեստավարժ բանակներից մեկը: Սակայն, այդ ամենի հետ մեկտեղ, 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմը բացահայտեց բանակում առկա մի շարք խնդիրներ ու առաջացրեց հարցեր:

* * *

Այժմ փորձենք առաջ քաշված խնդիրներին անդրադառնալ ըստ էության: Անշուշտ, Հայոց բանակը արձանագրած բազում հաջողությունների հետ ունի նաև խնդիրներ և չլուծված հարցեր:

- Մեր պատկերացմամբ **ազգն** ու **բանակը** անբաժանելի են: Դրանք պետք է դիտել դիալեկտիկ փոխմիասնության մեջ: Ազգ-բանակ հայեցակարգի տակ պետք է հասկանալ այն գաղափարը, որ ազգին ու հայրենիքին սպառնացող մեծ վտանգների պահին ժողովուրդն ամբողջ հոգով և էությամբ պետք է պատրաստ լինի նվիրվելու հայրենիքի պաշտպանությանը, եթե հարկ լինի, ազգային բանակ դառնա:

- Ազգ-բանակի միասնությունն արտահայտվում է նրանով, որ ինչպիսին տվյալ ժողովուրդն է իր հայրենիքին նվիրվածությամբ, հարենասիրությամբ, սեփական հայրենի հողին կապված մնալու և շենացնելու ձգտումներով, բնականաբար, այդպիսին էլ պետք է լինի նրա ազգային բանակը, քանզի նրա ամեն մի զինվոր մեծանում, դաստիարակվում, հայրենասիրություն է ձեռք բերում հարազատ ընտանիքում, կրթօջախում, հայրենի միջավայրում: Իր հավաքականության մեջ չի կարող ժողովուրդը հայրենասեր լինել, իսկ բանակը՝ դասավիճել և, ընդհակառակը: Ասվածից հետևում է.

ա) բանակը տվյալ ազգի ծնունդն է ու հարազատ գավալը,

բ) ձախողման է դատապարտված ցանկացած բանակ, եթե անմիջական աջակցություն չի գտնում իր ժողովրդի կողմից,

զ) ռազմապես և բարոյապես դատապարտված է բանակը, եթե անմիջական կապ չկա հասարակության և բանակի միջև,

դ) ազգային բանակ և ժողովուրդ կապի բացահայտման ու գնահատման տեսակետից շատ կարևոր է նաև ամուր կապն ու վստահությունը բանակի ու իշխանությունների (կառավարության) և, որ ավելի կարևոր է, նման կապն ու փոխադարձ վստահությունը ժողովրդի և կառավարության միջև: Մրանք քաղաքական կարևորության հարցեր են, որոնցով կարելի է չափել տվյալ երկրի, պետության քաղաքական ամրության, ուստի և ռազմական անխոցելիության աստիճանը:

Եթե տվյալ երկրի բանակը պարտվում է, ապա դա միայն նրա կառավարության պարտությունը չէ, այլ ամբողջ ժողովրդի: 1920 թ. թուրք-հայկական պատերազմում Կարսի անկման կապակցությամբ Գարեգին Նժդեհը գրում է. «Կարսի ամոթը Հայաստանի Հանրապետության կառավարությանը չէ միայն, այլև ողջ հայ ժողովրդինը: Չափվում են, բախվում են բանակները, բայց հաղթում կամ պարտվում են ազգերը, ցեղերը: Կարսի պատերի տակ պարտվողը հայ զինվորն ու գորավարը չէին միայն, այլև բովանդակ հայությունը»¹:

Վերջին հաշվով հայրենիքի ու ազգի անվտանգության ապահովման տեսակետից առաջնայինը ազգ-բանակ կապն է, իսկ կառավարությունը դրանց համակարգող օղակն է: Ասում ենք ազգ-բանակ, որովհետև էական տարբերություն չկա ժողովրդի և նրա ձևավորած բանակի միջև, քանզի բանակը ժողովրդի ծոցից ելած հարազատ զավակն է: Մարտունակ է այն բանակը, որին հասարակությունը սիրում ու փայփայում է, որը արժանանում է պետության ու քաղաքացիների ամենօրյա համակրանքին ու գուրգուրանքին:

Գ.Նժդեհի համոզմամբ՝ 1920թ. աշնանը ՀՀ բանակը պարտվեց, որովհետև ոչ միայն չկային բավարար վստահու-

¹ Նժդեհ Գ., Երկեր, հ. 1, Ե., 2002, էջ 56:

յուն ու կապ ժողովուրդ-կառավարություն-բանակ օղակների միջև, այլև այդ պատճառով բանակն իր ոգով, հոգեբանությամբ և քաղաքական իդեալներով դեռևս չէր ձևավորվել իբրև ազգային բանակ. ըստ նրա՝ «Մենք ազգային գործ չունեինք, այլ գործի նման մի բան»¹:

Հայ մեծանուն բանաստեղծ Ե.Չարենցի պատկերմամբ՝ Առաջին հանրապետության բանակում պակասում էր ազգային ոգին: Մասնավորապես, սպայության մեջ իշխում էր ոչ թե հայ, այլ ռուսերեն լեզուն և ռուսական ոգին, ռուսահայ օսլաված սպաները «ձեռքին կրում էին ձեռնոցներ, դեմքներին՝ պուդրա»²:

Մեկ այլ հայ մտավորականի նկարագրությամբ նրանք «Մեր Հայրենիքի» փոխարեն նախընտրում էին երգել ցարական «Բոժե ցարյա խրանի» օրհներգը³:

Մեկ դար անց՝ այսօր, ուրախությամբ կարելի է արձանագրել, որ պատմության դասերի հաշվառմամբ Երրորդ հանրապետության բանակը մարտական ու բարոյակամային հատկանիշներով որակապես տարբերվում է Առաջին հանրապետության «գործի նման մի բան»-ից: Բայց և, ինչպես ասվեց, դեռևս կան բացեր, խնդիրներ ու անելիքներ:

- Ամենից առաջ, եթե տվյալ երկրում, մեղմ ասած, առկա են անարդարությունը, կեղծիքը, կոռուպցիան, հովանավորչությունը, ծանոթ-բարեկամի գործոնը և այլ նեգատիվ երևույթներ, ապա դրանք կամա թե ակամա ազդում են նաև բանակի բարոյահոգեբանական վիճակի, գործի մարտական պատրաստության և հայրենիքի հանդեպ նվիրվածության վրա: Եթե այս կամ այն չինովնիկի կամ օլիգարխի որդին ու հարազատը դիրքի չարաշահմամբ, կաշառքով, հովանավորչությամբ և այլն, խախտելով սահմանադրությունը, շրջանցելով օրենքը խուսափում են բանակային ծառայությունից, ա-

¹ Նժդեհ Գ., Երկեր, հ. 1, Ե., 2002, էջ 104:

² Չարենց Ե., Ընտիր երկեր, Ե., 1954, էջ 407:

³ Արծրունի Վ., Հայ-տաճկական պատերազմը, Ե., 2002, էջ 370:

պա նման երևույթը չի կարող չանդրադառնալ ծառայող շարքային զինվորի բարոյահոգեբանական վիճակի ու տրամադրությունների վրա:

- Հասկանալի է, որ Հայոց բանակի բարոյական և մարտական ոգին է՛լ ավելի կբարձրանա, եթե արմատախիլ արվեն և բացառվեն մեզանում դեռևս առկա վերը նշված մերժելի երևույթները: Հասարակական շրջանակներում հաճախ բարձրաձայնվում է, թե այդ ինչպե՞ս է, որ հանրապետության սահմանների քառորդդարյա պաշտպանության, Ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում չի արձանագրվել մի դեպք, երբ վիրավորված կամ զոհված լինի որևէ բարձրաստիճան պաշտոնյայի կամ օլիգարխի որդի կամ հարազատ: Մինչդեռ արդարության և օրենքի ուժը պետք է գործի բոլորի համար հավասարապես՝ անկախ տվյալ անձի դիրքից, ծագումից ու պաշտոնից:

Չի՞շենք օրինակներ պատմությունից: Մոցիալ-դասային արդարություն ապահովելու համար, օրինակ, Հայոց Պապ Արշակունի արքան պահանջ էր դնում, որ հոգևորականների որդիները ևս շինականի ու արհեստավորի որդիների նման ծառայեն բանակում: Ի տարբերություն մերօրյա հանրապետության բանակի՝ Առաջին հանրապետության 40-հազարանոց բանակում նվիրումով են ծառայել ու նաև զոհվել բարձրաստիճան պաշտոնյաների որդիներ: Այսպես, օրինակ, վարչապետ Հովհ. Քաջազնունու երկու որդիները՝ որպես հայկական բանակի զինվորներ, կռվել ու զոհվել են հայրենիքի ազատագրության և անկախության համար կռիվներում, իսկ նրա երրորդ որդին Կարսի համար կռիվներում (Մերդենեկի մոտ) գերվել է և բազմահազար բռնի տեղահանվածների հետ քշվել է Էրզրում՝ տաժանակիր աշխատանքի¹: Ուշագրավ է նաև նախկին վարչապետ Հ. Քաջազնունու հետևյալ հայրենասիրական քայլը: Թուրք-հայկական 1920 թ. պատե-

¹ Տե՛ս Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Հ.Քաջազնունու ֆոնդ, գ. 61 և 64:

րազմի շրջանում նա որպես շարքային զինվոր կամավոր մեկնում է ռազմաճակատ, հասնում է մինչև ճակատի առաջին գիծ՝ Կարսի ուղղությամբ: Մակայն հրամանատարությունը նրան հետ է դարձնում¹: Հավելենք նաև, որ հայրենիքի պաշտպանության համար մղված մարտերում է գոհվել մյուս վարչապետ Համազասպ Օհանջանյանի միակ որդին և այդպես շարունակ:

- «Ազգ-բանակ» հայեցակարգով Հայաստանի և հայ ժողովրդի ազատության ու անվտանգության խնդիրը դիտարկելիս հարկ է կրկին ընդգծել, որ Հայոց 2-3-հազարամյա պատմության «հովանավոր փնտրելու» դառը փորձը տալիս է այն ուսանելի դասը, որ **հայրենի երկրի ու ժողովրդի պաշտպանության ու անվտանգության հույսը երբեք չի կարելի կապել օտար տերությունների օգնության հետ, կեղծ մարդասիրական կոչերի հետ**, դրանք լինեն հյուսիսից, թե՛ հարավից, արևելքից, թե՛ արևմուտքից: Պետականագուրկ դարերում, երբ փորձել ենք օտար տերությունների օգնությամբ մեր հայրենիքը ազատագրված տեսնել, ապա այն մշտապես վերածվել է քաղաքական առևտրի մանրադրամի: Ժամանակ առ ժամանակ Հայաստանը վերածվել է պատերազմական թատերաբեմի, այն բաժանվել է ու ծվատվել, իսկ հայությունն էլ դիմել է արտագաղթի ու պանդխտության: Եվ այդ ընթացքում ըստ էության ոչ մի խնդիր էլ չի լուծվել, ընդհակառակը, այն հաճախ ավարտվել է հայ բնակչության կոտորածներով: Դրա ամենացայտուն օրինակը դարուկես առաջ միջազգային ասպարեզ նետված **Հայկական հարցն** էր, որը շահարկվեց մեծ տերությունների կողմից, իսկ դրա հետևանքներից մեկը եղավ Հայոց մեծ եղեռնը: Հայոց պատմության դարավոր հարուստ փորձը ուսուցանում է, որ այն դեպքերում, երբ հայ ժողովուրդը ապավինել է սեփական ուժերին, ապա արձանագրել է հաղթանակ: Դրա վառ օրինակներից են 1918 թ. Մայիս-

¹ Տե՛ս **Տեր-Հակոբյան Հ. (Իրազեկ)**, Հայաստանի վերջին աղետը, Կ.Պոլիս, 1921, էջ 76:

յան հաղթական հերոսամարտերը, մեր ժամանակների Արցախի ազատագրական կռիվները և այլն:

Այսօր էլ արդիական է հնչում Հայոց Հայրիկի հնչեցրած **երկաթե, թե թղթե** շերտի գաղափարը: Եթե 19-րդ դարավերջի հայ ազատագրական պայքարի երկաթե շերտի գաղափարի կրողները ֆիդայական խմբերն էին, նրանց ազատագրական կռիվները, ապա այսօր «երկաթե շերտի» Հայոց կայացած բանակն է, որն էլ մեր **երկու հանրապետությունների ու հայ ժողովրդի անվտանգության ու ապահով կյանքի միակ հուսալի երաշխավորն է:** «Ինքն իրեն հարգող ժողովուրդը, խորհում է իմաստասեր և հայրենի հողի համար կռիվներում թրծված Մեծն Նժդեհը,- իր ինքնապաշտպանության հույսը դնում է նախ իր բազուկի, իր զենքի վրա: Իր ուժերից գատ՝ ամեն ինչի ապավինող ժողովուրդն արժանի չէ անկախ հայրենիք ունենալու, ազատ ապրելու»¹: Մեր և շատերի կարծիքով Հայաստանի և հայ ժողովրդի անվտանգության երաշխավոր չի կարող լինել ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ նրա ստեղծած ՀԱՊԿ-ը, առավել ևս Արևմուտքը կամ որևէ այլ երկիր ու միջազգային կառույց: Հայոց բազմադարյա պատմությունը ուսուցանում է, որ նման մտայնությունը պատրանք է ու մոլորություն:

Կրկին շեշտենք Հայոց բանակի, Հայոց երկրի անվտանգության երաշխավորը լինելու տեսլականը: Մյուս կողմից՝ բանակը հաստատակամ կլինի հայրենի եզերքի պաշտպանությանը, եթե համարժեք կերպով ստանա իր ժողովրդի, հայ հանրության ու պետության համակողմանի՝ նյութական, հոգևոր, բարոյական աջակցությունը: Հայոց բանակը հպարտության ու հոգատարության առարկա պետք է դառնա համայն հայության համար, այդ թվում ի սփյուռս աշխարհի:

Եվ որպեսզի վերը նշվածները իրական կյանքում նյութականացված լինեն, ապա հարկ է, որ երկրի բյուջետային

¹ Նժդեհ Գ., Երկեր, հ. 1, Ե., 2002, էջ 33:

ծախսերից ու աշխատողներից գանձվող 1000-ական դրամներից գատ՝ բանակի կարիքների, սպառազինության համար բացվի **հաստուկ հիմնադրամ** և տուրք գանձվի Հայաստանի և Մփյուռքի մեծահարուստներից, բարերարներից, ֆինանսապես կարողունակ կուսակցություններից, որոնց շնորհիվ հնարավոր կլինի ապահովել ռազմատեխնիկական հավասարակշռությունը Հայաստանի և նրա պոտենցիալ թշնամու միջև: Հարկ է նշել, որ որքան էլ լրացուցիչ, սակայն նպատակային ծախսումներ կատարվեն զինված ուժերի համար, բոլորովին ավելորդ չի կարող համարվել:

Հայաստանի առաջին հանրապետության օրինակով փաստենք, որ վարչապետ Ալ. Խատիսյանի հայտնած տվյալներով՝ հանրապետության պետբյուջեի ծավալի շուրջ 75 տոկոսը ծախսվում էր բանակի ու պաշտպանության նպատակների վրա¹: Հարկ է փաստել, որ այն ժամանակներում հայոց բանակին ամենից հաճախ օգնություն են ցուցաբերել Հայ ա. ռամկավար կուսակցության արտասահմանյան կառույցները, իսկ անհատական կարգով հատկապես հայ մեծահարուստ Պողոս Նուբար փաշան: Չնայած Պողոս փաշան ու ռամկավարները ընդդիմադիր էին այն ժամանակվա Հայաստանի դաշնակցական կառավարությանը, բայց և այնպես նրանք օգնություն էին ցուցաբերում հայոց պետականությանը: Այսպես, 1919 թ. փետրվարին Պողոս փաշայի բարերարությանը Հայաստանի բանակի համար փոխանցվեց կես միլիոնից ավելի ֆրանկ, միաժամանակ նա գնեց մարտական ինքնաթիռ²: Նույն կերպ, ռամկավար կուսակցության Եգիպտոսի շրջանային մարմինը 1920 թ. ամռանը անգլիական կառավարության արտոնագրով Հայաստանի բանակի համար գնեց 20 ինքնաթիռ³: Սակայն մինչ ինքնաթիռները տեղ կհասցնեին, Հայաստանը խորհրդայնացավ:

¹ Տե՛ս «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 3 հուլիսի, 1920թ.:

² Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 199, ց. 1, գ. 14, թ. 31:

³ Տե՛ս **Ճիզմեճեան Մ.Գ.**, Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակ-

- Ազգային բանակը ֆինանսավորելու կապակցությամբ տեղին է հիշեցնել իմաստնացած ու թևավոր հայտնի այն խոսքը, որ «այն ազգը, որ չի կերակրում իր սեփական զինվորին, նա ստիպված կլինի կերակրելու օտարի զինվորին»: Այս առիթով է ասված նաև Գ. Նժդեհի մեզ փոխանցած հետևյալ արտահայտությունը. «Խաղաղություն ես ուզում, պատրաստվիր կռվի»¹:

- Հայաստանի և նրա գլխավոր հակառակորդի զորքի թվաքանակի ու ռազմատեխնիկական հագեցվածության մակարդակի հետ կապված՝ համեմատական առումով պատմական անցյալից կարելի է բերել բազմաթիվ օրինակներ (դրվագներ), որ միշտ չէ, որ զորքի ու զենքի քանակն է վճռել այս կամ այն ճակատամարտի ու պատերազմի ելքը: Կան պատմությանը հայտնի բազմաթիվ օրինակներ, երբ տասնապատիկ անգամ մեծաթիվ զորքը ծանր պարտություն է կրել հակառակորդից: Այս դեպքում առաջին պլան է մղվում զինվորի գիտակցականությունը, նրա մեջ նստած այն գաղափարը, թե ինչի համար է նա վտանգում իր կյանքը: Տվյալ դեպքում հաղթում են ոչ թե քանակով, այլ մարտական ոգով: Դարձյալ հղում անելով Գ. Նժդեհին, որ «Տեխնիկան՝ զենք է, միջոց, հոգին՝ պատերազմի դարբինը»², արձանագրենք, որ պատերազմի դաշտում հաղթանակի կռողը զինվորների մարտական ոգին է, նրանց նվիրվածությունը: Թեև պետք է նաև նկատի ունենալ, որ այժմ ժամանակները փոխվել են, և շատ բան տեխնիկական է վճռում:

- Հայտնի ճշմարտություն է, որ կռվի դաշտում բանակի հաջողության ամենագորեղ կռվաններից մեկը զինվորների **հոգեբանական-կամային** պատրաստվածությունն է, որն էլ ենթադրում է ամուր կարգապահություն և **դասավորության** բացառում: Ըստ Գ. Նժդեհի՝ «Հոգեբանական գերադասութ-

ցություն, 1890-1925, Ֆրեզնո, 1930, էջ 412:

¹ **Նժդեհ Գ.**, Երկեր, հ. 1, Ե., 2002, էջ 21:

² **Նժդեհ Գ.**, Երկեր, հ. 1, Ե., 2002, էջ 123:

յունը բարոյական ուժ է»¹: Բայց մյուս կողմից՝ վնասակար ու վտանգավոր է գուտ զգացական մղումներով բանակի վիճակի մասին չափից ավելի (չհիմնավորված) լավատեսությամբ համակվելը: Իհարկե, նման քարոզչությունը տալիս է հոգեբանական որոշակի էֆեկտ (արդյունք): Բայց այն կարող է նաև սեփական բանակի ու ժողովրդի վրա թողնել հակառակ ազդեցություն՝ առաջ բերելով չհիմնավորված ինքնավստահություն, սեփական ուժերի գերագնահատում, իսկ հակառակորդի՝ թերագնահատում:

- Ազգային բանակի ամրության և մարտունակության գլխավոր հենասյուներից մեկը, անշուշտ, պետք է համարել նաև որակյալ սպայակազմը: Ակնհայտ իրողություն է, որ եթե զինվորը բանակում ժամանակային առումով հարափոփոխ երևույթ է, ապա սպայակազմը՝ կայուն, որով էլ կարելի է որոշել տվյալ բանակի կամ զորամասի դեմքը: Ավելին, բանակի կարգապահության, զինվորների մարտական և քաղաքական պատրաստվածության, բարոյականային ամրության աստիճանը մեծապես կախված է սպայակազմի բանիմաց ու նվիրված աշխատանքից: Հայոց բանակի սպայակազմի կարևոր հատկանիշներից մեկը պետք է լինի մարտի վճռական պահին անձնական օրինակով զինվորներին ոգևորելու կարողությունը, նրա փորձառությունը և տոկունությունը: Բայց այդ ամենը իրական կյանքում կենսագործված տեսնելու համար հարկ է հատուկ ուշադրություն դարձնել սպայակազմի նյութական, բնակարանային, ընտանեկան-կենցաղային պայմանների ապահովմանը, ինչն ավելի կոզևորի ու կմեծացնի սպայի պատասխանատվությունը հայրենիքի ու ժողովրդի առջև:

-Եվ վերջապես, ազգային բանակի ամրության համար շատ կարևոր է նրա ապակուսակցականացված լինելը: Ակներև է, որ բանակում կուսակցական կառույցների առկայությունը՝ իշխանական թե ընդդիմադիր, քաղաքականացնում և

¹ Նժդեհ Գ., Էջեր իմ օրագրեն, Գահիրե, 1924, էջ 14:

խարխլում է բանակի միասնականությունը: Ավելին, մեր կարծիքով, կադրային, ժամկետային զինծառայողների վերաբերյալ նույնիսկ կարելի է սահմանել օրենք՝ նրանց ազատելու համապետական նշանակության ընտրություններին մասնակցելուց: Իբրև օրինակ՝ Առաջին հանրապետությունում իսկական բանակային ծառայության մեջ գտնվողները չէին մասնակցում խորհրդարանի ընտրություններին¹: Բացի այդ, օրենքով արգելված էր կուսքիջների առկայությունը գործառնություն: Սակայն այդ բարդ ժամանակներում, դա չտվեց ցանկալի արդյունք: Ս. Վրացյանի պատկերավոր խոսքերով ասած՝ ՀՀ-ն հայտնվել էր «ռուսական մուրճի և թուրքական սալի արանքում»: ՀՀ բանակ սողոսկած բոլշևիկները՝ իբրև «5-րդ շարասյուն», 1920թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքում քայքայիչ աշխատանքներ էին տանում զինվորականության շրջանում, որպեսզի նրանք դասալքեն ու չկոմեն «Բարեկամ» թուրք զորքի դեմ, քանի որ, ըստ նրանց, ժողովրդի գլխավոր թշնամին Հայաստանի կառավարությունն է, ուստի պետք է զենքն ուղղել դաշնակցական կառավարության դեմ, և որ թուրք ասկյարը գալիս է ազատություն բերելու հայ ժողովրդին²: Եվ պետք է նշել, որ բոլշևիկների քարոզչությունը, անշուշտ, որոշակի դեր խաղաց բանակի մարտունակության անկման և վերջին հաշվով Հայաստանի պարտության գործում: Վստահաբար կարելի է արձանագրել, որ այժմ Հայոց բանակը այլևս չի կարող վարակվել նման «բացիլներով», որովհետև նա հստակ համոզմունքով գիտի, թե ով է թուրքը, ով է ադրբեջանցին, ով է ռուսը կամ եվրոպացին:

- Հանրագումարի բերելով վերոշարադրյալը՝ կարելի է եզրակացնել.

ա) Հայոց պատմական անցյալի դառը փորձն ու դասերը հաշվի առնելով՝ մեզանում ժամանակին ձևավորվեց ու կա-

¹ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 404, ց. 1, գ. 62, թ. 1:

² Տե՛ս ՀԱՍ, ֆ. 1022, ց. 3, գ. 275, թ. 1, ֆ. 403, ց. 1, գ. 20, թ. 1 և այլն:

յացավ ազգային բանակը, որը, սակայն, հետագա ամրակայման և արդիականացման խնդիրներ ունի,

բ) Հայաստանի հասարակության մեջ դեռևս լիակատար չի արմատացել, անշրջելի չի դարձել օտար երկրների ու միջազգային կառույցների վրա առանձնապես հույսեր չկապելու և սեփական ուժերին ապավինելու հանրային գիտակցությունը,

գ) Հայաստանի և հայ ժողովրդի անվտանգության և ապահով կյանքի միակ հուսալի երաշխավորը կարող է լինել ժողովրդի ծոցից ելած, նրա կողմից սնվող ու փայփայվող Հայոց ազգային բանակը: Այս իմաստով էլ **Ազգ-Բանակ-Հայրենիք** հասկացությունները դառնում են եռամիասնական ամբողջություն՝ որպես հայ ժողովրդի հարատևման միակ հուսալի երաշխիք:

ԱՄՓՈՓՈՒՄ

1991 թ. ԽՍՀՄ փլուզման, Հայաստանի անկախության հռչակման ու Արցախի ազատագրական պայքարի պայմաններում ժամանակի հրամայականով հետխորհրդային տարածքում առաջիններից մեկը ձևավորվեց Հայոց ազգային բանակը, որը գործնականում դարձավ ամենակայացած պետական կառույցներից մեկը: Սակայն դրա հետ մեկտեղ վերջին տարիներին ծագել են մի շարք խնդիրներ:

Հայոց պատմական փորձի ու դասերի հաշվառմամբ՝ բանակի հետագա ամրապնդման համար հարկ է ուշադրություն դարձնել հետևյալ հարցերին.

ա) ազգն ու բանակը պետք է դիտարկել փոխմիասնության մեջ,

բ) Հայոց բանակի բարոյական և մարտական ոգին է՛լ ավելի կբարձրանա, եթե արմատախիլ արվեն ու բացառվեն մեզանում դեռևս առկա բացասական՝ անարդարության, հովանավորչության, ծանոթ-բարեկամի և այլ երևույթները,

գ) հայ հանրության և հայոց բանակի շարքերում պետք է ամրակայվի նժդեհյան իմաստասիրական այն գաղափարը, որ հայրեն-

նի երկրի ու ժողովրդի պահպանության և անվտանգության միակ հուսալի երաշխավորը կարող է լինել միայն ազգային բանակը:

Բանալի բաներ՝ Հայոց ազգային բանակ, մարտական ոգի, բանակի ամրապնդում, նժդեհյան իմաստասիրական գաղափար

РЕЗЮМЕ

■ АРАРАТ АКОПЯН

АРМЯНСКАЯ НАЦИОНАЛЬНАЯ АРМИЯ - САМЫЙ НАДЕЖНЫЙ ГАРАНТ БЕЗОПАСНОСТИ АРМЕНИИ И АРМЯНСКОГО НАРОДА (опыт и уроки истории)

В 1991 году при условиях развала Советского Союза, провозглашения независимости Армении и освободительной борьбы Арцаха, одной из первых на постсоветском пространстве была создана Армянская национальная армия, которая стала практически одной из наиболее состоявшихся государственных структур. Однако наряду с этим в последние годы возникли некоторые проблемы.

Принимая во внимание исторический опыт и уроки истории Армении, для дальнейшего укрепления армии необходимо учитывать следующий вопрос:

а) нацию и армию следует учитывать во взаимозависимости;

б) моральный и боевой дух армянской армии будет более увеличен, если искоренить и исключить отрицания- несправедливость, покровительства, знакомства и др.

в) в армянском обществе и армянской армии должна быть укреплена философская идея Нжде, где единственная надежная гарантия защиты и безопасности страны и народа –только национальная армия.

***Ключевые слова** - Армянская национальная армия, укрепления армии, боевой дух армянской армии, философская идея Нжде*

SUMMARY

■ ARARAT HAKOBYAN

ARMENIAN NATIONAL ARMY IS THE MOST RELIABLE GUARANTEE OF SECURITY OF ARMENIA AND ARMENIAN PEOPLE (experience and history lessons)

In 1991, under the conditions of the collapse of the Soviet Union, the independence standing of Armenia and the liberation struggle of Artsakh, one of the first in the post-Soviet space was the Armenian National Army formation, which became almost one of the most successful state structures. However, along with this, in recent years there have been some problems.

Taking into account the historical experience and lessons of the history of Armenia, in order to further strengthen the army, the following question should be taken into account:

a) the nation and the army should be considered in interdependence;

b) the moral and fighting spirit of the Armenian army will be increased, if we eradicate and exclude denial-injustice, patronage, acquaintance, etc.

c) in the Armenian society and the Armenian army, the philosophical idea of Nzhdeh should be strengthened, where the only reliable guarantee for the protection and security of the country and people is only the national army.

Key words: *Armenian National Army, army strengthening, fighting spirit of the Armenian army, philosophical idea of Nzhdeh*

ԲՈՒՀԻ ԴԵՐԸ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԶԻՆՎՈՐ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

ՍՅՈՒՋԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երկրի ու ժողովրդի գոյությունը պայմանավորված է բանակով ու մշակույթով, զինվորը պաշտպանում է ազգը ֆիզիկապես, իսկ արվեստագետը նրա հոգևոր պաշտպանն է: Մարտունակ բանակ ու հզոր մշակույթ ունեցող ժողովրդին ոչ ոք չի կարող հաղթել: Ուրեմն՝ բանակն ու մշակույթը պետք է միասին լինեն: Վտանգված, անպաշտպան երկրում չի կարող ստեղծվել ինքնատիպ, ազգային ու ազդեցիկ մշակույթ, զուգահեռաբար՝ առանց հզոր, ոգեշունչ մշակույթի չի կարող լինել ուժեղ, արժանապատիվ ու հայրենասեր բանակ:

Ազգապահպանությունը և սեփական անկախ պետություն ունենալը հայ ազգի համար միշտ էլ եղել է օրախնդիր հարց: Պատմության քառուղիներում դաժան փորձությունների ենթարկված հայ ժողովրդի՝ որպես էթնոսի պահպանման, գոյատևման, արհավիրքներին արժանիորեն դիմակայելու ընդունակության ժամանակագրությունում առանձնակի տեղ են գրավում նրա զինված ուժերը՝ իրենց բնորոշ ռազմահայրենասիրական որակներով, որպես ինքնիշխան պետության պատվար: Հայ ոգու ուժն է նրա որդիներին մղել անձնագոհության, հերոսության՝ ազգային բնութագրին վայել պատվախնդրությամբ:

Հայ ազգը՝ մարդկության ակունքներից մեկը, երկար ու դաժան փորձություններով լի ճանապարհ է անցել, երբեմն կորցնելով պետականությունը, կրել ցեղասպանության դժնդակ, սահմոկեցուցիչ պահեր, բայց միշտ կարողանալով ազգի մեջքը շտկել: Քիչ չէ հայը իր բազկի ուժը ցույց տվել նվաճողներին՝ բաբելոնացիներին, բյուզանդացիներին, հոմեկացիներին, թուրքերին, քուշաններին, ալաններին, կովկասյան ավարառու ցեղերին, ֆաշիզմին և այլոց՝ տանելով անօրինակ հաղթանակներ:

Մերօրյա պատմության էջերը նոր բովանդակությամբ լրացվեցին Արցախյան ազատամարտում հայ նվիրյալների հերոսական պայքարի օրինակներով, անհնարինը հնարավոր դարձնելու կարողությամբ, կամքի ուժի, քաջարի ու կոռովի ռազմական տաղանդի, ազատատենչ ոգու դրսևորումներով:

Նմանօրինակ պայքարի պատրաստվող ժողովուրդները նախ պատրաստվում են հոգեբանորեն, դաստիարակելով հաղթանակի հասնելու համար սեփական պարտությունը հաղթահարելու ունակություն: Իսկ դրանք կրողներն ու կերտողները, շարժիչ ուժը երիտասարդությունն է: Այդ երիտասարդությունը պետք է լինի ֆիզիկապես կոփված, գրագետ ու բանիմաց, բարոյապես կայուն, վերը նշված նպատակին հասնելու համար դրսևորի վճռականություն, կամքի ուժ և տոկունություն: Նման հատկանիշներ հայ երտասարդությունը դրսևորել է հատկապես ազգի համար բախտորոշ պահերին, դրա վառ ապացույցը Արցախյան ազատամարտն է:

Հայ ժողովրդի և նրա արժանավոր զավակների դարավոր ճիգերն ու ջանքերն իրենց բուհի և մատաղ սերնդի դաստիարակության համար, եղել են ազգի գոյաբանության պայքար, քանի որ բուհն ու դաստիարակությունը դիտվել է ազգի լինելիության և ամբողջականության անհրաժեշտ նախապայմանը, և որքան ծանր են դարձել պատմական հանգամանքները, այնքան աննկուն և տոկուն է ժողովուրդը պայքարել իր բուհի համար:

Թե ինչպես կերտել նման երիտասարդություն, մեծ լուրմա պետք է ունենա բուհի ողջ մանկավարժական հանրությո՜ւր, ուսուցումը գորակցելով հայրենասիրական դաստիարակությամբ: Ուսուցումը չպետք է լինի ինքնանպատակ: Ուսանողը, ապագա զինվորը, քաղաքացին կրթական ուսումնառության տարիներին պետք է իրեն դրսևորի որպես կայացած անհատականություն, գրագետ ու օրինակելի անձնավորություն: Նա պետք է լինի բարոյապես և ֆիզիկապես պատրաստ

թե զինվորական ծառայության և թե բուհական ուսումնառության գործընթացներին:

Անհրաժեշտ է վերակառուցել մեր մոտեցումները երիտասարդ սերնդի ռազմական, հայրենասիրական և հոգեբանական դաստիարակության հարցերին, փորձելով գտնել լուծումներ, որոնք կնպաստեն արդյունավետ կազմակերպել ռազմական գործը՝ հուսալի թիկունք ապահովելու երաշխիքների ստեղծմամբ: Հակառակորդը քնած չէ, նա նույնպես նախապատրաստվում է և պատրաստ է ցանկացած պահի հակադրել և կիրառել իր զինված ուժերի ողջ զինանոցը: Այսինքն՝ պետք է դեկավարվել հետևյալ սկզբունքով. «Ես մարտնչում եմ ու պաշտպանում իմ հայրենիքը, տունն ու տեղը, իմ հարազատին և հնարավոր է զոհվեմ, բայց այն ունի մեկ նպատակ՝ անկախ հայրենիք, անդորր, ընտանիք, այդ նպատակին հասնելու միակ ուղին՝ պահպանել և պաշտպանել այդ իրավունքը՝ դրսևորելով կամք, դժվարությունները հաղթահարելու միանշանակ ձգտում»:

Իսկ այն կարելի է ապահովել երիտասարդին իր ուժերի նկատմամբ հավատի ներշնչումով, զենքի տիրապետմանը վարժեցնելով և, իհարկե, դաստիարակության գործընթացում անընդհատ օգտագործելով ռազմահայրենասիրական դաստիարակության ծրագրային, նպատակամղված քարոզչական մեխանիզմը: Այդ շրջանակներում կարելի է առանձնացնել ռազմահայրենասիրական դաստիարակության հետևյալ հիմնական ուղղությունները¹.

- ՌՀԴ իրավական և բարոյական հայեցակետերը (ՀՀ Սահմանադրություն, «Ջինապարտության մասին ՀՀ օրենքը», պետական օրհներգը, զինվորական երգումը և այլն)՝ պարզ ու հասկանալի բացահայտելով դրանց էությունն ու բովանդակությունը:

- Հայրենասիրության գործնական ու ընդգրկուն քարոզչությունը՝ անցյալի և ներկայի հերոսական օրինակներով:

¹ Դույունյան Գ.Ե., «Մանկավարժություն», Եր., 2005:

- Ազգային գաղափարախոսության և հայ ազգին պատկանելու հպարտություն:

- Անձնականը ընդհանուրին ստորադասելու կարողություն:

- Զինվորական գիտելիքների տիրապետմանն ուղղված ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում:

- Բարոյականային որակների ձևավորմանն ուղղված հոգեբանական պատրաստվածությամբ զինելու միջոցառումները:

Ռազմահայրենասիրական դաստիարակության, հայրենասիրական գիտակցության ձևավորման համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր ուսումնական առարկա բովանդակի աշխարհայացքային և բարոյական գաղափարներ՝ ազգային-հայրենասիրական, պատմական բնույթի հայրենասիրական գիտակցություն ձևավորելու համար:

Բուհերում ռազմահայրենասիրական դաստիարակությունը առավել մեծ ուշադրության է արժանի, քանի որ շրջանավարտները, որպես որակավորված մասնագետներ, աշխատելու են հանրապետության արդյունաբերության, տնտեսության, մշակույթի, ուսումնակրթական և պաշտպանական ոլորտներում, ստանձնելու են կազմակերպչական և մասնագիտական պատասխանատու պաշտոններ: Ռազմահայրենասիրական դաստիարակությունն արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ է տվյալ բուհում ստեղծել ժամանակակից պահանջներին համապատասխան ռազմատեխնիկական և մարզատեխնիկական բազա, որն արտացոլի բուհի մասնագիտական ուղղվածությունը¹:

Հայրենասիրական դաստիարակության խելամիտ կազմակերպումը, հումանիտար առարկաների արդյունավետ դասավանդումը հետագայում վերաճում է անհատի արժեքային-աշխարհայացքային ամբողջականության և վարքագծի

¹ Ամիրջանյան Յու., Սահակյան Տ., Մանկավարժություն, Երևան, 2001:

կայուն նորմերի: Ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնական գործառույթը տվյալ ենթահամակարգում քաղաքական գիտակցության, ազգային գաղափարախոսության, հայրենասիրության, գիտելիքների, համոզմունքների ձևավորումն է: Հատկապես այստեղ են սաղմնավորվում հայրենասիրական գիտակցության աշխարհայացքային հիմքերը, ազգային գաղափարախոսությունը, հայրենասիրական ոգու ամրապնդումը, ազգային և պետական շահերին նվիրվածությունը և այլն:

Ռազմահայրենասիրական դաստիարակության ենթահամակարգում գաղափարաքաղաքական համոզմունքների դերը կարևորվում է նրանով, որ դրանք որոշակիորեն ներգործում են աշխատանքային, բարոյագեղագիտական, ֆիզիկական և ռազմական համակարգերի վրա: Գաղափարաքաղաքական ենթահամակարգի հիմնական տարրերը ռազմահայրենասիրական դաստիարակության գործում համարվում են միջոց՝ ուսանողների բարոյաքաղաքական բարձր որակների ձևավորման, հատկապես ազգային, հայրենասիրական դաստիարակության համար: Այստեղ լուծվում են 2 հիմնական խնդիրներ. մի կողմից՝ ուսանողները ստանում են հիմնարար գիտելիքներ ազգային պետականության, նրա գաղափարախոսական և տեսական հիմքերի, պետական օրենքների, հասարակության զարգացման, ազգային արժեքների, ավանդությունների վերաբերյալ, մյուս կողմից՝ իրականացնում են այդ գիտելիքների իմացության վերափոխման գործընթաց՝ գաղափարական խոր համոզվածությամբ ձևավորելով սեփական հոգևոր կերտվածքը¹:

Ի վերջո ուսուցումը չպետք է լինի ինքնանպատակ: Ուսանողը, ապագա զինվորը, քաղաքացին ուսումնառության տարիներին պետք է իրեն դրսևորի որպես կայացած անհատականություն, գրագետ ու օրինակելի անձնավորություն թե որպես զինվոր և թե որպես քաղաքացի:

¹ Ամիրջանյան Յու., Սահակյան Տ., Մանկավարժություն, Երևան, 2001:

Շատ կարևոր է իրականացնել համատեղ ծրագրեր, միջոցառումներ, հանդիպումներ, նոր նախաձեռնություններ երիտասարդներին առավելագույնս ներգրավելով հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, դրանով իսկ ապահովելով օրինակելի զինվոր, քաղաքացի դաստիարակելու մեր՝ մանկավարժներին բուն աշխատանքը իմաստավորելու խնդիրը:

Բուհ-բանակ-հասարակություն համագործակցությունն ավելի արդյունավետ կլինի, եթե մենք կարողանանք ընդլայնել հասարակության տարբեր շերտերի, հասարակական տարբեր կառույցների հետ մեր կապերը և շահագրգիռ բոլոր գերատեսչությունների հետ համատեղ աշխատանքի՝ միմյանց աջակցության, շտապ փոխօգնության մշակույթ ձևավորել:

Հայրենասիրական միջոցառումների իրականացման գլխավոր նպատակներից են բանակ-հասարակություն կապի անընդհատ ամրապնդումը, հայ զինվորի մարտունակ ոգու պահպանումը և հզորացումը, երիտասարդների՝ հասարակության շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակության արմատավորումը և ընդհանուր առմամբ հայոց ազգային բանակի՝ հայ ժողովրդի բացարձակ արժեքի դերի ու նշանակության խիստ կարևորումը հայ հասարակության շրջանում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայ ժողովրդի և նրա արժանավոր զավակների դարավոր ճիգերն ու ջանքերն իրենց բուհի և մատաղ սերնդի դաստիարակության համար եղել են ազգի գոյաբանության պայքար, քանի որ բուհն ու դաստիարակությունը դիտվել է ազգի լինելիության և ամբողջականության անհրաժեշտ նախապայմանը, և որքան ծանր են դարձել պատմական հանգամանքները, այնքան աննկուն և տոկուն է ժողովուրդը պայքարել իր բուհի համար:

Հայրենասիրական միջոցառումների իրականացման գլխավոր նպատակներից են՝ բանակ-հասարակություն կապի անընդհատ ամրապնդումը, հայ զինվորի մարտունակ ոգու պահպանումը և հզորացումը, երիտասարդների՝ հասարակության շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակության արմատավորումը և ընդհանուր առմամբ հայոց ազգային բանակի՝ հայ ժողովրդի բացարձակ արժեքի դերի ու նշանակության խիստ կարևորումը հայ հասարակության շրջանում:

Բանալի բառեր՝ բուհ, մշակույթ, զինվոր, բանակ, ազգ, ռազմահայրենասիրական դաստիարակություն

РЕЗЮМЕ

■ СЮЗАННА ОГАНЕСЯН

РОЛЬ ВУЗА В ПОДГОТОВКЕ ПРИМЕРНОГО СОЛДАТА И ГРАЖДАНИНА

Многовековые усилия армянского народа и его достойных сыновей в борьбе за высшее образование и воспитание нового поколения были борьбой за выживание, поскольку институт высшего образования и воспитания рассматривался как необходимая предпосылка существования и целостности нации. В труднейших исторических обстоятельствах сильный и устойчивый народ боролся за свое образование.

Главными целями патриотических мероприятий являются непрерывное укрепление связей между армией и обществом, сохранение и усиление боевого духа армянского солдата, укоренение патриотического воспитания среди молодежи и абсолютизация роли армянской национальной армии в обществе.

***Ключевые слова:** Университет, культура, солдат, армия, национализм, военно-патриотическое воспитание*

SUMMARY

■ **SUZANNA HOVHANNISYAN**

HIGHER EDUCATION ROLE IN EXAMPLE OF SOLDIER AND CITIZENSHIP

The efforts of the descendants of Armenian's in last centuries had been a battle for the ideology of the nation, as the institution of higher education was viewed as a necessary precondition for the historical circumstances of nation's existence and integrity. Thus, indecisive and resilient people hadstruggled for their Higher Education Institutions.

Ones of the main goals of the patriotic activities were the continuous strengthening of army-society relations, the preservation and strengthening of the combat-ready spirit of the Armenian soldier, the rooting of young people, patriotic upbringing in the society, and the importance of the Armenian national army's role and importance of the Armenian's absolute value in the Armenian society.

Key words: *University, culture, soldier, army. Nationalism, military-patriotic upbringing*

ՌԱԶՄԱՐԴՑՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՆՈՆՆԱԽԱՉԱՏՐՅԱՆ

Անկախացման առաջին իսկ օրից Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ եղավ ազգային բանակաշինությանը: Դրա անհրաժեշտությունը խիստ սրվեց Արցախյան ազատամարտի տարիներին, երբ ակնառու դարձավ նաև ռազմարդյունաբերական քաղաքականության մշակումը: Հայաստանի Հանրապետության անվտանգության ամրապնդման քաղաքականության բաղկացուցիչ մաս հանդիսացող Ռազմարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականությունը (ՌԱՌՏՔ) պետության սահմանած պաշտոնական տեսակետը և գործունեությունն է՝ ուղղված Հայաստանի Հանրապետության զինված ուժերի (ԶՈՒ) սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման ծրագրերով ԶՈՒ-ն և այլ գործերը ներհանրապետական ռազմական ապրանքով և գույքով ապահովելուն, ինչպես նաև, ելնելով պետության անվտանգության ապահովման, ռազմատնտեսական մրցունակության և սոցիալ-տնտեսական զարգացման անհրաժեշտությունից, Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի (ՌԱՀ) իրավական ու ռազմատնտեսական միջոցառումների և գործողությունների համակարգ է¹:

ՌԱՌՏՔ-ի նպատակներից են՝ պետության աջակցությամբ գիտատեխնիկական և արտադրատեխնոլոգիական ներուժը վերածել համակարգաստեղծ տեխնոլոգիական գործուն ու նորարարական միջոցի, որը կապահովի Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահով-

¹ Ռազմարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության ռազմավարություն, կետ 1, //ՀՀ Նախագահի 2017թ. հունվարի 31 -ի ՆԳ- 15 -Ն կարգադրություն:

ման համապատասխան ՌԱՀ-ի հզորություն, ինչպես նաև տնտեսական զարգացում և կնպաստի հնարավոր ցնցումների դիմակայմանը: Կարևորվում է նաև ՌԱՀ-ի դերն ամրապնդելը Հայաստանի Հանրապետության տնտեսության նորարարական զարգացման մեջ՝ որպես բարձր տեխնոլոգիական բազմապրոֆիլային համակարգ:

Այս առումով, մինչև 2020թ. ՀՀ **ռազմատեխնիկական** քաղաքականության գերակա ուղղություններն են համարվում.

1) սպառազինության և ռազմատեխնիկական ունեցվածքի նորոգում, արդիականացում,

2) նոր սպառազինության և ռազմական տեխնիկայի և ռազմատեխնիկական ունեցվածքի ստեղծում և արտադրում, դրանք են՝

- հրաձգային զենքեր, զինամթերք, ռազմական տեխնիկայի և ռազմատեխնիկական ունեցվածքի թեթև սպառազինություն, հրետանային միջոցներ, սպառազինության և ռազմական տեխնիկայի և ռազմատեխնիկական ունեցվածքի բազային և հատուկ մասեր,

- լազերային, օպտիկաէլեկտրոնային, ռադիոէլեկտրոնային և ռադիոլոկացիոն սպառազինություն,

- անօդաչու թռչող սարքեր, հարվածային անօդաչու թռչող սարքեր և դրանց հակազդման միջոցներ,

- հետախուզության տեխնիկական միջոցներ,

- կապի տեխնիկական միջոցներ,

- նավիգացիոն միջոցներ,

- ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցներ,

- քիմիական և կենսաբանական պաշտպանական միջոցներ:

3) հրթիռաշինության զարգացում,

4) ավտոմատացված կառավարման համակարգերի ստեղծում¹:

¹ <http://razm.info/95869>

Նկատի ունենալով արդեն իսկ գործող Ռազմարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության սկզբունքները, ՀՀ տնտեսությունը սկսեց աստիճանաբար արձագանքել ձևավորված իրավիճակին: Այսպես, Հայկական «Գառնի-Լեռ գիտաարտադրական միավորում» ընկերությունը 2012 թվականից առ այսօր կատարել է զենքի արտադրության 1 մլրդ 496 մլն 161 հազար դրամի պետական պատվերով նախատեսված պայմանագրային աշխատանքներ: Այս մասին հայտնի է դառնում ՀՀ կառավարության նիստի օրակարգի փաստաթղթերից:

Ըստ տարիների՝ մատակարարված արտադրանքի ծավալներն են¹.

2012	203 287 000
2013	312 947 000
2014	345 036 000
2015	265 758 000
2016	369 133 000

Այս հիմնավորումով ՀՀ պաշտպանության նախարարությունը կառավարությանն առաջարկում է 5 տարով երկարացնել ընկերության՝ ռազմամթերքի արտադրության արտոնագիրը: Ավելացնենք նաև, որ զենքի արտադրության արտոնագիրն ընկերությունը ստացել է 2009 թվականին: Հետագայում՝ 2012 թվականին, ընկերության արտոնագրի ժամկետը երկարացվել է 5 տարով (մինչև 2017 թվականը):

ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «Ռազմարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքակա-

¹ <http://razm.info/106148>

նության ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրին», որի կետերից մեկով այս ընկերությունը պետք է միավորվեր ևս երկու ընկերությունների հետ: Միավորվող ընկերություններն են՝ «65 Ռազմական գործարան» ՓԲ (100% պետական բաժնեմաս), «Գառնի լեռ ԳԱՍ» ԲԲ (98,4% պետական բաժնեմաս), «Չարենցավանի հաստոցաշինական գործարան» ԲԲ (80% պետական բաժնեմաս) ընկերությունները:

Մինչև 2020թ. ՌԱԲ-ի գերակա ուղղություններն են՝ 1) մետաղամշակող կենտրոնների և ճշգրիտ դետալներ մշակող հաստոցային պարկի ստեղծումը, 2) ռադիոէլեկտրոնային սարքավորումների և դետալների հավաքման արտադրության ստեղծումը, 3) պայթուցիկ նյութերի՝ հեքսոգենի, օկտոգենի ու վառեկիքային նյութերի համաձուլվածքների արտադրության ստեղծում, ինչպես նաև կոմպոզիցիոն նյութերի տեխնոլոգիաների յուրացումը, 4) բարձր, գիտատարողունակ և մրցունակ տեխնոլոգիաների յուրացումը, նոր մշակումների և արտադրությունների կազմակերպումը¹:

Հայաստանի կառավարության ընդունած որոշումներից մեկով երկարացվել է «Հայկ Մեկ» ընկերության՝ զենք արտադրելու թույլտվության արտոնագիրը: Մրանով ընկերությանը թույլատրվել է ևս 5 տարի ռազմամթերք արտադրել: Որոշման նախագծի հիմնավորման մեջ նշվում է, որ ընկերությունը 2012 թվականից առ այսօր կատարել է զենքի արտադրության 0,5 մլրդ դրամի պետական պատվերով նախատեսված պայմանագրային աշխատանքներ:²

¹ «Ռազմարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության ռազմավարություն», գլուխ VIII, Հ Նախագահի 2017թ. հունվարի 31 -ի ՆԿ-15 -Ն կարգադրություն

² <http://razm.info/103472>

2012թ.	45 973 480
2013թ.	98 000 000
2014թ.	81 420 000
2015թ.	130 695 000
2016թ.	147 534 000
Ընդհանուր	503 622 480

Կառավարության հիմնավորման մեջ նշվում է, որ հաշվի առնելով վերը նշվածը՝ նպատակահարմար է երկարաձգել ռազմամթերքի արտադրության լիցենզիայի գործողության ժամկետը ևս հինգ տարով, քանի որ դա «հնարավորություն կտա արդյունավետ իրականացնելու ռազմական արդյունաբերության համակարգային բարեփոխումները և զարգացումը»: Ընկերությունը զբաղվում է ականանետների, ականների, պայթուցիչների, փամփուշտների և այլ զինամթերքի արտադրությամբ:

Ռազմական արդյունաբերություն Հայաստանը միշտ էլ ունեցել է, և թյուր է կարծիքը, թե ՀՀ-ում զենքի արտադրություն չի եղել, իսկ մեր երկիրն ի վիճակի չէ զենք արտադրել: Հրավիրված ասուլիսում ՀՀ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, լրագրողի խնդրանքով մեկնաբանելով ՀՀ գիտության ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի կարծիքը, թե թույլ տնտեսություն ունեցող երկիրը չի կարող ունենալ զարգացած ռազմարդյունաբերություն, նշեց. «Մեր երկրում միշտ էլ եղել է զենքի արտադրություն, հետխորհրդային շրջանում, դարաբաղյան պատերազմից հետո մենք ունեցել ենք ձեռնարկություններ, որոնք արտադրել են զենք-զինամթերք: Ավելին, պաշտպա-

նության նախարարությունում ունեցել և այսօր էլ ունենք ռազմարդյունաբերության վարչություն, այլ հարց է, որ ռազմական արդյունաբերության ոլորտը պետական կառավարման կառույց չի ունեցել, որը կկարողանար համակարգել այս բնագավառը: Բայց այդ խնդիրը նույնպես լուծվել է, քանի որ 2015 թվականի դեկտեմբերի 29-ի կառավարության որոշմամբ ստեղծվել է ռազմական արդյունաբերության կոմիտե և շուտով կունենանք կոմիտեի նախագահ»:

Գիտության պետական կոմիտեի նախագահը հիշեցրեց, որ ստեղծվել է նաև ՀՀ վարչապետին առընթեր ռազմարդյունաբերության խորհուրդ, դրան առընթեր ռազմատեխնիկական գիտական խորհուրդ, որի շրջանակում գործում են մենաշնչիության, քիմիա-կենսաբանության, ֆիզկատեխնիկական, ինովացիոն, տեղեկատվական անվտանգության և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ենթահանձնաժողովները, որոնք զբաղվելու են սպառազինության ոլորտում գիտական մշակումներով: «Բոլոր ծրագրերը, որոնք առնչվում են ռազմական տեխնիկայի ստեղծմանը, ռազմամթերքների արտադրությանը, պետք է անպայման անցնեն գիտական փորձաքննություն հանձնաժողովների միջոցով: Ռազմական արդյունաբերություն մենք միշտ էլ ունեցել ենք, որի նպատակն է եղել բավարարել հայկական բանակի կարճաժամկետ և երկարաժամկետ խնդիրների լուծումը: Այս ոլորտում մենք պետք է ձգտենք լուրջ միջազգային համագործակցության և իրականացնենք հայկական գինատեսակների արտահանում»:

Հարկ է նաև ընդգծել, որ ԽՍՀՄ ռազմարդյունաբերության զարգացմանը նպաստել են նաև հայ գիտնականները, որոնց մի մասն աշխատում է նաև այսօր: Մենք ունենք բարձր որակի մասնագետներ, մեծ մասն ազգությամբ հայ, ովքեր ունեն տարբեր երկրներում ռազմական արդյունաբերության ոլորտում աշխատելու հսկայական փորձ:

¹ <http://nyut.am/?p=117728&l=ru>

Մամուլում հաստատվում են այն տեղեկությունները, որ ներկայում ՀՀ-ում իրականացվում են անօդաչու թռչող սարքերի փորձարկումներ: Անօդաչու թռչող սարքերի փորձարկումներ արվում են, արվել են նաև մինչ ապրիլյան դեպքերը: Հայաստանն այն եզակի երկրներից է, որն արտադրում է անօդաչու թռչող սարքեր, որոնք բավականին բարձր որակի են¹:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ռազմարդյունաբերական համակարգը ՀՀ-ում ունի տնտեսական զարգացման հեռանկարներ: Այդ գործընթացին նպաստելու են պետական ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների ձևավորումը, զենքի և զինամթերքի միջազգային շուկայում մարքեթինգային գործառույթների ակտիվացումը և արտասահմանյան պատվերների ստացումը, ինչպես նաև ռազմական տեխնիկայի արտադրության ինտեգրումը ՀԱՊԿ երկրների տնտեսությունների հետ:

Բանալի բառեր՝ ռազմարդյունաբերական համալիր, տնտեսության դիվերսիֆիկացիա, ռազմատեխնիկական քաղաքականություն

РЕЗЮМЕ

■ НОННА ХАЧАТРЯН

ПЕРСПЕКТИВЫ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ ВОЕННО - ПРОМЫШЛЕННОГО КОМПЛЕКСА В РА

Военно-промышленная система в Армении имеет перспективы экономического развития. К этому процессу будут способствовать формирование дополнительных источников государственного финансирования, активизация маркетинговых функций в международных вооружениях и боеприпасах, а также интеграция сферы производства военной техники в экономику стран ОДКБ.

Ключевые слова: *военно-промышленный комплекс, диверсификация экономики, военно-техническая политика*

¹ <http://nyut.am/?p=117728&l=ru>

SUMMARY

■ **NONNA KHACHATRYAN**

PROSPECTS OF ECONOMIC DEVELOPMENT OF THE MILITARY INDUSTRIAL COMPLEX IN RA

The military-industrial system in Armenia has real prospects for economic development. The formation of additional sources of state funding, the activation of marketing functions in international armaments and ammunition, as well as the integration of the production of military equipment into the economy of the CSTO countries will contribute to this process.

Key words: *military-industrial complex, economic diversification, military-technical policy*

ԲՈՒՀԸ ՈՐՊԵՍ ԹԻԿՈՒՆՔԻ ԱՌԱՋԻՆ ԳԻՏ

ՄՆԱՀԻՏ ՄՈՒԿՈՒՅՑՄԱՆ

XX դարը նոր մարտահրավերների ու աշխարհաքաղաքական խնդիրների առաջ է կանգնեցրել բոլոր ազգերին: Դրանց արժանիորեն դիմակայելու, ինչպես նաև մեր տեղն ու դերը համաշխարհային քաղաքակրթությունների պատմության մեջ արժևորելու համար անհրաժեշտ է ունենալ մրցունակ կրթություն և մարտունակ բանակ: Ինչպես նաև գիտակից քաղաքացիներ, որոնք հասկանում են՝ ինչպես են իրենց գործունեությամբ հարաբերվում բանակին ու պաշտպանական գծին:

Ազգերից յուրաքանչյուրն աշխարհին է ներկայանում իր կրթությամբ ու մշակույթով, բայց նրա ձայնը լսելի է դառնում ամուր, կայուն բանակ ունենալու դեպքում միայն: Եթե պատմությունը շատ հաճախ դիտարկվում է որպես քաղաքակրթությունների երկխոսություն ու մրցակցություն, ապա պատմության թատերաբեմից դուրս են մնում այն ազգերը, որոնք կորցնում են իրենց պատմամշակութային ինքնությունը ու ազգային դիմագիծը: Մեր բարդ ու հակասական անցյալը որոշակիորեն կանխորոշվել է աշխարհագրական դիրքով և հարևաններով: Լինելով Արևմուտքի ու Արևելքի խաչմերուկում՝ մենք ասես երկու հակադիր աշխարհների սահմանագիծն ենք, բախումների ու հակասությունների կիզակետ, բայց և հաշտարար: Քմահաճ ճակատագիրն ասես մեզ առաքելություն է տվել գտնել այս համադրության ոսկե միջինը: Ու բոլորիս խնդիրն է հավերժացնել ազգերի մեջ մեր լինելիության իրավունքը՝ կրթությունն ու բանակը դարձնելով այն կարևոր կռվանները, որոնք մեզ իրավունք են տալիս հավասարը հավասարի պես խոսել գերտերությունների հետ:

Յուրաքանչյուր սերունդ ու ազգ իր առջև դրված խնդիրները լուծում է յուրովի, իսկ մեր սերնդի ու ազգի առջև խնդիրները բազմաթիվ ու բազմաբնույթ են: Եթե մեր հայրերի

առաջ կանգնած էր արցախյան հիմնահարցը կովի դաշտում լուծելու խնդիրը, ապա մեզ մնում է ձեռք բերածը շենացնել ու պահպանել՝ պաշտպանելով մեր արժեհամակարգը:

Այս անսկիզբ ու անվերջ թվացող պատերազմում, անկախ ամեն ներգործող հանգամանքից, մենք մեր խոսքն ունենք ասելու: Եվ այդ խոսքը լսելի կլինի միայն բոլոր բնագավառների մոբիլիզացման շնորհիվ:

«Մեր երկիրը չունի այլևս թիկունք, սահման, առաջավոր կամ ետին գիծ»¹:

Սահմանին կանգնած յուրաքանչյուր զինվոր պիտի զգա, որ եթե դիմացը թշնամին է, ապա կողքին ու թիկունքին հայն է, հայ մարդն ու քաղաքացին՝ անկախ մասնագիտական ու սոցիալական դիրքից, գաղափարախոսությունից, կուսակցական պատկանելությունից, կրոնից ու տեսակից: Բանակն ու զինվորը բացարձակ արժեքներ են, և պիտի դադարենք նրանց մասին հիշել միայն սահմանային լարվածության ժամանակ՝ դառնալով ազգ-բանակ: Բանակը պիտի ընկալենք որպես հայրենիքի անվտանգությունն ու կենսունակությունն ապահովող կառույց, որտեղ գտնվելն ու ծառայելն ամենապատվաբեր գործն ու մասնագիտությունն է:

Իհարկե, առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք բանակը դարձնում են խոցելի թե՛ թիկունքում, թե՛ առաջնագծում, պատճառ դառնում բազմաթիվ ողբերգությունների, որոնք բխում են հասարակության տարբերությունից: Հենց այդ անտարբերության ու անարդարության պատճառով ակտիվ և հայրենասեր քաղաքացին հանդիպում է լրացուցիչ արհեստական արգելքների, շատ հնարավորություններից դուրս է մղվում, հայրենիքից է դուրս մղվում, անգամ հայրենիքն է իր միջից փորձում դուրս հանել, իսկ սա շատ վտանգավոր է ազգային «ես»-ի պահպանման տեսանկյունից:

¹ Մկրտչյան Լ., «ԱԶԳ-ԲԱՆԱԿ 2017». արմատական առաջարկներ և նպատակային ծրագրեր, <http://www.hayzinvor.am/46308.html> (հղվել է- 01.11.17)

Անշուշտ, խոսքերով դյուրին է գտնել բոլոր մարտահրավերների պատասխանները, բայց շատ հաճախ այնքան ենք ընկղմվում սեփական առօրեական հոգսերի մեջ, որ մոռանում ենք, թե ում շնորհիվ ենք ապրում խաղաղ երկնքի տակ: Հենց այս խնդիրները լուծելու, հասարակություն-բանակ կապը ապահովելու համար շատ կարևոր են բուհի և ուսանողի դերը, որպես առավել ակտիվ ու հստակ քաղաքական դիրքորոշում դրսևորողների ու երկրի ապագա տերերի: Ուսանողների ակտիվ ներգրավվածությունը և պահանջատիրությունն են ապահովում հավասարակշռությունը երկրի բոլոր ոլորտներում: Բուհը պիտի դառնա կապող օղակ ժողովրդի ու բանակի միջև, և թիկունքում ապահովի ու պաշտպանի զինվորի գաղափարական ու կրթական որակը: Ուստի ազգ-բանակ նախաձեռնության մեջ շատ կարևոր է ուսանողների դերը: Կրթված զինվորականը միշտ էլ ավելի գրագետ է գործում, իսկ ծառայություն անցած քաղաքացին ոչ միայն գործնական որակներ է ձեռք բերում, այլև գիտակցում է բանակի ու զինվորի կարևորությունը: Դրա համար պետք է փորձենք արմատապես վերաարժևորել կրթական համակարգը, որ կարողանանք մեր երկրում լուրջ խնդիրներ լուծել, այլ ոչ բողոքենք աշխարհի դեմ:

«Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդութեանը: ...Վաղը ազգովին պիտի հնձենք այն, ինչ որ սերմանում ենք այսօր-այսօր, երբ դու նուազ խոստմնալից ես, երբ քո մեջ, շնորհիվ մեր օրերի նիւթապաշտական ոգու և համատարած յուսալքութեան, թուլացել է պաշտամունքը երկու ասուածութիւնների՝ հայրենի ժողովրդի և երկրի...»¹:

Նժդեհյան փիլիսոփայությունն ու գաղափարախոսությունն առավել քան արդիական են այսօր, բայց, ցավոք, նրա հետևորդների մի մեծ բանակ չի էլ փորձում հասկանալ խոսքերի իմաստը: Բայց միևնույն ժամանակ անհնար է թերա-

¹ Տե՛ս **Գաբրեղին Նժդեհ**, Հատընտիր, Երևան, 2006, էջ 22:

զնահատել ուսանողության ու երիտասարդության դերն ու մասնակցությունը հայոց պատմության մեջ թե՛ սահմանի պաշտպանության, թե՛ ռազմաքաղաքական խնդիրները լուծելու գործում: Ակնառու են հայ ազատագրական պայքարի ընթացքում նրանց գործուն մասնակցությունը հայդուկային կռիվներում, կուսակցությունների ձևավորման մեջ և հատկապես դրանից հետո, երբ Եվրոպայում կրթություն ստացած առաջադեմ ուսանողները իրենց ձեռքը վերցրին ազատագրական շարժման ղեկավարումը: Բայց առավել հայտնի հերոսությունների օրինակներ ունենք արցախյան հերոսամարտում, որին մասնակից դարձան բազմաթիվ ուսանողներ, նրանք ոտքի ելան՝ բոցաշունչ ճառերի փոխարեն գենքով ապացուցելու մեր լինելիության իրավունքը: Հայ ժողովրդի շատ նվիրյալ զավակներ վերջապես թոթափեցին հազարամյա հնազանդությունը: Արդարության կռիվը կյանքից թանկ էր նրանց համար: Ուսանողներ Սիմոն Աչիքցյոզյանը, Լեոնիդ Ազգալդյանը, Թաթուլ Կրպեյանը, Դուշման Վարդանը, Տիգրան Պետրոսյանը, Պետրոս Ղևոնդյանն¹ ու շատ հերոսներ, որոնք սահմանում հանձնեցին իրենց քնություններն ու ստացան անմահ հերոսի որակավորում՝ օրինակ դառնալով մեր օրյա հերոսների համար:

Շատ հաճախ, թերազնահատելով մեր երիտասարդությանը, համեմատության եզրեր չենք գտնում նրանց ու արցախյան հերոսների միջև, բայց կյանքն ամենադաժան ձևով մեզ ապացուցեց, որ հայը հերոս է՝ անկախ հազարամյակից ու բարքերից: Նա ինչքան էլ դժգոհի երկրից, երբեք թույլ չի տա՝ թշնամու բարբարոս ոտքը հաստատվի իր հայրենիքում, քանզի պաշտպանում է ոչ միայն հայոց հողը, այլև իր տունը, ընտանիքն ու հայրենիքը: Մերօրյա հերոսները մեզ ու աշխարհին ցույց տվեցին, որ հայրենիքը վեր է ամեն ինչից, և

¹ Տե՛ս **Ուլուքաբյան Բ.**, Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1996:

հայ ժողովրդի միակ պաշտպանն ու դաշնակիցը հայկական բանակն է:

«Քառօրյա պատերազմը» ապացուցեց, որ հայ ժողովրդի ներուժի համատեղման դեպքում հնարավոր է լայնածավալ խնդիրներ լուծել: Իսկ այն միֆը, որ ժողովուրդը այնքան է հոգնել ամեն ինչից, որ կխուսափի ներգրավվել նոր պատերազմում ու կարտագաղթի, հոդս ցնդեց:

Շատերն ասում էին՝ Աստված մի արասցե՝ պատերազմ լինի, ոչ մեկը զենք չի վերցնի և չի կռվի հանուն հայրենիքի: Բայց պատերազմի ժամանակ նույնիսկ կամավորների մոտ հումոր էր շրջանառվում, որ միայն կաշառքի միջոցով է հնարավոր առաջին զիծ մեկնել, այնքան շատ էին ցանկացողները: Եվ մենք ականատես եղանք հրաշքի. մեջք մեջքի մի բռնոցքի պես կռվում էին Հայաստանը, Արցախն ու Սփյուռքը, ինչպես նաև հայերի երեք սերունդ՝ յուրաքանչյուրը փորձելով փրկել հայ մարդուն ու քաղաքացուն: 18-ամյա հերոսները՝ անզեն կամ զինված, կործանեցին ոչ միայն աղբբեջանական կայծակնային պատերազմի ծրագիրը, այլև փոխեցին մեր իրականությունն ու արժեհամակարգը: Ռազմի դաշտ մեկնեցին նաև ուսանողական բազմաթիվ կամավորական ջոկատներ: Հյուսիսային համալսարանի ուսանողները նույնպես 100 հոգուց բաղկացած ջոկատ կազմեցին: Բարեբախտաբար, պատերազմը շուտ ավարտվեց¹: Սակայն միննույնն է, յուրաքանչյուր բուհ պիտի պատրաստ լինի մեր զինվորների հետ կասեցնել հակառակորդին՝ թե՛ ռազմի դաշտում, թե՛ թիկունքում և թե՛ տեղեկատվական պատերազմում:

Պատերազմի հետևանքով մեր կողքին ապրող բազմաթիվ հասարակ տղաներ՝ մեր ընկերները, եղբայրները, ծանոթ ու անծանոթներ, որոնք դարձան ճակատագրով մերը, բոլորիս զինվորները, մեր խղճի արտացոլանքը. Ռոբերտ Աբաջյանը, Արմենակ Ուրֆանյանը, Արարատ Խանոյանը, Ազատ

¹ Տե՛ս <http://www.aravot.am/2016/05/31/698846/> (հղվել է 11.10.17)

Ասոյանը, Արմեն Հովհաննիսյանը, Ջորիկ Գևորգյանն¹ ու շատ շատերը հաղթեցին մահին ու դարձան մերօրյա անմահ հերոսները:

Ուստի մենք չունենք այլընտրանք կամ իրավունք երեքալու, կասկածելու ու շփոթվելու: Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը հայոց նորօրյա պատմության մեջ իրավամբ ցույց տվեց իր կենսունակությունը: Արտագաղթած ու սփյուռքում իրենց կյանքը կառուցող մարդիկ վտանգի պահին վերադարձան՝ մոռանալով ամեն ինչ: Ու պիտի այս ձեռքբերումը պահպանել ու զարգացնել հենց երիտասարդության միջոցով: Իսկ դա պետք է սկսենք հայ օջախներից, մանկապարտեզից ու դպրոցից՝ զարգացնելով բուռն: Քանզի գիտակից քաղաքացի դաստիարակելու գործում չկան անկարևոր փուլեր: Կրթության ցանկացած փուլում նախ պիտի հայրենասեր ու մարդասեր հայ կրթենք, որը գիտի իր հերոսներին ու պատմությունը, այլ ոչ թերաբժեքության բարդությունով տառապող ու գլոբալիզացիայի ենթարկված անհատ: Մեզնից յուրաքանչյուրը պիտի կրողը լինի ազգային գաղափարախոսության ու գիտակցի, թե ինչ մարտահրավերների առաջ ենք մենք կանգնած: Ամեն մի քաղաքացի իր ոլորտում պիտի կարողանա աշխատել՝ մտածելով ոչ միայն իր անձնականի ու այսօրվա, այլև ընդհանուրի ու վաղվա մասին, ընկալի իրեն որպես ազգի ներկայացուցիչ: Ոչ մի երկրի ու դեմոկրատ հասարակության չի հուզում ո՛չ մեր անցյալը, ո՛չ ապագան, ո՛չ էլ իրադրությունն առաջնագծում ու հայ զինվորի կյանքը, եթե, հիարկե, դա չի բխում իր շահերից: Եվ այն արժեքները, որոնց համար մեկ տարի առաջ իրենց կյանքը զոհեցին հարյուրից ավելի պայծառ երիտասարդներ՝ մեզ զրկեց այդ արժեքների հանդեպ անտարբեր և անպատասխանատու լինելու իրավունքից՝ մեզ պարտադրելով տեր կանգնել այդ արժեքներին:

¹ Տե՛ս **Էլքակյան Է.**, Հայ-ադրբեջանական պատերազմը և մերօրյա հերոսները, Երևան, 2015, էջ 118:

Այլ տարբերակ և այլընտրանք չունենք, Հայաստանը պետք է դարձնել մեկ բռունցք, մեկ մարդ, մեկ միտք և մեկ նպատակ: Ապրիլի 2-ի կորստի ցավը մեզ պարտավորեցնում է առավել խորքային գիտակցել ու անեղծ պահել այդ օրվա և ընդհանրապես ապրիլյան քառօրյա պատերազմի սթափեցնող դասերը՝ բուհը դարձնելով մեր զինվորների թիկունքը պաշտպանող ամուր կառույց:

ՄՄՓՈՓՈՒՄ

Պետք է փորձենք հայ ժողովրդի ողջ ներուժը՝ պատմությունը, մշակույթը, կրթությունը և գիտատեխնիկական նվաճումները կիրառելով՝ դիմակայել համաշխարհային, տարածաշրջանային և համազգային մարտահրավերներին, ինչպես նաև պայքարել ավելի կայուն ապագա կերտելու համար: Պետք է բուհ-բանակ համագործակցությունը դարձնել ազգային գաղափարախոսության կարևոր հենասյուներից մեկը: Քանզի բանակը հասարակության արտացոլանքն ու մեր լինելիության հիմնական գրավականն է:

Բանալի բառեր՝ Արցախյան հերոսամարտ, ապրիլյան պատերազմ, թիկունքը՝ ճակատ, բուհ-բանակ, հայկական ներուժ

РЕЗЮМЕ

■ АНАИТ МУКУЧЯН

ВУЗ - ПЕРВАЯ ЛИНИЯ ФРОНТА

Мы должны попытаться использовать весь потенциал: историю, культуру, образование и научно-технические достижения армянского народа, для противостояния глобальных, региональных и общенациональных вызовов, чтобы построить более устойчивое будущее. Сотрудничество ВУЗ - армия является одним из ключевых столпов национальной идеологии. Так как армия - это отражение общества и основная гарантия нашего существования.

Ключевые слова: Арцахское героическое сражение, апрельская война, фронт-тыл, единство, ВУЗ - армия, армянская внутренняя сила

SUMMARY

■ **ANAHIT MUKUCHYAN**

UNIVERSITY IS THE FRONT LINE

Thus, we should try to use all the potential: the history, culture, education, scientific and technical achievements of Armenian people to confront global, regional and national challenges in order to build a more sustainable future. The University and Army cooperation is one of the key pillars of national ideology. Since the army is the reflection of society and the main guarantee of our existence.

Key words - *Artsakh heroic battle, April war, front-rear, unity, university - army, Armenian internal force*

**ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՊՈՐՏԱՅՆԱՑՎԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ**

ԷՌՆԵՍՏ ԱՎԱՆԵՍՈՎ

Այսօր հանրահայտ է, որ ավարտական դասարանների աշակերտները օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով խուսափում են ֆիզիկական կուլտուրայի դասերից, ինչի հետևանքով նրանց զգալի մասն իրենց ֆիզիկական տվյալներով անպատրաստ են զինվորական ծառայությանը, արդյունավետ աշխատանքին և ակտիվ կենսագործունեությանը: Ինչպես հայտնի է վերջիններիս վրա ազդող հիմնական գործոններից է նաև համապատասխան շարժողական ակտիվությունը: Հաշվի առնելով բակային խաղերում դպրոցահասակ երեխաների ներգրավվածության ցածր աստիճանը, ինչպես նաև սպորտով զբաղվելու հանդեպ նրանց հետաքրքրվածության ցածր մակարդակը՝ ենթադրվում է, որ դպրոցականների շարժողական ակտիվության պակասը պետք է լրացվի դպրոցական ֆիզիկական կուլտուրայի դասերի շրջանակում: Սակայն ներկայիս դպրոցական ֆիզիկական կուլտուրայի դասերն ի վիճակի չեն լուծելու նշված խնդիրը, ինչի արդյունքում ոլորտի բազմաթիվ հայրենական¹ և արտասահմանյան մասնագետներ փնտրում են այլընտրանքային լուծումներ²:

¹ **Ավանեսով Է.Յու.** Մարզական ուղղվածության ֆիզիկական դաստիարակություն՝ ուսուցչի ընդլայնվող գործառնությունները // Մանկավարժություն: 2011/7: Էջ 11–17:

² **Лубышева Л.И.** Спортизация в системе физического воспитания: от научной идеи к инновационной практике: монография / Л.И. Лубышева, А.И. Загревская, А.А. Передельский, И.В. Манжелей, С.Н. Литвиненко, Е.А. Черепов, Н.В. Пешкова, М.А. Родионова, А.Г. Поливаев, А.Н. Кондратьев,

Այս ամենն իրապես ենթադրում է դպրոցականների ֆիզիկական դաստիարակության համակարգի կատարելագործում, որը պահանջում է մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների մշակում և ներդրում:

Դեռ 1992 թվականին Լերի Լոկն իր «Փոփոխելով միջնակարգ դպրոցի ֆիզիկական կուլտուրան» հոդվածում հաստատել է, որ «... միջնակարգ դպրոցի ֆիզիկական կուլտուրայի ծրագրերի մեծ մասն ի վիճակի չէ հասնել նպատակներին: Այդ խնդիրների բնույթն այնպիսին է, որ ո՛չ մեթոդիկայի բարեփոխումները, ո՛չ էլ առկա ուսումնական պլանների արդիականացումը բավական չեն: Ես հաստատում եմ, որ հիմնական ծրագրի մոդելի փոխարինումը միակ ձևն է, որի միջոցով կհիմնավորվի ֆիզիկական կուլտուրայի դերը միջնակարգ դպրոցում»¹:

Դրա հետ մեկտեղ, ռուս հետազոտողները բացահայտել են, որ նախագորակոչային տարիքի դպրոցականների 60%-ը չունեն նույնիսկ բավարար ֆիզիկական պատրաստականություն²: Գրեթե նույն պատկերն է նկատվում նաև Ղազախստանում³, Ուկրաինայում¹, Վրաստանում² և այլուր: Պետք է նշել, որ նույնը վերաբերում է նաև մեր երկրին:

М.В. Базилевич. – М.: НИЦ «Теория и практика физической культуры и спорта», 2017. – 200 с.

¹ **Locke L.F.** Changing secondary school physical education. Quest, 1992.–44.–р. 361–372.

² **Бондаревский Е.Я., Тертычный А.В., Кулаков Ю.Е.** и др. Пути улучшения двигательного режима школьников // Совершенствование физического воспитания школьников.–М.: ВНИИФК.–1987.–С. 69–79. **Пеганов Ю.А.** Содержание и методика направленной физическойподготовки юношей 16–17 лет с учетом требований ВС СССР: автореф. дис. ... канд. пед. наук. –М.:--1991.–23 с.

³ **Караваева Е.Л.** Перспективные технологии физического воспитания учащейся молодежи // XIV Международный научный конгресс "Олимпийский спорт и спорт для всех": тез. докл. / Нац. ун-т физ. воспитания и спорта Украины.–Киев.–2010.–С. 458. **Касымбекова С.И., Кошаева М.Н., Амренова А.К.** Физическое воспитание учащейся молодежи //

Դպրոցականների առողջության վատթարացման պատճառների շարքում առանձնացվում են չափից մեծ ուսումնական բեռնվածությունը, շարժողական ակտիվության պակասը և այլն³: Դպրոցականների շրջանում ֆիզիկական պատրաստականության մակարդակի վատթարացման մասին վկայում են բազմաթիվ հետազոտությունների արդյունքները, որոնք կապված են հետխորհրդային գրեթե բոլոր պետությունների հետ:

Ներկայումս տարբեր երկրներում դպրոցական ֆիզիկական կուլտուրայի դասերի կատարելագործման ուղղությամբ իրականացվել են մի շարք հետազոտություններ: Հայրենական և արտասահմանյան մասնագետները տվյալ խնդրի լուծումը հատկապես փոխակերպվող հասարակության պայմաններում կապում են դպրոցականների ֆիզիկական դաստիարակության սպորտայնացման (մարզականացման) հետ: Ըստ հեղինակների՝ այս մոտեցմամբ հնարավոր է ոչ միայն

XIV Международный научный конгресс "Олимпийский спорт и спорт для всех": тез. докл. / Нац. ун-т физ. воспитания и спорта Украины.-Киев.-2010.-С. 460. Программа развития физкультуры и спорта в Казахстане требует обновления-Орынбаев. <http://newskaz.ru/sport/20120201/2628312.html>.

¹ **Давыденко Е.В., Семененко В.П.** Инновационные виды двигательной активности младших школьников и их влияние на уровень развития двигательных качеств // XIV Международный научный конгресс "Олимпийский спорт и спорт для всех": тез. докл. / Нац. ун-т физ. воспитания и спорта Украины.-Киев.- 2010.-С. 447. Пять школ Украины будут участвовать в пилотном проекте и совершенствовать физвоспитание учеников. <http://www.bagnet.org/news/health/157583>. Физкультурная недостаточность: острая и хроническая. http://zn.ua/HEALTH/fizkulturnaya_nedostatocnost_ostraya_i_hronicheskaya-77200.html.

² Обучение шахматам во всех школах Грузии будет проводиться в он-лайн режиме. <http://russian.cri.cn/841/2012/01/20/1s412256.htm>.

Уроки физкультуры в школах Грузии заменят уроками спорта. [http://ru.salamnews.org/ru/news/read/3237//uroki-fizkulturi-v-shkolax-gruzii-zamenyat-urokami-sporta/.](http://ru.salamnews.org/ru/news/read/3237//uroki-fizkulturi-v-shkolax-gruzii-zamenyat-urokami-sporta/)

³ **Плотникова В.С.** Спортивная анимация и сохранение здоровья учащихся // Физическая культура в школе.-2012.-№2.-С. 51-54.

զգալիորեն բարելավել դպրոցականների ֆիզիկական պատրաստականության մակարդակը, այլև արմատապես փոխել երեխաների վերաբերմունքը ֆիզիկական դաստիարակության հանդեպ¹:

Տվյալ մեթոդիկան ենթադրում է մարզական պատրաստության տարրերի, մրցումների և դրանց հետ կապված այլ կարևոր հայեցակետերի տեղափոխումը դպրոցական ֆիզիկական դաստիարակության համակարգ:

Այս համատեքստում, անկախ Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ մեր կողմից հիմնավորվել է հայ դպրոցականների ֆիզիկական դաստիարակության սպորտայնացման (մարզականացման) մեթոդիկայի արդյունավետությունը:

Մինչ օրս բացահայտել ենք սպորտայնացված ֆիզիկական դաստիարակության ներգործությունը դպրոցականների շարժողական պատրաստության, առողջական վիճակի, ինչ-

¹ **Ավանեսով Է.Յու.** Մարզական ուղղվածության դասերի ներգործությունը 12–13 տարեկան դպրոցականների շարժողական պատրաստականության վրա // Մանկավարժություն, 2013, 3: Էջ 39–46: **Պապոյան Ռ.Գ., Մաթևոսյան Ս.Լ.** Ֆիզիկական կուլտուրայի դասավանդման խնդիրներում ինովացիոն փոփոխությունների անհրաժեշտությունը ՀՀ հանրակրթության բնագավառում / Հանրապետական XXIX գիտամեթոդական կոնֆերանսի թեզիսներ, Եր., ՖԿՀՊԻ, 2002, էջ 32: **Бальсевич В.К., Лубышева Л.И., Прогонюк Л.Н.** и др. Новые векторы модернизации систем массового физического воспитания детей и подростков в общеобразовательной школе // Теория и практика физической культуры.–2003, №4.–С. 56–59. **Бальсевич В.К.** Спортивный вектор физического воспитания в российской школе.–М.: НИИ «Теория и практика физической культуры и спорта».–2006.–112 с. **Лубышева Л.И.** Спортивная культура в школе.–М.: НИИ «Теория и практика физической культуры и спорта».–2006.–174 с. **Фонарев Д.В.** Моделирование муниципальной системы спортивно ориентированного физического воспитания школьников: монография.–Чайковский: [б.и.].–2009.–353 с. **Ավանեսով Է.Յու.,** Դպրոցականների շարժողական պատրաստության մարզական ուղղվածության մեթոդիկան: Մանկ. գիտ. թեկն. ... սեղմագիր, Երևան, ԵՊՀ, 2014, –24 էջ:


պես նաև նրանց անհատական բնութագրերի բարելավման վրա¹: Դրա հետ մեկտեղ՝ որպես տվյալ մեթոդիկայի հետագա տարածման նախադրյալ, բազմիցս կարևորվել ենք այդ գործընթացն իրականացնող կադրային ներուժի պատրաստության, դպրոցականների սպորտայնացված ֆիզիկական դաստիարակության գործընթացի կառավարման հիմնախնդիրը, ինչպես նաև այլ կարևոր հիմնահարցեր:

Առկա հայրենական և հարուստ արտասահմանյան փորձի ուսումնասիրման արդյունքում բացահայտված տվյալները հիմք հանդիսացան ձևավորող մանկավարժական գիտափորձերի կազմակերպման համար և թույլ տվեցին նախանշել դպրոցականների շարժողական պատրաստության մարզական ուղղվածության մեթոդիկայի ներգործության 3 հիմնական ոլորտները (տե՛ս գծապատկերը):

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ Հայաստանում դպրոցականների ֆիզիկական դաստիարակության սպորտայնացման արդյունավետությունը գիտականորեն հիմնավորված է: Այս գաղափարն աստիճանաբար զարգանում է մեր երկրում, սակայն ֆիզիկական կուլտուրայի ավանդական դասերի հետագա, առավել ընդգրկուն, համակարգային փոխարինումը սպորտայնացված պարապմունքներով պահանջում է պետական աջակցություն: Ներկայումս մեր ջանքերով այս ուղղությամբ տարվում են համապատասխան աշխատանքներ:

¹ **Аванесов Э.Ю.**, Кадровый потенциал как предпосылка дальнейшего развития методики спортизированного физического воспитания школьников Армении / Международный научный журнал: сборник научных трудов, Киев, 2016/1.–С. 104–106. **Ավանեսով Է.Յու.** Դպրոցականների սպորտայնացված ֆիզիկական դաստիարակության գործընթացի կառավարման հիմնախնդիրը, «Սպորտային մանկավարժական գիտություն» 43-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, ՖԿՀՊԻ, 2016: Էջ 31–35:

Գծապատկեր
Դպրոցականների սպորտայնացված ֆիզիկական
դաստիարակության ներգործության ուղղությունները



ԱՄՓՈՓՈՒՄ

Հորվածում ներկայացվում է դպրոցականների ֆիզիկական դաստիարակության սպորտայնացման հայկական փորձը:

Բանալի բառեր՝ դպրոցականներ, ֆիզիկական կրթություն, բարեփոխում, սպորտային մեթոդներ

РЕЗЮМЕ

■ ЭРНЕСТ АВАНЕСОВ

*СПОРТИВНОЕ ФИЗИЧЕСКОЕ ВОСПИТАНИЕ ШКОЛЬНИКОВ
КАК ГАРАНТИЯ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ*

В статье представлен армянский опыт спортизации физического воспитания школьников.

Ключевые слова: *школьники, физическое воспитание, реформирование, методика спортизации*

SUMMARY

■ ERNEST AVANESOV

*PHYSICAL EDUCATION OF SCHOOLCHILDREN AS A GUARANTEE
OF NATIONAL SECURITY OF THE REPUBLIC OF ARMENIA*

In this article presents the armenian experience of sport-oriented lessons of physical training of schoolchildren.

Key words: *schoolchildren, physical education, reform, metodica of sport-oriented*

ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԻ ՏԵՄԱԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՆԱԻՐՈՒՀԻ ՄԱՐԳՍԵԱՆ

Չկա ավելի խոր զգացում,
քան հայրենասիրությունը:
Պարույր Մեակ

Հայրենիք... այս մի հատիկ բառում են ամփոփված հայի համար ամենակարևոր արժեքները՝ պատիվ և արժանապատվություն: Եթե մյուս ազգերի ու ժողովուրդների համար հայրենիքն ու հայրենասիրությունը պարզապես վեհ գաղափարներ են, ապա հայի համար, դրանից զատ գոյության և հարատևման ամենակարևոր գրավականը: Հայրենիք բառի արմատը հայր բառն է, ուստի դրա ընկալումը Հայկի ու Բելի պայքարից մինչև մեր օրերը հայի համար անփոփոխ է մնացել:

Արժանի չես հայրենիքիդ, եթե այն չես դավանում իբրև գերագույն նպատակ, իսկ անձդ՝ իբրև միջոց: Հայրենիքը չի տրվում այնպես, ինչպես ժառանգվում է հայրենական հարստությունը: Դա ձեռք է բերվում ամեն մի սերնդի և նրա առանձին անդամի կողմից, ձեռք է բերվում հայրենաճանաչումով, հայրենապաշտությամբ, նրան արժանի դառնալու ձգտումով: Կարելի է հայրենիքում լինել, բայց հայրենիքից չլինել, կարելի է հայրենիքում ապրել, բայց և այնպես հոգեհաղորդ չլինել նրան: Կարելի է, վերջապես, իրավապես հայրենատեր լինել, իսկ հոգեպես՝ անհայրենիք:¹

Հայրենասիրությունը ծագում է լատիներեն «պատրիոտ» բառից, նշանակում է՝ հայրենիքը սիրող: Հայրենասիրությունը բարոյական բարձր որակ է: Այն սոցիալական դիրքորո-

¹ Գ. Նժդեհ «Հատընտիր», «Ամարաս», Երևան, 2006:

շում է, որի հիմնական բաղադրիչը **սեքն** է: Անձի հայրենասիրությունը հանդես է գալիս և մարմնավորում տվյալ մարդու՝ դեպի իր հայրենիքն ունեցած սիրո մեջ:

Ցանկացած մարդու համար իր հայրենիքը սկսվում իր տնից, իր բակից, իր այգուց: Ուստի ընտանիքի և կրթակադաստիարակչական բնույթի ցանկացած հաստատության գերխնդիրն է ապահովել մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացումը: Թյուր է այն կարծիքը, թե ռազմահայրենասիրական դաստիարակությունը սկսվում է դպրոցից, այն սկսվում է շատ ավելի վաղ՝ ընտանիքում, երբ ծնողը դեռ չբարբառող մանկան համար խաղալիք զենք է գնում: Այլ բան է, որ ռազմահայրենասիրական դաստիարակությունը համակարգված բնույթ է ստանում հենց դպրոցում: Այս գործում անհերքելի է նաև մանկապարտեզների դերը. այստեղ է ծնունդ առնում դեռևս ընտանիքում սաղմնավորված այս վեհ գործընթացը:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն նպատակն է ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները, նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ¹: Անկախ տարիքից՝ հասարակության բոլոր անդամների մեջ պետք է սեր դաստիարակել հարազատ վայրերի, իրենց գյուղի, ավանի, քաղաքի, հայրենի բնաշխարհի նկատմամբ: Սովորողների հայրենասիրական դաստիարակության համար կարևոր դեր կարող են խաղալ մեր մեծ հայրենասերներ՝ Անդրանիկի, Նժդեհի, Դրոյի, Թևանի ապրած կյանքն ու գործունեությունը, Ղարաբաղյան պատերազմում անմահացած հերոսների, աշխարհահռչակ զորավարներ Բաղրամյանի, Բաբաջանյանի, Խամփերյանցի, Իսակովի հավերժող օրինակները:

¹ **Кукущин В.С.**, Теория и методика воспитательной работы, Ростов-на Дону, 2002.

Ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրն է սեր սերմանել ոչ միայն հայրենիքի, այլև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ:

Երբ ասում ենք հայրենիք, ապա առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող ժողովուրդը¹:

Եթե հայրենիքում ժողովուրդ չկա, ուրեմն հայրենիք չկա: Առանց հայրենիքի, առանց հարազատ ժողովրդի մարդը լքյալ է: Նշանակում է հայրենիքից թանկ, ժողովրդից թանկ ոչինչ չկա:

Ժամանակակից աշխարհաքաղաքական զարգացումների ենթատեքստում, էթնիկական ու կրոնական, միջազգային ահաբեկչության սպառնալիքների պայմաններում առաջնային դերակատարում է ստանձնում ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Հասկանալով հայրենասիրության էությունն ու բնույթը, ըստ այդմ, կկարողանանք մեկնաբանել ռազմահայրենասիրական դաստիարակության նշանակությունը: Բնականաբար, տրամաբանական կլինի գիտականորեն հիմնավորված ձևերի ու միջոցների ընտրությունը:

Որպես արժեք հայրենասիրությունը բազմաբովանդակ է՝ բարոյական գիտակցության դրսևորման զգայական աստիճանի արտացոլման ձևերից մեկը, հասարակական ապրումների զգացմունքների խմբում: Այն որպես կատեգորիա արտացոլում է հասարակության մեջ տիրող, ինչպես նաև ազգային էթնիկական հոգևոր բարոյական մթնոլորտը: Անժխտելի է, որ հայրենասիրությունը ազգի, ժողովրդի, հասարակության, պետության, սոցիումի, անհատի գոյատևման անբաժանելի բաղադրիչն է, իսկ հասարակության և պետության դիալեկտիկական գոյատևումն անհնար է պատկերացնել առանց այդ իսկ կառույցների միասնության:

¹ Տե՛ս նույն տեղում:

Հայրենասիրությունը հայ ժողովրդի համար ունի իր ինքնատիպ առանձնահատկությունները՝ պայմանավորված ազգային էթնիկական անկրկնելի պատմական զարգացմամբ, հոգևոր ու նյութական մշակույթով, աշխարհաքաղաքական ու բնապատմական զարգացումներով պայմանավորված կյանքի ընթացքով, հայ էթնոսի արիական, աշխարհաստեղծ մենթալիտետով, ազգային ինքնագիտակցությամբ, ի վերուստ տրված հարատևման անհրաժեշտությամբ:

Հայրենասիրության դրսևորման բարձր մակարդակի հասնելն ու այն պահպանելը բավականին բարդ ու շատ աշխատատար գործընթացներով խնդիր է:

Ելնելով շարադրվածից՝ փորձենք հասկանալ հայրենասիրության էությունը, տեղն ու դերը անհատի, հասարակության ու պետության կյանքում: Այստեղ փորձենք պարզաբանել մի քանի ելակետային դրույթներ:

- Հայրենասիրությունը ձևավորվում և զարգանում է որպես հոգևոր-բարոյականի հաստատմամբ առավել սոցիալականացված զգացմունք,
- Հայրենասիրությունը՝ որպես իր բնույթով խորապես սոցիալական երևույթ, իրենից ներկայացնում է ոչ միայն հասարակական կյանքի որոշակի կողմ, այլև դրա գոյության և զարգացման էական աղբյուր,
- Հայրենասիրության առաջնահերթ սուբյեկտը անհատն է, ում գերակա սոցիալ-բարոյական խնդիրն է իր հայրենիքին, պատմական, մշակութային, ազգային և հոգևոր պատկանելության գիտակցումը՝ որպես կյանքի իմաստն ու բովանդակությունը որոշող բարձրագույն սկզբունք,
- Հայրենասիրության իմաստը դրա հոգևոր արժեքայնության մեջ է: Այն որպես վեհ զգացմունք, անփոխարինելի արժեք է, անսպառ աղբյուր:

- Վերոշարադրյալը հնարավորություն է տալիս ընդհանրացնելով ամբողջացնելու հայրենասիրության էությունը:
- Հայրենասիրությունը կարելի է ձևակերպել որպես հասարակական կյանքի և պետության բոլոր ոլորտներին բնորոշ առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների համակարգ, ինչը անձի կարևորագույն հոգևոր սեփականությունն է ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը՝ դրսևորվելով ինքնաիրացման ակտիվ գործընթացում՝ ի շահ Հայրենիքի բարօրության:

Անտարակույս, հայրենասիրությունը որոշ առումով հանդես է գալիս որպես հասարակական ու պետական վերնաշենքի ինքնատիպ հիմք, գաղափարական հենարան: Այստեղից էլ այն համոզմունքը, որ հայրենասիրությունը չի կարող վերացական կերպով հանդես գալ, այսինքն՝ լինել օբյեկտից ու սուբյեկտից դուրս¹:

Հայրենասիրության օբյեկտը միանշանակ խտացված Հայրենիքն է իր ամբողջ էությամբ ու բովանդակությամբ: Հայրենասիրության սուբյեկտի դերում հանդես են գալիս սոցիալական կառույցները՝ անձը, սոցիալական հանրությունը, դասակարգը, ազգը և այլն: Այստեղ երևան է գալիս հայրենասիրությունն ու սուբյեկտը մեկ հարթության բերող և իրար շաղկապող գործառույթի անհրաժեշտությունը հայրենասիրական, մասնավորապես՝ ռազմահայրենասիրական դաստիարակություն անվամբ:

Տարիներ շարունակ մեր դպրոցի աշակերտները համալրել են ՀՀ և ՌԴ ռազմական բուհերի ուսանողների շարքերը, եղել մեր երկրի և Արցախի սահմանների անվախ պաշտպանները և դեռ նման ոգով ու պատվով պետք է շարունակեն սպաների ու զինվորների շարքերը համալրելու ազգանվեր գործը: Ուստի մատաղ սերնդի ռազմահայրենա-

¹ **Бордовская Н.В., А. А. Реан**, Педагогика, М., 2006

սիրական դաստիարակությունը և գրագետ, հոգեպես ու ֆիզիկապես կոփված, բանակի մասին տեղեկացված ու պատրաստված սերունդ դաստիարակելու գործընթացը մեզանում օրեցօր ավելի է կատարելագործվում և մշտապես եղել է ժամանակակից դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունն ու պատանեկությունը ամենանպաստավոր շրջանն են անձի մեջ հայրենիքի նկատմամբ իր պատկերացումները ճիշտ ձևավորելու, սիրո զգացմունքն արմատավորելու և հայրենիքի պաշտպանի գիտակցումը սերմանելու համար: Այս հարցն է՝ ավելի սուր է ներկայանում մեր օրերում, քանզի այսօր ակներև է ավանդական հայրենասիրական գիտակցության մակարդակի նվազումը:

Հայրենիքը միայն հողն ու ջուրը չէ, որ արժանի է և ենթակա պաշտպանության նրա զավակների կողմից: Հայրենիքը նաև մի մեծ տուն է, ընտանիք, որի հետ մարդը պետք է աշխատի և որին պետք է ծաղկեցնի, դեկավարի և դարձնի բարեկեցիկ, արժանավայել ապրելու տեղ՝ մեկընդմիջտ հրաժարվելով արտագնացությունից: Հայրենիքը պետք է լինի այն վայրը, որտեղ ապրելը յուրաքանչյուր անձի համար պատիվ լինի և անպատվաբեր դիտվի այն լքելու գաղափարը:

Հայրենասիրական գիտակցության մակարդակի բարձրացման ուղղությամբ իրականացվող միջոցառումները դպրոցներում և բուհերում նպատակաուղղված են՝

- սովորողների մեջ կատարելագործելու իրենց աշխատանքի, ազգի, նրա ավանդույթների և հաղթանակների նկատմամբ հարգանքը և հպարտության զգացմունքը,
- նպաստելու հոգեպես հարուստ և սոցիալապես ակտիվ կեցվածքով հայ քաղաքացու ձևավորմանը,
- կրճատելու սովորողների կողմից տարբեր օրինախախտումների և վնասակար սովորույթների մակարդակը,
- պահպանելու և տարածելու ՀՀ պետական խորհրդանիշների (զինանշան, դրոշ, օրհներգ) բովանդակությունն ու նշանակությունը՝ սկսելով այս գործընթացը տարրական

դպրոցից, անհրաժեշտության դեպքում շարունակելու բուհում. յուրաքանչյուր քաղաքացի պետք է իմանա օրհներգը,

- բարձրացնելու աշակերտների՝ ազգային շահերի պաշտպանության ձևավորմանն ուղղված ռազմահայրենասիրական դաստիարակությունը՝ միաժամանակ սերմանելով հանդուրժողական և հարգալից վերաբերմունք այլ ազգերի նկատմամբ,
- նպաստելու հայության ինքնության ամրապնդմանը նպաստող գործողությունների իրականացմանը,
- յուրաքանչյուր սովորողի մեջ արմատավորելու սեփական ազգի պատմության ու պետության կայացման գործում իր մասնակցության կարևորությունն ու դրա իրական հնարավորությունը՝ «Ինձնից է կախված իմ ազգի և պետության ապագան» կարգախոսի արմատավորումը,
- դպրոցում հայրենասիրական դաստիարակության համակարգի կայացմանը, դրա արդյունավետ գործունեությանն ու մշտական կատարելագործմանը:

Հայրենասիրական դաստիարակության բնագավառում թվարկված ուղենիշային նպատակներին հասնելու համար մեր կարծիքով անհրաժեշտ է՝

- *դպրոցի վարչական և ուսուցչական անձնակազմին ակտիվորեն ընդգրկել սովորողների հայրենասիրական դաստիարակության ծավալման և կատարելագործման գործընթացներում,*
- *պարբերաբար մշտադիտարկման ենթարկել, վերլուծել և գնահատել ծրագրավորված հայրենասիրական միջոցառումների կատարման արդյունավետությունը,*
- *դպրոցական բոլոր հիմնական միջոցառումներն իրականացնելիս ապահովել հայկական խորհրդանիշների և հայրենասիրական գաղափարների գործածումը,*
- *ամփոփել և տարածել հայրենասիրական դաստիարակության ասպարեզում լավագույն մասնագետների առաջավոր մանկավարժական փորձը,*

- ուսուցիչների և դպրոցի ղեկավարության կողմից մշտապես և հետևողական կերպով միջոցառումներ ձեռնարկել աշակերտական միջավայրում լայն տարածում ստացած անտարբերության, էգոիզմի, ցինիզմի և չարության դեմ,
- հայրենասիրական դաստիարակության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ներդնել աշխատանքի նոր ձևեր և մեթոդներ, ինչպիսիք են զանգվածային լրատվության միջոցները և ժամանակակից տեխնոլոգիաները՝ ֆիլմեր, դիսկեր, ինտերնետային կայքեր և այլն,
- դպրոցի աշակերտական խորհրդին ընդգրկել ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված միջոցառումներում,
- հաճախակի անցկացնել ռազմական հայրենասիրական բնույթի մրցույթներ, հանդիպումներ, զրույցներ և այլ միջոցառումներ, ինչպիսիք են «Հայոց պատմություն», «Հայ ազգ», «Հայոց լեզու», «Հայ ընտանիք» թեմաներով հանդիպումները, զրույցները, սեմինարները և այլ միջոցառումներ,
- հայտնի մարդկանց, զինվորների, ազատամարտիկների, պատերազմի հաշմանդամների հետ հանդիպումները,
- դպրոցի հարևանությամբ գտնվող զինվորական հոսպիտալի հետ համագործակցության ձևավորումը և ըստ այդմ՝ միջոցառումների կազմակերպումը:
- անընդհատ հարստացնել և համալրել հայրենասիրական դաստիարակության կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ մանկավարժական տեղեկատվական բանկը:

Մարդկային գործերի մեջ հայրենիքի պաշտպանությունն է ամենասրբազանը: Հայրենիքի չափ նվիրական է և պատերազմը հայրենական: Հավաքական ավագակություն և սպանություն է այլ կարգի ամեն մի պատերազմ: Եվ ճշմարիտ հերոսները նրանք են միայն, որոնք մեծագործում են և առաքինանում իրենց վտանգված հայրենիքը պաշտպանելու ժամա-

նակ: Հերոսի անունը պիտի զլանալ աշխարհակալական պատերազմի մասնակցող ամեն զորականի: Սպանության և կոդոպոլտի ելած բանակը կարող է քաջ ավագակներ ու մարդասպաններ տալ, բայց ոչ հերոսներ¹:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայրենասիրությունը հայրենիքի հանդեպ սերն է, նվիրվածությունն է, նրա շահերին ծառայելու պատրաստակամությունն է, ընդիույ մինչև անձնագոհություն: Ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակն է ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները, նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ: Ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրն է սերմանել սեր ոչ միայն հայրենիքի, այլև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ:

Բանալի բառեր՝ հայրենիք, հայրենասիրություն, ռազմահայրենասիրական, դաստիարակություն, դպրոց, դպրոցական, մատաղ սերունդ, բուհ, սովորող

РЕЗЮМЕ

■ НАИРУИ САРГСЯН

НЕОБХОДИМОСТЬ ВОЕННО-ПАТРИОТИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ В ДЕЛЕ СОХРАНЕНИЯ АРМЯНСКОГО ГЕНОТИПА

Патриотизм – это любовь к Родине, преданность своему Отечеству, стремление служить его интересам и готовность к его защите, вплоть до самопожертвования. Цель военно-патриотического воспитания – формировать патриотические чувства, трепетное отношение к истории Отечества, к культуре, к народным традициям и обычаям. Задача военно-патриотического воспитания – привить любовь не только к Родине, но и к родному народу.

¹ Գ. Նժդեհ «Հատընտիր», «Ամարաս», Երևան, 2006:

Ключевые слова: Родина, патриот, военно-патриотического воспитание, школа, школьник, младшее поколение, ВУЗ, учащиеся

SUMMARY

■ NAIRYHI SARGSYAN

NECESSITY OF MILITARY-PATRIOTIC UPBRINGING AIMING AT PRESERVING THE ARMENIAN GENOTYPE

Patriotism is love to the motherland, devotion and desire to serve it, willingness to defend it through self-sacrifice. The aim and the object of the military-patriotic upbringing is to form patriotism with children, to instill in them careful attitude to the history, culture, national traditions and customs of the motherland. as well as love not only to the motherland but also to its people.

Key words: Motherland, patriot, military-patriotic upbringing, school, a pupil, young generation, HEI, students

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ Գ.ՆԺԴԵՀԻ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՅՔՆԵՐՈՒՄ

ԱՇՈՏ ՇԱՀԻՆՅԱՆ

XX-րդ դարում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները և, հատկապես, հայության նկատմամբ իրականացված ցեղասպանությունը, հայրենագրկումը, գաղթականության առաջացումը, առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմները և այլն, հայ հասարակական միտքը զբաղեցրին և շարունակում են զբաղեցնել մինչև այժմ: Հասարակագիտական մտքի ներկայացուցիչները, քաղաքական և հասարակական գործիչները, հասարակությունն ընդհանրապես, այս կամ այն ձևով անդրադառնում են այս երևույթների վերլուծությանը, փորձում բացահայտել պատճառները, առաջարկում լուծումներ և այլն: Ըստ էության, ձևավորվել է հայ հասարակական-քաղաքագիտական մտքի նոր հարացույց: Անկախ քաղաքական համակրանքներից, համագգային այս և նմանատիպ հիմնահարցերին անդրադարձել են Գ.Նժդեհը, Ա.Ահարոնյանը, Ս.Վրացյանը, Ս.Շահումյանը, Ալ.Մյասնիկյանը, Լ.Շանթը, Հ.Ասատրյանը և ուրիշներ: Առկա են հիմնահարցերի լուծման բազմաթիվ տարբերակներ, սկսած ինքնամեկուսացումից մինչև աշխարհաքաղաքացիական դրսևորումների հիմնավորումներ: Քաղաքական հիմնահարցերի ենթատեքստում առկա գործնական-պրակտիկ մեխանիզմներում նկատելի կարևոր տեղ է հատկացվում մանկավարժական հիմնահարցերին: Այդ իրողությունները հաճախակի են ընդգծվել մեր մեծ մտածողների կողմից: Այսպես, Գ.Նժդեհը իր վերլուծություններում նկատում է. «Շատ բան խնայած կլինեք հայությունը – տառապանք, արյուններ..եթե հայ մտավորականությունը դեռ անցյալ դարի երկրորդ կեսից (19-րդ դ.-Ա.Շ.) երևան եկած լինեք ընդհանրապես պատմության, ի մասնավորի հայոց պատմության իմաստավորության լրիվ

սպառազինությամբ»¹: Բարձրացված հիմնահարցերը սոսկ մանկավարժական չեն, դրանք ընդլայնվում են ներառելով հասարակական-քաղաքակրթական խնդիրներ, որոնք ունեն մեր ժողովրդի համար թե՛ ռազմավարական և թե՛ մարտավարական նշանակություն: Այլ կերպ ասած, համազգային ողբերգության պատճառների վերլուծությունները հանգեցնում են ոչ միայն հասարակագիտական-մանկավարժական վերագնահատումների, այլև պատմական քաղաքակրթական զարգացումների վերաբժեքավորման: Դա առաջին հերթին, վերաբերում է 20-րդ դարի սկզբին ողբերգություններ ապրած հայ ժողովրդի անվտանգության ապահովմանը: Աշխարհագրական դիրքը, թշնամաբար տրամադրված հարևանները, դարավոր կրոնական, ազգային և այլ տիպի թշնամանքը, մեծ տերությունների հակասությունները խիստ փխրուն էին դարձնում հայության և հայ պետականության գոյության հիմքերը: Ահա նժդեհյան մտածմունքների առարկան, նրա խոհերի և վերլուծությունների կիզակետը: Հայկական պետականության և հայության անվտանգության հարցում յուրօրինակ հարթություն են կազմում սոցիալ-մանկավարժական հարցերը և հատկապես նեղ մանկավարժական հիմնախնդիրների առկայությունը: Այս հիմնահարցերը, ինչ խոսք, կապված են միմյանց հետ և կազմում են մի ամբողջություն: Մեզ այդ ամբողջությունից հետաքրքրում են մանկավարժական խնդիրների վերաբերյալ Գ.Նժդեհի մտորումները, որոնք, մեր կարծիքով, կազմում են մի ամբողջություն, անկասկած, խիստ հրատապ են, ունեն գործնական-քաղաքական նշանակություն: Գ.Նժդեհը հայության գոյության և նրա զարգացման խնդիրները ուղղակիորեն կապում է կրթական համակարգի բարեփոխումների հետ: Հին դպրոցը, նա գնահատում է որպես «գաղութային դպրոց»²: Այդ գնահատականը նա կատարել է, բնականաբար, ժամանակաշրջանի հայկա-

¹ Գ.Նժդեհ, Ընտիր երկեր, 2007, Երևան, էջ 219:

² Գ.Նժդեհ, Հատընտիր, 2006, Երևան, էջ 50:

կան դպրոցի և տեսական մանկավարժության խոր և համա-
կողմանի վերլուծության հիման վրա: Այն ամբողջությամբ
վերաբերում է և դաստիարակության ուղղվածությանը և «աշ-
խարհիկ ու գիտական գիտելիքներով նրա հագեցվածությա-
նը»¹: Մանկավարժության ժամանակակից հարացույցի ձևա-
վորվումը սկսվել է 17-րդ դարից: 19-20-րդ դարերում այն
հարստացավ նոր մոտեցումներով, գաղափարներով.
ճշգրտվեցին սովորողների տարիքային առանձնահատկոթ-
յունների վերաբերյալ պատկերացումները, լեզվամտածո-
ղության յուրահատկությունների մասին ըմբռնումները, գի-
տելիքների, կարողությունների նվազագույն ծավալի հարցը,
դպրոցի աշխարհիկ բնույթի հիմնահարցը, կրթության
հստակ աստիճանավորումը, մասնագիտական, պոլիտեխ-
նիկ կրթության և աշխատանքային դաստիարակության
հարցերը և այլն, որոնք իրենց ժամանակաշրջանին համա-
պատասխան ամբողջական տեսքի բերվեցին: Ինչ խոսք, հա-
մընդհանուր այս մանկավարժական մոտեցումները յուրա-
հատուկ դրսևորում էին ստանում տարբեր պետություննե-
րում, համապատասխանեցվում էին տվյալ երկրի առանձնա-
հատկություններին, եղած հնարավորություններին, ազգա-
յին, պետական շահերին, առաջնահերթություններին: Կրթա-
կան խնդիրը յուրահատուկ կազմակերպում է ստանում բազ-
մազգ երկրներում: Տիրապետող ազգը կամ ազգությունը,
բնականաբար, ի դեմս պետության կառավարման օղակների,
որոշում էր կրթության ուղղվածությունը՝ դարձնելով այն ի-
րենց ազգայնական քաղաքականության կցորդն ու միջոցը:
Այդպիսին էր կրթության ընդհանուր դրվածքը և՛ Արևմտյան
Հայաստանում, և՛ Արևելյան Հայաստանում: Թե՛ ցարական
Ռուսաստանը և թե՛ Օսմանյան կայսրությունը կրթության և
դաստիարակության խնդիրները որոշում էին ելնելով իրենց
մեծապետական, կայսերական շահերից: Մյուս կողմից
կրթության, դպրոցի կազմակերպման մեջ մեծ դեր ուներ եկե-

¹ Նույն տեղը, էջ 50:

դեցին: Այս երկու կայսրություններում էլ պետությունը և կրոնական կազմակերպությունները տարանջատված չէին: Տարանջատված չէին կրոնական կազմակերպություններից նաև դպրոցը, կրթությունը: Այս իրողությունները որոշում էին կրթության, դպրոցի բովանդակության հետ կապված հարցերը, նրա կազմակերպումը, տալով նրան որոշակի քաղաքական ուղղվածություն: 19-20-րդ դարերի սահմանագծում դպրոցական գործը և կրթությունը իրենց բովանդակությամբ կանխորոշվում էին նաև ժամանակի փիլիսոփայական, աշխարհայացքային մտածողությամբ: Պրագմատիզմը, թոմիզմը, բիհնվիորիզմը, դիալեկտիկական մատերիալիզմը, կոմունիստիկիզմը, սոցիալական վերակառուցողականությունը և այլ տեսություններ ակտիվորեն ներդնում էին «սեփական» մանկավարժական հարացույցները: Ընթանում էր նոր մանկավարժության և դպրոցի փնտրտուք: Այնուամենայնիվ, դպրոցը, կրթությունը մնում էին «սոցիալական անհավասարության ամրապնդման գործիք»¹՝ ազգամիջյան հարաբերություններում և թե՛ հասարակական-քաղաքացիական: Չունենալով սեփական պետություն՝ հայությունը զրկված էր կրթության, դպրոցի նկատմամբ պետական հոգածությունից: Ավելին, հետապնդվում էին առաջադեմ, հայրենասեր մանկավարժները, սահմանափակ էին հայագիտական առարկաների դասավանդման հնարավորությունները: Այսպիսի պայմաններում իրականացվող կրթությունն ու ուսուցումը չէին կարող բավարարել ժամանակի պահանջները, երբ երկրների սոցիալ-քաղաքական և տնտեսական հակասությունները բերում էին պատերազմներ և բազմաթիվ այլ արհավիրքներ: Չնայած այս իրողությանը՝ 20-րդ դարի սկզբներին տարածաշրջանի ազգություններից հայ ժողովուրդն ամենակրթվածն էր: Սակայն, ինչպես Գ.Նժդեհն է պատկերավոր ընդգծել հայ իրականության ունեցածը ընդամենը «գաղութային դպրոց» էր: Դա վերաբերում էր, ըստ էության, հայ իրակա-

¹ **З.Малькова**, Школа и педагогика за рубежом, М., 1987, с. 87.

նության կրթական համակարգի բոլոր բնութագրիչ պարամետրերին: Խոսելով հայ ժողովրդի պարտությունների, պատուհասած դժբախտությունների, ինչպես նաև գոյատևման, ինքնապաշտպանության, զարգացման և վերածննդի խնդիրների մասին՝ Գ.Նժդեհը կարևորում է «սոցիալապես...արդար», «բոլորի և ամեն մեկի համար...հոգեպես կատարելագործվելու ազատության» իրողությունները¹: Իհարկե, նա կարևորում է նաև քաղաքական, տնտեսական, տեխնիկական և այլ գործոնների դերը: Գ.Նժդեհը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում հայության ներքին բաժանումների վերլուծությանը, դասակարգման հիմք ընդունելով սոցիալ-մասնագիտական, քաղաքական, տնտեսական, «զգայա-գիտակցական» և այլ գործոններ²: Այս կտրվածքում ևս Գ.Նժդեհը կարևորում է դաստիարակության, հոգևոր նկարագրի փոփոխության, բարոյական կերպարի, ուսուցման և նմանատիպ իրողությունները: Այսպես, ամփոփելով պատմության նախորդ իրողությունները Գ.Նժդեհը ընդգծում է, որ վերջապես պետք է «գիտակցենք, որ ժողովուրդների բախտավորության ու դժբախտության, հզորության ու տկարության աղբյուրը գտնվում իրենց մեջ»³: Այս կապակցությամբ Նժդեհը կարևորում է ճանաչողության և ինքնաճանաչողության խնդիրը: Նա գրում է. «Մի ժողովուրդ, որ ինքն իրեն դեռ չի նվաճել (այդ ինքնանվաճումը հնարավոր է միայն ինքնաճանաչումի ճամփով), ընդունակ չէ մեծ գործերի»⁴: Ինչ խոսք այս իրողությունն ունի նաև մանկավարժական-կրթական հարթություն: Այդ «մեծ գործեր» հասկացության ներքո Գ.Նժդեհը նկատի ուներ ոչ միայն մեր ժողովրդին հասած աղետները, այլև դրանց հաղթահարումը, իսկական վերելքի ապահովումը: Սոցիալ-հասարակական կտրվածքով, այս իրողություն-

¹ Գ.Նժդեհ, Ընտիր երկեր, 2007, Երևան, էջ 225:

² Նույն տեղը, էջ 225:

³ Նույն տեղը, էջ 114:

⁴ Նույն տեղը, էջ 357:

ները իրացնում է մտավորականությունը: Մեծ է մտավորականության դերը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Այնինչ, հայ մտավորականության զգալի մասը, գրում է Գ.Նժդեհը, «չի հասկանում, որ էականը քաղաքական վարչաձևը չէ, այլ անհատի և զանգվածների վերածնունդը, հոգեփոխությունը»¹, երբ ժողովրդի մեծ մասի կյանքում «միահեծան կերպով իշխում են չարությունը, նախանձը, գոեհկությունը, որովհետև վերանորոգչական ճիգի, խանդի, ուրախության պակասը նրան դարձրել է զոհ հոգևոր վաղաժամ ծերության (չարություն), երկշտտության (նենգություն), սկեպտիկության (ժխտամոլության)»²: Եվ ժողովրդին, ընդհանրապես, և մտավորականությանը, մասնավորապես, «պակասում է նոր գիտակցությունը, նոր աշխարհըմբռնումը»³: Ինչպես տեսանելի է, Գ.Նժդեհը խիստ կարևորում է քաղաքական, գաղափարախոսական, բարոյական ուղղություններով դաստիարակության դերը: Դա վերաբերում է հասարակական գիտակցության արմատական վերակառուցմանը, հնարավոր է իրականացնել ինստիտուցիոնալ վերակառուցումների հիման վրա: Ինքնին հասկանալի է, որ պետական հոգածությունը էական գործոն է: Այսպես, եկեղեցին, ըստ Գ.Նժդեհի «վերագնահատումի պիտի ենթարկե քրիստոնեության սիրո իր սխալ ըմբռնումը...դադարի առաքիչություն համարել թուլությունը և սպանել մեր ժողովրդի կամքը»⁴: Այնուհետև, «մամուլը...չի կարողանում մեր կյանքի կնճիռները գտնել լուսաբանել... և այսպես ամբողջ տասնամյակներ...և ոչ ոք չի զգացել, թե այդպիսով մեղսակից է դառնում հայկական ողբերգության՝ վրիպեցնելով ժողովրդի ուշադրությունը իր փրկության միակ զենքից – ինքնապաշտպանությունից»⁵:

¹ Նույն տեղը, էջ 333:

² Նույն տեղը, էջ 334:

³ Նույն տեղը, էջ 334:

⁴ Գ.Նժդեհ., Հատընտիր, 2006, Երևան, էջ 65:

⁵ Նույն տեղը, էջ 67-68:

Ապա եզրակացնում է. «Ինչպես հայ եկեղեցին, նույնպես մեր մամուլը պետք է հոգեփոխվի...հրամայաբար պիտի հոգեփոխվեն նաև կուսակցությունները...»¹: Արդյունքում, ստեղծվել է հոգևոր դատարկություն. անտարբերություն, հոռետեսություն, հոգևոր անշարժություն և այլն և ամբողջացել է այն որպես մի «աղետալի մթնոլորտ...ուր կդաստիարակվեն անարի, փոքրոգի և պարտվողական սերունդներ միայն...որոնց ուժերի մեծագույն մասը սպառվում է վախի և անհանգստության մեջ»²: Գ.Նժդեհը, ըստ էության, ընդգծում է ոչ միայն հասարակական մթնոլորտի փոփոխության խնդիրը, այլև, որ ամենակարևորն է, բարձրացվում է նոր սերնդի դաստիարակության, նաև կրթության և ուսուցման նպատակի հարցը: Ամբողջացնելով մտքերը այս կապակցությամբ նա գրում է. «Մեր պարտությունները հոգեբանական էին, պարտվեցինք ոչ թե նրա համար, որ թվապես և տեխնիկապես թույլ էինք, տկար, այլ որովհետև այդպիսին էինք հոգեպես»³: Նույն միտքը նա ընդգծում է մի այլ կապակցությամբ. «Գլխավոր դերը ժողովուրդների պատմության մեջ խաղում են ոչ արտաքին պայմանները, ոչ քաղաքական կողմնորոշումը, ոչ էլ դիպվածները, այլ իրենց հոգեբանական նկարագիրը»⁴: Այս իրողությունների ուսումնասիրումը, նրանց ճիշտ պարզաբանումը, բնականաբար, ունի ոչ միայն հասարակական-քաղաքական նշանակություն, այլև գիտական-տեսական կարևորություն: Իր պատմական յուրօրինականությամբ, խնդիրների բարդությամբ ու ինքնատիպությամբ հայ իրականությունը ենթադրում է նոր մոտեցումներ: Ըստ էության, գիտատեսական նոր հարացույցի մասին է խոսքը: Պետք է ձևավորվի գիտատեսական նոր հասկացական մեխանիզմ, որով հնարավոր լինի առավել օբյեկտիվ ուսումնասիրել հայ իրականութ-

¹ Նույն տեղը, էջ 68:

² Նույն տեղը, էջ 70:

³ Նույն տեղը, էջ 62:

⁴ Նույն տեղը, էջ 72:

յունը իր առանձնահատկություններով: Գ.Նժդեհն ինքը դարձել է այդ մտածողության առաջին կրողներից մեկը: Շրջանառության մեջ են դրվել մի շարք նոր հասկացություններ, որոնք նորույթ են հասարակագիտական առկա՝ դասական և նոր դասական հարացույցների, գիտահետազոտական ծրագրերի համար: Այսպես, այդ հասկացություններից նշենք. ցեղակրոնություն, նրա դրսևորումները՝ ցեղակրոն շարժում, ցեղակրոն կյանք, ցեղը որպես հանրության մի մաս, նրա ընտրանի, ժողովուրդ հասկացության նոր ընկալումը, ցեղի տականք, ցեղային ապրելակերպ, հայրենապաշտ դաստիարակություն, ինքնապաշտպանության գաղափարախոսություն և այլն¹: Այո՛, հայ իրականությունը ինքնատիպ է իր խնդիրներով, հասարակական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, քաղաքակրթական-մշակութային և այլ հարաբերություններով, հոգևոր-հուզական աշխարհով և այլն: Այս ամենը նկատի ունենալով ֆրանսիացի ականավոր ընկերաբան Ս.Տիրացյանը, երբ հայ իրականությունը գնահատում էր որպես «բացառիկ, էկզիստենցիալ իրողություններով» իրականություն: Նա ևս առաջադրում էր ինքնատիպ լուծումների կարևորությունը, չկրկնվելու անհրաժեշտությունը, այլ երկրների կապակցությամբ հասարակական-քաղաքական որոշումների մեխանիկական փոխադրման վտանգավորությունը: Ըստ էության, հայ իրականության ինքնատիպության մասին է խոսում այն փաստը, որ մեր յուրօրինակ իրականությունը, չնայած մեր մտավորականների, կուսակցությունների սեփական գործունեության խիստ գնահատականներին և պահանջներին, ամենաբազմազան քաղաքական հոսանքներ ու կուսակցություններ է ձևավորում, առաջադրում իրարամերժ լուծումներ: Այս կապակցությամբ, իրավացիորեն Գ.Նժդեհը մատնանշում է. «Պետք է երես դարձնել բոլոր վարդապետություններից...կեղծ ու մոլար հայտարարել բոլոր կրոն-

¹ Նույն տեղը, էջ 21-53, 145-266 և այլն:

ները, բարոյականները, սկզբունքները...»¹: Դա վերաբերում է, բնականաբար, և՛ մարքսիզմին ու պրագմատիզմին, և՛ սոցիալ-քաղաքական մյուս տեսություններին: Ըստ Գ.Նժդեհի՝ այդ բոլոր վարդապետությունները չէին լուծում հայ իրականության առաջ ծառացած խնդիրները, «...հաշտ չեն հայրենասիրության հետ,...չեն դարբնում կուռ կամքեր, ուժեղ նկարագիրներ, արիներ...»² Այնինչ, Գ.Նժդեհը առաջարկում է ինքնատիպ լուծումներ. «...հայրենիքը՝ ընդհանուր աստվածություն..., ...հայրենասիրությունը՝ որպես զգացում և գիտակցություն, պաշտամունք և կրոն. . . հայրենիքից դժգոհելը, որպես հոգու հիվանդության...» ախտորոշումը, ապա «որպես թույլ և տհաս մտահոգեպես, բարեգործներ և հովանավորներ ենք փնտրել...»³ Ակնհայտ է Գ.Նժդեհի կողմից հայ իրականության խորքային ըմբռնումը: Առաջադրելով համընդհանուր ինքնապաշտպանության գերխնդիրը Գ.Նժդեհը հետաքրքիր գիտական, ռազմա-քաղաքական լուծում է գտնում. դա «վճռական մենակի»⁴ հոգեբանության, նրա ռազմաքաղաքական նկարագրի ընդգծումն է: Այս և նմանատիպ ընդգծումները լայն հասարակական, գաղափարախոսական, քաղաքակրթական-մշակութային, կրթական-մանկավարժական հիմնահարցեր են բացահայտում, որոնց արծարծումը և քննարկումը և գիտական հետաքրքրություն է ներկայացնում և ունի կարևոր գործնական նշանակություն: Այսպիսով, պարզ են մանկավարժական հիմնախնդիրների նմեղեցյան նախադրյալներն ու հիմքերը: Այս հասարակական-քաղաքական իրադրությունը, հայ հասարակության հոգեբանական, գաղափարա-գիտակցական կացությունը իրենցով պահանջում էին նոր դպրոց: Նախկին դպրոցը Գ.Նժդեհը բնութագրում է որպես «գաղութային» իր բոլոր պարամետրերով. նպատակնե-

¹ Նույն տեղը, էջ 50:

² Նույն տեղը, էջ 50:

³ Նույն տեղը, էջ 50, 59, 63:

⁴ Նույն տեղը, էջ 62:

րով, առարկաների կազմով, մեթոդաբանությամբ, օգտագործվող մեթոդներով ու հնարներով, դպրոցի բարոյագաղափարական մթնոլորտով, ուսուցիչների քաղաքական-բարոյական նկարագրով և այլն¹: Այսպես, ըստ Գ.Նժդեհի, դպրոցներում գոյություն չունի «որևէ գերիշխող գաղափար» «պակասում է բոլորին-դպրոցին...այն աստվածաշունչ զգացումը, որն իր մեջ խտացնում է մարդկային բոլոր բարձր հասկությունները», ավելին «չկա բարձր հայրենասիրությունը, հայրենապաշտությունը չկա...»²: Իսկ ինչ գաղափարական-քաղաքական մթնոլորտ էր տիրում հայկական դպրոցներում, Գ.Նժդեհը նկատում է. «Ամեն ինչից մի քիչ...» և «...վարդապետություններ, որոնք հաշտ չեն հայրենասիրության հետ», այնինչ հայրենասիրությունը պետք է լինի «զգացում և գիտակցություն... պաշտամունք, կրոն»³: Այսպիսով, հասարակական, քաղաքական և այլ անբարենպաստ պայմանները որոշեցին 19-20-րդ դարերի սահմանագծում գտնվող հայկական կրթական համակարգի և հատկապես հայկական դպրոցի որակական և քանակական բնութագրերը: Ըստ էության, այդ դպրոցը չէր լուծում ժամանակի պահանջներին համապատասխան դաստիարակչական և կրթական խնդիրներ, իր կրավորական պահվածքով խորացնում էր քաղաքական-հոգևոր անկումը, ճգնաժամը: «Չկա ավելի զարհուրելի բան, քան աննպատակ գոյությունը: Դա մահացու հանցանք է», - գրում է Գ.Նժդեհը⁴: Նպատակը իմաստավորում է ներկան և որոշում անելիքը ապագայում: Ավելին, «հոգեպես մանրանում և ճահճանում են միայն ներկայով կլանված հասարակությունները, անցյալի փառքին խառնել է պետք ապագայի հույսերը», որի արդյունքում կձևավորվի «բարոյական մթնոլորտ՝ մտքերի, գաղափարների, զգացումների տեղատվութ-

¹ Նույն տեղը, էջ 50:

² Նույն տեղը, էջ 50:

³ Նույն տեղը, էջ 50:

⁴ Նույն տեղը, էջ 48:

յուն և մակընթացություն»¹: Հասարակագիտական, քաղաքագիտական, մանկավարժական այսպիսի հարացույցային ընկալման դեպքում բյուրեղանում են նոր դպրոցի պարամետրերը: «Դաստիարակությունը կարող է մեզ տալ անհրաժեշտ հատկություններն այն ազգերի, որոնք չեն ուզում մեռնել»,² ընդգծում է Գ.Նժդեհը²: Դաստիարակության գերխնդիրը ըստ Գ.Նժդեհի հայրենապաշտության և հայրենասիրության ձևավորումն է, որն ապահովելու է հայրենիքի փրկությունը: Ընդհանուր հասարակական պահանջ լինելուց բացի, այն դիտարկվում է որպես կրթական համակարգի, առաջին հերթին դպրոցի հիմնական խնդիր, նպատակ³: Այստեղից նա բխեցնում է հասարակական-մանկավարժական գործընթացի սկզբունքները, մեթոդները, մոտեցումները, անգամ առարկայացանկը: Գ.Նժդեհը հիմնավորում է նոր, ըստ էության, ինտեգրված առարկայի՝ հայրենագիտության անհրաժեշտությունը⁴: Իհարկե, այն առաջին հերթին թելադրված էր ինքնապաշտպանության կազմակերպման պահանջներով, ապա համազգային բարոյահոգեբանական նկարագրի արմատական բարեփոխման խնդիրներով, ժողովրդի կենցաղում, հասարակական ապրելակերպում արմատացած բացասական ու հոռի սովորույթների վերացման հրամայականով և այլն: Ըստ Նժդեհի, Հայրենագիտություն առարկայի բովանդակությունը կազմելու են հայրենի ժողովրդի և երկրի մասին գիտելիքները,⁵ որոնց բնույթը պետք է լինի առանձնահատուկ «ջերմությունն ու հոգին»: Պատահական չէ, որ Գ.Նժդեհը դպրոցը ներկայացնում է և՛ որպես ամբիոն, և՛ որպես տաճար⁶: Այդ գիտելիքները լինելու են «մեր պատմության բովանդակ գեղեցկությունն ու վեհությունը...քամված» և

¹ Նույն տեղը, էջ 49:

² Նույն տեղը, էջ 49:

³ Նույն տեղը, էջ 50:

⁴ Նույն տեղը, էջ 51:

⁵ Նույն տեղը, էջ 51:

⁶ Նույն տեղը, էջ 51-52:

«չպետք է լինեն մութ և շփոթ տեղեկություններ...ցամաք և անհողի...այնպես, կարծես նկարագրվում է Սահարայի անապատը կամ հեռավոր կղզի»¹: Այնուհետև զարգացնում է իր մտքերը դասավանդման մեթոդների շուրջ. «Անսահման երկյուղածությամբ և անսահման քաղցրությամբ պիտ դասավանդվի հայրենագիտությունը» ապա «սրտի և մտքի կրակով պիտ խոսվի...հրահրել վերջինի պաշտամունքը մանկական հոգիների մեջ»²: Հենվելով ժամանակի իմացաբանության ձեռքբերումների վրա՝ Գ.Նժդեհը դասավանդման մեթոդաբանության մեջ կարևորում է իմացության էմպիրիկ և ռացիոնալ աստիճանների փոխընթացման սկզբունքը: Այսպես, նա գրում է. «Փաստերի հետ խորհրդածություններ, որոնք հարստացնելով հիշողությունը, բեղմնավորեին նաև միտքը, ջերմացնեին նաև սրտերը»³: Այս միտքը նա ընդգծում է բազմաթիվ անգամ. այսպես, օրինակ, Գ.Նժդեհը մի այլ կապակցությամբ գրում է. «Դպրոցը...փաստերից ավելի բարձր գաղափարներ պիտի տա»⁴: Ընդհանուր մեթոդաբանության մեջ Գ.Նժդեհը կարևորում է խոսքի կուլտուրան, դասավանդողի ներշնչվածությունը՝ «ոչ միայն որպես գեղեցիկ խոսք... այլև զգացում և գիտակցություն»⁵: Գ.Նժդեհը, իհարկե, չի մոռանում օրինակի անփոխարինող դերը թե՛ դաստիարակության և թե՛ ուսուցման գործընթացներում: Նա գրում է, «Բարոյական մեծություններով և փառքի գործերով հարուստ է մեր պատմությունը, նա ունի փառահեղ էջեր՝ մեր Ոսկեդարը... Եղիշեի և իր ժամանակակիցների դարը...Ավարայրը...մարդկային ամենավեհափառ գործերից մեկը...», ապա շարունակում՝ «անմահ էջեր ունի և մեր նորագույն պատմությունը՝ նոր և հերոսական Ավարայրներ, շատ և անմահ մեռելների մի ամբողջ

¹ Նույն տեղը, էջ 52:

² Նույն տեղը, էջ 52-53:

³ Նույն տեղը, էջ 52:

⁴ Նույն տեղը, էջ 50-52:

⁵ Նույն տեղը, էջ 50:

պլեադա-նահատակներ, մեծ իրենց գործերով-հրահանգիչ իրենց բարձր նկարագրով»¹: Նկատված մեթոդները, հնարների բազմազանությունը վառ կերպով ապացուցում են նաև նմոշեյան դաստիարակության և ուսուցման սկզբունքների ինքնատիպությունը: Ընդգծենք այդ սկզբունքներից մի քանիսը. դաստիարակության և ուսուցման կապը իրականության հետ, արագ արձագանքը ժամանակի խնդիրների նկատմամբ, սովորողների պահանջների նկատմամբ ուշադրությունը, գիտականությունը, մատչելիությունը, բարոյագեղագիտական, գաղափարական բարձր մակարդակը, հոգեբանական-տարիքային առանձնահատկությունների հաշվառումը և այլն: Ընդգծենք մի կարևոր հանգամանք ևս, Գ.Նժդեհը, լինելով իրապաշտ անձնավորություն, իր մտածողությամբ և աշխարհայացքով, կրթության ոլորտում քայլում էր դրա տրամաբանությանը համընթաց: Այսպես, նա կրթության, մանկավարժության օրվա հարցերին նայում է ապագայի տեսանկյունից, ապագա հասարակական հարաբերությունների անհրաժեշտ մարտահրավերների դիտակետից: «Կգա ժամանակը, որ ամեն բանից առաջ կմտածեն դաստիարակության մասին...ընդունեք, որ նա եկել է...եկել է արդեն մեզ համար...նման դաստիարակությամբ պատրաստենք մեր ապահով ապագան», - գրում է Գ.Նժդեհը²: Այդ ապագա կրթադաստիարակչական հայեցակարգը ամրագրվում է հատկապես «հայրենապաշտ և գաղափարապաշտ» երիտասարդության անկայությամբ, որով ամբողջանում է երկրի, ազգի «ապագան և փրկությունը»³: Փիլիսոփայական-աշխարհայացքային կտրվածքով ապագայի տեսլականը իր իռացիոնալ տեսքով դրսևորվեց որպես բողոք տիրապետող ռացիոնալ մտածողության դեմ: Ի վերջո, այն դրեց հիմքերը ապագա նորդասական կամ հետդասական մանկավարժության ու կրթության, որոնք

¹ Նույն տեղը, էջ 51-60:

² Նույն տեղը, էջ 52:

³ Նույն տեղը, էջ 52-55:

ձևավորեցին նոր դպրոցն ու կրթական համակարգը: Ավելորդ չէ ասել, որ նոր փիլիսոփայական մտածողությունը համակարգեց և ասպարեզ հանեց նոր հասկացություններ, ըստ էության, նոր, չնկատված երևույթների ընկալումներ և պատկերացումներ: Հասարակական, տնտեսական, քաղաքական և այլ փոփոխություններն սկզբնավորում էին նոր աշխարհակարգ իր ենթահամակարգերով, թափ էր առնում ազգային-ազատագրական պայքարը, ձևավորվում էին համապատասխան ոլորտները՝ հասարակական գիտակցության իր ձևերով, կրթական համակարգով և այլն: Հոգևոր-գիտակցական ոլորտում քաղաքացիական իրավունք են ձեռք բերում նոր հասկացություններ՝ հասարակական-քաղաքական ոգի, ազգային ոգի, հայրենապաշտություն, ազգային դպրոց, ազգային դաստիարակություն, հայրենաշունչ կրթություն, առաջանում է անցյալի, պատմության վերաիմաստավորման նոր պահանջ և այլն: Այս և նմանատիպ գաղափարներն ընդգրկել էին հասարակական գիտակցության բոլոր ուղղությունները, հասարակական գիտությունների ոլորտները, մշակույթը և այլն:

Դ.Վարուժանը, Լ.Շանթը, Ն.Ադունցը, Հ.Մանանդյանը, Լեոն, Ա.Ահարոնյանը, Սիամանթոն, Հ.Թումանյանը և շատ ու շատ ուրիշներ, իրենց ստեղծագործություններով դնում էին հիմքերը Հայոց հասարակական կյանքի նոր Վերածննդի: Այս համազգային շարժման մեջ իր ինքնատիպ տեղն ունի Գ.Նժդեհը:

ՄՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում Գ. Նժդեհի տեսակետն է կրթության և դպրոցի վերաբերյալ: Ժամանակի կրթական համակարգին և հայկական դպրոցի նկատմամբ քննադատական մոտեցում ցուցաբերելով, Գ. Նժդեհը մշակեց և ձևավորեց կրթության համընդհանուր դոկտրին: Այս մոտեցման կենտրոնը հայրենասերների սերունդը կրթելու գաղափարն է: Լինելով լայնորեն մտածող մարդ՝ Գ. Նժդեհը ներկայացնում է նոր գաղափարներ, հասկացություններ կրթության ոլոր-

տում, որոնք արժանի են լուրջ և համակողմանի մոտեցման և քննարկման: Իրականում, սա ոչ միայն նոր դպրոցի նախագիծն է իր բոլոր հատկանիշներով, այլև նոր աշխարհայացք և գաղափարախոսություն:

***Բանալի բառեր՝** դաստիարակություն, ինքնադաստիարակություն, վերադաստիարակություն, դաստիարակության նպատակներ և միջոցներ, դաստիարակության ազգային և ցեղային խնդիրներ, հոգեբանական, մանկավարժական, քաղաքական և մշակութային բարեփոխումներ, ազգային անվտանգություն, ինքնապաշտպանություն, բարեփոխված հայ, բարեփոխված քաղաքացի*

РЕЗЮМЕ

■ АПОТ ШАИНЯН

ВОПРОСЫ ВОСПИТАНИЯ В ОБЩЕСТВОВЕДЧЕСКИХ ВЗГЛЯДАХ Г.НЖДЕ

В статье проведена попытка представить взгляды Г.Нжде относительно воспитания и образования. Проявляя критикующий подход к образовательной системе того времени и армянской школе, Г. Нжде развивал и формировал целостную доктрину относительно образования. Центром данного подхода являются идеи воспитания поколения патриотов. Будучи широко мыслящим человеком, Г. Нжде вносит новые идеи, понятия в область образования, которые достойны серьезному и всестороннему подходу и обсуждению. По сути, это не только является проектом новой школы со всеми своими атрибутами, но и новым мировоззрением и идеологией.

***Ключевые слова:** образование, самодисциплина, возрождение, цели и средства воспитания, национальные вопросы образования, психологические, педагогические, политические и культурные реформы, национальная безопасность, самооборон*

SUMMARY

■ **ASHOT SHAHINYAN**

PROBLEMS OF UPBRINGING IN SOCIAL SCIENTIFIC VIEWS OF G. NZHDEH

In the paper it has been attempted to present the views of G.Nzhdeh concerning to upbringing and education. Having a criticizing approach to temporary educational system and Armenian school, G.Nzhdeh developed and formed the complete doctrine of education. Ideas of upbringing of patriotic offspring became the center of this approach. Being broad-minded person, G.Nzhdeh inserted new ideas, principles into educational aspect that are worthy to a serious and comprehensive approach and discussion. Most apparently, it is not only new school project with its all attributes, but also new world-view and ideology.

Key words: *education, self-discipline, rebirth, goals and means of education, national and tribal issues of education, psychological, pedagogical, political and cultural reforms, national security, self-defense, reformed Armenian, reformed citizen*

**ԴԵՌԱՀԱՍԻ՝ ԱՊԱԳԱ ԶԻՆՎՈՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏԻՊՈՎ
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՎԱՐՔԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

*ԼԻԴԱ ԱՐԱՄՅԱՆ, ՍՈՆԱ ՄԱԿԻՉՅԱՆ,
ՆՎԱՐԴ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ*

Դեռահասության տարիքը, ինչպես հայտնի է, անձի ձևավորման ամենավճռական շրջաններից մեկն է: Այն դժվար տարիք է համարվում դեռևս Ժան-Ժակ Ռուսսոյի ժամանակներից: Այս տարիքում են հիմնականում սկսում առաջին անգամ ի հայտ գալ անձի սոցիոախտածին միտումները, բնավորության հիվանդագին դրսևորումները՝ փսիխոփաթիաները, հոգեկան հիվանդությունները (Է.Կրեչմեր, Ա. Ֆրոյդ, Է. Էրիքսոն, Հ.Ռեմշմիդտ և ուրիշներ), սուիցիդները: Երեխաները հաճախ դառնում են անկառավարելի, սրվում են հարաբերությունները ծնողների և ուսուցիչների հետ (Ս.Հոլ, Լ.Ս.Վիգոտսկի, Դ.Բ.Էլկոնին, Լ.Ի.Բոժովիչ և ուրիշներ): Այս ամենի շնորհիվ դեռահասությունն առանձնահատուկ տեղ է գրավում զարգացման հոգեբանության մեջ: Կան նաև այս ճգնաժամի հետ կապված մի շարք կարևոր հարցեր, որոնք գրեթե հետազոտված չեն: Այդ հարցերից է անձի անհատական առանձնահատկությունների դերը ճգնաժամի գործընթացում:

Բնավորությունը սովորաբար սահմանվում է որպես մարդու կայուն հոգեկան հատկությունների անհատական համակցություն, որը պայմանավորում է տվյալ սուբյեկտի համար տիպական վարքի եղանակները որոշակի կենսական հանգամանքներում և պայմաններում: Մարդու բնավորությունը պայմանավորված է նրա հասարակական կեցությամբ¹:

¹ Психологический словарь. Под ред. А.В. Петровского и М.Г. Ярошевского. М.: Политиздат, 1990, с. 396.

Դեռևս հնագույն ժամանակներից առաջարկվել են մարդու բնավորության բազմաթիվ տիպաբանություններ: Հին աշխարհում լայն տարածում էր ստացել Արիստոտելի աշակերտ Թեոֆրաստի տիբանությունը, որը կառուցված էր մի մարդու որևէ վառ արտահայտված հատկության վրա: Օրինակ՝ նա առանձնացնում է մարդկանց այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են կասկածատվությունը, քծնողությունը, անտակտությունը¹: Բնավորության տիպաբանություններ են առաջարկել Ջ. Ֆրոյդը, Օ. Ռանկը, Էդ. Շպրազները, Է. Ֆրոմը, Կ. Հորնին, Կ. Լեոնհարդը և շատ ու շատ ուրիշներ: Կ. Հորնին առանձնացնում է մարդկանց հետևյալ տիպերը՝

Զիջող տիպ - այս մարդիկ ձգտում են դեպի ուրիշները, իրենց կախյալ են զգում մարդկանցից: Նրանք ահեղի պահանջ ունեն սիրվելու, խրախուսվելու և այնպիսի մեկի, որն իր վրա վերցնի նրանց ողջ կյանքի պատասխանատվությունը:

Ագրեսիվ տիպ - այս մարդիկ բոլորի մեջ թշնամի են տեսնում: Նրանց կյանքը պայքար է բոլորի դեմ: Չնայած այսպիսի դիրքորոշմանը՝ նրանք մարդկանց հետ արտաքինից բարեհամբույր են:

Մեկուսացած տիպ - միայնակության ձգտումն այս մարդկանց ամենահզոր պահանջմունքներից է: Ուրիշների հետ հարաբերություններում նրանք միշտ ձգտում են հուզական դիստանցիա պահպանել: Նրանց անհասկանալի են մարդկանց ապրումները, հույսերը, ձգտումները²:

Հոգեվերլուծական տիպանության առաջին ուրվագիծը Ջ. Ֆրոյդը տվել է 1908 թ. «Բնավորությունը և անալ էրոտի-

¹ **Урванцев Л.П.** Психология соматического больного. Ярославль: изд-во Институт "Открытое общество", 2000. С. 228-232.

² **Խուրդյան Ս. Ս.,** Մարդկանց հոգեբանական տիպերը Հոգին, հոգեբանական տարեգիրք, Եր. 1994, Ա, Բ էջ 27-43:

կան» հողվածում: Հետագայում այդ տիպաբանությունը զարգացրեցին Ֆրոյդի աշակերտներ Օ.Ֆենիչելը, Կ.Աբրահամը և ուրիշները: Հոգեվերլուծության մեջ բնավորության տիպերը դասակարգվում են մի կողմից հոգեսեռական զարգացման փուլերի հիման վրա (օրալ, անալ, ուրետրալ, ֆալլիկ, գենիտալ), մյուս կողմից՝ բնավորության հոգեախտաբանական դրսևորումների դիրքերից (կոմպուլսիվ, նարցիսական, շիզոիդ, պարանոիդ, հիստերոիդ, շիզոիդ և այլն):

Գ.Բլյումը հետևյալ կերպ է բնութագրում հոգեվերլուծության մեջ ընդունված բնավորության տիպերի գծերը:

Օրալ բնավորություն: Այս բնավորությունն ունեցող մարդն ինքնահարգանքը պահպանելու համար ծայրահեղորեն կախված է ուրիշներից, դեպրեսիայի վիճակը հաղթահարում է սնունդ ընդունելու միջոցով: Մերը հավասարեցված է սննդին կերակրման հետ ինֆանտիլ զուգորդման հետևանքով: Միային զեղումների և նարցիսական պահանջմունքների միջև բախումը կարող է նույնիսկ ֆիզիոլոգիական դրսևորում ունենալ, ինչպես օրինակ՝ ստամոքսափայտի սեկրեցիայի աճ, ինչը բնորոշ է ստամոքսի խոց ունեցող մարդկանց: Ֆենիչելը օրալ շրջանի թողտվության հետ է կապում ի հայտ եկող լավատեսությունն ու ինքնավստահությունը, որն առկա է, երբ անհատին ոչ մի վտանգ չի սպառնում: Իսկ օրալ շրջանում դեպրիվացիան հանգեցնում է հոռետեսության և սադիստական դիրքորոշման: Ընդգծված առատաձեռնությունն ու ժլատությունը ծագում են օրալ էրոտիզմից: Նվերներին բացառիկ նշանակություն է տրվում: Լրացուցիչ օրալ գծերից Ֆենիչելը նշում է հետաքրքրասիրությունը (որպես սովածության փոխարինող), շատախոսությունը, անզսպվածությունը, շտապողականությունը, համառորեն լռելու հակումը:

Անալ բնավորություն: Մեծերի անալ բնավորությանը բնորոշ հիմնական գծերից են խնայողությունը, նյարդայնությունը, բժախնդրությունը կամ, ավելի պարզ ասած, ժլատությունը, համառությունը մաքրասիրությունը: Անալ բնավոր-

րությամբ մարդը կարող է վայրկյանների ճշգրտությամբ պարտաճանաչ լինել կամ ծայրահեղորեն անհուսալի:

Ուրետրալ բնավորություն: Ուրետրալ բնավորության տարբերակիչ գծերն են մրցակցության հակումը և փառասիրությունը: Երկու գծերն էլ ամոթի զգացման հակազդումն են:

Ֆալլիկ բնավորություն: Ֆալլիկ բնավորություն ունեցող մարդիկ իրենց պահում են անհոգ, վճռական, ինքնավստահ ձևով: Այդպիսի վարքը չգիտակցված պաշտպանական հակազդումն է մանկության շրջանում չհաղթահարված կաստորացիայի վախի: Այս բնավորությունն ունեցող մարդն ապրում է իր վրա հարձակման վախով, այդ պատճառով էլ առաջինն ինքն է հարձակվում:

Վիրավորված հպարտությունը հաճախ դրսևորվում է սառը զսպվածության, խորը դեպրեսիայի կամ ուժեղ ագրեսիվության ձևով: Կախյալ վիճակին չհամակերպվելը և իշխելու ձգտումը հիմնվում են վախի վրա: Այս դեպքում էլ նարցիսիզմը հիմնական բնութագիրն է:

Գենիտալ բնավորություն: Էներգիայի լիցքաթափման արգելափակումը և դրա բացասական հետևանքները վարքի վրա դադարում են: Դա միաժամանակ հանգեցնում է հասուն սիրային հարաբերությունների և ամբիվալենտության հաղթահարմանը: Հուզական կյանքի արգելքի փոխարեն էգոն բնականորեն արտահայտում է հույզերը որպես ամբողջական անձնավորության բաղկացուցիչ մաս¹:

Գործնական հոգեբանության, հոգեթերապիայի և հոգեբուժության մեջ առավել տարածված են բնավորության շեշտվածության և փսիխոպաթիաների վրա հիմնված տիպաբանությունները (Պ.Բ.Գանուշկին, Կ.Լեոնիսարդ, Ա.Ե.Լիչկո): Ընդ որում, փսիխոպաթիաներն ավելի շատ բնութագրում են անձին ախտաբանական տեսանկյունից, այն դեպքում, երբ բնավորության շեշտվածության տիպաբանությունները բնութագ-

¹ **Блюм Г.** Психоаналитические теории личности. М.: Изд. КСПБ, 1996, с. 207-212.

րում են առողջ անձնավորությամբ: Այս հանգամանքից էլնելով էլ մենք ստորև կներկայացնենք բնավորության շեշտվածության տիպաբանությունները:

Հիպերտիմ շեշտվածություն - տրամադրությունը միշտ բարձր է, ինքնավստահ են, ինքնուրույն, շփվող, խիստ ակտիվ են, անընդհատ փոփոխություններ են սիրում, իրենց ուժերը գերազնահաստում են, սիրում են ռիսկը:

Ցիկլոիդ շեշտվածություն - այս տիպին բնորոշ են տրամադրության տատանումները՝ հիպերտիմ և սուբդեպրեսիվ տարբերակներով: Մարդը մի շրջան անկումային տրամադրության մեջ է, մի շրջան՝ խիստ բարձր: Տրամադրության անկման շրջանում նրանք ինքնամփոփ են դառնում, անկենսունակ, ախորժակը փակվում է, աշխատունակությունն՝ ընկնում: Սակայն ընդհանուր առմամբ նրանց բնորոշ է նախաձեռնողականությունը, կենսախնդրությունը, շփվողականությունը, բայց նաև՝ անկայունությունը:

Հաբիլ շեշտվածություն - դրսևորվում է տրամադրության ծայրահեղ անկայունությամբ: Ակտիվությունը, աշխատունակությունը, մարդկանց հետ շփումը, ինքնազգացողությունը լիովին կախված են տրամադրությունից: Ընդ որում, տրամադրությունը փոխվում է խիստ հաճախ, առանց պատճառների և չափազանց կտրուկ: Այս մարդիկ սիրում են, որ իրենց նկատմամբ ուշադիր լինեն, զգացմունքային են, շփվող, բարեհոգի:

Ասթենո-նևրոտիկ շեշտվածություն - մանկուց զանազան նյարդային խնդիրներ են ունենում՝ վատ քուն, վախեր, կամակորություններ և այլն: Այս բնավորության մարդիկ հաճախ են ունենում հիպոխոնդրիկ տագնապներ, աֆեկտիվ բռնկումներ, արագ են հոգնում, նյարդային են: Միևնույն ժամանակ այս մարդիկ կարգապահ են, ճշտապահ, պատասխանատու:

Զգայուն տիպ - խիստ տպավորվող են, վախկոտ, ամաչկոտ, խուսափում են նոր ծանոթություններից, սակայն նրանց հետ, ում ճանաչում են ակտիվ են ու շփվող: Խիստ պատաս-

խանատու են, բարոյական բարձր պահանջներ են դնում իրենց և ուրիշների առաջ: Նրանց հետաքրքրում է ինտելեկտուալ-գեղագիտական ոլորտը: Ինքնագնահատականն օրյեկտիվ է:

Փսիխասթենիկ շեշտվածություն - հակված են ինքնավերլուծությունների և ինքնաքննադատության, տազնապային են, ինտելեկտուալ, անընդհատ մտածում են, դժվարանում են որոշումներ կայացնել, անինքնավստահ են, խուսափում են պատասխանատու գործերից, ճշտապահ են:

Շիզոիդ շեշտվածություն - ինքնամփոփ են, խուսափում են մարդկանցից, լռակյաց են, ունենում են շփման լուրջ դժվարություններ, դժվար են հասկանում են դիմացինին, ապրումակցում մարդկանց, ինտելեկտուալ են, սթրեսների պարագայում կարող են մեկուսանալ, տրվել երևակայությամբ:

Էպիլեպտիդ շեշտվածություն - բռնկուն են, ագրեսիվ, հաճախ են թշամական ապրումներ ունենում և լիցքաթափվում ուրիշների վրա: Մանրախնդիր են, կարգապահ, մաքրասեր, խնայող, իներտ, ինքնուրույն են, հակված են խաղամոլության:

Հիստերոիդ շեշտվածություն - եսակենտրոն են և ցուցադրական, ձգտում են ուշադրության կենտրոնում լինել, ներշնչվող են, ցուցադրական հուզականություն են դրսևորում, անկեղծ զգացմունքները բացակայում են: Հաճախ են դիմում կեղծիքի իրենց անձը բարձրացնելու նպատակով, ինֆանտիլ են, ձգտում են օրիգինալության, բայց այդ օրիգինալությունը զուտ տպավորություն գործելուն է ուղղված և ինչոր մեկին նմանակման արդյունք է:

Անկայուն տիպ - ծույլ են, չեն սիրում աշխատել, սովորել. կամագուրկ են, ձգտում են հաճույքների: Խուսափում են պատասխանատվությունից, ձգտում են հսկողությունից դուրս լինել, շփվող են, մարդկանց հետ բաց, խոր զգացմունքներ չեն դրսևորում:

Կոնֆորմ տիպ – կոնֆորմիզմ են դրսևորում, ձգտում են լինել այնպիսին, ինչպիսին ուրիշները, մտածել բոլորի նման, անքննադատ կարող են ընդունել կամ մերժել նորը՝ կախված շրջապատի կարծիքից, սեփական կարծիք չունեն, պահպանողական են, խուսափում են փոփոխություններից:

Գործնական հոգեբանության մեջ անձի առանձնահատկությունների հետազոտման համար ավելի ինֆորմատիվ են համարվում բնավորության և դրա շեշտվածության հետազոտությունները: Այս մոտեցումն էլ ելակետային դարձավ մեր հետազոտությունների համար:

Հետազոտությանը մասնակցել է 13-15 տարեկան հանրակրթական դպրոցի 7-9 դասարանների 124 աշակերտ: Դեռահասների բնավորության առանձնահատկությունները բացահայտելու նպատակով կիրառել ենք Կ. Լեոնիարդի՝ բնավորության ակցենտուացիայի բացահայտման մեթոդիկան:

Համեմատական հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ դեռահասության ճգնաժամի սուր ընթացք ունեցող անձանց (23 դեռահաս) շրջանում դեռահասության վատ արտահայտված շեշտվածություն ունեին բոլոր հետազոտվածները (Կ.Լեոնիարդի թեստով հավաքել էին 18-ից բարձր բալեր): Նրանցից մեկից ավելի շեշտվածություն ունեին 16-ը (սուր ճգնաժամ ունեցողների 69%-ը), որոնցից երկու շեշտվածություն ունեին 14 դեռահաս, իսկ 2-ը (8%) ունեին երեք արտահայտված շեշտվածություն: Դեռահասներից 7-ի մեջ առկա էր բնավորության շեշտվածություն:

Վերլուծելով հետազոտության արդյունքները՝ հանգեցինք եզրակացության, որ կարելի է հստակորեն առանձնացնել դեռահասության ճգնաժամի դրսևորման երեք մակարդակ՝ մեղմ, սուր, միջին սրության:

Հետազոտված դեռահասների 20-25% -ի մեջ ճգնաժամը սուր ընթացք է ունենում, որն էլ բնութագրվում է բարձր տագնապայնությամբ, սոցիալական հարմարման դժվարություններով:

Նման բնութագրերը տղաների շրջանում կարող են բանակում զինծառայության պայմաններին հարմարվելու կամ դժվարությամբ հարմարվելու, կարգապահության խախտումների, ոչ կանոնադրային փոխհարաբերությունների, ինքնախեղումների, բռնությունների հիմք դառնալ: Մեր համոզմամբ, անհրաժեշտ է մինչև զորակոչը, կցագրման գործընթացից սկսած ուսումնասիրել զորակոչիկների հոգեբանական առանձնահատկությունները, վերհանել այն թիրախային համակարգը, ովքեր զորակոչվում են բանակ և բնութագրվում են բարձր տաղնապայնությամբ, սոցիալական հարմարման դժվարություններով, դեզադապտիվ, սուիցիդալ վարքով և իրականացնել կանխարգելիչ հոգեբանական աշխատանք, իսկ զինծառայության ընթացքում, մասնավորապես սկզբնական շրջանում, ցուցաբերել առավելագույն ուշադրություն, իրականացնել անհատական մանկավարժահոգեբանական խորհրդատվական, շտկողական և վերականգնողական աշխատանքներ, ինչը այլ ուսումնասիրությունների խնդիր է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացված են դեռահասության ճգնաժամի առանձնահատկությունները, ուսումնասիրությունների տվյալները, որոնք ապացուցում են, որ հնարավոր է լիովին վերահսկել դեռահասության ճգնաժամի դրսևորումների ծանրությունը, եթե բացահայտվեն դեռահասների հոգեբանական բնութագրերը և որոշվի՝ արդյոք համահարաբերակցային կապ կա՞ ճգնաժամային գործընթացների և բնավորության շեշտվածության միջև:

***Բանալի բառեր՝** Ճգնաժամ, բնավորության շեշտվածություն, ապագա զինվոր, հարմարվողական խնդիրներ*

РЕЗЮМЕ

■ **ЛИДА АРАМЯН, СОНА МАКИЧЯН, НВАРД АРЗУМАНЯН**
СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРОЯВЛЕНИЯ ПОВЕДЕНИЯ, ОБУСЛОВЛЕННОГО ИНДИВИДУАЛЬНЫМ ТИПОМ ПОДРОСТКА – БУДУЩЕГО СОЛДАТА

В статье представлены особенности кризиса подросткового возраста, данные исследований, которые доказывают, что можно полностью контролировать остроту проявлений кризиса подросткового возраста, если будет раскрыта психологическая характеристика детей и будет определена, есть ли статистическая корреляция между процессами кризиса и акцентуациями характера.

Ключевые слова: кризис, акцентуация характера, будущий военнослужащий, проблемы адаптации

SUMMARY

■ **LIDA ARAMYAN, SONA, MAKICHYAN, NVARD ARZUMANYAN**
SOCIAL-PSYCHOLOGICAL MANIFESTATIONS OF BEHAVIOR RESULTING FROM AN INDIVIDUAL TYPE OF ADOLESCENT - THE FUTURE SOLDIER

The article presents the features of the crisis in adolescence, research data that prove that it is possible to fully control the severity of the manifestations of the adolescent crisis if the psychological characteristics of children are revealed and it will be determined whether there is a statistical correlation between the crisis processes and character accentuations.

Key words: crisis, character accentuation, future serviceman, adaptation problems

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՈՌԻՋԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ, ՀԱԿՈԲ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Զինվորական կարգապահության արդի վիճակի ամրապնդումը ՀՀ զինված ուժերի ամենակարևոր խնդիրներից է¹: Կարգապահության հիմնական նախադրյալներից է ՀՀ ՁՈՒ-ի մարտունակության մակարդակի անշեղ բարձրացումը, որը լրջագույն ռազմավարական խնդիր է ՁՈՒ-ի բարեփոխումների տեսլականում: Ռազմական կարգապահության նպատակը, խնդիրները և դրանց միտված գործընթացներն ամրագրված են համապատասխան կանոնագրքերում և հրամաններում: Ընդհանուր ձևակերպմամբ «Կարգապահությունը՝ բոլոր զինծառայողների կողմից օրենքով, զինվորական կանոնագրքերով ու հրամանատարների (պետերի) հրամաններով հաստատված կարգ ու կանոնի խստիվ և ճշգրիտ պահպանումն է»², որը չի սահմանափակում մարդու իրավունքները, այլ միտված է համախմբելու զինծառայողներին՝ կանոնակարգելով նրանց փոխհարաբերությունները, ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծում զինծառայողի մարտական պատրաստվածությունն առավել արդյունավետ դարձնելու համար: ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամաններով ամրագրված է, որ դաստիարակչական աշխատանքների կառույցները պատասխանատվություն են կրում դաստիարակչական աշխատանքներ կազմակերպելու զինվորական կարգապահությունն ու բարոյա-հոգեբանական վիճակի ամրապնդմանը միտված միջոցառումները որակով անցկացնելու համար: ՁՈՒ-ի դաստիարակչական կառույցները համագործակցում են ոչ միայն միմյանց, այլև մյուս ստորաբաժանումների հետ զինվորական

¹ ՀՀ ՁՈՒ ներքին ծառայության կանոնագիրք, էջ 11:

² Նույն տեղում, էջ 45:

կոլեկտիվներում կարգապահության և բարոյահոգեբանական հիմքերը ամրապնդող գործողություններով, որոնք իրենց բնույթով, ուղղվածությամբ կանխարգելում են հնարավոր իրավախախտումները և էապես նպաստում են զինվորական կոլեկտիվների համախմբվածությանը: Զինվորական կարգապահության առկա վիճակից է կախված ռազմական ստորաբաժանումների մարտական պատրաստվածությունն ու ՁՈՒ-ի հեղինակության աճը հասարակության մեջ: Զինվորական կառավարման մարմիններն իրենց ամենօրյա օպերատիվ աշխատանքով բացահայտում են կարգապահության ոլորտում առկա խնդիրները, որոնք առաջին հերթին միտված են անձնակազմի գիտակցության արմատական վերափոխմանը: Այս ամենի արդյունքում կատարելագործվում է ողջ դաստիարակչական համակարգի բովանդակությունը, բարձրանում է զորամասերի և ստորաբաժանումների կազմակերպվածության մակարդակը, և զինծառայողների կարգապահությունը:

Քանի որ «Կարգապահություն» հասկացությունը օգտագործվում է տարբեր մեկնաբանություններով, ուստի անհրաժեշտ է անդրադառնալ հարցի պատմությանը: Իհարկե, անցյալում ևս պատշաճ կերպով ուսումնասիրվել են զինվորական կարգապահության և ասպետական պատվո վարքականոնների հիմնական դրույթները: Դեռևս 5-րդ դարում հայ պատմիչ Փավստոս Բուզանդն իր «Պատմություն Հայոց» երկում¹ ընդհանրացրել է հայ ռազմիկի կարգապահության կոդեքսը, որը մեր օրերում ընդունված է անվանել զինվորականների պատվո վարքականոններ: Այն իրենից ներկայացնում է հավատարմություն և անձնուրաց ծառայություն, ասպետական պատվի անբիծ պահպանում և անձնուրաց ծառայություն երկրի ժողովրդին՝ անկախ բնակիչների սոցիալա-

¹ **Այվազյան Ա. Մ.**, Հայ զինվորականության պատվո վարքականոնները (4-5-րդ դարեր:»«Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2000, հմ 3, էջ 152:

կան դիրքից: Քրիստոնեական հավատքի տեսանկյունից կարգապահություն նշանակում է նվիրվածություն ընտանիքին և հավատարմություն զինակիցներին:

Զինվորական կարգապահության ամրապնդումը զինծառայողների փոխհարաբերությունների սկզբունքներից է: Գործառույթի տեսանկյունից այն կատարում է կազմակերպչական դեր, քանի որ կանոնավորում և ապահովում է փոխհարաբերությունների համակարգը զինվորական կոլեկտիվներում, ուստի կանոնագրքային նորմերով են պայմանավորված ղեկավարների և ենթակաների, ավագների և կրտսերների, կոչումով և պաշտոնով միմյանց հավասար զինծառայողների փոխհարաբերությունները¹:

Քանի որ զինվորական դաստիարակությունը կարգապահության արդյունք է, ուստի զինվորական ռեժիմը, ներազդման մեթոդները, որպես ամբողջական համակարգ, օգնում են արդյունավետ դաստիարակելուն, ինչը բնականաբար պահանջում է, որ պատասխանատու զինվորականները քաջատեղյակ լինեն դաստիարակության և կարգապահության առկա պատկերացումներին, ունենան որոշակի կարողություններ ու հմտություններ զինվորական ստորաբաժանումներում արդյունավետ ծառայելու համար: Այս ամենը համապատասխանում է ոչ միայն զինվորական կարգ ու կանոնին, այլև հասարակության մեջ ձևավորված իրավունքներին և բարոյականությանը վերաբերող նորմերին: Զինվորական ստորաբաժանումներում կարգապահության ամրապնդմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, դաստիարակչական կառույցները իրականացնում են համատեղ, փոխլրացնող աշխատանքներ տարբեր՝ տեղեկատվական, ուսուցողական և կանխարգելիչ բնույթի, ներգրավելով տարբեր՝ հասարակական, պե-

¹ ՀՀ պաշտպանության նախարարի՝ 17.09.2004թ. N 907 հրաման՝ «ԶՈՒ բարոյահոգեբանական կայունության ապահովման ուղեցույցը գործողության մեջ դնելու մասին»: (ՀՀ ՊՆ էլ. փոստ), էջ 5:

տիրավական, աշխատանքային, ուսումնական և այլն բնագավառի ներկայացուցիչների¹: Դրանց շարքում առավելապես կարևորագույն տեղ է զբաղեցնում պետական կարգապահությունը, որը հիմնված է պետության կողմից ընդունված իրավական նորմերի վրա: Պետական կարգապահության տարատեսակներից է զինվորական կարգապահությունը, որը հատուկ նշանակություն ունի ԶՈՒ-ի համար: Սկզբնական շրջանում զինվորական կարգապահության հիմքում ընկած էր զինվորներին վախեցնելու, խստության և դաժանության գաղափարը: Ավելի ուշ Սուվորովը ռուսական բանակում կիրառում էր կարգապահության վերաբերյալ նոր առաջադեմ ռազմամանկավարժական և իրավական մոտեցումներ: Ըստ Սուվորովի՝ զինվորի գիտակցությունից ու կամքից էր կախված մարտական հաջողությունը: Լինելով անգուգական զորավար՝ Ա. Սուվորովը կարգապահության մեջ տեսնում էր զինվորական արիության, քաջության և հերոսության հիմքը²: Իսկ լեգենդար Մ. Կուսուկովը համարում էր, որ կարգապահությունը բանակի ոգին է, իսկ կարգապահ զինվոր համարում էր նրան, ով «ենթարկվում էր և ճիշտ կատարում հրամանները»³: Ռուս հայտնի ռազմական տեսաբան Վ. Դրագումիրովը զինվորական կարգապահության մեջ էր մտցնում դեկավարին ենթարկվելը, կատարողականությունը, հրամանատարին, ծառայությանը, պետությանը նվիրված լինելը⁴: Զինվորին ներկայացվող գերագույն պահանջին՝ հայրենիքին նվիրված լինելուն, նա ավելացնում էր նաև կարգապահությունը: Ներկայումս ՀՀ ԶՈՒ-ի մարտական պատրաստությա-

¹ Суворов А. В., Э. Л. Сирота. «Военная наука – наука побеждать (сборник)», с. 463.

² Նույն տեղում, էջ 36:

³ Фризман. Л.Г. Бородинское поле: 1812 год в русской поэзии. М., 1984. 216с-.

⁴ Российский военный сборник Выпуск 10 Военное законодательство Российской империи Кодекс русского военного права — М. Военный университет, с. 186.

նը նոր պահանջներ են ներկայացվում: Զինվորական կարգապահության բովանդակության մեջ հաստատապես ամրագրվել են մտքի, գաղափարի, ժամանակի, փոխհարաբերությունների, կառավարման, մարտական հերթապահության, տեխնոլոգիական, մարտ վարելու, զինվորական շարքի կարգապահությունը և այլն: Զինվորական կարգապահության նմանատիպ որակներով դասակարգումը հնարավորություն է տալիս համակարգելու և ամրապնդելու տարվող աշխատանքները: Զինվորական կարգապահությունը վերաբերում է ոչ միայն ծառայության, այլև զինծառայողների կյանքի բոլոր կողմերին: Կարգապահության մեջ ամենակարևորն անառակելիորեն ենթարկվելն է, հրամանների և կարգադրությունների ճշգրիտ և ժամանակին կատարելը:

Զինվորական դաստիարակության ուղղահայաց և հորիզոնական մակարդակներով բոլոր հրամանատարների կողմից համապատասխան հրամաններով և հրահանգներով սահմանված են միջոցառումներ զինվորական կարգապահության ամրապնդման համար:

Ձորամասերում և ստորաբաժանումներում զինվորական կարգապահության ամրապնդումը բարդ և բազմակողմանի խնդիր է, որի արդյունավետ լուծումից է կախված զինվորական կոլեկտիվների մարտական պատրաստության մակարդակը: Այս լրջագույն խնդիրն նպաստում է զինծառայողներին հոգեբանորեն նախապատրաստելուն՝ նրանց կատարողական կարգապահության զարգացմանը, առկա թերությունների և բացթողումների կանխարգելմանը, դրանց արձագանքմանը և շուտափույթ շտկմանը: Այն ստորաբաժանումներում, որտեղ հոգ է տարվում զինվորի կենցաղի, նրա ազատ ժամանակի ճիշտ կազմակերպման, մշակութաժամանցային և գեղագիտական բնույթի միջոցառումների մասին, ապա այդ գործնասում զինվորական կարգապահությունը համեմատաբար բարձր մակարդակ կունենա:

Զինվորական կարգապահության ամրապնդելու պահանջը առաջադրում է տարաբնույթ խնդիրներ՝ դաստիա-

րակչական աշխատանքի որակն առավել արդյունավետ դարձնելու համար, եթե, իհարկե, միաժամանակ հաշվի առնվեն զինծառայողների անհատական և զինվորական կոլեկտիվների սոցիալ-հոգեբանական ու մարտական խնդիրները լուծելու ինքնատիպ առանձնահատկությունները¹: Սակայն զինվորների կարգապահության արդյունավետությունը կախված է նաև նրանց վրա ներագդելու միջոցների ճիշտ ընտրությունից, քանի որ ազդեցության միջոցները կարող են լինել ոչ միայն կանոնադրային, այլև հոգեբանական (հոգատարություն ենթակայի նկատմամբ, անձնական վերաբերմունքի փոփոխում, վստահության ցուցաբերում, նախազգուշացում, քննադատում, արգելք):

Վերլուծելով ստորաբաժանումների 150 հրամանատարների գործունեության հոգեբանական առանձնահատկությունները այլ երկրներում՝ հայտնաբերվել է, որ արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ է ղեկավարվել հետևյալ չափանիշներով. ա) հրամանատարի ակտիվությունն ու նպատակասլացությունը ենթակաների վրա ազդելու գործընթացում, բ) նրա ծառայողական գործունեության անհատական ոճի առանձնահատկությունները, գ) հրամանատարի անձնական որակների դրսևորումները, դ) ենթակաների ծառայողական, ուսումնական և հասարակական արդյունքները²:

Շատ կարևոր է, որ զինվորների կարգավարժության ընթացքում զինվորական հոգեբանն իրեն դրսևորի որպես պարտաճանաչ, բարեխիղճ, պահանջկոտ և կոմպետենտ անձնավորություն, անձնական օրինակով ապահովի նույնականացում: Սակայն այս բարդ աշխատանքի արդյունավետության վրա ազդում է ոչ թե առանձին հատկանիշների

¹ **Մարգարյան Վ. Հ.** Մարտական գործողությունների հոգեբանական հիմքերը, Երևան, 2009, 284 էջ:

² Психологические условия повышения эффективности деятельности командира. Канд. психол. наук А.А. Камышанов, ВУ МО, г. Москва, с. 69.

զարգացումը, այլ դրանց փոխկապակցվածությունը: Այս գործընթացի արդյունավետության վրա ամենամեծ ազդեցությունը կարող է ունենալ հրամանատարի ղեկավարման անհատական ոճը, որը հիմնվում է նրա անհատական բարոյահոգեբանական հատկանիշների վրա, ինչն արտահայտվում է ազդեցության հոգեբանական միջոցների համարժեք ընտրության և կիրառման մեջ:

Չնայած զինվորական ստորաբաժանումներում զինծառայողի վարքի կանոնավորումը իրականացվում է որոշակի նորմերով և հրամաններով, այնուհանդերձ յուրաքանչյուր զինծառայողի անհատական վերաբերմունքն ու ծառայողական խնդիրների կատարման կարևորության գիտակցումը ազդում են զինվորական կարգապահության մակարդակի և ստորաբաժանման մարտունակության վրա:

Մակայն ինքնին վերցրած մարտական հզորությանը բնորոշ կարգապահությունը մեխանիկորեն չի ձևավորվում: Զինվորական կարգապահությունը կոչված է լուծելու առնվազն 2 փոխկապակցված հոգեբանական խնդիր. 1) օգնում է ձևավորել զինծառայողի անհատականությունը, ինչը պայմաններ է ստեղծում զինվորական բարձր կարգապահության համար, 2) ապահովում է մարտական բարձր պատրաստվածություն, ինչն իր հերթին բարենպաստ պայմաններ է ստեղծում անձնակազմն արդյունավետ կառավարելու համար, այն հասցնելով ծառայության պարտականությունների գիտակցմանը: Կանոնադրային կարգ ու կանոնին հետևելը միջոց է, որն անմիջականորեն ազդում է զինվորի անհատականության վրա, 3) կանխատեսել և կանխարգելել զինծառայողների կոնֆլիկտները, փոխհարաբերությունները հարթելու, դրանց պատճառներն ու պայմանները բացահայտելու համար:

Հաճախ տարբեր իրավիճակներում հրամանատարի մոտ բացասական հույզեր են առաջանում, որոնք ուղեկցվում են գերհոգնածությամբ, նյարդային լարվածությամբ, հուզական ծանր ապրումներով և այլն: Հետազոտվող հրամանատարների 75%-ը համարում է, որ այս աշխատանքը բարդ է և

այդ պատճառով 45%-ը բավարարված չէ դրանով¹: Այդ պատճառով ծառայության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է հրամանատարների հատուկ հոգեբանական պատրաստում, որի նպատակն է զարգացնել հրամանատարների ծառայողական գործունեության հոգեբանական բաղադրիչները (հուզական կայունություն, ապակազմակերպչական գործոնների ազդեցության կանխարգելում, գործունեության անհատական ոճ և այլն):

Ծառայողական գործունեության վերլուծության փորձը ցույց է տալիս, որ իր պարտականությունները լիարժեք կատարում է այն սպան, ով տիրապետում է զինվորական դաստիարակության բարդ արվեստին: Ջորամասերում զինվորական կարգապահության ամրապնդման աշխատանքներով զբաղվող պաշտոնատար անձանց համակարգողներն են հրամանատարը ու նրա տեղակալը: Հենց նրանք են համաձայնեցնում բոլոր ստորաբաժանումների (շտաբի, թիկունքի, զինվորական և տեխնիկայի հրամանատարների և բուժաշխատողների, պետերի) նպատակամետ ուղղությունները: Սակայն լարված մարտական ուսուցումը, զորավարություններն ու գործնական հրաձգությունները, անձնակազմի հատուկ և գաղափարական պատրաստվածությունը մեծ նշանակություն ունեն նրա կարգապահության ձևավորման և ապահովման գործում, հատկապես եթե դրանք լավ են կազմակերպված և անցկացվում են հոգեբանամանկավարժական օրինաչափությունները հաշվի առնելով: Զինվորական կարգապահության հոգեբանական բնութագիրը կարելի է ներկայացնել 3 հիմնական տեսանկյունից. 1) կարգապահությունը, որպես որոշակի պահանջների կարգ: Սակայն խնդիրը այն է, թե զինծառայողը որքանով է կարևորում ու գիտակցում կարգապահության անհրաժեշտությունը, 2) կարգապահությունը

¹ Барабанщиков А.В., Демин В.Г. О закономерностях военно-педагогического процесса. - М.: ВПА, 1967, с. 63.

որպես նպատակների և պահանջների համապատասխանություն, 3) կարգապահության գիտակցման շեշտադրումը:

Կարևորն այն է, թե կատարողական իմաստով որքանով է կարգապահությունը գիտակցվում գորամասի, ստորաբաժանման կամ զինվորական կոլեկտիվի կողմից՝ հաշվի առնելով կարգապահության վերահսկումը և գնահատումը սովյալ կոնկրետ իրավիճակում: Կարգավարժության բարձր մակարդակին բնորոշ է վարքի սոցիալապես նշանակություն ունեցող շարժառիթների գերակշռությունը և զինվորների վարքում սովորությունների և հմտությունների բարձր զարգացումը: Ըստ էության՝ գիտակցված կարգապահությամբ զինվորները ձգտում են ընդօրինակել համաձայնողներին և հրամանատարներին, ինչպես դրական, այնպես էլ բացասական առումներով: Իհարկե, այս բարդ ու տարողունակ գործընթացում լուրջ դեր են խաղում նաև գորամասերին կից հասարակական կազմակերպությունները՝ համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների, ռազմական ոստիկանության, մշակութային և կրթական կազմակերպությունների հետ¹ և միայն համակարգված, գիտականորեն հիմնավորված մոտեցումների շնորհիվ կարելի է ապահովել կարգապահության ցանկալի մակարդակ ինչպես մեկ զինծառայողի, այնպես էլ ստորաբաժանման առումով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Չոդվածում քննարկվում են ռազմական կարգապահության, կազմակերպական ձևերի և միջոցների խնդիրների լուծման մոտեցումների տարբեր կողմերը, որոնք դիտարկում են այն որպես լիարժեք գործունեություն՝ ուղղված զինված ուժերի բոլոր ենթակառուցվածքների մարտունակության որակի ապահովմանը:

¹ ՀՀ օրենք՝ առ. 04.12.2001թ. «Հասարակական կազմակերպությունների մասին»: ՀՀ պաշտպանության նախարարի՝ 29.05.2009թ. № 594 հրաման՝ «ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին»:

Բանալի բառեր՝ զինվորական կարգապահություն, զորամաս, վերահսկողություն, հարաբերություններ, բարոյահոգեբանական վիճակ, մարտունակություն, պատվո վարք, ոչ պետական կազմակերպությունների զորամասեր

РЕЗЮМЕ

■ **РУЗАННА ПЕТРОСЯН, АКОБ ГЕВОРКЯН**

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ УКРЕПЛЕНИЯ ВОИНСКОЙ ДИСЦИПЛИНЫ

В статье рассматриваются различные аспекты подходов к решению проблем военной дисциплины, организационных форм и мер, рассматривающих ее как полноценную деятельность, направленную на обеспечение качества боевой готовности со всеми инфраструктурами вооруженных сил.

***Ключевые слова:** военная дисциплина, подразделение, надзор, отношения, морально-психологическое состояние, боеспособность, почетное поведение, воинские части неправительственных организаций*

SUMMARY

■ **RUZANNA PESTROSYAN, HAKOB GEVORKYAN**

PSYCHOLOGICAL PROBLEMS OF STRENGTHENING MILITARY HEALTH CARE

The article examines various aspects of approaches to solving the problems of military discipline, organizational forms and measures that regard it as a full-fledged activity aimed at ensuring the quality of combat readiness with all the infrastructures of the armed forces.

***Key words:** Military discipline, subdivision, supervision, relationships, moral and psychological state, combat readiness, honorary conduct, military units non-governmental organizations*

ՀԱՅԻ՝ ԴԱՐԵՐՈՎ ԵՐԱԶԱԾ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

ՆՈՒՆԵ ՄԿՐՏՁԱՆ

19-րդ դարի վերջին քառորդում ձևավորված ամենավառ անհատականություններից մեկը՝ Հովհ.Թումանյանը, ազգային առաջնորդ դարձավ՝ իր գործունեության մեջ ներառելով հայ կյանքի բոլոր ոլորտների գեղարվեստական արտացոլումները:

Դարերով երազած հայի ազատությունը գեղարվեստական հանճարի բաղձալի երազանքն ու կենսափիլիսոփայությունն էր: Մշտապես լինելով իր ժողովրդի ու նրա պատմության հետ, ներկայացնելով հայ մարդու, բնավորության և աշխարհայացքի նոր դրսևորումները՝ Թումանյանն ամեն ինչ արել է ազգային փրկությունն իրականություն դարձնելու համար:

Հովհաննես Թումանյանը, դիմելով գրականության ամենատարբեր ժանրերին, հրապարակախոսությանը, մշակեց «հայրենիք» բառն իր մեջ ամփոփող մի ամբողջ գաղափարախոսություն, հայրենասիրությունը բնութագրող յուրօրինակ ձևեր, այդ ձևերի մեջ հայտածեց հայ մարդու կենսափմացության առանձնահատկությունները. հայրենասիրությունը սկիզբ է առնում անհատի ազգային հոգու դաստիարակությունից, իր ազգի ու շրջապատի հանդեպ ունեցած հարգանքից, հայրենիքը որպես մեծագույն արժեք գիտակցելու ունակությունից:

Հայրենասիրության թումանյանական բանաձևումը չափազանց դիպուկ և անխոցելի է. հայրենիքը պետք է սիրել խորապես ճանաչելով ու հասկանալով այն. չես կարող հայրենասեր լինել, եթե չես ճանաչում քո բնօրրանը:

Կարծում ենք՝ Թումանյանն էր, որ առաջին անգամ իրող խորությամբ գրականություն բերեց հայրենասիրության այս որակը, նա էր, որ հայրենիքի գեղարվեստական պատկե-

րի իր որոնումներում զգացմունքային հայրենասերի կողքին դրեց գիտակից հայրենասերին: Գրիգորի Դիասամիձեին ուղղված նամակում Հովհաննես Թումանյանը գրում է. «Այո, մեզ հասած դժբախտությունը վեր եղավ մեր ուժից ու կարողությունից: Սակայն էս էլ կանցնի: Առաջին անգամ չի, որ հայ ժողովուրդը էս տեսակ աղետ է տեսնում: Էլի է տեսել և նորից ոտի կանգնել՝ նորից վերաշինելու և ստեղծագործելու համար:

Երանի թե նա էսպես էլ կարողանար էս ալեկոծությունների միջից դուրս գալ անփորձանք, ազատ ու վերածնված»¹:

Թումանյանի կյանքի մի զգալի մասն անցավ ազգային վշտերի ու ողբերգությունների առաջադրած մտորումների ու խոհերի մեջ՝ բանաստեղծին պարտադրելով դառնալ նաև հասարակական գործիչ: Հովհաննես Թումանյանի գրական-գեղարվեստական ժառանգությունից զատ, ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում նաև նրա քաղաքական ու հասարակական գործունեությունը: Նա շատ դեպքերում, իրենից նաև անկախ, մասնակցություն էր ունենում երկրի հասարակական ու քաղաքական կյանքի գործերին, հատկապես պատերազմի ու հեղափոխության փոթորկալից օրերին: Հայ-վրացական զինված բախման օրերին հանդես էր գալիս որպես հարևան ժողովուրդների միջև համերաշխության ու բարիդրացիության հաստատման մոնետիկ և բազում այլ հանրային ու ազգային նշանակության գործեր կատարում, անսահմանորեն և հավատով երազում էր այն մասին, որ ազգերը միշտ ապրեն ազատության ու խաղաղության մեջ՝ համոզված լինելով, որ դա է մարդկային երջանկությունը:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է. Ջրբաշյանը նշում էր, որ թումանյանագիտության ամենից քիչ ուսումնասիրված բնագավառը գրողի հասարակական գործունեությունն է: Նա գտնում էր, որ ստիպված են եղել շրջանցել կամ կիսաբերան

¹ **Հովհաննես Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, Նամակներ 1905-1922, Եր., 1999, էջ 341:

խոսել մեր ազգային գրական-հասարակական կյանքի տարբեր ոլորտներում մեծ բանաստեղծի ծավալած վիթխարի գործունեության, հասարակական հոսանքների հետ նրա ունեցած կապերի մասին: Իսկ առանց դրա հնարավոր չէ ճիշտ ու լրիվ պատկերացնել ո՛չ Թումանյանի կենսագրությունը, ո՛չ էլ դարասկզբի ողջ հայ հասարակական կյանքը: Պատահական չէր՝ Թումանյանը Հայաստանի օգնության կոմիտեի ակտիվ անդամներից էր և հաճախ էր հանդես գալիս կոչերով, հոգվածներով, որոնք դարձան բանաստեղծի թողած ժառանգության թանկարժեք մասերից մեկը. «Աշխարհի ամեն կողմ ցրված հայոց ժողովուրդ, քեզ կանչում է Հայաստանի Օգնության Կոմիտեն, քեզ է կանչում Հայաստանի մայրաքաղաքում գումարած ամեն հոսանքի հայ գործիչների և գրականագետների ժողովը, և գուցե դու երբեք չես լսել նրանց ձայները այնպես միացած և միահամուռ և այսքան մեծախորհուրդ մի վայրկյանի: Դարավոր մաքառումներից հետո համաշխարհային թոհ ու բոհից, լայնածավալ ալեկոծությունների և աղետիների ծովից գերագույն ճիգերով բարձրանում է ազատ ու անկախ Հայաստանը: Պատմական այս մեծ օրերին տենդային իրարանցումով նրա շուրջն են խոնված հայության կենսունակ տարրերը...»¹:

Անձնական ու ժողովրդական ողբերգությունները հոգու ստեղներին դարսելով (1908 և 1912 թվականների բանտարկությունն ու դատավարությունը Պետերբուրգում, սիրելի գավակների մահը և այլն)՝ նա, այնուամենայնիվ, մշտապես ապրում էր իր ժողովրդի ճակատագրով, մտածում նրա վաղվա օրվա մասին: Նա իր ժողովրդին անվանում էր «հալածական ժողովուրդ», հալածական ամեն տեղից, հենց իր բուն հայրենիքից. «Մենք ազատ չեինք նույնիսկ աղետների ժամանակ օգնելու մեր դժբախտ եղբայրներին:

Եվ այսպես անվերջ...»²:

¹ ՀԱԱ, ֆոնդ 178, ցուցակ 1, գործ 5:

² Նույն տեղում:

Հայաստանում սոցիալական և ազգային ճնշումները ընդունել էին ամենաայլանդակ, ամոթալի ու դաժան ձևերը: Հայի կյանքը մշտապես գտնվում էր սպառնալիքի տակ: Մեծ պատերազմի ու նրա հետ կապված աղետների հետևանքով հայ աշխատավոր ժողովուրդը, հայ գյուղացին ընկել է ծանր կացության մեջ. «Իր բերանի հացից սկսած՝ նա շատ բան է կորցրել այս մի քանի տարվա ընթացքում: Շատ բան է կորցրել, բայց ձեռք է բերել մեր դարերով երազած ազատությունը: Եվ որովհետև ունի ազատություն ու իր շինարար բազուկը, շուտով կունենա ամեն բան»¹:

Ազգային և սոցիալական անտանելի ճնշումը, թալանի ու բարբարոսական կոտորածների մթնոլորտը, մեծապես ցնցեց կոտորածների ականատես հանճարեղ բանաստեղծին՝ Հովհաննես Թումանյանին, և նա զարհուրանքով արձագանքելով այդ վայրագություններին՝ իր բողոքի ձայնը բարձրացրեց, ընդդիմացավ մարդկության դեմ. «Ավերածությունների ենթարկված և ոչ մի երկիր ու տարածք այնպիսի դժվարությունների առաջ չկանգնեց, ինչպիսին Հայաստանն էր, որն իր աշխարհագրական դիրքի, հաղորդակցական միջոցների պակասության և ամբողջովին կործանված ու ավերակների վերածվելու պատճառով չէր կարող իրականացնել վերաշինության, վերանորոգման և վերականգնման գործը»²:

Հովհաննես Թումանյանի ապրած ժամանակաշրջանը հայոց բազմադարյա պատմության ամենածանր իրադարձություններով լի շրջաններից մեկն էր. Բեռլինի վեհաժողովը, Առաջին համաշխարհային պատերազմը, Հայոց մեծ եղեռնը, ռուսական ցարիզմի հակահայկական քաղաքականությունը, երկու հեղափոխությունները, Հայաստանի առաջին հանրապետության ստեղծումն ու անկումը, 1921թ. քաղաքացիական պատերազմը և այլն, բնականաբար, անտարբեր չէին կարող թողնել մեծ գեղագետին, և նա արձագանքեց.

¹ Նույն տեղում:

² ՀԱԱ, ֆոնդ 221, ցուցակ 1, 1918:

«Մեծ պատերազմներից առաջ մենք՝ հայերս, մեր եկեղեցու բակով սահմանափակված մի կրոնական համայնք էինք: Մեզ հասած հալածանքների ու հարվածների ժամանակ ստիպված էինք խնդրելու մեր եկեղեցու պետին, որ մեզ համար զուր բողոքներ ու աղերսներ անի աշխարհքի մեծերին: Մենք ստիպված էինք մեր խղճուկ դպրոցները զետեղել եկեղեցիների բակերում: Եվ եկեղեցիների բակերում էլ նրանք ազատ չէին հալածանքներից...»¹:

Հովհաննես Թումանյանը չէր կարող հայեցողի դերում լինել, նա չէր կարող ազգակործան իրադարձությունների սոսկ ունկնդիրն ու լուռ վկան լինել: Ուստի առաջին համաշխարհային պատերազմի օրերին նա երկու անգամ եղավ ինչպես ռազմաճակատում, այնպես էլ Վանում և հայաբնակ շատ այլ վայրերում, քաջալերեց երիտասարդությանն ու թուրքական հրոսակների դեմ անձնագոհ պայքարող մարտիկներին, բոլորի մեջ մարտաշունչ տրամադրություններ արթնացրեց: Գրողը Աշխեն Թումանյանին գրված նամակում ցավով նշում է. «Մեր ֆրոնտի նոր աղետը սարսափելի ազդել է վրաս: Անպիտան տաճիկը շարունակ նորանոր հարվածներ է տալիս մեր ժողովրդի թարմ վերքերին:

Իհարկե, դրանից էլ կազատվենք, կշատանանք էլ, և երանի թե մի օր էլ իրենք ազատվեն թուրքությունից ու աշխարհներ ավիրելու սովորությունից»²:

Հայ բանաստեղծի ու մտավորականի տարաբնույթ այցերը առանձնակի արժեք ու բովանդակություն էին ձեռք բերում, իսկապես ոգեշնչում բոլոր նրանց, ովքեր հավատում էին իրենց հաղթանակին և ազգային խնդիրների լուծման հեռանկարին: Հաստատակամ ու մեղադրական խոսքով է ներկայանում Հովհաննես Թումանյանը. «Դաշնակից պետությունների ագահ ու հավիտյան հանցավոր քաղաքականությունը, հայ ղեկավար շրջանների անկարողությունն ու հա-

¹ ՀԱԱ, ֆոնդ 178, ցուցակ 1, գործ 5:

² **Հովհաննես Թումանյան**, ԵԼԺ, հ. 10, էջ 357-358:

վիտյան հանցավոր քաղաքականությունն ու քաղաքական անհեռատեսությունը և հայ-թուրքական վայրենի ու անգուսպ թշնամությունը Հայաստանը հասցրին օրհասականի դուռը»¹:

Հայոց փրկության հույսի ու հավատի մի ուրույն խորհրդանիշ է հայի ազատության համար անվերջ պայքարող երկու մեծությունների, երկու մեծ բարեկամների՝ Հովհ. Թումանյանի և Անդրանիկ գորավարի կապը, գրչի ու սրի ամրակուռ դաշինքը: Որքա՜ն խոսուն է 1918 թ.-ին գրված Հովհ. Թումանյանի «Անդրանիկը և Ղարաքիլիսան» հոդվածը, որտեղ, կարծես, բողոքում է գրողը, թե «Ղարաքիլիսայի անկման օրից սկսած՝ անդադար մարդիկ ին պատահում, որոնք դատապարտում ին Անդրանիկին, որ նա խոշոր ուժերով՝ մնաց էնքան մօտիկ՝ Դսեղ նստած. Մինչդեռ եթե օգնության հասներ Դվալից, պատերազմը բոլորովին ուրիշ ելք կունենար: Բոլոր խոսողները մի բան չգիտեին, որ հենց էդպես էլ ծրագրված էր և կատարվելու վրայ էր, երբ զինվորական բարձր հրամանատարությունից հրահանգ եկավ Անդրանիկին՝ մնալ Դսեղ և պաշտպանել երկաթուղու գիծը...մինչև էս հրամանը փոխվեց՝ ...եկավ Ղարաքիլիսայի անկման լուրը»²:

Հովհաննես Թումանյանը, մարմնավորելով հայ ժողովրդի հոգևոր աշխարհը, բնավորության, վարքագծերի և մտածողության առանձնատիպությունները, դառնալով նրա գեղարվեստական հարստությունների բազմապատկողը, մարմնավորեց նաև քաղաքական և հասարակական կյանքը՝ մշտապես լինելով բոլոր ճակատագրական իրադարձությունների կենտրոնում. «Վերջացավ մեծ պատերազմը: Թե ինչպես էդ ուրիշ խնդիր է, բայց մեր հայրենի հողի վրա, թեկուզ և մի մասի վրա մենք արդեն ունենք Ազատ Հայաստանի Հանրապետություն: Այժմ արդեն մեզ վրա եկող հարվածների դեմ, աղերսարկու եկեղեցականի փոխարեն, կարող ենք մեր

¹ **Հովհաննես Թումանյան**, ԵԼԺ, հ. 10, էջ 368:

² ԳԱԹ, ԹՖ, № 415:

հանրապետական բանակը հանել: Կարող ենք կառուցել ինչ դպրոցներ էլ ցանկանանք և ուր ցանկանանք: Էսպես էլ ամեն մի քայլափոխի զգալու ենք, որ մենք այժմ ազատ քաղաքացիներ ենք և ոչ թե երեկվա անազատ կրոնական համայնքի ծխականներ»¹:

Իր անսպառ եռանդի ու տոչորվող հոգու պահանջով նա կա՛մ նոր հանձնաժողովներ էր ստեղծում, կա՛մ գլխավորում էր եղածները և այդ կերպ աշխատում էր թեթևացնել հայի վիշտը, ուղղորդում էր հարևանների հետ հաշտ ու խաղաղ ապրելու գործընթացը. «Մակայն գալիս է հայտարարելու ի լուր համայն հայության, թե խաղաղությունն արդեն հաստատված է և հաշտ ու համերաշխ հարաբերության է մեջ է իր հին հարևան ժողովուրդների հետ:

Եվ արդեն անցնում է նա իր վերքերը դարմանելու և կազդուրելու աշխատանքին»²:

Հովհ. Թումանյանն Ավետիք Իսահակյանին գրած նամակում ներկայացնում է, որ կառավարությունը մղվել է դեպի ժողովուրդն ու հանրությունը. «Կգաս, կտեսնես մեր աշխարհը ավերված, մեր ժողովուրդը կոտորված, կենդանի մնացածն էլ կոտորված, ջարդված, մեր հարազատների ու ընկերների շրջանակները նոսրացած: Կտեսնես, թե աշխարհի էս ծով վշտից ինչ ահագին բաժին է ընկել առանձնապես ինձ ու քեզ, բայց արի: Էդ ամենի հետ միասին քեզ պետք է ասեմ, որ մեր այժմյան կառավարությունը շատ ավելի լավն է՝ քան կարող էս երևակայել:

Մանավանդ գրականությունն ու գեղարվեստը երբեք էսքան ուշադրության առարկա չեն եղած մեր աշխարհում»³:

Թումանյանի կարծիքով հայի ազատության գործին պետք է մղվեն ժողովուրդն ու կառավարությունը միասին, ձգտեն մասնակիցը դառնալ մեծ իրադարձությունների,

¹ ՀԱԱ, ֆոնդ 178, ցուցակ 1, գործ 5:

² Նույն տեղում:

³ **Հովհաննես Թումանյան**, ԵԼԺ, հ. 10, էջ395:

նպաստեն ազգային խնդիրների լուծմանը, ոտքի հանեն իրենց բոլոր ուժերը՝ ազատվելու տիրող և մանավանդ առաջիկայում սպառացող սովից և վերակառուցելու քանդված երկիրը: Գևորգ Աթարբեկյանին գրում է. «Էս համատարած անհաշտության վրա եթե ավելացնեն անխուսափելի սովը, որ պիտի գա շուտով, որովհետև ոչ աշնանացան է եղած, ոչ գարնանացան: Էս ամենից հետո մտածելու շատ բան կա: Արժե՞ր էսքան արյուն թափել, մի անվերջ կռիվ ու գրեթե անդարմանալի հոգս վաստակելու համար մի երկրում, ուր ոչ գաղափարական շարժում կա, ոչ գաղափարի կռիվ»¹:

Հայի ազատությունը, մարդասիրությունն ու լավատեսությունը Հովհ. Թումանյանի բարոյական մենաշնորհն է: Թումանյանն էր, որ ավելի խորությամբ, քան իր նախորդներից որևէ մեկը, տեսավ ու հասկացավ նավաբեկվող ժողովրդի իրական կացությունը: Հայ կյանքի ծանրագույն և դժնդակ պայմաններում էլ Թումանյանը չի կորցնում ապագայի հույսը, հոգեւլկումները չեն դառնում նրա ուղեկիցները և հուսահատության թառանչներ չի արձակում, քանի որ հայ ժողովուրդը իր ողջ պատմական երթի ընթացքում տոկացել ու հաղթահարել է բազում մահացու և կործանարար վտանգներ: Թումանյանը Թումանյան չէր լինի, եթե միայն խոսեր: Եվ նա կատարեց այն առաքելությունը, որը ճակատագրով վերապահված էր իրեն: Ըստ Թումանյանի՝ պատերազմն, ինքնին, մի վայրենի ու բարբարոս երևույթ է, երբ խաղաղ ժողովուրդները ծառանում են իրար դեմ և կողոպտում, մորթում միմյանց ամենաանխնա կերպով. «Եվ այդ երևույթն ավելի սարսափելի է դառնում, երբ տեսնում ես, թե որպիսի անտարբերությամբ է նայում այդ ամենին երկու ժողովուրդների ինտելիգենցիան, որը շատ հաճախ ինքն է առաջ բերում և ինքն էլ մասնակցում նրան: Եվ ահա, նույնիսկ այս պահին, երբ ամեն կողմից վրա են գալիս զինված ուժերը, արևելքից՝ Անգլիան, արևմուտքից՝ Գերմանիան, հյուսիսից՝ բոլշևիկները, հարա-

¹ Հովհաննես Թումանյան, ԵԼԺ, հ. 10, էջ 377:

վից՝ թուրքերը և նրանց շահսեվանները, քյուրդերը, չեանիկները և ագռավների ամեն տեսակ երամները, ...մեր «ագատ» և «հանրապետական» խաղաղ ժողովուրդները վեր են կացել, որպեսզի կողոպտեն և ոչնչացնեն միմյանց: ...Մի րոպե մտածում ես, իսկ ո՞ւր են այն անթիվ մարդիկ, որոնք դեռ երեկ խոսում էին հանուն ժողովրդի: Ուզում ես ճշալ. ուր եք դուք, ժողովրդի բարեկամներ, ...մի՞թե չեք տեսնում այս հրդեհը, որ լափում է ժողովրդին, մի թե չգիտեք, որ ժողովրդին ամենից առաջ պետք է իր կյանքը, չգիտեք՝ որ նրան կրակից փրկելը առավել բարձր և ազնիվ գործ է»¹:

Եվ, այնուամենայնիվ, Թումանյանի մարդասիրությունը երևում է ոչ միայն հասարակական գործում, նրա ստեղծագործության ծիրը շատ ավելի հեռվից է գալիս և շատ ավելի հեռուն է գնում. «Մեր ժողովրդին բռնակալներից ֆիզիկապես ազատելուց հետո պիտի ազատել նրա միտքն ու հոգին խավարի ու տգիտության բռնակալությունից և հաղորդակից անել լուսավոր մարդկության ու տիեզերքի մեծ կյանքին: Մեր դարավոր մաքառումներով մենք դրան ենք ձգտել ամբողջ ազգով»²:

Լավագույն ապացույցը Հովհ. Թումանյանի կոչն է ողջ հայությանը. «Արդ հայություն, ուր էլ որ լինես Եվրոպայից մինչև Ամերիկա, Եգիպտոսից մինչև Հնդկաստան, լսի՛ր, քեզ կանչող հայրենիքի ձայնը և շտապիր օգնության ամեն բանով, ինչով կարող ես, որ ունենաս այն, ինչ որ երազել ես դարերով՝ ազատ ու շեն հարենիք»³:

Թումանյանը դարձավ մեր ժողովրդի կենսագիրը, ժամանակագիրը, ուղղորդողը, հայ հոգու շինարարը. «Ամեն մի հայի պետք է առաջնորդի ոչ թե խղճահարությունը, այլ քաղաքացիական պարտքի խոր գիտակցությունը: Ամեն մի հայ պետք է զգա, որ ինքը ազատ Հայաստանի քաղաքացին է:

¹ Հովհաննես Թումանյան, ԵԼԺ, հ. 7, էջ 352 -353:

² Հովհաննես Թումանյան, ԵԼԺ, հ. 10, ԵԼԺ, էջ 343:

³ ՀԱԱ, ֆոնդ 178, ցուցակ 1, գործ 5:

Ինչքան էլ խոչ ու խութեր, ինչքան էլ դժվարություններ ու թշվառություններ հանդիպեն ճանապարհին, նա հասնելու է իր նպատակին: Սա նշանակում է, թե կենդանի է հայությունը: Հայաստանի ազատ հողի վրա է շինելու իր ազատ ու առատ տունը, հայկական բարձրավանդակի վրա զարգացնելու է իր ազգային հանճարը և իր խոսքն ասելու է աշխարհին»¹:

Մեծ ջանքերի շնորհիվ է նաև, որ մեր ժողովուրդը կարողացել գոյատևել, պայքարել արտաքին թշնամու և դիվանագիտական մարտահրավերների դեմ. «Խաղաղություն գտնելով գործի է անցել ինքը՝ մեծ տառապյալը, Հայաստանի իսկական տերը, հայ գյուղացին: Մովը, սուն ու ավերածությունները չեն ընկճել նրա հանրահռչակ տոկունությունն ու շինարար ոգին: Նա բազմաթիվ գոհեր է տալիս և տալիս է տակավին, բայց չի լքում պապենական օջախը և իր գութանի մաճին ապաստանած, կանգնած է հայրենի դաշտի վրա և կանգուն էլ պիտի մնա»²:

Թումանյանը այն եզակիներից էր, որոնք իրենց էության մեջ առավելագույնս են կրում հայկականության հատկանիշները՝ մարմնավորելով հայ ազգի ոգին և խիղճը: «Հայի ոգին» հողվածում մտորում է. «Պատմությունը ցեղեր է հիշում, որ իշխել ու նշանավոր են եղել, քանի որ ունեցել են քաղաքական ինքնություն իշխանություն, զենքի զոր ու ֆիզիկական ուժ. հենց որ կորցրել են քաղաքական անկախությունը, հետզհետե հալվել են ժողովուրդների մեջ ու կորել: Ցեղեր էլ կան, որ քաղաքական անկախ կյանքը կորցնելուց հետո էլ կարողացել են պահել իրենց ազգային կերպարանքը երկար դարերի ընթացքում, ամեն տեսակ հալածանքների տակ: Էդ ժողովուրդներից մինն էլ, անշուշտ, մեր դժբախտ ցեղն է, որ քաղաքականորեն անկախ չի եղել գրեթե երբեք, և, սակայն էսօր էլ տակավին կա իր լավ թե վատ ազգային կյանքով ու կերպարանքով: Էսքան փորձություն ու տառապանք ունեցած

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

մի ժողովրդի անվայել է անգիտանալ իր կյանքը ու ծփալ, տարուբերվել ժամանակի ակեյոծության քմահաճույքին անձնատուր»¹:

Թումանյանի տագնապները խոր արմատներ ունեին. հայի դարերով երազած ազատությունը տեսնում էր ժողովրդի ամբողջության, կամքի ու պայքարի մեջ. «Որն է էս ժողովրդի պատմական ճանապարհը, սրա գոյության խորհուրդը, ինչ է կամենում սա, սրա ոգին: Եվ ո՞ր որոնենք էդ ոգին: Արդյոք Սասունի, Զեյթունի, Մոկաց, Ղարաբաղի ու Լոռու սարերում, թե՞ Շիրակի, Արարատի ու Մուշի դաշտերում: Արդյոք հին վանքերի միստիկ կամարների տակ, ուր ծավալվում է «խորհուրդ խորին անհաս ու անսկիզբն», թե՞ դալար մարգերում ու խաչահանգիստ հովիտներում, ուր «լուսնյակն անուշ, հովն անուշ, շինականի քունն անուշ»: Արդյոք «ի խորոց սրտի խոսք ընդ աստծո» խոսողի երկնաչու պաղատանքների մեջ, թե՞ «Վերք Հայաստանիի» հայրենասիրական ողբի հառաչանքների ու մորմոքների մեջ: Եվ ինչքան մեծ է խաղաղ կյանքի ու խաղաղ աշխատանքի կարոտը էս ամեն տեղերում ու ամենի մեջ, խորթ արյունի ու պատերազմի, խորթ սրածության ու ավերածության...Ո՞րն է հայ ժողովրդի ոգին և ի՞նչ է ուզում նա»²:

Թումանյանի անսահման լավատեսությունն ու հավատը հայ ժողովրդի «լավագույն ապագայի» նկատմամբ արտահայտություն է գտել նաև իր բանաստեղծություններում: Նա երազում էր ունենալ ազատ հայրենիք ու հզոր բանակ: 1920թ. գրեց «Հայկական բանակ» բանաստեղծությունը: Դիմելով գեղարվեստական պատկերին՝ գրողը հայոց գնդեր է համարում հայոց լեռները, որոնց զլուխ կանգնած է Սասունցի Դավիթը. «-Ո՞վ է կանգնած լեռների հետ, Էն հրզորը անսասան. Ծածանում է գրլխին վետ-վետ, Իր դրոշը սրբբազան: Էն Սասունցի Դավիթն է հին, Մըսրա շըղթան խորտակել, Թուր-Կայծակին

¹ Հովհաննես Թումանյան, ԵԼԺ, հ. 6, 1997, էջ 193:

² Նույն տեղում:

իրեն ձեռին՝ Լույս աշխարհ է դուրս եկել: Հայոց լեռներ սև-սև ամպեր, Կուտակվել են, փաթաթվել, Հայոց լեռներ սեգ-սեգ խմբեր, Գոռ զընդեր են ողջ պատել»:

Որպես բանաստեղծ ու մարդասեր, որպես մարդկության բարձրագույն իդալերի արտահայտիչ՝ Հովհաննես Թումանյանն հայի ազատությունը բնության մեծագույն պարզևն էր համարում, առանց որի չէր կարող հայ ապրել մարդը: Սա թումանյանական հումանիզմի ցայտուն արտահայտությունն էր, բանաստեղծի համոզմունքը: Իր այս համոզմունքներով ու մարդկության ապագայի հանդեպ իր մտահոգությամբ նա ինքնատիպ ու բացառիկ եղավ մեր գրականության մեջ. մեր ժողովրդի կյանքն ու հույզերը, ցավն ու պայքարը երգեց ինքնահատուկ, անմիջական զգացողություններով, բարձր արվեստով, ժողովրդական հյութեղ լեզվով ու ոճով:

ՄՄՓՈՓՈՒՄ

Որպես բանաստեղծ ու մարդասեր, որպես մարդկության բարձրագույն իդալերի արտահայտիչ՝ Հովհաննես Թումանյանը հայի ազատությունը բնության մեծագույն պարզևն էր համարում, առանց որի չէր կարող ապրել հայ մարդը: Սա թումանյանական հումանիզմի ցայտուն արտահայտությունն էր, բանաստեղծի համոզմունքը: Իր այս համոզմունքներով ու մարդկության ապագայի հանդեպ իր մտահոգությամբ նա ինքնատիպ ու բացառիկ եղավ մեր գրականության մեջ. մեր ժողովրդի կյանքն ու հույզերը, ցավն ու պայքարը երգեց ինքնահատուկ, անմիջական զգացողություններով, բարձր արվեստով, ժողովրդական հյութեղ լեզվով ու ոճով:

Բանալի բառեր՝ մարդասեր, բարձրագույն իդալերի արտահայտիչ, հայի ազատություն, բնության մեծագույն պարզև, բարձր արվեստ, ժողովրդական հյութեղ լեզու և ոճ

РЕЗЮМЕ

■ НУНЕ МКРТЧЯН

ВЕКОВАЯ МЕЧТА АРМЯН О СВОБОДЕ ПО О. ТУМАНЯНУ

Будучи писателем-гуманистом отражающим в своем творчестве общечеловеческие мечты и стремления Ованес Туманян считал свободу армян величайшим даром природы, без которой армянин не может жить. Этой своей убежденностью и тревогой о будущем человечества он отличался в нашей литературе. С невероятной чувственностью и профессионализмом, используя народный стиль и колоритный язык, он воспел в своих произведениях жизнь и надежду, боль и борьбу нашего народа.

Ключевые слова - гуманист, выражение высших желаний, свобода армян, величайший дар природы, профессионализм, народный стиль и колоритный язык

SUMMARY

■ NUNE MKRTCHYAN

THE ARMENIAN LONG-TIME DREAM OF FREEDOM DUE TO H. TUMANYAN BY NUNE MKRTCHYAN

As a poet and humanist , as an impressioner of human great wishes, H. Tumanyan considered Armenian freedom as a great gift of human nature without which no Armenian could exist . That was a vivid expression of Tumanyan humanism , the assurance of a poet. With this assurance and anxiety concerning human future Tumanyan was one of the unique poets in Armenian Literature , he expressed the life of our nation and emotions , pain and struggle with special feelings, great art , with national storky language and style.

Key Words: Humanist, The expressioner of wishes, The greatest gift, with great art, with storky language and style

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՆԴԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՆՁՆԱՅԻՆ
ՄՊԱՍՈՒՄՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԻՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վերջին ժամանակներում հաճախակի են դարձել երիտասարդության սոցիալական ակնկալիքների, կենսական հեռանկարների և դիրքորոշումների վերաբերյալ հանրության ուշադրության սևեռումները: Սա մի կողմից պայմանավորված է հասարակական-քաղաքական պայմանների որակական փոփոխություններով, տնտեսական անկայունությամբ, միջազգային խմորումներով, իսկ մյուս կողմից՝ ժողովրդագրական ուսումնասիրությունների, գլոբալ ծերացման և տարիքային սահմանների վերանայմամբ: Այս հանգամանքներն ազդում են երիտասարդների ընկալումների, միջանձնային հարաբերությունների, սեփական անձի մասին պատկերացումների վրա, որոնք ոչ միշտ են, որ համապատասխանում են իրականությանը կամ անձի հնարավորություններին: Վերջերս տարբեր ոլորտի մասնագետներ ավելի ու ավելի շատ են բարձրացնում 21-րդ դարի երիտասարդների սոցիալ-հոգեբանական խնդիրների և նույնիսկ երիտասարդության յուրահատուկ ճգնաժամի հիմնահարցը: Այսպես՝ Թիմ Ուրբանը կատարել է հետաքրքիր դիտարկում, նա նշում է, որ 70-ականների վերջից մինչև 90-ականների սկիզբն ընկած ժամանակահատվածում ծնված սերունդը, որը հիմա 25-40 տարեկան է, ունի սպասումների չափազանց բարձր մակարդակ¹: Նա այդ սերնդին անվանում է «քաղաքային երիտասարդ մասնագետների սերունդ»: Իհարկե, այս երևույթն ունի իր սոցիալ-հոգեբանական հիմնավորումը, որը մեզ համար ազդանշան հանդիսացավ պարզելու, թե ինչպիսի վերա-

¹ Տե՛ս **Tim Urban**: Why Generation Y Yuppies Are Unhappy, Wait but Why, 2013:

փոխումներ և փոխակերպումներ են կատարվում անձնային և սոցիալական սպասումների բովանդակային ասպեկտներում երիտասարդության տարիքի ողջ ընթացքում:

Այսօր տարիքային վերջին պարբերացումներն ավելի ու ավելի են ընդլայնում երիտասարդության սահմանները: Այսպես՝ Միավորված ազգերի կազմակերպությունը 1982 թվականին իր «Տարիքային միջազգային պարբերացման ժամանակավոր ուղեցույցում» նշում է երիտասարդության (young adulthood) 15-24տ. սահմանը¹, իսկ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2009 թվականին սահմանեց երիտասարդության համար 25-44 տարեկանը:

Մենք, մեր հետազոտությունների համար որպես մեթոդաբանական հիմք ընդունել ենք Վ. Կվինի տարիքային պարբերացումը², որում երիտասարդությունը սահմանվում է 18-40 տարեկան հասակը: Նույն այս տարիքային փուլը Գրեյս Կրայգը կոչում է վաղ հասունություն (20-40)³:

Քանի որ երիտասարդությունը բավական ընդարձակ տարիք է, ապա նպատակահարմար ենք գտել այն բաժանել հետևյալ տարիքային ենթափուլերի՝ երիտասարդության սկիզբ՝ 18-25տ, բուն երիտասարդություն՝ 25-32 տ. և ուշ երիտասարդություն՝ 33-40տ.:

Երիտասարդությունը սեփական ես-ի ձեռքբերման, մարդու որպես անհատականության հաստատման, անձի անկրկնելիության գիտակցման ժամանակահատվածն է: Այս ընթացքում անձն սկսում է փնտրել սեփական ուրույն կենսական ուղին, մտորում հաջողությունների հասնելու և նպատակներն իրագործելու մասին: Սակայն նպատակները դնելիս նա դեռևս ապահովագրված չէ սխալներից, խոչընդոտներից և դրանց հետևանքներից, նա դեռ չունի բավարար փորձ

¹ St' u World Youth Report, Young People's Transition to Adulthood: Progress and Challengess, UNITED NATIONS, 2007:

² St' u **Квинн В. Н.** Прикладная психология. - СПб., 2000, էջ 118:

³ St' u **Крайг Г.** Психология развития. СПб., 2000:

դրանց դիմակայելու և ճիշտ որոշումներ ընդունելու համար: Սակայն հենց այս սխալների գիտակցումն ու դրանցից հետագա դասեր խաղելու միտումն էլ ձևավորում է երիտասարդի կենսափորձը: Եթե դիտարկենք երիտասարդության փիլիսոփայական մեկնաբանումները, ապա կտեսնենք, որ երիտասարդությունն այս գիտություններում համարվում է հնարավորությունների, դեպի ապագա ուղղվածության ժամանակաշրջան: Երիտասարդությունը ժամանակ է, երբ դեռ ոչինչ չի իրականացվել, երբ ամեն ինչ հնարավոր է հասցնել և իրագործել¹:

Հենց այս պնդումներն էլ հիմք են հանդիսացել այս հետազոտությունն իրականացնելու համար, որպեսզի կարողանանք պարզել հայ երիտասարդների ապագայի սպասումները, դրանց իրատեսականությունը, որոշակիությունը, երիտասարդության տարբեր ենթափուլերում դրանց դրսևորման քանակական և որակական առանձնահատկությունները:

Մեր հետազոտության մեջ սպասումները ներկայացված են երեք մակադակներում՝ միջանձնային հարաբերությունների սպասումներ, կենսական հեռանկարների սպասումներ և անձնային պոտենցիալից սպասումներ կամ այլ կերպ՝ սեփական անձից ունեցած սպասումներ²: Սպասումների ձևավորման հարցը որոշակիորեն կապված է անձի դերային վարքագծի հետ: Այսինքն՝ որպեսզի անձն ունենա հասարակության մեջ գոյատևելու և կեցությունն ապահովելու հնարավորություն, պետք է համագործակցի այլ անձանց հետ, իսկ նման համագործակցությունը ենթադրում է վարքային նորմ-շաբլոնների տիրապետում: Ամերիկացի հոգեբաններ Դ.Ջեքսոնն ու Լ.Կոլբերգը, ուսումնասիրելով դերի ընդուն-

¹ Տե՛ս **Крайт Г.** Психология развития. С-Пб. Питер. 2000, С 543:

² Տե՛ս **Карина О.В., Киселева М.А.,Шустова Н.Е.** Концептуальное обоснование авторского опросника «личностные экспектации» (ЛиЭкс), Известия Самарского научного центра Российской академии наук, т. 12, №5, 2010, 118-125:

ման մեխանիզմները, եկան եզրակացության, որ դերի յուրացումն ու ընդունումը իրագործվում է միայն միջանձնային հարաբերություններում, որոնցում հաշվի են առնվում ինչպես դերային վերագրումները, այնպես էլ էքսպեկտացիաները, խրախուսման և պատժի սանկցիաները, վերահսկողությունը, դրանց հասնելու և համապատասխանելու ձգտումը, ռեֆերենտային խմբերը, նմանակումն ու նույնականացումը: Իսկ ահա Ա.Ա.Բոդալյովը կարծում էր, որ սոցիալական սպասումները կապված են կարծրատիպային վարքի հետ, որի շրջանակներում դրանք խաղում են երկակի՝ տրամագծորեն հակառակ դերեր¹: Այսպես՝ իմանալով նշանակալի մարդկանց սպասումները սեփական անձի վերաբերյալ, անձը ձգտում է դրանց համապատասխանել և կառուցել սեփական գործունեությունը դրանց նմանությամբ: Իսկ մյուս կողմից՝ սոցիալ-հոգեբանական սպասումները արտացոլվում են գիտակցության մեջ և կազմում են սեփական ուրույն արժեքանորմատիվային պատկերացումները:

Ա.Շյուցը կարծում էր, որ անձը, իրականացնելով որոշակի գործողություններ, ելնում է իր սպասումներից և գործողությունների կանխատեսումներից: Դեպքերի սպասում և կանխատեսումը թույլ է տալիս որոշակիացնել նշանակալի իրադարձությունների հորիզոններ: Նման սպասումները ուրվագծում են ապագա փորձի սահմանները, որոնք մշտապես փոփոխվում և հարստանում են: Ներկայումս գրագետ նպատակադրումը կանխատեսում է իրադարձությունների ընթացքը բավական ճշտությամբ: Այդ է պատճառը, որ անձը կարող է հստակ գիտակցել, թե ինչպիսի սոցիալական դերեր են իրեն անհրաժեշտ իր էքսպեկտացիոն մոդելները իրականացնելու համար: Բ.Լոմովը կարծում էր, որ կենսական հեռանկարների սպասումները հնարավորություն են տալիս անձին գործելու և ընդունելու այս կամ այն որոշումները ա-

¹ Ст'ю Бодалев А. А. Личность и общение. - М.: Международная педагогическая академия, 1995, -328 с.:

պագա, սպասելի իրադարձությունների վերաբերյալ¹: Այլ կերպ ասած, սրանք այն սպասումներն են, որոնք անձը իրականացնում է լինելով այս կամ այն հասարակության անդամ: Դրանք են կրթությունը, ընտանիքը, աշխատանքը, սերունդների փոխհարաբերությունները և այլն: Իսկ Դ.Լեոնտևը կարծում էր, որ այս սպասումները ներառում են որոշակի հանգամանքներ և կենսական պայմաններ, որոնք մյուս հավասար պայմանների դեպքում ապահովում են անձի հետագա կենսական առաջընթացը²:

Իսկ ահա անձնային պոտենցիալից ունեցած սպասումները վերաբերում են անձի սեփական հնարավորություններից և կարողություններից ունեցած սպասումներին, ինչպես նաև այն սպասումներին, որն անձը վերագրում է ինքն իրեն հասարակության կողմից: Սա գրականության մեջ անվանում են նաև «սպասման սպասումներ»³:

Մեր ուսումնասիրության նպատակն էր բացահայտել երիտասարդության սոցիալ-անձնային սպասումների բովանդակային և դրսևորման առանձնահատկությունները, դրանց բաղադրիչների քանակական և որակական բնութագրերը, ինչպես նաև դրանց հնարավոր փոխակերպումները երիտասարդության ողջ ընթացքում:

Այսպես՝ ինչպես կարող ենք տեսնել ստորև ներկայացված գրաֆիկում, միջանձնային հարաբերությունների սպասումները արտահայտման ամենաբարձր ցուցանիշն ունեն բուն երիտասարդության փուլում, ինչը կարելի է բացատրել տարիքային առանձնահատկություններով և դրանցում հասակակիցների և մեծահասակների հետ հաղորդակցման կարևոր դերով: Այսպես՝ սա մասնագիտական կողմնորոշ-

¹ St' u Хрестоматия по психологии. **Ломов Б. Ф.**, Проблема общения в психологии, М., 1987, с. 108-117:


² St' u **Леонтьев А. А.** Психология общения. – 2-е изд., испр. и доп. – М.: Смысл, 1997. – 365 с. (Сер. "Психология для студента", вып. 4):

³ St' u **Хьелл Л., Зиглер Д.** Теории личности. – СПб., 1997:

ման և մասնագիտական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելու հիմնական տարիքն է, երբ անձը, հաղորդակցման մեջ մտնելով այլ անձանց հետ, կարողանում է որոշակիորեն կայանալ իր ընտրած ոլորտում: Չէ՞ որ համարվում է, որ երիտասարդությունը չափահասության սկիզբն է, երբ անձը ձեռք է բերում չափահասին բնորոշ բոլոր իրավունքներն ու պարտականությունները և դրանց համապատասխանող սոցիալական սպասումները: Հասարակությունը նրանից սպասում է օրինապահություն, հայրենիքի պաշտպանություն, ուսումնառություն և մասնագիտական պատրաստություն, մեծահասակների խնամքի ստանձնում և այլն: Հենց այս տարիքում է, որ անձի սոցիալական դերերը որոշակիորեն ավելանում են՝ միաժամանակ ավելացնելով նաև դրանց բնորոշ սոցիալական սպասումները: Այս տարիքում է, որ հայ երիտասարդը կազմում է իր սեփական ընտանիքը, սկսում է մասնագիտական կարիերան, ձեռք է բերում համապատասխան կոմպետենտություն և ճանաչում իր ընտրած ուղու մեջ:

Ինչպես կարող ենք նկատել գրաֆիկից (տե՛ս գրաֆիկ N 1)՝ այս սպասումները նվազում են հաջորդ ենթափուլում (33-45տ), ինչը կարող ենք բացատրել այն հանգամանքով, որ այս տարիքում երիտասարդը, կրելով սոցիալական պատասխանատվությունը սոցիումի նկատմամբ, արդեն յուրացրել է որոշակի վարքային ընդունելի ձևերը, ստանձնել ակնկալվող համապատասխան դերերը, և այդ է պատճառը, որ այդ դերերին վերագրվող սոցիալական սպասումները արդեն այդքան ակտուալ և ակնառու չեն դրսևորվում: Պետք է այդուամենայնիվ նկատել, որ այստեղ սպասումները, ունենալով քանակական ռեգրեսիա, կրում են որակական փոխակերպումներ: Այն է՝ անձն ինքն է դառնում միջանձնային ոլորտի սպասումներ ձևավորող, նա իր սպասումները փոխանցում է աճող սերնդին, իր երեխաներին, աշխատանքային ոլորտի սուբյեկտներին, կարելի է ասել, որ անձը դառնում է ոչ թե վարքային շարժումներ յուրացնող, այլ փոխանցող:

Գրաֆիկ N 1



Ինչ վերաբերում է սեփական անձնային սպասումներին, որոնք վերաբերում են սեփական հնարավորությունների սահմաններին, սեփական անձից ունեցած ակնալիքներին, սեփական անձից ունեցած իրավիճակային և ընդհանուր սպասումներին, ապա սա առավել կապված է կենսափորձի և հոգեբանական հասունության հետ: Կանխատեսելի է, որ վաղ երիտասարդության տարիքում նման սպասումները կլինեն ավելի ցածր, քան մյուս ենթափուլերում, քանի որ ենթադրվում է, որ անձը 18-25 տարեկանում դեռևս չի տիրապետում բավարար կենսափորձի և համապատասխան անձնային հասունության: Իսկ ահա հաջորդ երկու փուլերում՝ համապատասխանաբար 26-32 և 33-40 տարեկաններում դրանք դրսևորվում են վայրիվերումներով: Այսպես 26-32 տ.-ում դրանք ամենաբարձրն են, ինչը կարող ենք բացատրել այն հանգամանքով, որ անձի հաջողություններ ունենալը անձնական և մասնագիտական ոլորտներում բարձրացնում են նրա ինքնագնահատականը, ինչպես նաև հասարակության սպասումները նրա հանդեպ, ինչն էլ ուղղակիորեն ազդում է այս ցուցանիշի բարձրացման վրա: Իսկ ինչ վերաբերում է երիտասարդության վերջին ենթափուլին, ապա կենսական պոտենցիալի սպասումները այս տարիքում նվազում են՝

հասնելով վաղ երիտասարդության ցուցանիշներին: Դա մենք հիմնավորում ենք տարիքային ճգնաժամով և հասունությանը բնորոշ հոգեբանական առանձնահատկություններով:

Պետք է նկատել, որ սպասումներից արտահայտման առումով ամենաբարձրը կենսական հեռանկարներից սպասումներն են:

Այսպիսով՝ մեր հետազոտվողների պատասխաններում մենք կարող ենք նկատել հետևյալ առանձնահատկությունները: 18-25 տարեկանների մոտ կենսական հեռանկարների սպասումները համեմատաբար ցածր են, ինչը խոսում է այն մասին, որ տարիքային տվյալ ենթափուլում անձի մոտ ավելի անորոշ են ապագայի հեռանկարները, իհարկե, նա պատկերացնում է այն խոշոր իրադարձությունները, որոնք սպասում են նրան կյանքի ընթացքում, սակայն դրանց առանձնահատկությունները նա դեռ չի կանխատեսում: Նա գիտակցում է, որ պետք է սովորի և մասնագիտություն ստանա, կազմի ընտանիք, ծավալի որոշակի մասնագիտական գործունեություն, սակայն ինչպես, ինչ պայմաններում և ինչ ոլորտներում նա դեռևս չի պատկերացնում¹:

Իսկ ահա մյուս տարիքային փուլերում և մասնավորապես միջին փուլում, անձն ավելի հստակ սպասումներ ունի իր ապագա կյանքի իրադարձություններից: Նա արդեն մասնագետ է կամ ունի սեփական ընտանիքը, ծավալում է համապատասխան աշխատանքային գործունեություն և ըստ այդմ՝ ունի իրական սպասումներ կյանքի այս կամ այն ոլորտի վերաբերյալ:

Սպասումների բոլոր տեսակները միավորված են ընդհանուր չափանիշներով, որոնք հնարավոր են դարձնում որոշել անձի սպասումների առանձնահատկությունները: Դրանք են սպասումների դրական կամ բացասական երան-

¹ Տե՛ս **Հարությունյան Ն.Մ.** Չափահասների ռեֆլեքսիվության և սպասումների հարաբերակցումը Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր // Մանկավարժ, 2013, 143 – 146 էջ:

զավորումը (պոզիտիվիզմ/նեգատիվիզմ), ճկունությունը կամ ռիգիդությունը, իրատեսականությունը կամ անիրատեսականությունը, դիֆուզությունը կամ կոնկրետությունը:

Միջանձնային հարաբերությունների սպասումները հիմնականում դրական երանգավորում ունեն բոլոր ենթափուլերում, իսկ ահա համեմատաբար ավելի ճկուն են 26-32 տարեկան երիտասարդների մոտ, մինչդեռ 33-40 տարեկանների մոտ սպասումները ռիգիդ են:

Տարիքին զուգընթաց միջանձնային սպասումները ավելի իրատեսական են դառնում նույն միջին տարիքում՝ ի տարբերություն վաղ և ուշ ենթափուլերի, որտեղ սպասումները համեմատաբար ավելի անիրատեսական են: Իսկ ահա դիֆուզություն-կոնկրետություն չափանիշն իր դրսևորումն է գտնում տարբեր ենթափուլերում հետևյալ կերպ. 18-25 տարեկանում և 33-40 տարեկանում սպասումները միջանձնային հարաբերություններում ավելի դիֆուզ են, մինչդեռ 26-33 տարեկանում դրանք ավելի կոնկրետ են: Այստեղ սպասումներն ավելի հստակ և նպատակային են: Դրանք վերաբերում են կոնկրետ աշխատանքային գործունեությանը, կոնկրետ նպատակների իրականացմանը, այսինքն՝ սպասումներն արդեն անորոշ ու անդեմ չեն:

Եթե անդրադառնանք կենսական հեռանկարներից սպասումներին, ապա այստեղ պատկերը նույնն է միայն առաջին չափանիշի՝ պոզիտիվության կամ նեգատիվության արտահայտվածությամբ: Մնացած չափանիշներում էական փոփոխություններ կան: Այսպես՝ կենսական հեռանկարների սպասումները ավելի իրատեսական են 33-40 տարեկանների մոտ, իսկ ավելի անիրատեսական՝ 18-28 տարեկանների մոտ: Սա կանխատեսելի է և օրինաչափ: Բանն այն է, որ 18-25 տարեկանում ապագայի պլանները դեռևս անորոշ են և հաճախ ուռճացված, սովորաբար դրանք հազվադեպ են համապատասխանում երևույթների իրական դրվածքին: Մինչդեռ որոշակի կենսափորձ կուտակելու և սեփական անձնային պոտենցիալը որոշակիորեն իրացնելուց հետո անձը ավելի հստակ պատկե-

րացում է ունենում այն մասին, թե ինչ է իրեն անհրաժեշտ կենսական հեռանկարներից և ինչին ինքը կարող է հավակնել: Օրինաչափ և նախորդ չափանիշի հետ կապված է նաև սպասումների կոնկրետությունը: Որքան տարիքն ավելանում է, այնքան ավելի կոնկրետ են դառնում սպասումները կենսական հեռանկարների կանխատեսման ոլորտում:

Լրիվ այլ է պատկերը անձնային պոտենցիալի սպասումների վերաբերյալ: Այսպես՝ եթե նախորդ երկու սպասումների բլոկներում առանձնահատուկ վայրիվերումներ չէին նկատվում սպասումների դրական կամ բացասական երանգավորման մեջ, դրանք հիմնականում դրական էին, ապա սեփական պոտենցիալից սպասումներում դրանք արդեն առկա են: Այսպես՝ 26-32 տարեկան մարդու՝ սեփական անձից ունցած սպասումները ավելի լավատեսական են, քան մյուս տարիքային ենթափուլերում: Կարծում ենք, որ սա բացատրվում է այն հանգամանքով, որ 25-32 տարեկանը մարդու կյանքի ամենապրոդուկտիվ և ամենազբաղված տարիքն է, երբ անձն իրացնում է իր պոտենցիալը, ունենում է հաջողություններ կյանքի այս կամ այն փուլում, կառուցում է պլաններ, դնում իր առջև նպատակներ: Մակայն անձնային պոտենցիալից սպասումները համեմատաբար ռիզիկո են, քան նախորդ բլոկի սպասումները:

Հետաքրքիր տվյալներ են ստացվել այս բլոկի սպասումների իրատեսականության և անիրատեսականության վերաբերյալ: Անձի՝ սեփական անձից ունցած սպասումները ավելի անիրատեսական են, քան այլ անձից կամ կենսական հեռանկարներից ունեցած սպասումները:

Մինչդեռ 26-32 տարեկանների մոտ այս բլոկի սպասումները ավելի դիֆուզ են, քան մյուս տարիքային փուլերում՝ չնայած տարիքային փուլի ավարտին այս սպասումները ուղղակիանում են:

Նշենք, որ քանակական առումով ամենաբարձր սպասումները գրանցվել են 26-32 տարեկան երիտասարդների շրջանում:

Այսպիսով՝ կարող ենք ամփոփել, որ սպասումները դի-
նամիկ և փոփոխական են երիտասարդության տարբեր են-
թափուլերում, դրանք կրում են ինչպես քանակական, այն-
պես էլ որակական տրանսֆորմացիաներ՝ կախված երիտա-
սարդի զարգացման սոցիալական իրավիճակից, մասնագի-
տական գործունեությունից և անձնային առանձնահատկու-
թյուններից: Այս իմաստով երիտասարդությունը անկայու-
նության, փոփոխությունների, քննադատության, նորույթի
մշտական որոնման տարիք է, ինչն իր արտահայտումն է
գտնում սպասումների և կենսական հեռանկարների մասին
պատկերացումների վրա: Նրանց սպասումները տարբեր-
վում են ավելի մեծ սերնդի սպասումներից: Երիտասարդնե-
րը հաճախ ցանկանում են ստեղծել իրենց նորարական ար-
ժեքներին համապատասխան աշխարհը՝ կոտրելով նախորդ
սահմաններն ու շրջանցելով հայտնի շաբլոնները:

ԱՄՓՈՓՈՒՄ

Վերջին ժամանակներում ավելի ու ավելի շատ հարցեր են ծա-
գում երիտասարդության սոցիալական ակնկալիքների, կենսական
հեռանկարների և դիրքորոշումների վերաբերյալ: Հոդվածի նպա-
տակն է ներկայացնել հայ երիտասարդների սպասումների փոխա-
կերպման առանձնահատկությունները, տալ դրանց քանակական և
որակական բնութագրերը, տարբեր ենթափուլերում վերջիններիս
նմանություններն ու տարբերությունները: Հոդվածում ամփոփված
են գիտական հետազոտության արդյունքները, որոնք որոշակի
պատկերացում են տալիս 18-40 տարեկանների ապագայի հեռան-
կարների, սոցիալական սպասումների, դրանց հնարավոր հոգեբա-
նական մեկնաբանությունների ու զարգացման միտումների վերա-
բերյալ:

***Բանալի բառեր՝** երիտասարդ, սպասում, էքսպեկտացիա,
կենսական հեռանկար, կենսական պոտենցիալ, միջանձնային հա-
րաբերությունների սպասումներ, սպասման սպասում, սպասման
ձկունություն, սպասման ռիզիկոություն, սպասման դիֆուզություն*

РЕЗЮМЕ

■ **НАИРА АРУТЮНЯН**

ЭКСПЕРИМЕНТАЛЬНОЕ ИССЛЕДОВАНИЕ ТРАНСФОРМАЦИИ ЛИЧНОСТНЫХ ОЖИДАНИЙ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ

В последнее время все больше и больше вопросов возникают по поводу социальных ожиданий, перспектив и жизненных позиции молодых людей. Цель статьи представить специфику трансформации ожиданий армянских молодых людей, дать количественные и качественные характеристики личностных ожиданий молодых, определить их сходства и различия в разные периоды молодости. В статье обобщены результаты научных исследований, что может дать некоторое представление о будущих перспективах и социальных ожиданий 18-40-летних людей и психологически объяснить возможные тенденций и развитие армянской молодежи.

Ключевые слова: *молодость, ожидание, экспектация, межличностные отношения, временная перспектива, личностный потенциал, ожидание ожиданий, ригидность ожиданий, диффузность ожиданий, гибкость ожиданий*

SUMMARY

■ **NAIRA HARUTYUNYAN**

EXPERIMENTAL STUDY OF TRANSFORMATION OF ARMENIAN YOUNG PEOPLE'S PERSONAL EXPECTATIONS

In recent years, more and more questions arise about social expectations, perspectives and life positions of young people. The purpose of the article is to present the features of young armenian people's expectations, to give quantitative and qualitative characteristics of their personal expectations, identify similarities and differences in the different periods of the young-adulthood age. The paper summarizes the results of research which can give some insight into the future prospects, social expectations and the possible psychological explanations of trends and development of armenian young people.

Key words: *youth, personal expectations, interpersonal relations, time perspective, personal potential, expectation of expectation, diffusivity of expectations, rigidity of expectations*

ՈԱԶՄԱՀԱՅՐԵԼԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԵԹԵՐՈՒՄ

ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈՐԹԱՆ, ԼԻՂԱ ԹԵԼՈՅԱՆ

«Եթե հեռուստատեսությանը կրակում է անհրաժեշտ ռազմամթերքով անհրաժեշտ մարդկանց վրա, ուրեմն այն լավն է»¹: Մեղիա տեսաբան Մարշալ Մաքլուհենի այս տեսակետը՝ արտահայտված ողջ հեռուստատեսության համար, կարելի է փոքր-ինչ «նեղացնել»՝ վերագրելով հայկական եթերից հեռարձակվող ռազմահայրենասիրական հաղորդումներին՝ պարզելու՝ որքանով է այն «ղիպուկ կրակում», քանի որ մեր օրերում՝ «ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն պայմաններում» կենսականորեն կարևոր է, որ մեր զենքը անվրեպ կրակի:

Հեռուստատեսությունն իր ստեղծման օրվանից եղել ու մնում է մարդկանց հոգեկանի վրա ազդող ամենաուժեղ գործոնը, գաղափարական պայքարի զենք², հանրությանը ցանկալի ուղղությամբ տանելու, կազմակերպելու միջոց, իսկ մեզ համար այս պահին անչափ կարևոր է համախմբվածությունը ազգային արժեքների շուրջ, անհրաժեշտ է հայրենասիրական ոգին ամրապնդել մի երկրում, որտեղ արտագաղթը վերածվել է ազգային անվտանգությանը սպառնացող լուրջ գործոնի: Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն ունի հատկապես հայկական բանակի, մեր զինված ուժերի նկատմամբ պատշաճ վերաբերմունք ձևավորելը: Գաղտնիք չէ, որ Արցախյան պատերազմում հաղթանակած բանակը զինադադարից հետո հանրության մեջ ձեռք չբերեց այն հարգանքը, որը սովորաբար լինում է նման դեպքերում: Պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար Արծրուն Հովհաննիսյանը մի առիթով գրել է, որ շատ հայ քաղա-

¹ **Маклюэн М.**, Понимание медиа: внешние расшрение человека. М., 2007, с.14.

² **Միրաքյան Վ.**, Լրատվամիջոցների ազդեցության հնարավորությունները, Երևան, 2010, էջ 95:

քացիներ իրենց պարտքն են համարում տարբեր միջոցներով վարկաբեկել հայկական բանակը, և դա լուրջ խնդիրներ կարող է հարուցել, քանի որ ստեղծված տրամադրությունները անպայման ազդելու են ոչ միայն ապագա զինվորի՝ բանակային կյանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի վրա, այլև բացասական դիրքորոշում են առաջացնելու նաև միջազգային հանրության շրջանում:

Թերևս այս և բազմաթիվ այլ հանգամանքներն են պատճառ, որ հատկապես վերջին տարիներին եթեր հեռարձակվեցին ՀՀ զինուժի մասին պատմող նոր հաղորդաշարեր, նկարահանվեցին գեղարվեստական ֆիլմեր ու ֆիլմաշարեր՝ «Զինուժ», «Նվիրյալները», «Դիրքերում», «Մարտիկ», «Մի վախեցիր», «Զկրակված փամփուշտներ», «Կյանք ու կռիվ», «Իմ բանակը» և այլն:

Անդրադառնանք դրանցից առավել մեծ վարկանիշ ունեցող հաղորդաշարերին: Հայկական զինված ուժերին նվիրված լրատվական-տեղեկատվական «**Զինուժ**» հաղորդաշարը առաջին անգամ եթեր է հեռարձակվել 1993 թվականի հունվարին «**Ցեղի կանչը**» խորագրով: Նպատակը՝ հանրային իրազեկում, զինված ուժերի, պատերազմական գործողությունների, հակամարտության գոտու վերաբերյալ հանգամանալից տեղեկատվության հաղորդում¹: Զինադադարից հետո վերանվանվելով «**Զինուժ**»՝ հաղորդաշարը պահպանեց հենց սկզբից որդեգրած իր սկզբունքները, այն է՝ լուսաբանել բանակային կյանքը ՀՀ զինված ուժերում, ներկայացնել սահմանին տիրող իրավիճակն ու մարտական հերթապահության ընթացքը, հանրությանը ներկայացնել Արցախյան պատերազմում և ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհված մարտիկներին, բարեխիղճ ծառայությամբ աչքի ընկած սպաներին և ժամկետային ծառայողներին: Սկզբնական շրջանի հաղորդաշարին բնորոշ հայրենասիրական պաթոսը պահպանվեց նաև հետագա տարիներին, ընդլայնվեցին հա-

¹ <http://www.1tv.am/hy/program/%D4%B6%D5%AB%D5%B6%D5%B8%D6%-82%D5%AA>

դորդաշարի ընդգրկման շրջանակներն ու թեմաները, ավելացան նոր խորագրեր:

Ընդհանուր առմամբ «Զինուժի» հեղինակները նպատակադրվել են ստեղծել հենց առաջին իսկ կադրերից ոգեշնչող հաղորդաշար: Այն սկսվում է երկաթյա արծվի սլացքով, ինչը խորհրդանշում է ոգու, իշխանության, աննկունության և արիության ուժը: Դրան հաջորդում են մեր զինված ուժերի՝ տարբեր իրավիճակներ արտացոլող բավականին ազդեցիկ կադրեր, որից հետո ներկայացվում է բանակային անցուդարձը՝ շարքային զինվորից մինչև բարձրագույն հրամկազմ, ռազմարդյունաբերական ոլորտի ձեռքբերումները, զորավարություններ, տարաբնույթ միջոցառումներ, հասարակություն-բանակ կապերի ամրապնդմանն ուղղված նախաձեռնությունները: Այն սպառիչ տեղեկատվություն է հաղորդում նաև հայկական բանակի արդիականացման, համատեղ զորավարությունների և ռազմական ոլորտում ձեռք բերված համաձայնագրերի մասին:

Հաղորդաշարի դրական կողմերից է նաև այն, որ պարբերաբար անդրադառնում է ծառայության ընթացքում օրինակելի վարքով աչքի ընկած ժամկետային զինծառայողներին՝ նրանց դարձնելով այս կամ այն խորագրի հերոսը, ինչը շարքային զինվորին արժևորելու կարևոր քայլ է:

«Զինուժ» հաղորդաշարին հատուկ է նյութը գեղարվեստորեն մատուցելու ձգտումը, գեղարվեստական ֆիլմին բնորոշ արտահայտչամիջոցներն ու հրապարակախոսական պաթոսը, ինչը գուցե ասելիքն ավելի ազդեցիկ է դարձնում, սակայն միաժամանակ ստեղծվում է փոքր-ինչ արհեստականության, «ուռա հայրենասիրության» մթնոլորտ: Ընդհանրապես այս հաղորդաշարին բնորոշ է զինված ուժերին առնչվող յուրաքանչյուր իրադարձություն առավելապես դրական կողմերով ներկայացնելը, ինչ-որ տեղ նաև սուբյեկտիվիզմը: Ակնհայտ է խորհրդային տարիների ոճը. «Զինուժ» հաղորդաշարի թեկուզ մեկ թողարկում դիտողը այնպիսի տպավորություն կարող է ստանալ, որ կարծես ամեն ինչ մեր հայկա-

կան բանակում իդեալական է՝ բոլոր զինվորների ոգին բարձր է, մեր բանակը մինչև ատամները զինված, բարձրագույն սպայական կազմը՝ պահապան հրեշտակներ, սահմանամերձ գյուղի բնակիչներն էլ «Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ» արտասանելով շարունակում են ապրել, վարել ու ցանել չղադարող կրակոցների տակ: Այս տպավորությունն առավել առարկայական է դառնում հատկապես «Հայրենիք ու սահման» մշտական խորագիրը դիտելիս, որը պատմում է սահմանամերձ գյուղերի խնդիրների մասին և որտեղ, ինչպես նշվում է հաղորդաշարերից մեկում, երիտասարդների համար ամենապատվաբեր մասնագիտությունը զինվորական դառնալն է: Ներկայացվում են սահմանապահ գյուղերի այն բնակիչները, որոնք դիրքապահների հետ հավասար պահում են սահմանը: Ցավոք, ներկայացվող կադրերում մենք գրեթե չենք հանդիպում երիտասարդ կամ միջին տարիքի մարդկանց կա՛մ երեխաներ են, կա՛մ տարեցներ: Հասկանալի է, որ նման հաղորդաշարերի անհրաժեշտ պայմանը համապատասխան պաթոսն է, որն այստեղ լիովին ապահովված է: Սակայն մի նկատառում՝ երբեմն այս կամ այն խորագրում շարքային քաղաքացիների կամ թեկուզ զինվորների՝ հայրենասիրական ստեղծագործությունների ասմունքը կամ երգը փոքր-ինչ արհեստական է դարձնում հաղորդաշարը²: Հատկապես երբ նման դրվագներում ներառված են սոցիալապես անապահով խավի ներկայացուցիչներ, որոնց շուրթերից հնչող խիստ ազգասիրական, հայրենիքը չլքելու հայրենանվեր տողերը, մեղմ ասած, վստահություն չեն ներշնչում: Այս զգացողությունն առաջանում է նաև նրանից, որ «գրական-երաժշտական կոմպոզիացիայի» մասնակիցներն իրենք էլ կաշկանդված են ավելի հաճախ պարտադրված «տեքստերից»:

¹ https://www.1tv.am/hy/videos/Public___/%D4%B6%D5%AB%D5%B6%D5%B8%D6%82%D5%AA#video76444-Զինում

² Նույն տեղում:

Իհարկե հասկանալի է, որ նման մոտեցումը թելադրված է ստեղծված կիսապատերազմական իրավիճակով, որի պայմաններում շատ կարևոր է սեփական ուժերի նկատմամբ անվերապահ հավատ ունենալը, հաղթողի հոգեբանությունն ձևավորելը հասարակության բոլոր շերտերում, սակայն հայկական զինված ուժերին առնչվող տեղեկատվության միակողմանի մատուցումը պարզապես կարող է հեռուստադիտողի և ընդհանրապես հանրության մեջ ձևավորել անվստահություն հաղորդաշարի նկատմամբ:

Այնուհանդերձ հարկ է նշել, որ հատկապես վերջին տարիներին ամրապնդվել է հասարակություն-բանակ կապը նաև այս հաղորդաշարի շնորհիվ, քանի որ գրեթե բոլոր հաղորդումների ընթացքում ներկայացվում է նաև հասարակության տարբեր շերտերի մասնակցությունը զինված ուժերի տարաբնույթ նախաձեռնություններին, ինչպես նաև իրենց զավակներին տեսակցելու գնացած ծնողները հնարավորություն են ստանում հրապարակավ արտահայտել իրենց տպավորությունները, հպարտանալ իրենց զավակների օրինակելի ծառայությամբ:

Ներկայումս «Զինուժ» հաղորդաշարը հասարակայնության շրջանում իրապես մեծ աշխատանքներ է տանում ՀՀ զինված ուժերի վարկանիշի բարձրացման ուղղությամբ, միաժամանակ՝

1. Հոգեբանորեն նախապատրաստում է երիտասարդությանը զինվորական ծառայությանը,

2. մեղմում է հայկական զինված ուժերի նկատմամբ եղած բացասական վերաբերմունքը ձևավորելով դրական վերաբերմունք,

3. հանրությանը ապահովում է համակողմանի տեղեկատվությամբ զինված ուժերի տարբեր ստորաբաժանումների գործունեության, ծրագրերի, նպատակների վերաբերյալ՝ բարձրացնելով հասարակության իրազեկվածության մակարդակը,

4. տարածաշրջանում, ինչպես նաև միջազգային հանրության շրջանում ստեղծում է անխոցելի բանակի վարկանիշ:

Հեռուստադիտողների շրջանում բարձր վարկանիշ ունի Արցախյան գոյամարտին և նրա մասնակիցներին նվիրված «Նվիրյալները» հաղորդաշարը, որը եթեր է հեռարձակվում 2014 թվականից Հանրային հեռուստաընկերությամբ: Հաղորդաշարի ընթացքում անդրադարձ է արվում մեր հաղթանակը կերտած հերոսներին՝ զինվորներից մինչև գեներալ: Հեռուստադիտողին ներկայացվում է ոչ միայն ազատամարտիկի, զինվորի ու հրամանատարի կարևոր դերը, այլ նաև պատերազմում բժիշկների, հոգևորականների ու այլոց ունեցած կարևոր ներդրումը: Հաղորդաշարի հերոսներն են մարդիկ, ովքեր չվախեցան կռվել ու մեռնել, կռվել ու ապրել հանուն հայրենիքի: Կան դրվագներ մարտերից, որոնց մասին հիշում ու պատմում են ականատեսները¹:

Նկարահանումները կատարվել են Արցախում և Հայաստանում: Հաղթանակի ու հաղթողների մասին երկու տասնամյակ անց պատմում է բուլղար լրագրող Յվետանա Պասկալևան: Մինչ հաղորդաշարի առանձնահատկություններին անդրադառնալով՝ հարկ էնք համարում ներկայացնել հեղինակի հայանվեր գործունեությունը: **Յվետանա Պասկալևան**, 1991-1994-ին լինելով Լեռնային Ղարաբաղում, լուսաբանել է արցախյան հերոսամարտը, Ղարաբաղի հիմնախնդիրը ներկայացրել միջազգային հանրությանը: Նա առաջին արտասահմանցի լրագրողն է, որ «Օդակ» գործողության ժամանակ եղել է Շահումյանի շրջանում, հայ բնակչության դեմ կատարվող բռնարարքների, տեղահանության վերաբերյալ պատրաստել ռեպորտաժներ, դրանք ցուցադրել տարբեր երկրներում: Ռազմաճակատի թեժ կետերից հեռուստահաղորդումներ է պատրաստել CNN, NBC, բուլղարական ազգային, ռուսական, գերմանական, ֆրանսիական Antene-2 հե-

¹ <http://www.1tv.am/hy/program/%D5%86%D5%BE%D5%AB%D6%80%D5%B5%D5%A1%D5%AC%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8>

ռուստարնկերությունների և «Ռոյթերզ» գործակալության համար: Ադրբեջանի իշխանությունները Պասկալնային երեք անգամ հեռակա կարգով դատապարտել են մահապատժի:

2014 թվականից Ցվետանա Պասկալյանն ձեռնամուխ եղավ իրապես շատ արժեքավոր «Նվիրյալները» հաղորդաշարի ստեղծմանը, որի շնորհիվ հասարակությունը ծանոթացավ ոչ միայն Արցախյան ազատամարտի՝ արդեն իսկ ճանաչում ունեցող հերոսներին, նրանց կյանքի, պայքարի հետաքրքիր դրվագներին, այլև ճանաչեց նոր, մինչ այժմ լայն հանրությանը անհայտ անուններ, որոնք ևս նշանակալից դերակատարում են ունեցել մեր գոյամարտում՝ հաճախ թյուրիմացաբար մնալով ստվերով իբրև «խոնարհ հերոսներ»: Այսպես, Արցախյան պատերազմի վառ դեմքերից մեկի, «խոնարհ գեներալ»՝ Նելսոն Սողոմոնյանի մասին նրա մարտական ընկերը պատմում է. «Մարդ, որը մեր ազատագրական պայքարի համար արել է բավականին շատ, բայց իր բնավորության որակների՝ զսպվածության, համեստության պատճառով գերադասել է մնալ ստվերում, ուստի նրա մասին գիտեն քչերը»¹: Հաղորդման հերոսներ են դառնում նաև շարքային մարտիկները, որոնք թեպետ չունեն կոչում ու շքանշաններ, չեն արժանացել բարձրագույն պարգևների, սակայն հերոս են այնքանով, որ իրենց կյանքը նվիրաբերել են հայրենիքին: «Հենց դրանով էլ նրանք հերոս են». որպես կանոն, հաղորդաշարն ավարտվում է Պասկալնայի այս խոսքերով: Այսինքն՝ հաղորդաշարի և հենց հեղինակի հիմնական նպատակներից մեկը հայրենիքին ծառայելը, նրա համար նահատակվելը մեծագույն հերոսություն ներկայացնելն է: Այս գեկույցը պատրաստելիս մտածում էի՝ մեր երիտասարդության քանի՞ տոկոսն է այս հաղորդաշարը դիտում, ո՞ր մասն է իսկապես ազդվում կամ ոգեշնչվում հերոսական դրվագներով, նվիրյալ նահատակների անձնվիրությամբ, արդյո՞ք այն մեր երիտասարդների մեջ ձևավորում է հայրենասիրական զգա-

¹ <https://www.youtube.com/watch?v=yoUaaW7v3DM>

ցումներ: Անկեղծ ասած, չկարողացա ինքս որոշել հաղորդման ազդեցության չափը: Իրականում այն հերոսական էպոպեա է, որտեղ գաղափարական շեշտադրումները համոզիչ են, ներկայացվող դրվագները՝ իրական փաստեր մեր ոչ հեռու անցյալից, իսկ մասնակիցները պատմում են միայն տեսածի և ապրածի մասին, ինչը չի կարող անտարբեր թողնել հեռուստադիտողին:

Հաղորդաշարին հուզական լիցքեր է հաղորդում հենց իր՝ հեղինակի ոգեշունչ խոսքը: Չկա պարզապես տեքստը սերտած հաղորդավարի չեզոք կեցվածքը, Պասկալյան ասես իր բոլոր հերոսների հետ անցնում է մարտադաշտով, մասնակցում մարտերին, ապրում է նրանցից յուրաքանչյուրի կյանքով, պեղում-արևերես հանում այնպիսի դրվագներ, որոնք մոռացության կմատնվեին, ինչպես երբեմն պատահում է մեր օգտապաշտ դարում: Հաղորդաշարի ձևաչափը՝ կարիք հնչող ծավալուն ու բովանդակալից խոսք, փաստագրական հարուստ նյութը, «նվիրյալի» մասին պատմող մարտական ընկերների ու մտերիմների գնահատականները ամբողջացնում են ասելիքը:

Անշուշտ, այս հաղորդաշարին ևս բնորոշ է հրապարակախոսական պաթետիզմը, յուրաքանչյուր նվիրյալի հերոսացնելը: Սակայն, ի տարբերություն «Զինուժ» հաղորդաշարի, որտեղ իդեալականացվում են ընթացիկ գործընթացները, այն դեպքում, երբ դրանց դրական արդյունքները հանրությունը նշված չափով չի զգացել, «Նվիրյալների» հերոսական պաթոսն ու նահատակներին սրբացնելու հաղորդավարի ձգտումը թերևս ավելի ընդունելի ու հասկանալի է. մի թե կյանքը հայրենիքին զոհաբերելը իսկապես հերոսություն չէ, երբ մեր օրերում զորակոչային տարիքի յուրաքանչյուր երկրորդ երիտասարդը խուսափում է զինվորական ծառայությունից:

Ռեզոնանսային ասիրական հաջորդ «Դիրքերում» հաղորդաշարը «Շանթ» հեռուստաընկերությամբ առաջին անգամ եթեր է հեռարձակվել 2016 թվականի հունիսին, Ապրիլյան պատերազմից անմիջապես հետո: Հաղորդաշարի ստեղծ-

ման նպատակների, շարժառիթների և ընթացիկ խնդիրների մասին մեր անցկացրած առցանց հարցազրույցում հեղինակ և հաղորդավար Արշակ Զաքարյանը նշում է. «2013 թվականին ես նկատեցի, որ մեր մեդիա դաշտում բանակի մասին հիմնականում գրում և ցուցադրում են կամ վատը, կամ ոչինչ: Սկսեցի այդ թեմայով ֆիլմեր և սոցիալական հոլովակներ նկարել: Դրանք իրենց ազդեցությունն իհարկե ունեցան, բայց ոչ բավարար, և ես որոշեցի կազմակերպել օժանդակ օգնություն մեր բանակին, մասնավորապես դիրքապահներին: Նրանց տարբեր տեխնիկական միջոցներ, հեռադիտակներ, տեսախցիկներ, տելեսկոպներ նվիրելու ընթացքում սկսեցի վավերագրել: Իսկ 2014 թվականի օգոստոսյան դեպքերից հետո Դավիթ Զամալյանի առաջարկով մեկնեցինք վավերագրելու մեր զինուժի կողմից ազատագրած հսկա տարածքները արևմտյան սահմանի վրա ու այդպես սկսեցինք Դավիթի հետ պարբերաբար այցելել առաջնագիծ, անցկացնել մեկ-երկու գիշեր դիրքապահների հետ՝ վավերագրելով նրանց առօրյան: Կոնկրետ «Դիրքերում» հաղորդաշարը արդեն ոչ թե համացանցային, այլ հեռուստատեսային եթեր դուրս եկավ 2016 թվականի հունիս ամսից՝ «Շանթ» հեռուստաընկերության նախաձեռնությամբ: Այս կերպ «Շանթ» հեռուստաընկերության դեկավարությունը յուրովի աջակցում է մեր բանակին, ինչի համար անչափ շնորհակալ ենք և՛ մենք, և՛ ծնողներն ու աշխարհասփյուռ հայության մեծ մասը»:

Ինչպես նշեցինք, **«Դիրքերում»** հաղորդաշարի առաջին թողարկումը եթեր հեռարձակվեց Ապրիլյան պատերազմից հետո և պատմում է ուրբակոծված Մատաղիսում տիրող իրավիճակի մասին¹: Հենց սկզբից գրավում է հաղորդաշարի լավատեսական ոգին, մատուցման անկաշկանդ ոճը: Հաղորդավարը չի դրամատիկացնում դեպքերը՝ հավելյալ հեռուստադիտող գրավելու նպատակով, ինչը հատուկ է նման հաղորդաշարերին: Հեռուստադիտողին հնարավորություն է

¹ <https://www.youtube.com/watch?v=6tiw9xEzeSQ>

տրվում ծանոթանալու անմիջապես սահմանին իրենց պարտքը կատարող զինվորների առօրյանին, նրանցից լսելու իրենց ծառայության ու խնդիրների մասին: Թողարկումներից մեկում հաղորդավարը խնդրում է զինվորին. «Պատմիր այնպես, ինչպես ընկերներիդ կպատմես, երբ արձակուրդ գնաս»¹: Այստեղ շեշտադրվում է ոչ միայն ծառայության ընթացքում դիրքապահների դրսևորած մասնագիտական որակները, այլև կարևորվում են մարդկային, միջանձնային հարաբերությունները, զինվոր-սպա շփումները: «Դիրքերում» հաղորդաշարը ոչ միայն ապագա զինվորին հոգեբանորեն նախապատրաստում է զինվորական ծառայությանը, այլև նախնական գիտելիքներ ու հմտություններ է փոխանցում: Հաղորդման մեջ կարևորվում է յուրաքանչյուր զինվորը, նրա խնդիրներն ու հոգսերը, հիմնականում բացակայում է վերը նշված հաղորդաշարերին բնորոշ պայթուց: Հեռուստադիտողն ակամա դառնում է դիրքապահների առօրյայի մասնակիցը: Մի կարևոր առանձնահատկությունն է. հաղորդման հեղինակները առիթը չեն կորցնում և ներկայացնում են նաև սահմանին մոտ գտնվող պատմամշակութային օջախները, զինվորների՝ ազատ ժամերի զբաղմունքները, նախասիրությունները: Թողարկումներից մեկում հեռուստադիտողը ծանոթանում է հին հայկական եկեղեցու պատմությանը, «կարասային թաղումներին»² և այլն: Հաղորդումը կարծես հուշում է՝ դիրքապահ զինվորը երկու տարի դժոխքում չի գտնվում, նա պարզապես որոշ ժամանակով իր պարտքն է կատարում հայրենիքի հանդեպ՝ այդ ընթացքում նաև այգի է հիմնադրում, խնամում, գեղեցկացնում է միջավայրը: Այսինքն, կյանքը շարունակվում է անկախ ամեն ինչից: Ակնհայտ է հաղորդաշարի՝ սահմանային ծառայության հանդեպ ավելի հանդուրժողական տրամադրություններ ձևավորելը: Հաղորդման հեղինակ Արշակ Զաքարյանն իրենց նպատակներից է համարում նաև ազգ-բանակ գաղափարախոսության ամրապն-

¹ https://www.youtube.com/watch?v=gol4_u2s2AI

² <https://www.youtube.com/watch?v=-Vj-TwfrMCE>

դումը, հասարակություն-բանակ կապի ապահովումը, ինչպես նաև զորամասերի և տարբեր դիրքերի միջև առողջ մրցակցության ձևավորումը: «Զե՝ որ եթե մենք ցույց ենք տալիս և գովաբանում A զորամասի կամ դիրքի օրինակելի վիճակն ու կատարված աշխատանքները, ապա B զորամասը կամ դիրքը աշխատում է իրենց մոտ էլ ավելի լավ վիճակ ապահովել և արժանանալ մեր՝ հասարակության գովեստին և գնահատականին: Միաժամանակ, ծնողները առիթ են ունենում հպարտանալ իրենց զավակներով, սպաները շոյված ու գնահատված են զգում իրենց դժվար ու պատասխանատու աշխատանքի դիմաց», - հավելում է Արշակ Զաքարյանը:

Ամփոփելով նշենք, որ մեր հասարակությունն իսկապես ունի ոգին ամրապնդող և սեփական զինված ուժերի նկատմամբ հավատ ներշնչող հաղորդաշարերի կարիքը: Զե՝ որ, ինչպես արևելյան իմաստնությունն է հուշում, մարտադաշտում հաղթում են մինչ մարտադաշտ մտնելը, իսկ նման հաղորդաշարերը նպաստում են նախ և առաջ «գաղափարական հաղթանակին»:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հեռուստատեսությունը մարդկանց հոգեկանի վրա ազդող ամենաուժեղ գործոնն է, գաղափարական պայքարի գենը, իսկ մեր օրերում այն առանձնահատուկ նշանակություն ունի հատկապես հայկական բանակի, մեր զինված ուժերի նկատմամբ պատշաճ վերաբերմունք ձևավորելու հարցում: Այդ նպատակին են ծառայում հայկական եթերով հեռարձակվող մի շարք հաղորդաշարեր՝ «Զինուժ», «Նվիրյալները», «Դիրքերում» և այլն: Հայ հասարակությունը ունի կարիքը ոգին ամրապնդող և սեփական զինված ուժերի նկատմամբ հավատ ներշնչող հաղորդաշարերի, ինչին էլ միտված են ռազմահայրենասիրական հաղորդաշարերը:

Բանալի բառեր՝ հայկական զինված ուժեր, միջազգային հանրություն, դիրքապահ զինվոր, հայրենասիրական պայծառ, «Զինուժ», «Նվիրյալները», «Դիրքերում», հաղթողի հոգեբանություն ձևավորել

РЕЗЮМЕ

■ **ГАЯНЕ АКОПЯН, ЛИДА ТЕЛОЯН**

ПАТРИОТИЧЕСКИЕ ТЕЛЕПРОГРАММЫ В АРМЯНСКОМ ЭФИРЕ

Телевидение является самым сильным фактором, влияющим на менталитет людей, оружие идеологической борьбы, и сегодня особенно важно сформировать правильное отношение к армянской армии и нашим вооруженным силам. Для этой цели представлена серия программ, транслируемых армянскими телеканалами - «Вооруженные силы», «Приверженцы», «В позициях», и т. д. Армянское общество нуждается в программах, укрепляющих духа и вдохновляющих веру в свои вооруженные силы, к чему и направлены военно-патриотические программы.

Ключевые слова: Вооруженные силы Армении, международное сообщество, армейский солдат, патриотический пафос, «Вооруженные силы», «Приверженцы», «В позициях», формировать психологию победителя

SUMMARY

■ **GAYANE HAKOBIAN, LIDA TELOYAN**

PATRIOTIC PROGRAMS ON ARMENIAN TV

Television is the strongest factor influencing the minds of people, the weapon of ideological struggle, and today it is of particular importance to form a proper attitude towards the Armenian army, our armed forces. A series of programs broadcast on Armenian air - «Military force», «Devotees», In the «Position» - serve this purpose. The Armenian society needs programs strengthening the spirit and inspiring faith towards their own armed forces, at which military-patriotic programs are aimed.

Key words: Armenian Armed Forces, international community, fighting soldier, patriotic pathos, «Military force», «Devotees», In the «Position», to form the winner psychology

Y PATRONISMO EN LAS OBRAS DE LOS AUTORES ESPAÑOLES

LILIT TONoyAN

Patriotismo puede definirse como la identificación personal con el propio país, sumada a una preocupación especial con el bienestar de los compatriotas y, generalmente el sentimiento de afecto por el mismo. Digo generalmente porque el patriotismo es posible en el plano puramente intelectual, donde el concepto «amor a la patria» no tiene cabida.

Los primeros movimientos patriotas aparecen en las colonias americanas después de la invasión de Napoleón a España en 1808. Napoleón apresó a Carlos IV y Fernando VII, instalando en el trono a su hermano José Bonaparte. El pueblo español se levantó en rebelión y en cada pueblo se organizó una Junta de Gobierno (desaparecido el rey el poder volvía al pueblo). Las juntas se unieron en un Consejo de Regencia, que convocó a una Asamblea Nacional o Cortes de Cádiz, en la cual cada región incluyendo las posesiones de América, debían enviar diputados representativos. Los criollos, basándose en que el papa había concedido las tierras americanas a los Reyes Católicos y sus sucesores, y no a España o los españoles, se negaron a enviar diputados a Cádiz, y exigieron a través del Cabildo la formación de juntas de gobierno propias.

Hasta principios del siglo XVIII, los términos nación y patria solían designar al conjunto de individuos, o mejor de familias y grupos, de origen, costumbres, lengua o carácter compartidos. «Genio común» dice Gracián que es la patria. Peculiar temperamento, relacionado con los influjos de una naturaleza caprichosa, discontinua y misteriosa, que encuentra predicamento y desarrollo en autores como Quevedo o Saavedra y Fajardo. Organizada políticamente, la nación o patria será apellidada principado, república o reino. Reinos se dice una cabeza forman el cuerpo de la monarquía.

En este tipo de régimen social y político, dividido por lealtadas particulares y odios locales, ha dicho John Elliot, «la idea de una comunidad nacional... estaba aún muy débilmente desarrollada»¹. A la altura de 1720, el Diccionario de Autoridades recoge los tradicionales significados. Nación se dice del acto de nacer, utilizándose en lugar de nacimiento: p. ej., «ciego de nación» (otros ejemplos del lenguaje clásico pueden ser «nación de los peces» o «nación femenil»). También es la «colección de habitantes de alguna provincia, país o reino», como equivalente a la gens latina. Nación es término que, en «estilo bajo», se aplica a cualquier extranjero. Por nacionalidad se entiende afección o propiedad de la nación. El significado de patria también pende, según los diccionaristas, del latino: «lugar, ciudad o país en que se ha nacido». Patriota es voz idéntica a la de compatriota: «el que es de un mismo lugar, ciudad o provincia». En la década de 1780, el Diccionario de Terreros amplía algo el campo semántico de estos términos. Nación es «nombre colectivo que significa algún pueblo grande, reino, estado, etc., sujeto a un mismo príncipe o gobierno. El bajo pueblo dice en Madrid 'nación' a cualquiera que es de fuera de España, y así al encontrar alguna persona muy rubia v. g. dice parece nación. Algunos dicen hablando de las naciones, ligero y fácil como el francés, loco y juguetón como el italiano, malvado como el inglés, fiero como el escocés, ebrio como el alemán, embustero como el griego». A nación se vinculan nacional (que pertenece a una nación o es parcial suyo) y nacionalmente (según costumbre de nación). En patria se da parecida definición que en Autoridades: «el país en que alguno ha nacido», pero ilustrándola con un significativo ejemplo: «los romanos y griegos tenían un amor tan grande a su patria que se sacrificaban con gusto por ella». Patriota se sigue identificando a compatriota -«el que es de un mismo país con otro»-, incluyéndose el término patriótico, «lo que pertenece a la patria». En suma, pocas pero significativas novedades. Nación pa-

¹ España y su mundo, 1500-1700, Madrid, 1990, pp. 135 y ss

rece repartirse entre una acepción política y otra basada en la identidad del carácter. División que grosso modo afecta igualmente a la voz patria. Dos líneas o acepciones que estaban ya presentes en Feijóo. En los discursos Antipatía entre franceses y españoles y Mapa intelectual y cotejo de naciones, funda la diversidad del carácter en la «diferente temperie» de las naciones, así como la igualdad de todas ellas «en orden al uso del discurso». En Amor de la patria y pasión nacional defiende a la «patria grande», la única que merece ser amada, como «uniformidad de idioma, religión y costumbre que hace grato el comercio con los compatriotas»; hablando seguidamente de esta entidad como «cuerpo de estado donde debajo de un gobierno civil estamos unidos con la coyunda de unas mismas leyes». Como puede verse, «nacional» todavía es adjetivo que se resiente de cierta tacha peyorativa, como desordenado o estrecho amor a la propia nación. Esa resistencia de Feijóo no era compartida por otros escritores coetáneos que, no por casualidad, militan entre los partidarios de las reformas. José del Campillo justifica una de sus obras (Lo que hay de más y de menos en España, 1741) por su «natural amor a la patria», que es «nuestra nación», «nuestra España». Más claro en M. A. de la Gándara quien, en el «prólogo a la nación española» de sus Apuntes sobre el bien y el mal de España, se propone «inflamar su ánimo de un celo nacional... que no tengo más patria, más partido, más paisanaje que España, España, España». Los autores españoles usan a la vez de viejos y nuevos términos. Antonio Muñoz, pseudónimo del economista Enrique Ramos, habla de familias y de un cuerpo político dividido en estados, así como de vasallos y soberano; pero también de individuos de la sociedad, ciudadanos y nación (Recordemos que Voltaire, en el Diccionario filosófico, había dicho que patria era «agrupación de muchas familias»). Para Ramos, sin embargo, estaba próximo el tiempo en que «el dulce amor a la patria será la seña con que se deberá reconocer todo

buen español, y la utilidad pública el punto en que han de reunirse los votos y oficios de la nación»¹ La misma confusión terminológica está presente en Campomanes. Vocabulario de la sociedad de órdenes -vasallos, estados, reino, etc.-, que coexiste con otro moderno. Un repertorio de palabras, el último, que usa ante todo en contextos relacionados con una de sus criaturas predilectas: las Sociedades Económicas o Patrióticas de Amigos del País. (Que economía sea intercambiable con patriotismo ha de decirnos algo sobre el alcance de los nuevos saberes). Al encabezar el primer tomo de Memorias de la Matritense (1780) afirma Campomanes: «la política considera al hombre en calidad de ciudadano unido en sociedad con todos aquellos que componen el propio estado, patria o nación». En la dedicatoria al Tratado de la regalía de amortización, vincula su deseo de «prosperidad de la nación» a la «obligación de ciudadano»; fiando tales anhelos al «rey patriota» que es Carlos III. Un término como el empleado por Bolingbroke que aparece asimismo en Manuel de Aguirre: «nuestro patriota monarca»². Las Sociedades Patrióticas eran la realización en miniatura, a título ejemplar o experimental, de la nación ideal de la Ilustración. La directriz de Campomanes para formarlas indicaba que todos los socios deberían sentarse en las juntas sin acepción de rangos o calidades, pues su objetivo debía «apreciar sólo las ventajas de la patria», no las particulares. Es esa renuncia de intereses y pasiones de cada cual, sacrificadas de buena gana al bien de la sociedad, la que Ignacio Luis de Aguirre destaca entre las Utilidades de las Sociedades Patrióticas. Pero he aquí que Aguirre da un salto y pasa a denominar a Carlos III «primer socio de la nación»³. Morada del patriotismo: así designa Jovellanos a las Sociedades. Clero, Nobleza, magistrados, negociantes y artistas acuden a alistarse en ellas, desnudados del interés personal, deseosos del bien público: «todos se reúnen, se reconocen ciudadanos, se confiesan miembros de la

¹ Discurso sobre economía política, Madrid, 1769

² Correo de Madrid o de los Ciegos, 4 julio 1787.

³ En Memorias de la Real Sociedad Patriótica de Sevilla, Sevilla, 1779.

sociedad antes que de su clase... El celo y la sabiduría juntan sus fuerzas, el patriotismo hierve, y la nación, atónita, ve por la primera vez vueltos hacia sí todos los corazones de sus hijos»¹ A la uniformidad de costumbres, o identidad de cultura, elevadas al plano superior de la nación, ha de añadirse la uniformidad del territorio. Raro es el escritor que no dispara sobre las aduanas interiores, vestigio, se dice, de la antigua división de los reinos. Se pide la unificación racional de pesos, medidas y moneda. Y, con ella, la de la lengua: «el que uniformase los signos y todas las medidas con nuestros vecinos», dice Cabarrús, otro devoto del «eterno geómetra», «con toda la Europa, con el mundo entero, me parecería más perfecto, así como el que estableciese una lengua universal. Los hombres nacieron para comunicarse, auxiliarse y amarse, y todo cuanto altera o contradice estas preciosas e interesantes relaciones es impolítico y nocivo»². No todos, claro está, llegan tan lejos en los sueños esperantistas de Cabarrús. Por lo pronto, se conforman con que la unificación quede de puertas adentro. Foronda pide la enseñanza exclusiva del castellano en las escuelas públicas, y que todas las escrituras se redacten en este idioma, pues cuantas más sean las lenguas, mayores las dificultades para entenderse, mayores los obstáculos a la industria y al comercio. El Diccionario histórico-geográfico, editado por la Real Academia de la Historia (1802), en su artículo «Navarra», redactado por Joaquín Traggia, se congratula del retroceso del vascuence; si se ayudara a su extinción, dice, en menos de dos siglos sería un idioma muerto, como otros tantos «de cuyas ruinas se forma él en los siglos oscuros».

Patriotismo se asocia a inusitado, veloz, violento, sorprendente o inevitable. Patriótico será el adjetivo que elijan los periódicos más avanzados. Patriotas acabarán por denominarse los propios liberales. Enemigo de la patria, «infidente» o traidor, el peor insulto imaginable.

¹ **Elogio de Carlos III**, BAE 46, 316a., Madrid, 1950.

² *Cartas sobre los obstáculos que la naturaleza, la opinión y las leyes oponen a la felicidad pública* (1795), ed. de Madrid, 1973, p. 171.

Historia, por tanto, al servicio de una conciencia nacional. «Libro de glorias de nuestra nación», dice Masdén del suyo. Exaltación de los siglos áureos, el decimosexto y el décimooctavo, cuando la gloria militar, las manufacturas y el comercio marchan acordes con el buen gusto y los aumentos de las nobles artes. Historia heroica que propaga la memoria de los míticos fundadores de la nación. Cadalso tenía el propósito de formar una historia heroica, relación de todos los hombres grandes que había producido la nación desde Pelayo, «el libertador de su patria»; una historia que llevase a levantarle estatuas y monumentos en los parajes públicos de las ciudades, con un breve relato de sus hazañas. Iriarte escribe un soliloquio sobre Guzmán el Bueno, que en 1791 iba por su tercera edición. La figura de Pelayo da materia para tres obras teatrales -la Hormesinda de Moratín el viejo y las de Jovellanos y Quintana-, a modo de patriótica pedagogía. «Recuerdo -dice Jovellanos- de las grandes virtudes del héroe de la nación», quien coloca en su boca parrafadas como ésta: «¡oh dulce patria! / ¡oh amada libertad! ¡en favor vuestro / también conspiran las heroicas almas! / valientes asturianos, resto ilustre / de la terrible oprimida España» (Acto 4o, Escena 1a). De tono patriótico más subido es la obra de Quintana, editada en 1805. Pelayo es mostrado como defensor del Estado. Los personajes protestan de su encendido amor a la Patria: «no hay patria Veremundo! ¿No la lleva / todo buen español dentro de su pecho? / Ella en el mío sin cesar respira: / la augusta religión de mis abuelos, / sus costumbres, su hablar, sus santas leyes / tienen aquí un altar que en ningún tiempo / profanado será» (Acto 1o, Escena 4a). Quintana es quien pone en práctica la idea de Cadalso, la de una historia heroica, al dar a la estampa en 1807 la primera serie de las Vidas de españoles célebres: el Cid, Guzmán el Bueno, Roger de Lauria, el Príncipe de Viana, el Gran Capitán, Núñez de Balboa, Pizarro, Alvaro de Luna y Bartolomé de las Casas; eso sin contar personajes como Juan de Padilla, cantado y canonizado como héroe de la patria y enemigo de la tiranía. Una historia que, como se ve, excluye a los reyes; por ser sus vidas, dice

Quintana, «más conocidas»¹. En realidad, porque la nación, para ser plenamente, debía desprenderse de la cabeza, o confinarla en funciones representativas. La nación tenía que serlo todo. En efecto, definidas las categorías espacio-temporales de la nación sólo restaba afirmarla en la práctica como sujeto o titular del poder constituyente. Esta será la tarea cumplida, sobre todo, después de la apertura de las Cortes de Cádiz. Para decirlo de una forma breve, nación es para los liberales un sujeto unitario e indivisible, integrado por individuos iguales. Espiga, al defender el artículo primero de la Constitución («la nación es la reunión de los españoles de ambos hemisferios»), la entendía a la manera rusioniana, como reunión de voluntades, no de territorios, que tiene por resultado la «voluntad general»². Juan Nicasio Gallego la definirá siguiendo la misma fuente como un «cuerpo moral», regido por leyes que son resultado de la voluntad de los individuos que la forman (29 agosto 1811). La nación es todo, no parte, dirá Oliveros (15 octubre 1811) remedando la conocida frase de Sieyès. De acuerdo con esto, el rey ha de situarse dentro de este cuerpo, no por encima. ¿Quién es el rey?, se preguntará Gallego: «el primero de los ciudadanos» (29 diciembre 1810): «primer magistrado de la nación», lo denomina el Discurso preliminar de la Constitución.

La presente definición implica que el elemento básico del patriotismo es el deseo de pertenecer al grupo que es valorado positivamente. Esto es, los patriotas desean formar parte de sus grupos, se definen como miembros de él y tienen algún tipo de «sentimiento de nosotros». Los patriotas no desean ser miembros de otro grupo y/o vivir en otro lugar. Incluso si por circunstancias especiales tienen que salir de su país, siempre desean volver. Este deseo de pertenencia al grupo tiene una especial importancia, puesto que los individuos nacen dentro de un grupo, y son percibidos como miembros del mismo.

¹ **Obras**, BAE 19, Madrid, 1946.

² Diario de las discusiones y actas de las Cortes, Cádiz 1810-13. El discurso de Espiga, en 25 agosto 1811.

Aquí quiero mencionar a Arturo Pérez-Reverte Gutiérrez (Cartagena, España; 25 de noviembre de 1951) es un escritor y periodista español, miembro de la Real Academia Española desde 2003. Antiguo corresponsal de RTVE y reportero destacado en diversos conflictos armados y guerras, es el autor, entre otras, de la saga *Las aventuras del capitán Alatriste*. Entre los conflictos más destacados que ha cubierto el escritor se encuentran la guerra de Chipre, fases de la guerra del Líbano, la guerra de Eritrea, la guerra del Sahara, las Malvinas, El Salvador, Nicaragua, Chad, Libia, Sudán, Mozambique, Angola, el Golfo Pérsico, Croacia y Bosnia. La guerra que más le marcó fue la Guerra de Eritrea de 1977, la cual cita en algunos de sus artículos y en su novela **Territorio Comanche**, en la que estuvo desaparecido durante varios meses y a la que consiguió sobrevivir.

Las palabras claves: patriotismo, nación, patria, historia, amor, pueblo, trono, guerra, escritor, país, defender, luchar, conquistar.

ԱՄՓՈՓՈՒՄ

ՏՈՆՈՅԱՆ ԼԻԼԻԹ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ԻՍՊԱՆԱՑԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄՈՏ

Այս հոդվածում արծարծվում է հայրենասիրության թեման իսպանացի հեղինակների գործերում: Հայրենասիրություն բառը ծագել է լատիներենից, այն մի զգացմունք է, որն ունի մարդ արարածը իր հայրենի հողի և ազգի հանդեպ: Ազգը քաղաքակրթված հասարակություն է, որը ստեղծում է աշխարհագրական և պատմական մի ամբողջություն՝ կազմված մարդկանցից, որոնք ապրում են նույն տարածքում, ունեն ընդհանուր արմատներ, սովորույթներ, ավանդույթներ, կրոն, պատմություն, պայքարներ, հաղթանակներ և անկումներ, մշակույթ, ընդհանուր փափագ, միևնույն գիտակցությունը ինքնավարության և ազգային անկախության հանդեպ: Հայրենասիրությունը մի գաղափար է, որը կապում է անհատին իր հայրենիքի հետ:

Բանալի բաներ՝ հայրենասեր, ազգ, պատմություն, հայրենիք, սիրելի, ժողովուրդ, գահ, պատերազմ, երկիր, պաշտպանել, պայքարել, նվաճել

РЕЗЮМЕ

■ ЛИЛИТ ТОНОЯН

ТЕМА ПАТРИОТИЗМА У ИСПАНСКИХ ПИСАТЕЛЕЙ

Эта статья посвящена теме патриотизма в работах испанских писателей. Слово «патриотизм» имеет латинское происхождение и выражает чувство, которое питает человек к своей родине и своей нации. Нация - это цивилизованное общество, создающее географическое и историческое единство, состоящее из людей, живущих в одном и том же пространстве, имеющих общие корни, обычаи, традиции, религию, историю, борьбу, победы и потери, культуру, общие желания и мечты, одинаковое сознание автономии и национальной независимости. Идея патриотизма связывает индивидуума с его родиной.

Ключевые слова: патриотизм, нация, история, родина, любить, люди, трон, война, страна, защищать, бороться, покорять

SUMMARY

■ LILIT TONAYAN

THE THEME OF PATRIOTISM IN SPANISH WRITERS

This article reflects the theme of patriotism in the works of Spanish authors. The word patriotism comes from Latin. This is a feeling that human being possesses towards his native land and towards his nation. Nation is a civilized society, which creates geographical and historic integrity consisting of people who live in the same territory, have common routes, customs, traditions, religion, history, struggles, victories, downs, culture, common aims, the same consciousness towards autonomy and national independence. Patriotism is an idea that connects a person with his homeland.

Key words: patriotism, nation, homeland, history, love, people, throne, war, country, to defend, to struggle, to conquer

**ԱՊԱԳԱ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԼԻԴԱ ԱՐԱՄՅԱՆ, ՍՈՆԱ ՄԱԿԻՉՅԱՆ, ՆՎԱՐԴ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ

Զորամասերում ավարտական մանկավարժական պրակտիկան կարևորագույն դեր է խաղում ուսանողի անձի՝ ապագա մասնագետի կայացման գործընթացում: Պրակտիկան դիտարկվում է որպես կարևորագույն մի օղակ, որը կապում է համալսարանում սովորող ուսանողին ապագա պրակտիկ գործունեության հետ: Պրակտիկայի ընթացքը ենթադրում է ուսանողների՝ կրթական տեսական և պրակտիկ ծրագրի յուրացումից ամրապնդում, ինչը Մանկավարժություն և հոգեբանություն (գինվորական) մասնագիտությամբ սովորող ուսանողների շրջանակներում կարող է ապահովել բուհ-բանակ համագործակցությանը:

Զորամասերում պրակտիկայի կազմակերպումը նպաստում է գինվոր-հասարակություն, ազգ-բանակ գործունեությանը, հասարակության անվտանգության բարձացմանը՝ մշակութային, ուսումնական, կրթական, մարզական և սոցիալ-հոգեբանական ծրագրերի ծառայությանը: Մանկավարժական պրակտիկան էմպիրիկ տվյալների հավաքագրման հիմք է, որոնք նաև անհրաժեշտ են ուսանողների ավարտական աշխատանքների համար: Ինչն ուղղված է ինչպես ստացված տեսական գիտելիքների ամրապնդմանը, այնպես էլ կոնկրետ ունակությունների և հմտությունների և կարողությունների ձևավորմանը և մարզմանը մասնագիտացված հիմնարկների, մասնավորապես ՊՆ ռազմական ստորաբաժանումների և անձի սոցիալական վարքի հիմնախնդիրներով զբաղվող հասարակական հաստատությունների գործունեության առանձնահատկությունների ուսումնասիրման գործընթացում:

Ջինվորական ստորաբաժանումներում մանկավարժական պրակտիկայի հիմնական նպատակը սոցիալ-հոգեբանական աշխատանքի կազմակերպման ու պլանավորման ուսումնասիրումն է սոցիալական ուղղվածության հիմնարկներում, ինչպես նաև զինվորական մանկավարժ-հոգեբան մասնագիտությամբ ուսումնառության գործընթացում ստացված ունակությունների, հմտությունների և գիտելիքների ամրապնդումը գործնական փորձաշրջանի ընթացքում:

Ջորամասերում պրակտիկայի ընդհանուր խնդիրը զինվորական ստորաբաժանումներում պրակտիկ գիտելիքների յուրացումն ու մասնագիտական աշխատանքի փորձի ձեռքբերումն է, այսինքն՝ ապագա կոմպետենտ մասնագետի պատրաստումը¹:

Մանկավարժություն և հոգեբանություն (զինվորական) մասնագիտության ուսանողների պրակտիկայի մասնավոր արդիական խնդիրներից է հասարակությունից ժամկետային զինծառայողների «սոցիալական մեկուսացման» երևույթի ուսումնասիրությունը սոցիալ-հոգեբանական հարմարման համատեքստում: Այդ հիմնախնդիրների իմացությունն անհրաժեշտ պայման է ապագա զինվորական հոգեբանի համար զինվորի անձի հոգեբանական շտկմանն ուղղված աշխատանքների կազմակերպման և բարեհաջող անցկացման նպատակով:

Ուսանողների մանկավարժական պրակտիկայի ընդհանուր խնդիրներն են .

- Ծանոթացում ապագա զինվորական հոգեբան մասնագիտության պրակտիկ հիմքերի հետ:

¹ Աբամյան Լ.Ռ., Մակիցյան Ս.Ա., Պրակտիկայի բարելավման գործընթացին ուղղված ուղեցույցի կառուցվածքը, «Անընդհատ պրակտիկայի արդիականացումը և կազմակերպման մեխանիզմների ներդրումը բարձրագույն մանկավարժական կրթության համակարգում» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2013:

- Ծանոթացում տվյալ զինվորական ստորաբաժանման գործունեության բովանդակության հետ:
 - Ծանոթացում զինվորական ստորաբաժանումում հոգեբանի-մանկավարժի գործառնության պարտականությունների հետ:
 - Ուսանողների մեջ մասնագիտական զինվորական հոգեբանամանկավարժական հմտությունների և ունակությունների ձևավորում:
 - Հոգեբանական օգնության կարիք ունեցող զինծառայողների հետ սոցիալ-հոգեբանական աշխատանքի մեթոդաբանության և հասկացությունների ապարատի յուրացում:
 - Սոցիալ-հոգեբանական աշխատանքի ուրվագծման, ինչպես նաև էմպիրիկ ուսումնասիրությունների տեխնոլոգիաների և մեթոդիկաների յուրացում:
 - Ավարտական աշխատանքի համար անհրաժեշտ նյութերի հավաքագրում:
- Հիշյալ պրակտիկաներն ունեն նաև մասնավոր *խնդիրներ*.

1. զորամասի կառուցվածքի, ծառայությունների և բաժինների հիմնական գործառնությունների ուսումնասիրում,

2. զինվորական (ուսումնական) կոլեկտիվում փոխհարաբերությունների հիմնական ձևերի ուսումնասիրում,

3. զինվորական ստորաբաժանումների աշխատակիցների աստիճանակարգի փոխհարաբերությունների ուսումնասիրում,

4. զինծառայողների կատարած զանցանքների, հանցագործությունների հոգեբանական պատճառների բացահայտում և այլն:

Զինվորական ստորաբաժանումներում կազմակերպվող պրակտիկայի ընթացքում ուսանողներին ներկայացվում են պահանջներ: Նախքան պրակտիկան անցնելը ուսանողը տեղեկանում է մասնագիտական պրակտիկայի ժամկետներին,

խնդիրներին և բովանդակությանը, ստանում պրակտիկայի աշխատանքային ծրագիրը:

Մանկավարժական պրակտիկան ուսումնական գործընթացի շարունակությունն է¹:

Զինվորական ստորաբաժանումներում պրակտիկան անցնելու ընթացքում խիստ պահանջներ են ներկայացվում ինքնակարգապահությանը, զորամասում պրակտիկա անցնելու գրաֆիկի պահպանմանը: Ուսանողները հնարավորություն են ստանում իրականացնելու բազմապիսի մասնագիտական աշխատանքներ: Ստորև ներկայացնում ենք մասնագիտական պրակտիկ աշխատանքները, որոնք իրականացվում են ուսանողների կողմից.

1. Սոցիալ-հոգեբանական իրավիճակների հոգեբանական վերլուծություն-գնահատում - զինվորական հոգեբանի աշխատանքը, դրա բովանդակությունը զորամասի բոլոր խմբերի հետ: Նպատակը՝ գործառնական հմտությունների ձեռքբերում:

2. Զին.ծառայողների հետ աշխատանքում հոգեբանի մասնագիտական էթիկայի կանոնակարգի մշակում: Նպատակը՝ հոգեբանի մասնագիտական կոդեքսի ձևավորում:

3. Հոգեբանամանկավարժական ծրագրերի կազմում, դրանց բովանդակություն, ռազմավարության մշակում: Նպատակը՝ համապատասխան ոլորտում անհրաժեշտ թիրախային ծրագիր կազմելու կարողության ձևավորում՝ ապահովելով ազգ-բանակ համագործակցությունը:

4. Քեյսերի նկարագրություն, վերլուծություն, գնահատում: Նպատակը՝ զին.ծառայողների սոցիալական դեպքի և հոգեբանամանկավարժական վերլուծության, գնահատման ռազմավարական պլանների մշակում:

¹ Ուսումնառողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի բարելավմանն ուղեցույց, Ս. Ռ. Գևորգյան, Վ. Ժ. Սարգսյան, Լ. Ռ. Արամյան, ՀՊՄՀ, Երևան, 2012 (ձեռագրի իրավունքով):

5. Խմբային աշխատանքներ զինծառայողների հետ. հոգեբանամանկավարժական մեթոդիկաների կիրառում:

Հիշյալ պրակտիկաների կազմակերպման ժամանակ շատ կարևոր է մեթոդիստ-դեկավարների մասնագիտական վերահսկողությունը, աջակցությունը և հատկապես ուղղորդումը¹: Կարևորելով այն հանգամանքը, որ ստորաբաժանումներում հանդիպումները պետք է լինեն նպատակային, խիստ պլանավորված՝ հաշվի առնելով զինվորական ռեժիմը, զինվորական կանոնադրային հարաբերությունները, զինվորի վարքային, անհատական, տարիքային առանձնահատկությունները նախապես պլանավորվում են՝ սկզբում ծանոթացման, հետո վերլուծական աշխատանքները²: Աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ ուսանողների մասնագիտական աշխատանքների ընթացքում ուղղորդման գործունեությունը կարելի է բաժանել տոկոսային հարաբերությամբ. պրակտիկայի կրթական ծրագրի պատասխանատու՝ 40%, պրակտիկայի պատասխանատու մեթոդիստ՝ 40%, զինվորական ստորաբաժանման պատասխանատու մասնագետ՝ 20%:

Պրակտիկայի շրջանակներում մասնագիտական աշխատանքների համագործակցային նման ուղղորդման գործունեության կիրառումը հնարավորություն է ընձեռում Մանկավարժություն և հոգեբանություն (զինվորական) մասնագիտությամբ սովորող ուսանողների մեջ ձևավորելու տարբեր սոցիալ-հոգեբանական կոմպետենցիաներ, մասնավորապես՝ հաղորդակցման, շփման կարողությունների, պատասխանատվության, արդյունավետ միջանձնային փոխհարաբերությունների հաստատման մասնագիտական հմտություններ:

¹ **Корнева Л. В.** Психологические основы педагогической практики, М., Владос, 2006, 160с.

² **Зинкевич-Евстигнеева Т. Д., Фролов Д. Ф., Грабенко Т. М.** Теория и практика командообразования. Современная технология создания команд / Под ред. Т. Д. Зинкевич-Евстигнеевой. СПб.: Речь, 2004, 304 с.

ԱՄՓՈՓՈՒՄ

Պրակտիկայի ընթացքը ենթադրում է ուսանողների՝ կրթական տեսական և պրակտիկ ծրագրի յուրացումից ամրապնդում, ինչը Մանկավարժություն և հոգեբանություն (զինվորական) մասնագիտությամբ սովորող ուսանողների շրջանակներում կարող է ապահովել Բուհ-բանակ համագործակցությանը: Մանկավարժություն և հոգեբանություն (զինվորական) մասնագիտության ուսանողների պրակտիկայի մասնավոր արդիական խնդիրներից է հասարակությունից ժամկետային զինծառայողների սոցիալական մեկուսացման երևույթի ուսումնասիրությունը սոցիալ-հոգեբանական հարմարման համատեքստում: Այդ հիմնախնդիրների իմացությունն անհրաժեշտ պայման է ապագա զինվորական հոգեբանի համար զինվորի անձի հոգեբանական շտկմանն ուղղված աշխատանքների կազմակերպման և բարեհաջող անցկացման նպատակով:

Բանալի բառեր՝ մասնագիտական պրակտիկայի ծրագիր, զինծառայողի սոցիալ-հոգեբանական հարմարում, հոգեբանական-շտկողական աշխատանք

РЕЗЮМЕ

■ **ЛИДА АРАМЯН, СОНА, МАКИЧЯН, НВАРД АРЗУМАНЯН**
ОСОБЕННОСТИ ОРГАНИЗАЦИИ ПРОФЕССИОНАЛЬНОЙ ПРАКТИКИ БУДУЩЕГО ВОЕННОГО ПСИХОЛОГА

Курс практики по специальности Педагогика и психология (военная) предполагает переход от теоретического к практическому укреплению образовательной программы студентов в рамках сотрудничества Вуз-армия. Одним из частных задач этой профессиональной практики является изучение явления «социальной изоляции» военнослужащего в контексте социально-психологической адаптации. Знание и учет этой проблемы является необходимым для будущего военного психолога с целью организации и эффективного проведения психологических коррекционных работ.

***Ключевые слова:** программа профессиональной практики, социально-психологическая адаптация военнослужащего, психолого-коррекционная работа*

SUMMARY

■ **LIDA ARAMYAN, SONA MAKICHYAN, NVARD ARZUMANYAN**
THE FEATURES OF ORGANIZATION OF FUTURE MILITARY PSYCHOLOGICAL PROFESSIONAL PRACTICE

The practice course in Pedagogy and psychology (military) involves the transition from the theoretical to the practical strengthening of the educational program of students in the framework of cooperation University-Army. One of the particular objectives of this professional practice is the study of the phenomena of soldier's "social exclusion" in the context of socio-psychological adaptation. The knowledge and consideration of this issue is essential to the future military psychologist with the purpose of the organization and effective conduct of psychological correction works.

***Key words:** the program of professional practice, socio-psychological adaptation of the soldier, psycho-correctional work*

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾՐՆԹԱՅԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՆԿՑՈՒՆՆԵՐԸ

ՎԱԶԳԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Հանրակրթական դպրոցի տարբեր աստիճաններում (տարրական, միջին և ավագ) ուսուցումն ու դաստիարակությունը իրականացվում է սովորողների տարիքային առանձնահատկություններին և զարգացման մակարդակին համապատասխան:

«Պատմություն» առարկայի առանձին ուսուցանումը հիմնական դպրոցում սկսվում է 6-րդ դասարանից, որը համապատասխանում է դեռահասության տարիքային փուլին, ուստի «Համաշխարհային պատմության» (6-9 դասարաններ) և «Հայոց պատմության» (6-9 դասարաններ) դասագրքերի կառուցվածքը, շարադրանքը և այդ առարկաների դասավանդման բովանդակությունն ու մեթոդները պետք է հաշվի առնեն դեռահասի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, որպեսզի պատմության դասերը աշակերտների համար լինեն գրավիչ և առավել օգտակար:

Դպրոցը և ուսուցումը մեծ տեղ են գրավում դեռահասի կյանքում: Նա պատրաստակամ է կատարելու այնպիսի ուսումնական գործունեություն, որի շնորհիվ իր սեփական աչքերում առավել հասուն է երևում: Նման պատրաստակամությունը կարող է դառնալ ուսման դրդապատճառներից մեկը: Դեռահասին բնորոշ է հետաքրքրասիրությունը: Նա պատրաստ է ընկալելու նորը, հետաքրքրականը ու նշանակալիցը, ուստի ինքնուրույն պահանջմունքները մեծ նշանակություն ունեն նրա համար: Նա հեշտ է յուրացնում գործողության ձևերը, երբ ուսուցիչը իրեն միայն օգնում է¹:

Իհարկե, հետաքրքրությունը ուսումնական առարկայի հանդեպ մեծապես կախված է դասագրքի նյութի շարադր-

¹ **Выготский Л.С.** Мышление и речь. М., 2016.

ման և դասավանդման որակից: Մեծ նշանակություն ունի ուսուցչի կողմից նյութի մատուցումը, այն գրավիչ և մատչելի բացատրելու կարողությունը: Դա մեծացնում է աշակերտի հետաքրքրությունը, ուժեղացնում սովորելու մոտիվացիան:

Դեռահասի հոգեբանությանը բնորոշ է ցանկացած պատմական փաստ արդիականացնելու, մեր օրերում դրա դրսևորումը փնտրելու ձգտումը: Ուսուցիչը պետք է նպաստի դրան, խորացնի այդպիսի հակումը: Օրինակ՝ 9-րդ դասարանում «Հայոց պատմություն» առարկայի¹ 16-րդ թեման ամփոփելիս ուսուցիչը դիմում է դասարանին հետևյալ պրոբլեմային հարցով.

-Ի՞նչ զուգահեռներ կարող եք անցկացնել Արցախյան ազատագրական պատերազմում բեկումնային դարձած 1992թ. և թուրքական գերակշիռ զորքերի նկատմամբ 1918թ. մայիսի հերոսամարտերում (Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաբաղի խառնուրդ) հայոց զինված ուժերի հաղթանակի միջև:

Դեռահասները գնահատում են գիտակ ու խիստ, բայց արդարամիտ, նրբանկատությամբ օժտված ուսուցիչներին, որոնք կարողանում են հետաքրքիր ու հասկանալի ձևով բացատրել նյութը, ընտրել աշխատանքի ճիշտ տեմպ, դրանում ներգրավել աշակերտներին և այն առավել չափով արդյունավետ դարձնել բոլորի և յուրաքանչյուրի համար: Դեռահասները հատկապես բարձր են գնահատում այն ուսուցիչներին, որոնք ազատ տիրապետում են իրենց առարկային, ունեն ընդարձակ գիտելիքներ, ձգտում են դասագրքի սահմաններից դուրս գիտելիքներ հաղորդել: Դուր չեն գալիս այն մանկավարժները, որոնք բացասաբար են վերաբերվում աշակերտների ինքնուրույն դատողություններին²:

Միջին դպրոցում ուսումնական նյութի ծավալը զգալիորեն մեծանում է, ուստի դեռահասի մոտ մեծանում է մտա-

¹ Հայոց պատմություն (նորագույն շրջան), 9-րդ դասարան, Երևան, 2014:

² Տարիքային և մանկավարժական հոգեբանություն / Ա. Վ. Պետրովսկու խմբագրությամբ, Երևան, 1977:

պահման արագությունը և հիշողության մեջ պահվող պատմանյութի զանգվածը: Մեխանիկական մտապահումը գնալով իր տեղը զիջում է տրամաբանական, իմաստային մտապահմանը, բարելավվում է հիշողության արդյունավետությունը: Եթե տարրական դասարաններում աշակերտները աշխատում էին նյութը մտապահել բառացիորեն, ապա այժմ դեռահասը հաճախ դժգոհում է, երբ ուսուցիչը պահանջում է անգիր հիշել (սահմանումը, օրենքը) և հակված է նյութը վերարտադրել «իր խոսքերով»: Հաշվի առնելով այս առանձնահատկությունները՝ անհրաժեշտ է, որ ուսուցիչը, առաջին՝ դեռահասին սովորեցնի տրամաբանական մտապահման ճիշտ հնարները (իմաստային խմբավորում կատարելու կարողություն, հիշելու համար հենարանային մտքերի առանձնացում, կրկնության ճիշտ կազմակերպում, տեքստերի սխեմատիկ պլանի կազմում և այլն): Երկրորդ՝ բացատրի սահմանումները, օրենքները, պատմական օրինաչափությունները ճշտորեն մտապահելու անհրաժեշտությունը: Երրորդ՝ դպրոցականներին օգնի մշակելու բովանդակությունը «իր խոսքերով» ճշտորեն վերապատմելու կարողություն¹:

Քննարկվող տարիքի կարևոր առանձնահատկությունը ակտիվ, ինքնուրույն, ստեղծագործական մտածողության ձևավորումն է: Դեռահասը չի վստահում միայն ուսուցչի կամ դասագրքի հեղինակությանը, այլ ձգտում է ունենալ սեփական կարծիք, իր հայացքներն ու դատողությունները, քննադատաբար մոտենալ նյութին, որը նախկինում նրա մեջ չի հարուցել ոչ մտորում, ոչ կասկած, «սխալներ» է գտնում դասագրքում կամ ուսուցչի դատողություններում, ուզում է համոզվել այս կամ այն մտքի, դրույթի, դատողության ճշտության մեջ: Ինքնին դա մտածողության արժեքավոր հատկանիշ է և այն ամեն կերպ պետք է զարգացնել²:

¹ **Мухина В. С.** Возрастная психология, М., 2006.

² **Կրուտեցկի Վ. Ի.**, Մանկավարժական հոգեբանության հիմունքներ, Երևան, 1976:

Ինչպես նշում են հոգեբանները, դեռահասության տարիքը սենզիտիվային (բարենպաստ) է այդպիսի մտածողության զարգացման համար: Ուսուցչի դիմելը դեռահասների մտքին, նրանց մտավոր հնարավորություններին վստահելը, որքան կարելի է ավելի շատ է համապատասխանում դեռահասների անձնավորության տարիքային առանձնահատկություններին, քանի որ դա նշանակում է բարձր գնահատել նրանց մտավոր ուժերը: Այդ պատճառով պետք է ըստ ամենայնի խթանել դեռահասների ինքնուրույն ստեղծագործական մտածողությունը, որի համար օգտակար է նրանց հաճախակի կանգնեցնել ինքնուրույնաբար տարբեր օբյեկտներ համեմատելու, դրանց նմանությունն ու տարբերությունը գտնելու, ընդհանրացումներ ու եզրակացություններ անելու անհրաժեշտության առջև:

Տվյալ պարագայում պատմության ուսուցման գործընթացին բնորոշ է ոչ այնքան ստեղծագործական, որքան գիտական մտածողությունը, գիտական հասկացությունների յուրացումը: Ըստ Լ.Ս. Վիգոտսկու՝ գիտական հասկացություններն ունեն «մեծագույն նշանակություն երեխայի մտածողության զարգացման համար»¹:

Հայտնի է, որ մտքի ակտիվ, ինքնուրույն աշխատանքը սկսվում է միայն այն ժամանակ, երբ սովորողների առջև ծագում է որևէ պրոբլեմ, որևէ հարց: Այդ պատճառով ուսուցիչները պետք է աշխատեն այնպես կազմակերպել պարապմունքը դեռահասների հետ, որ նրանց առջև հաճախակի ծագեն տարբեր բարդության պրոբլեմներ և նրանք ինքնուրույնաբար լուծեն այդ պրոբլեմները (բանաձևերը և կանոնները ինքնուրույն դուրս բերելը, պատմական և աշխարհագրական օրինաչափությունները գտնելը, թեորեմի ապացուցումն ինքնուրույն կառուցելը և այլն) [1,191]²: Թերևս ժամանակն է, որ

¹ **Выготский Л.С.** Мышление и речь. М., 2016.

² **Կրուտեցկի Վ. Ի.**, Մանկավարժական հոգեբանության հիմունքներ, Երևան, 1976:

մեր պատմաբանները ստեղծեն և հրատարակեն պատմական խնդիրներ պարունակող ժողովածուներ աշակերտների և ուսանողների համար:

Դեռահասի համար աստիճանաբար կյանքի ինքնուրույն և շատ կարևոր ոլորտ է դառնում շփումը՝ միմյանց հետ փոխկապակցված երկու ձգտումների դրսևորմամբ: Առաջինը՝ իր հասակակիցների հետ շփվելու և համատեղ գործունեություն կատարելու ձգտումն է, կոլեկտիվ կյանքով ապրելու, մոտ ընկեր, բարեկամ ունենալու ցանկությունը: Մյուս, ոչ պակաս ուժեղ ցանկությունը ընկերների կողմից ընդունված ու հարգված լինելու պահանջմունքն է¹:

Ինչպես տեսնում ենք, դեռահասության տարիքի հոգեբանական առանձնահատկությունները նպաստավոր են ուսուցման գործընթացում ակտիվ, փոխներգործուն մեթոդները լայնորեն կիրառելու համար, որոնք, տարբերակված ձևով, կարելի է օգտագործել բոլոր ուսումնական առարկաների դասավանդման ընթացքում:

Ասվածը պարզաբանելու համար առաջարկում ենք ակտիվ ուսուցման սկզբունքներով կառուցված պատմության դասի անցկացման մի տարբերակ, որի նյութը վերցրել ենք դասագրքից²:

Ներածական դաս

Դասի նպատակը. Վերհիշել և արժևորել նախորդ դասաբաններում սովորած մարդկային հասարակության ձեռք բերած նվաճումները, հիմնավորել հետագա դասերում մարդկության քաղաքակրթության նվաճումների իմացության անհրաժեշտությունը և արդիական նշանակությունը:

Տևողությունը՝ 45 րոպե

Պարագաները՝

¹ Տարիքային և մանկավարժական հոգեբանություն / Ա. Վ. Պետրովսկու խմբագրությամբ, Երևան, 1977:

² Համաշխարհային պատմություն (նոր դարեր), 8-րդ դասարան, Երևան, 2013:

- աշխարհը 17-րդ դարի կեսին (պատի քարտեզ)
- ժամանակակից աշխարհի քաղաքական քարտեզ
- ուսուցչի կազմած օժանդակ բաշխիչ նյութ՝ «Մարդկության հասարակական զարգացման ընթացքում ձեռք բերված նվաճումները» վերնագրով
- 6 հատ A 2 չափսի թուղթ
- գունավոր մարկերներ:

Ընթացքը

Ուսուցիչը դիմում է դասարանին հարցով. ի՞նչ է ուսումնասիրում պատմությունը և ի՞նչ է այն: Նախ «ուղեղային գրոհի» միջոցով աշակերտները հայտնում են իրենց կարծիքները, որոնք գրանցվում են գրատախտակին: Ապա, հաջորդ փուլում, այդ տեսակետները քննարկում են և փորձում ընտրել առավել ճիշտ տարբերակը, այն է՝ պատմությունը գիտություն է, որն ուսումնասիրում է մարդկային հասարակության և բնության երևույթների զարգացումը և որ դպրոցական ծրագիրն ընդգրկում է միայն մարդկային հասարակության զարգացման ուսումնասիրումը (5-7 թույլ):

Որպես ներածական պարապմունքի տրամաբանական շարունակություն աշակերտներն ուսուցչի օգնությամբ ուսումնասիրում են «Մարդկության հասարակական զարգացման ընթացքում ձեռք բերված նվաճումները» բաշխիչ նյութը (5 թույլ):

Այնուհետև ուսուցիչը աշակերտներին բաժանում է վեց խմբի՝ 4 -ական աշակերտով: Դա ակտիվություն դրսևորելու համար խմբի անդամների առավել նպատակահարմար քանակն է, քանզի այս դեպքում, հոգեբանների կարծիքով, ձևավորվում է կոլեկտիվ աշխատանքի մթնոլորտ և կարևորվում յուրաքանչյուրի պատասխանատվությունը կատարվող գործի նկատմամբ: Խմբերից յուրաքանչյուրը ստանում է հանձնարարություն՝ 8-10 թույլում գրավոր թվարկել «Մինչև 17-րդ դարը մարդկային հասարակության ձեռք բերած արժեքները»:

Երկու խումբը՝ հին աշխարհում,

երկու խումբը՝ միջնադարում,

երկու խումբը՝ հայոց միջնադարում:

Ժամանակը լրանալուց հետո յուրաքանչյուր խմբից մեկական աշակերտ ներկայացնում է իրենց գրառումները: Հանձնարարությունների ավարտուն տարբերակներն ունեն հետևյալ տեսքը.

Մարդկային հասարակության ձեռք բերած արժեքները հին աշխարհում

1. Հոտ-տոհմ-ցեղ-ժողովուրդ զարգացումը:

2. Մետաղի գյուտը և դրա հետևանքները:

3. Պետության և կրոնի դերը:

4. Ստրկության երևույթը:

5. Հունական պոլիսային քաղաքակրթության հասարակական և մշակութային արժեքները:

6. Հանրապետական և կայսերական Հռոմի անցած ուղին:

Մարդկային հասարակության ձեռք բերած արժեքները միջին դարերում

1. Ավատատիրական հասարակություն:

2. Քրիստոնեական և մահմեդական աշխարհի առաջացումը:

3. Բյուզանդական և արաբական մշակութային արժեքները:

4. Գյուտերը Չինաստանում (թղթադրամ, տպագրություն, վառոդ, թնդանոթ, կոդմնացույց):

5. Հնդկաստանի ճարտարապետությունը և քանդակագործությունը:

Մարդկային հասարակության ձեռք բերած արժեքները հայոց միջնադարում

1. Հայոց քրիստոնեական մշակույթի սկզբնավորումը և զարգացումը:

2. Առնչությունները Բյուզանդիայի հետ:

3. Բախումները Արաբական խալիֆայության հետ:

4. Բազրատունյաց հարստությունը:

5. Կիլիկյան Հայաստանի առաջացումը:

6. 9-17 դարերի հարուստ մշակույթը:

7. Հայաստանի քաղաքական անկումը:

Վերջում ուսուցիչն ամփոփում է խմբերի կատարածը:

Դասը նման սցենարով կառուցելու դեպքում բոլոր աշակերտները հնարավորություն են ստանում ակտիվորեն մասնակցելու դասալրոցեին՝ քննադատաբար մտածում են, քննարկում այլընտրանքային տարբերակներ, ընդունում կշռադատված որոշումներ: Եվ այդ ամենը կատարվում է բարյացակամության և փոխօգնության մթնոլորտում:

Դպրոցում պատմության ուսուցիչները սովորաբար ուշադրություն են դարձնում աշակերտների խոսքային-տրամաբանական մտածողության զարգացմանը, այսինքն՝ շեշտը դրվում է հիմնականում մտածողության մեկ՝ վերբալ կողմի վրա, հաճախ անտեսելով նրա մյուս, ոչ պակաս կարևոր բաղադրիչը՝ պատկերավորը¹: Դա մեծ բարդություններ է առաջացնում, քանզի աշակերտները պատմությունը յուրացնում են ձևականորեն, խոսքային արտահայտությունների միջոցով, որոնց հետևում չկան իրական փաստերի պատկերներ: Հստակ և համարժեք պատկերների բացակայությունը աշակերտներին հնարավորություն չի տալիս պատմական հասկացություններին, հասարակական զարգացման օրենքներին հաղորդել կենդանի և կոնկրետ բովանդակություն: Իսկ զարգացած պատկերավոր մտածողություն ունեցող աշակերտները դժվարանում են ընկալել պատմական նյութի ձևակերպումները կամ սահմանումները: Արդյունքում ստացվում է այնպես, որ աշակերտների մի մասի համար ուսուցչի բացատրությունը պարզ է և մատչելի, իսկ մյուսների համար նյութի յուրացումը կապված է մեծ դժվարությունների հետ:

¹ **Круглова Е.А.** Учет индивидуальных особенностей структуры образного мышления учащихся в преподавании истории// Психологическая наука и образование. 2001, № 3.

Մեր կարծիքով, պատմական նյութի ընկալման և իմացության հիմքում անհրաժեշտ է դնել հուզական ապրումները. դրանք կարող են մեծապես նպաստել աշակերտների անձնական վերաբերմունքի ձևավորմանը: Հայտնի է, որ մարդու հուզական աշխարհը կարևոր դեր է խաղում նրա կյանքում: Ուստի և հուզական պահը, որպես հոգեբանական յուրահատուկ երևույթ, պետք է լայնորեն հաշվի առնել պատմության դասերին: Դրա համար պատմական նյութը նպատակահարմար է ընտրել և ներկայացնել այնպես, որ դուրս չմնան պատմական որոշակի անձինք՝ իրենց բնորոշ մարդկային կերպարներով, հակումներով, բնավորության գծերով, հաջողությունների և անհաջողությունների իրական պատճառներով: Պետություն և պետականություն ունեցող ցանկացած ժողովրդի պատմության դասագրքերն առաջին հերթին շեշտը դնում են իրենց պատմության առավել փառավոր էջերի վրա և շատ անգամ գիտակցաբար դուրս են թողնում պարտություններն ու անհաջողությունները:

Նման մոտեցումը բնավ էլ զարմանալի չէ, որովհետև դասագրքերը կոչված են աշակերտությանը հայրենասիրության ոգով դաստիարակելուն: Սակայն, մեր կարծիքով, այդ մոտեցումը ունի մի էական թերություն՝ ժողովրդի պատմության մեջ պարտությունների և անհաջողությունների պատճառները աշակերտներից թաքցնելը կրերի նրանց միակողմանի զարգացմանը, կստեղծի թյուր պատկերացումներ իր ժողովրդի բացառիկության մասին: Բացի այդ ակնհայտ է, որ սխալների և պարտությունների ճիշտ մեկնությունը և վերլուծությունը շատ դեպքերում ավելի օգտակար է և ուսանելի, քան հաջողությունների նկարագրությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Պատմության դասագրքաստեղծման գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները, նյութը շարադրել այնպես, որ այն յուրացնելիս զարգանա աշակերտների ոչ միայն տրամաբանական, նաև պատկերա-

վոր մտածողությունը: Պատմության դասավանդման գործընթացում, կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման համար, կարևոր է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայումը և ակտիվ, աշակերտակենտրոն, հոգեբանորեն հիմնավորված մանկավարժական տեխնոլոգիաների և մեթոդների կիրառումը:

Հոդվածում քննարկվում է հանրակրթական դպրոցում դասավանդման պատմության որոշ հոգեբանական ասպեկտներ: Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառմամբ պատմության դաս անցկացնելու տարբերակներից մեկն առաջարկվում է:

***Բանալի բառեր՝** ուսուցում, դասագիրք, պատմություն, դեռահաս*

РЕЗЮМЕ

■ ВАЗГЕН ПОГОСЯН

ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ ПРОЦЕССА ПРЕПОДАВАНИЯ ИСТОРИИ

В статье обсуждаются некоторые психологические аспекты преподавания истории в общеобразовательной школе. Предлагается один из вариантов проведения урока истории с применением активных методов обучения.

***Ключевые слова:** обучение, учебник, история, подросток*

SUMMARY

■ VAZGEN POGHOSYAN

THE PSYCHOLOGICAL ASPECTS OF TEACHING HISTORY

Taking into account the age and psychological peculiarities of the learners the article brings up certain psychological considerations on the teaching process of history. A sample of a lesson planned by interactive methods of teaching is described.

***Key words:** teaching, textbook, history, adolescent*

ПРИНЦИПЫ ТОЛКОВАНИЯ АРМЯНО-РУССКИХ ЮРИДИЧЕСКИХ ТЕРМИНОВ НА ЮРИДИЧЕСКИХ ФАКУЛЬТЕТАХ АРМЯНСКИХ ВУЗОВ

КНАРИК ДЖИЛАВЯН

В настоящее время лингвисты и методисты все чаще обращаются к вопросам анализа языковых единиц в аспекте их функционирования в общелитературном и научном поле. С этой позиции проводится анализ юридических понятий терминов. Юридические термины практикуются на основе понятий, которые носят признак и характеристику узкоспециальных отраслей. Знания – суждения и категории свойственны только юриспруденции. Узкоспециальная терминология – самый представительный слой специальных терминов, имеющих специфические для каждой отрасли знания, реалии, понятия, категории. В качестве примера рассмотрим несколько примеров.

Алиби – доказательства подтверждающие нахождение подозреваемого или обвиняемого в момент совершения преступления вне места преступления.

Алименты (в семейном праве) – средства, установленные в судебном порядке, на содержание несовершеннолетних детей; **нотариус** – лицо специально уполномоченное совершать юридически значимые действия. Анализируемые термины отражают общую специфику правового поля и предполагают наличие обязательных составляющих, характерных для построения и понимания системы правоведения¹. Термины делятся:

¹ Большой юридический словарь. / Под ред. А. Я. Сухарева. — 3-е изд., доп. и перераб. — М.: ИНФРА-М, 2007.

1. **«По принадлежности»** - группа рассматриваемых терминов вбирает в себя значения двух или нескольких профессиональных сфер.

Термины содержат понятия экономического, военного, авиационного, экологического и др. характера. В качестве примера обратимся к группе юридических терминологических сочетаний, отражающих некоторые экономические понятия: **«бухгалтерская отчетность»** - единая система данных об имущественном и финансовом положении организации;

«вексель» - долговой документ, вид ценной бумаги, денежное обязательство строго установленное законом; **«задаток»** - денежная сумма, платеж, выдаваемая одной из договаривающихся сторон по договору другой стороне.¹ Приведенные терминологические сочетания объединяются сходными характеристиками отдельных явлений, процессов, имеющих место в конкретной области знания. «Для межнаучных терминов такого рода актуален вопрос о типе семантических отношений, которыми связаны эти наименования при условии их применения в разных терминологических системах. Иными словами, являются ли они значениями одного термина, или в разных терминологиях фактически употребляются термины – омонимы, т.е. самостоятельные наименования, сохраняющие внешнее сходство и общую изначальную тему, которая в каждой конкретной терминологии претерпевает модификацию. По всей вероятности, решение этого вопроса в значительной мере будет зависеть от того, по отношению к какой лексической системе рассматриваются данные слова. Если анализируется лексика общелитературного языка, то данные лексемы могут быть рассмотрены как полифункциональные и полисемантические (словари в этом случае указывают посредством соответствующих помет конкретных фактов сфер их употребления).

2. **«По составляющим»** - по лексическому составу исследуемые термины состоят из нескольких частей, общего слова, входящего в структуру нескольких понятий и ключевого составляющего слова, входящего в структуру нескольких понятий и ключевого составляющего слова, содержавшего основополагающее дифференцирующее лексическое значение. По такому принципу поясняются термины, образованные способом терминологизации словосочетаний. Например слово **акт**, входящее в такие юридические понятия как акт агрессии, акт коммерческий, акт о суброгации, акты гражданского состояния. Слова, зависимые от ключевой лексической единицы (акт) в рассматриваемых словосочетаниях конкретизируют и уточняют общее понятие. В представленных примерах истолкование терминологического сочетания в большой степени определяется значением слов коммерческий, гражданский, агрессия, суброгация.¹

Акт агрессии – нарушение в международном праве.

Коммерческий акт – документ удостоверяющий обстоятельства предпринимательной деятельности.

Акт о суброгации - документ о передаче страхователям на взыскание ущерба с третьих лиц страховщику после уплаты им страхового возмещения.

3. **«По ситуации»** - при таком подходе пояснения терминов возможны варианты

Нарушитель – лицо, совершившее и пытающее совершить несанкционированное действие, а также лицо оказывающее ему содействие в «этом» - установление факта несанкционированного действия. При многозначности слова в терминологической системе утверждается лексическое значение, отражающее сему «правомерности» (неправомерности).

¹ Большой словарь официальных юридических терминов. / Сост. Ю.И. Фединский. М.: Экономика, 2001.

Таким образом, функционирование языковой единицы в зависимости от сферы применения приводит к разграничению, варьированию, модификации его лексического значения. В юридической терминологии при переносе многозначного слова из общелитературной сферы в научную лексема варьируется. Сема профессиональных слов поглощает лексему общеупотребительных слов **закон, право, норма, порядок, обязанность** и т.д.¹

Формируется система юридических понятий, исторически складывающихся и развивающихся во времени, выполняющих когнитивную функцию языка.

Таким образом, в отличие от терминов других наук, юридические термины в плане соотношения с общелитературными словами, имеют свои особенности и принципы толкования, которые необходимо учесть при составлении словаря юридических терминов:

1. В отличие от общеупотребительной лексики, юридические термины могут быть сложными образованиями, что обусловлено сложностью выражаемых понятий, которые могут относиться друг к другу как род к виду, один тип к другому.

2. Общелитературное слово и термин могут являться омонимами, но наличие некоторой общности сем говорит нам о полисемии. В таких случаях ни одно значение одного члена пары не совпадает со значением другого члена пары.

3. Общелитературное слово и термин – синонимы, отличающиеся друг от друга только обобщенностью толкования.

4. Общелитературное слово может считаться производящим в семантическом плане по отношению к юридическим терминам.

¹ **Виноградов В.В.** Основные типы лексических значений слова. М., 1953.

5. Юридические термины имеют иерархию значений, зависящими от разных контекстов (кодексов, законов), чем обусловлена одна из причин их многозначности.

Термин семантика был введен французским лингвистом Вралем.

Советская лингвистика в лице академика Марра противопоставила обоснование на материале семантических изменений в древнейшей стадии существования языка.

Семантика – раздел языкознания изучающий значения слов и их изменения.

Лексическая полисемия – это наличие у слова, термина двух или более значений, исторически обусловленных или взаимосвязанных по смыслу и происхождению. В современном языкознании выделяют грамматическую и лексическую полисемии.

Иерархия – порядок подчинения низших должностей высшим.

Лексическая полисемия – это способность одного слова служить для обозначения разных предметов и явлений действительности, ассоциативно связанных между собой.

Таким образом:

В докладе определяются структурно-семантические особенности юридических терминов, анализируются механизмы возникновения омонимии и полисемии в терминологической системе языка права, выявляются критерии разграничения данных феноменов.

Цель данного исследования заключается в выявлении критериев разграничения лексической омонимии и полисемии в терминологической системе языка права. Материалом исследования служат многозначные юридические термины различной степени функционирующие в текстах.

Поставленная цель требует решения следующих задач:

1. Выявить сущностные характеристики юридического термина, определяющие специфику его семантической структуры.

2. Рассмотреть причины возникновения омонимии юридических терминов.

3. Выявить модели полисемии юридических терминов.

Итак. Полисемия и омонимия в юридической терминологии представляют собой один из важнейших и актуальных вопросов современной филологии, способствующих решению неоднозначности в понимании и адекватного восприятия правовых терминов.

РЕЗЮМЕ

Статья посвящена анализу языковых единиц в аспекте их функционирования в общелитературном и научном поле. С этой позиции решила провести анализ юридических понятий терминов. Была предпринята попытка исследовать юридические понятия, термины. Обращаю особое внимание на то, что юридические термины практикуются на основе понятий, которые носят признак и характеристику узкоспециальных отраслей.

Ключевые слова: научная лексема, семантика, лексическая полисемия, омонимия, иерархия

ԱՄՓՈՓՈՒՄ

■ ՔՆԱԴՐԻՉ ՋԻՂԱՎՅԱՆ

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐՈՒՄ

Հոդվածը նվիրված է լեզվական միավորների վերլուծությանը ընդհանուր գրականության և գիտության բնագավառում գործառության տեսանկյունից: Փորձ է արվել հետազոտելու իրավական տերմիններ ու հասկացություններ: Հատուկ ուշադրություն

Է դարձվել այն բանին, որ իրավաբանական տերմինները հիմնվում են այն հասկացությունների վրա, որոնք կրում են նեղ մասնագիտական ոլորտների հատկանիշներ:

Բանալի բառեր՝ գիտական լրամշակում, սեմանտիկա, հիերարխիա

SUMMARY

■ **KNARIK JILAVYAN**

PRINCIPLES OF INTERPRETATION OF ARMENIAN-RUSSIAN LEGAL TERMS IN ARMENIAN LAW FACULTIES

The article is dedicated to the analysis of language units in the aspect of functioning in universal literary field. An attempt has been made to investigate the juridicial meaning of the terms. Special attention is paid on, that juridicial news are being practised on the ground of meanings which carry the symptoms and characteristics of narrow-special spheres.

***Key words:** scientific lexeme, semantics, lexical polysemy, hierarchy*

**ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԿԱ
ՎԻՃԱԿԸ: ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

ՄԻՇԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

